

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՐԱԶԻԿ ԲԱՅՐԱՄՅԱՆ

**ԷԶԵՐ
ՀԱՅ - ՎՐԱՑԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ
ԿԱՊԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ**

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
2010

ՀՏԴ 820/89.0
ԳՄԴ 83.3
Բ 269

Բայրամյան Հր. Ս.

Բ 269 Էջեր հայ-վրացական գրական կապերի պատմությունից / Հր. Բայրամյան.- Եր.: ԵՊՀ հրատ.: 2010, 256 էջ + 4 էջ ներդիր:

Ժողովածուն ընդգրկում է հեղինակի գիտահետազոտական ուսումնասիրություններից մի քանիսը՝ նվիրված հայ-վրաց պատմամշակութային առնչություններին, գրողների անձնական և գրական բարեկամությանը, փոխայցելություններին, առանձնապես գրականագիտական մտքի՝ մամուլում նրանց կյանքն ու գործունեությունը լուսաբանող նյութերին:

Առանձին բաժիններ բովանդակում են նաև հողվածներ, դիմանկարների ուրվագծեր, գրախոսություններ, հարցազրույցներ, դրվագներ պատմական իրողություններից:

Կարող է օգտակար լինել պատմաբաններին, բանասերներին, հայ-վրաց գրական-մշակութային և բախումնաբանության (կոնֆլիկտոլոգիա) հարցերով հետաքրքրվողներին, առհասարակ՝ ընթերցող հանրությանը:

Նյութերի զգալի մասը հրապարակվել է նաև վրացերեն:

ՀՏԴ 820/89.0
ԳՄԴ 83.3

ISBN 978-5-8084-1316-0

. Բայրամյան Հր. Ս., 2010 թ.

. ԵՊՀ հրատարակչություն, 2010 թ.

**ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԸ
ՎՐԱՑ ԳՐԱԿԱՆ ՄՏՔԻ
ԳՆԱՀԱՏՄԱՄԲ**

ՍԱՅԱԹ - ՆՈՎԱՒ

Թաթար-մոնղոլական արշավանքների հետևանքով կասեցված վրաց գրական կյանքն ավելի քան չորսհարյուրամյա նիհիլիզմից սկսել էր արթնանալ XVII դարի կեսից, բայց այդ ժամանակ էլ այն կրում էր պարսկա-արաբական և թուրքական գրականության խոր ազդեցությունը: Վրաց բանաստեղծները, որ հիմնականում արքաներ էին (Թեյմուրազ I, Արչիլ II, Վախթանգ VI, Թեյմուրազ II և ուրիշներ) կամ խոշոր ֆեոդալներ, գրում էին ճակատագրի հարվածների, կյանքի ունայնության, կորսված հարստության և փլուզված իղծերի մասին: Ավելի հաճախ, սակայն, կրկնում ու շարունակում էին Շոթա Ռուսթավելու «Ընծենավորը» պոեմի սյուժետային գծերը: Ռուսթավելին այնպիսի կուռք էր ազգային իրականության մեջ, որ նրա մոտիվներից ու տաղաչափական համակարգից շեղումը դատապարտվում էր ամենայն խստությամբ: Բավական է նշել, որ անգամ շնորհալի ստեղծագործողները անպայման դիմում էին ոչ թե Աստծու կամ մուսայի օգնությանը, ինչպես ընդունված էր, այլ Շոթա Ռուսթավելուն, որ նա ներշնչեր ու զորավիզ լիներ՝ ավարտին հասցնելու սկսած գործը: Դժվար չէ ենթադրել, որ գրողի այդօրինակ պանծացումը ինչ-որ չափով պետք է դանդաղեցներ ազգային գրականության բնաբուխ առաջընթացը:

Հարուստ չէր նաև տաղաչափական համակարգը: XII դարից ի վեր օրինականացվել էին Ռուսթավելու կիրառած շաիրիի՝ տասնվեցվանկանի սիլաբոտոնիկական և «չախրուխաուլի»-ի՝ քսանվանկանի չափերը: XVII դարում Թեյմուրազ I-ը վրաց պոեզիա մտցրեց «մաջամա»՝ անընդհատ կրկնվող նույնանուն հանգերով վանկաչափը: Անմխիթար էր աշուղական-գուսանական երգարվեստի վիճակը, որ զուտ թուրքական էր, քանզի վրաց արքունիքում վխտում էին թուրք կամ թուրքալեզու աշուղ-սազանդարները:

Այսպիսին էր վրաց գրական կյանքը, երբ ասպարեզ իջավ Սայաթ-Նովան և կարողացավ վրաց աշխարհիկ քնարերգությունն ու հատկապես աշուղական պոեզիան բարձրացնել որակական նոր աստիճանի՝ հիմք դնելով վրացալեզու, վրացական ժողովրդական և գուսանական երգարվեստին: Նա գրեց խոսակցական լեզվով, եր-

* Որպես զեկուցում կարդացվել է 1986 թ. դեկտեմբերի 14-20-ը Երևանում կայացած հայ միջնադարյան գրականության միջազգային գիտաժողովում:

գերն ու խաղերը համեմեց ժողովրդական բառուբանով, դարձվածքներով, պատկերավոր արտահայտություններով: Սայաթ-Նովան ոչ միայն օգտվեց վրաց բանահյուսությունից, այլև հարստացրեց այն:

Վրաց մասնագետների վկայությամբ՝ *«կան բազմաթիվ բանահյուսական գրառումներ, որ գալիս են Սայաթ-Նովայի վրացերեն խաղերից»¹*:

Նրա թևավոր խոսքերից շատերը լայն տարածում են գտել վրաց ժողովրդի ու գրականության մեջ: Ահա դրանցից մի քանիսը. «Աստղալուսով ծովըն վո՞ւնց կու ցամաքի», «Յենց բան կոսիմ, վուր ամբերում ձեն հանի», «Քո՛ւռ, դուն կոսիս պխտուրվիլ իս Արագով», «Գիր գըրեցի, վուր խնայիս, // Մե գամ շուռ գաս ու ինձ նայիս», «Մաղով Քըռի ջուրն վո՞ւնց կու չափվի», «Խոսկիս տերն իմ, հունարըս էլ գրով ա. // Արո՛թինն իմ, ինձ կոսիմ Սայաթ-Նովա» և այլն:

Վրաց պոեզիայի պատմության մեջ հասարակական տարբեր խավերի տրամադրությունը, խոհերն ու կացությունն արտահայտելու առաջնությունը նույնպես Սայաթ-Նովայի մենաշնորհն է: *«Դա հենց այն յուրահատուկ նորն էր, - գրում է Իոսեբ Գրիշաշվիլին, - որ Սայաթ-Նովան հաստատեց Անդրկովկասի ժողովուրդների գրականության մեջ՝ ընդհանրապես, վրաց գրականության մեջ՝ մասնավորապես»²*:

Սայաթ-Նովան վրաց պոեզիա բերեց նաև գեղարվեստական կերպարներ, մոտիվներ, ինքնատիպ ոճ, ռիթմիկա, աշուղական չափածոյի մի քանի տեսակ՝ ղափիա, ղոշմա, թասնիբ, ուչլամա, ռուբայի, թեջնիս, վարսաղի: Իսկ մուխամմազն այնպես արմատավորվեց վրաց չափածոյում, որ իր գոյությունը պահպանեց մինչև XX դարի կեսը: Նրա օրինակով մուխամմազներ են գրել վրաց գրականության մեծահամբավ ներկայացուցիչներ Բեսիկին, Ալ. Ճավճավաձեն, Գր. Օրբելիանին, Ալ. Շերեթելին, Ի. Գրիշաշվիլին, Գ. Լեոնիձեն և ուրիշներ:

Ահա այս արժանիքների շնորհիվ էր, որ բանաստեղծի երգերը սիրվեցին ու տարածվեցին հասարակական բոլոր խավերի մեջ: Այս միտքը հավաստում է նաև վրաց հին գրականության լավագույն մասնագետներից մեկը՝ պրոֆ. Լ. Մենաբդեն. *«Սայաթ-Նովան վրացական պոեզիան արթունիքից ու իշխանական պալատներից հանեց և մոտեցրեց ժողովրդին, ընկալելի ու հասկանալի դարձրեց նրան»³*:

Զգալի է Սայաթ-Նովայի ազդեցությունը ժամանակի և հետագա շրջանի վրաց գրողների վրա: Հատկապես XVIII դարի վերջի և XIX դարի առաջին կեսի չափածոյում ակներև են նրա խաղերի տրամադրությունը, խոհն ու պատկերը: Բեսիկին, Ալ. Ճավճավաձեն և Գր. Օրբելիանին Սայաթ-Նովայի օրինակով բանաստեղծությունների

տակ նշում էին, թե ինչ «հանգի» պետք է երգել, բնաբան էին վերցնում նրա այս կամ այն տողը, ամբողջական քառատողեր մեջբերում (իհարկե, վրացերեն խաղերից):

Գր. Օրբելիանին հաճախ բնաբան ընտրում կամ մեջբերում է *«Դուն չասիս, թե էս խիղճ սազանդարն ո՞վ ա.// Խոսկիս տերն իմ, հունարըս էլ զըրով ա.// Արուօինն իմ, ինձ կոսին Սայաթ-Նովա.// Յենց բան կոսիմ, վուր ամբերում ձեն հանի»* կամ *«էրնեկ օրից մե օր հիշիս, ինձ հյուր գաս, //Ճամփիդ փիանդազ դառնամ, վուր սազա քիզ»* տողերը: Նրա «Մշակ Բոբուլաձե» բանաստեղծության մեջ քնարական հերոսն ասում է. *«Այգուց լսում եմ ձայնը քամանչու, //Սայաթ-Նովու երգն է հնչում»*: Յոթանասունն անց ծերունի՝ իր բարեկամուհուն՝ Եկատերինա ճավճավաձեին (1816-1882) հղած նամակներից մեկում գրում է. *«Յիշում եմ Ձեր օրիորդական փայլուն ժամանակները... Որտեղ էլ հանդիպում էինք գեղուհիներիցդ որևէ մեկին, արտասանում էինք Սայաթ-Նովայի «Յազար հիդ քիզ մատաղ ասի, բա յիս քա՞նի զըլխի տեր իմ» խոսքերը»*:

Սայաթ-Նովայից տողեր ու մտքեր են բերված նաև Լավրենտի Արդազիանիի «Սողոմոն Իսակիչ Մեջղանուաշվիլի» վեպում, Գեորգի Էրիսթավիի «ժլատը» պիեսում, Ի. ճավճավաձեի «Քարերի աղաղակը կամ հայ գիտնականները» հրապարակախոսական երկում: Նիկոլոզ Բարաթաշվիլին 1837 թ. փետրվարին քեռուն՝ Գր. Օրբելիանին հղած նամակում, որպես հոգեվիճակի ցայտուն արտահայտություն, բերում է Սայաթ-Նովայի *«Իմ խիղճ զըլուխ, քիզիդ էս ի՞նչ պատահից»* խաղի *«Դե էլ յիս ո՞ւմ միղ դնիմ, ինչի՞ց էլավ. // էս ամենըն հենց իմ էս խիլքից էլավ»* տողերը:

Սայաթ-Նովան գրական հերոս է վրաց դասական գրող Վասիլ Բարնովի «Իսանիի արշալույսը» վեպում: Յեղինակը նշում է, որ իր երկի վերնագիրը վերցրել է Սայաթ-Նովայի համանուն բանաստեղծությունից, որ նա նվիրել է մի չնաշխարհիկ եակի՝ հավլաբարցի Թինանոյին: *«Իսանիի արշալույսը» շատ սիրված և տարածված երգ է եղել, բայց, հավանաբար, դա էլ չի պահպանվել, ինչպես նրա շատ ու շատ խաղերը»⁴*, - գրում է Բարնովը:

Ի. Գրիշաշվիլին նշում է, որ վրացական գյուղերում հարսանիքների ժամանակ, երբ հարսին բերում էին փեսայի մոտ, նրա ոտքերի տակ ծաղիկներ էին սփռում, որ ուղեկցվում էր Սայաթ-Նովայի երգով. *«Արիվ-լուսին երեսըտ է հայելի. // Մատա՞ղ իմ քիզ, ուրիշը թող պետք չըլի»*:

Սայաթ-Նովան իր տեղն ունի վրաց գրականության պատմության մեջ. նրա մասին գրվել են մեծագրություններ, ուսումնասիրու-

թյուններ, հողվածներ: Բազմիցս հրատարակվել են բանաստեղծի վրացերեն խաղերը, թարգմանվել և առանձին գրքերով լույս են տեսել հայերեն քերթվածքները, ձայնագրվել և մասսայականացվել են նրա երգերը՝ հայերեն և վրացերեն: Թիֆլիսում, սկսած 1914 թ. մայիսից, ամեն տարի շուքով ու փայլով նշվում է բանաստեղծի եռալեզու երգարվեստին նվիրված ավանդական Վարդատոնը: Նրա հայերեն, վրացերեն և թուրքերեն խաղերն ուսումնասիրվում են բուհերում, վրաց գրականության պատմության հատորներում դրանց հատկացված են մեծագրական գլուխներ:

Վրաց սայաթնովագիտությունը սկիզբ է առնում 1918 թվականից, երբ Իոսեֆ Գրիշաշվիլին (նա այդ ժամանակ արդեն անվանի բանաստեղծ էր), Յովհ. Թումանյանի և Գ. Բաշինջաղյանի խորհրդով և աջակցությամբ առաջին անգամ ծավալուն առաջաբանով, ծանոթագրություններով ու բառարանով լույս ընծայեց երգչի վրացերեն խաղերի ժողովածուն⁵, իր իսկ վկայությամբ՝ նպատակ ունենալով վրացալեզու ընթերցողին ծանոթացնել հին Թիֆլիսի մոռացության տրված գուսանին⁶:

Ի. Գրիշաշվիլին վրաց իրականության մեջ կատարեց այն աշխատանքը, ինչ Գևորգ Ախվերդյանը՝ հայոց համար 1852-ին:

Նա Սայաթ-Նովայի վրացերեն խաղերի առաջին մեկնաբանն ու գնահատողն է, վրաց սայաթնովագիտության հիմնադիրը: Վրաց բանաստեղծը գիտեր հայերեն, հատկապես Թիֆլիսի հայ բարբառը, որ իր մայրական լեզուն էր, ծանոթ էր Սայաթ-Նովայի գրական ժառանգությանը, ուստի փորձում է ընթերցողին ըմբռնելի դարձնել նրա էությունն ու բովանդակությունը: Ընդգծում է, որ հայ աշուղը երգել է սրտի համար, հոգու համար, սիրո համար և ինչպես բանաստեղծ, ինչպես երգիչ առ այսօր հավասարը չունի Վրաստանում: Անդրադառնալով հայերեն և վրացերեն խաղերի գեղարվեստական արժանիքներին՝ նշում է, որ հայերեն խաղերը կատարյալից կատարյալ են, գրեթե՝ անթերի: Առհասարակ շատ բարձր գնահատելով երգչի ծառայությունները Անդրկովկասի ժողովուրդների գրական-մշակութային կյանքում՝ Ի. Գրիշաշվիլին, այնուամենայնիվ, Սայաթ-Նովայի ստեղծագործությունը հարմարեցնում է զուտ աշուղական պոեզիայի կաղապարներին: Նկատի ունենալով ժամանակը՝ թերևս հասկանալի է նման մոտեցումը, քանզի հայ և հատկապես վրաց սայաթնովագիտությունը նոր էր սկզբնավորվում, իսկ հետազոտողին ավելի շատ հետաքրքրում էր բանաստեղծի վրացերեն խաղերի լույսընծայումը: Նա քննադատական խոսք պիտի ասեր իր ձեռքի տակ եղած

վրացերեն խաղերի առթիվ, ուստի նշում է, որ խաթարված մեկ տողի կամ անհաջող մեկ ոտանավորի համար մեղավոր են գրիչները, որովհետև պատկերը բոլորովին այլ կլիներ, եթե գտնվեր դավթար բնագիրը: Այդուհանդերձ, եթե համարձակվում և տպագրում է, լույնրա համար, որ ընթերցողը պատկերացում ունենա Սայաթ-Նովայի վրացերեն խաղերի վերաբերյալ:

«Գուցե Սայաթ-Նովան որպես բանաստեղծ, վերամբարձ չէ,- շարունակում է Գրիշաշվիլին,- գուցե նրա մուխամմազները սենյակում փակված մժեղի նման բզզան ականջումը, բայց իբրև գուսան, իբրև երգիչ ցայսօր նրան հավասարը չկա համայն Վրաստանում, և, հավատացե՞ք ինձ, տպավորությունը բոլորովին այլ կլիներ, եթե քամանջան սազ արած ինքը խոսեցներ լարերը և ինքը երգեր իր խաղերը»⁷:

Ի. Գրիշաշվիլուն կարելի է առարկել, երբ նա բանաստեղծի սիրային քնարերգությունը համարում է դարաչողելիական: Յենց այս ոչ ճիշտ դիտարկումը վրաց գրեթե բոլոր գրականագետների համար հետագայում դարձավ կայուն չափանիշ: Նույնիսկ այնպիսի հեղինակավոր բանասեր, ինչպիսին ակադ. Կ. Կեկելիձեն էր, Սայաթ-Նովայի վրացերեն խաղերը վերլուծելիս կրկնում էր Գրիշաշվիլու տեսակետը, ասելով, թե բանաստեղծն ավելի լավ է հասկանում բանաստեղծի հոգին, ուստի խոսեցնենք իրեն՝ Սայաթ-Նովայի հրատարակիչ Ի. Գրիշաշվիլուն: Եվ գիտնականը ծաղկաքաղ է անում վերջինիս բնութագրումներից, իր հերթին ավելացնելով, թե Սայաթ-Նովայի բանաստեղծություններն ինքնին մեծ արժեք չունեն. մոտիվներն ու մտքերը միապաղաղ են, պատկերներն ու համեմատությունները՝ թույլ և աղոտ, ռիթմը՝ աղքատ⁸:

Կ. Կեկելիձեն նույնը կրկնում է մի բուհական ձեռնարկում ևս⁸:

Գիտնականի գնահատականը թերևս անաչառ լիներ, եթե ինքը, պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկին հետևելով, ոմն Ստեփանոս Մկրեկու (Դերձակ) անունով հայտնաբերված խաղերը չվերագրեր Սայաթ-Նովային:

Բանաստեղծ, գրականագետ, հասարակական գործիչ Տիցիան Տաբիձեն դեռևս 1930 թ. Սայաթ-Նովայի մասին գրած մի հոդվածում քննադատում է և՛ Ի. Գրիշաշվիլուն, և՛ Կ. Կեկելիձեին՝ կանխակալ վերաբերմունքի համար: Վկայելով Վ. Բրյուսովին՝ Տաբիձեն գրում է, որ լինելով համաշխարհային գրականության հրաշալի գիտակ, բանաստեղծական մեծ կուլտուրայի տեր, նա (Վ. Բրյուսովը՝ Յ.Բ.) Սայաթ-Նովային հենց այնպես համճար չէր համարի, Սայաթ-Նովային պոեզիայի համաշխարհային մեծերի շարքում չէր դասի: Ավելին, շարունակում է Տաբիձեն,- Բրյուսովը յուրաքանչյուր անհատի կուլ-

տուրականության չափանիշը չէր բխեցնի այն իրողությունից, թե տվյալ անձը որքանով է յուրացրել հայ տաղերգուի ստեղծագործությունը:

Տաբիձեն նշում է նաև, որ Սայաթ-Նովայի գնահատության հարցում թե՛ Գրիշաշվիլուն, թե՛ Կեկելիձեին կարելի է առարկել հենց վրացերեն խաղերից ելնելով, մանավանդ, եթե չմոռանանք նրա ազդեցությունը հետագա շրջանի վրաց բանաստեղծների վրա, և ինչպես են նրան մեծարել Բեսիկին ու վրացական ռոմանտիզմի սյուներից մեկը՝ Գր. Օրբելիանին¹⁰:

Հետագայում նման թյուրիմացությունները կանխելու և բանաստեղծի եռալեզու լիակատար ծողովածուն անխաթար հրատարակելու նպատակով նա կոչ է անում ստեղծել Սայաթ-Նովայի գրական ժառանգությունն ուսումնասիրող հանձնախումբ՝ կազմված հայ, վրացի և թուրք հեղինակավոր մասնագետներից:

Տիցիան Տաբիձեի այս ազնիվ կոչը մնաց «ծայն բարբառոյ յանապատի», քանզի ոչ միայն չստեղծվեց նման հանձնախումբ, այլև երկար ժամանակ չփոխվեց վրաց բանասերների վերաբերմունքը հայ բանաստեղծի հանդեպ:

Այսպես, «Վրաց գրականության պատմության» ակադեմիական հրատարակության անդրանիկ հատորի առաջաբանում խոսելով XVIII դարի ազգային գրականության մեջ թեմատիկայի ընդլայնման մասին, ակադ. Կ. Կեկելիձեն գրում է. «Երևան են գալիս արհեստավորական միջավայրից ելած պոետներ, ինչպես, օրինակ, Սայաթ-Նովան, Բիստիկան, Այգեպան Դավիթը, Պաճուան, Բլաիձեն, Կոտաշվիլին և ուրիշներ, որոնք դարաչողելիական-աշուղական պոեզիայի տեսքով գրականություն են բերում իրենց միջավայրին բնորոշ մոտիվներ»¹¹:

Նույնիսկ մասնագետների ամենամեղ շրջանակներին անհայտանձանոթ այս անունների շարքում Սայաթ-Նովայի հիշատակումն ինքնին հուշում է գիտնականի անարդարացի լինելու մասին: Ավելին՝ անդրադառնալով «շաիրի» և «չախրութաուլի» բանաստեղծական չափերը հաղթահարելու և ժողովրդական պոեզիայից օգտվելու իրողությանը՝ Կ. Կեկելիձեն ընդգծում է, թե այդ հարցում նշանակալից քայլ կատարեց հատկապես Գուրամիշվիլին, որին հետևեցին Բեսիկին և Սայաթ-Նովան:

Դ. Գուրամիշվիլին, այո՛, նորարար էր. նա թարմություն է մտցրել վրաց տաղաչափական համակարգի մեջ, լայնացրել վրաց քնարերգության շրջանակները: Հիշենք, սակայն, որ նա գրեթե ամբողջ կյանքն անցկացրել է Ուկրաինայի Միրգորոդ քաղաքում, տասնամ-

յակներ շարունակ եղել է զինվորական ծառայության մեջ, ստեղծագործել է խոր ծերության շեմին՝ XVIII դարի 70-80-ական թվականներին, իսկ «Դավիթիանի» ժողովածուն կազմել է 1787 թ.: Ուրեմն ասել, թե Սայաթ-Նովան հետևել է Գուրամիշվիլուն, տրամաբանական չէ: Բեսիկին ևս գրական ասպարեզ է իջել XVIII դարի 70-ական թթ. վերջերին, այսինքն՝ այն ժամանակ, երբ Սայաթ-Նովան վաղուց այլևս ո՛չ երգում էր, ո՛չ էլ գրում, մինչդեռ նրա երգերը լայն տարածում էին գտել վրաց հասարակության բոլոր խավերում. երգում էին ամենքն ու ամենուր:

Նույն հատորի՝ Սայաթ-Նովային մվիրված մենագրական գլխում կարդում ենք, որ հայ բանաստեղծը աշուղական պոեզիայի պիոներներից է, դրա լավագույն ներկայացուցիչը Վրաստանում, որ սիրո և ուրախության գուսան է, հավասարը չունեցող երաժիշտ և երգիչ, ժողովրդական տրուբադուր, որ նա հաղթահարեց վրաց հին ներբողական պոեզիայի քաղցրախոս, խրթին ոճը և ստեղծեց աշուղական ոճի ինքնատիպ ներբողական բանաստեղծություն (վկայում են «Վրդար դատե...» բանաստեղծությունը՝ Յ.Բ.), դուրս եկավ եկեղեցական-կղերական մտածողության շրջանակներից, արարեց պարզ ու իմաստալից աֆորիզմներ, մտքեր ու սենտենցիաներ, համարձակ և յուրօրինակ համեմատություններ, ուժեղացրեց քաղաքացիական ու սոցիալական մոտիվները և այլն: Այդուհանդերձ նշվում է նաև, թե Սայաթ-Նովայի վրացերեն խաղերը թերի են տեխնիկապես, տողերն անհարթ են, հանգերը՝ բռնի, ռիթմը՝ խառնիխուռն, պատկերավորման միջոցները՝ մաշված ու տաղտկալի և, իբր, ոտանավորները խճողված են քաղաքային ժարգոնով: «Մի խոսքով,- շարունակում է հեղինակը,- Սայաթ-Նովայի ոտանավորներն աչքի չեն ընկնում ո՛չ լեզվական նրբությամբ, ո՛չ արտաքին հղկվածությամբ, ո՛չ երաժշտականությամբ»¹²:

Այդպես է արդյոք: Արձակագիր, գրականագետ և հասարակական գործիչ Գեորգի Նատրոշվիլին «Խոսք կասեմ՝ երկինքը որոտալ կսկսի» վրացերեն աշխատության մեջ գրում է. «Սայաթ-Նովան Նիկո Փիրոսմանիի նման սիրում է աշխարհը, տեսնում է նրա կենդանի գույները, զգում է նրա ապշեցուցիչ բույրը: Այո՛, նա նման է Փիրոսմանիին, նման է աշխարհատեսությամբ: Նրա բանաստեղծություններում թիֆլիսի լուսնկա գիշերվա մեղմությունն ու դալկությունն զգում ենք ճիշտ այնպես, ինչպես դա զգում ենք Փիրոսմանիի կտավներում: Նա ինքնատիպ տաղանդ է...»: Այնուհետև՝ «Իսկապես, որ անասելի հարուստ է Սայաթ-Նովայի վրացերենը. նրա բառը

նուրբ է ու ճկուն. այստեղ կան սփոփող հանդարտություն, գարնան որոտ և խորունկ ցավ արտահայտող խոսքեր: Նա կարողացել է գտնել խոսքի այն կախարդանքն ու թալիսմանը, առանց որոնց չկա ու չի կարող լինել բարձրարվեստ պոեզիա: Այդպիսին է Սայաթ-Նովայի վրացերենը»¹³:

Վրաց գրականագետների դիրքորոշումն զգալիորեն փոխվեց, երբ համաշխարհային հասարակայնությունը 1963 թ. նշեց բանաստեղծի ծննդյան 250-ամյակը: Մենք նկատի չունենք հանդիսության օրերին վրացական մամուլում ու գրական հանդեսներում վրաց հեղինակների հրատարակած հորեյանական բազմաթիվ հոդվածները կամ առանձին հետազոտություններ: Խոսքը վերստին պաշտոնական, գիտական կարծիքի մասին է:

1966 թ. Թբիլիսիում լույս տեսավ «Վրաց գրականության պատմության» II հատորը, որտեղ առաջին անգամ փորձ է արվում ըստ արժանվույն գնահատել ժողովրդական բանաստեղծի՝ վրաց գրականությանը մատուցած ծառայությունները: Քննության առնելով Սայաթ-Նովայի կյանքն ու գործունեությունը՝ հեղինակը՝ պրոֆ. Լ. Մենաբդեն, վերլուծելով վրացերեն խաղերը, երգչի պոեզիային կամայական գնահատական տվողներին ի պատասխան գրում է. «...Նրանք մոռանում են, որ Սայաթ-Նովան հավասարը չունեցող քնարերգու գուսան էր, պոետ-ինպրովիզատոր, որ նա կատարողական արվեստով կախարդում էր բոլորին: ...Սայաթ-Նովայի պոեզիան այսօր էլ ապշեցնում է հարուստ ֆանտազիայով, պարզությամբ, անմիջականությամբ, անկեղծությամբ, զգացմունքայնությամբ, հատկապես բանաստեղծական ձայնի դիապազոնով»¹⁴:

Գիտնականը Սայաթ-Նովային համարում է խոշորագույն սիրերգակ, աշուղական արվեստի մեծ նորարար ու անհաս զագաթ նաև վրաց իրականության մեջ: Վերհանելով հանճարեղ երգչի քնարերգության նորանոր շերտեր ու խորքեր՝ անդրադառնում է նաև հայերեն ու թուրքերեն խաղերին, Անդրկովկասի ժողովուրդների հոգևոր կյանքում նրա ներդրումին:

Իր գնահատականը վերանայեց ակադ. Ալ. Բարամիձեն: «Վրաց գրականության պատմություն» բուհական դասագրքում (1969) նա անդրադառնում է մեծ երգչի վրացերեն խաղերին, խոսում նրա նորարարական գործունեության մասին, քննարկելով Սայաթ-Նովայի եռալեզու ժառանգությունը՝ ընդգծում է հատկապես համամարդկային բովանդակությունն ու դեմոկրատական ոգին: Գիտնականը գրում է, որ Սայաթ-Նովայի պոեզիան չի կաղապարվում առանձին վերցրած որևէ ազգի մշակույթի շրջանակներում. նա մեզ ներկայա-

նուն է իբրև գեղարվեստական խոսքի մեծ վարպետ, իբրև հրաշալի աշուղ ու բանաստեղծ, իբրև աշուղական արվեստի գագաթ վրաց իրականության մեջ¹⁵:

Վերահրատարակելով Սայաթ-Նովայի մասին 1918 թ. գրած ծավալուն աշխատությունը՝ Ի. Գրիշաշվիլին նույնպես բարձրացրել է բանաստեղծի վրացերեն խաղերին նախկինում տված իր գնահատականները¹⁶:

1969 թ. լույս է տեսնում «Վրաց գրականության պատմության» III հատորը, որ բովանդակում է XIX դարի առաջին կեսի վրաց գրական-հասարակական և մշակութային կյանքի պատմությունը: Խոսելով վրացական ռոմանտիզմի նախակարապետ Ալ. Ճավճավաձեի սիրային քնարերգության մասին և ամեն կերպ ջանալով ժխտել Սայաթ-Նովայից նրա կրած ազդեցությունը՝ հեղինակը, հայ երգչի սիրերգությունը համարում է դարաչողելիական. «Անհիմն է, երբ Ալ. Ճավճավաձեի սիրային քնարերգությունը կապում են դարաչողելիական ոտանավորների հետ: Ճավճավաձեի սիրերգությանը խորթ է դեկադենտական զգացողությունը. այն մարդկային է, նրան հատուկ են բարոյական անաղարտությունն ու արհեստկրատիզմը»: Այնուհետև՝ «Եթե դարաչողելիների պոեզիան (ներառյալ Սայաթ-Նովան) իր մեջ պարունակում է նաև թեթևսովիկություն ու անպարկեշտություն, ապա Ալ. Ճավճավաձեի սիրային երգերն աչքի են ընկնում սալոնային նրբերանգներով»: Աշուղական պոեզիայի պատկերները, բառազանձը, «ծայնը» համարելով շուկայական (XIX դարի երկրորդ կեսի բանաստեղծ Վախթանգ Օրբելիանի խոսքերն է կրկնում՝ Յ.Բ.)՝ նա գրում է, թե Թիֆլիսի հռչակավոր սագանդարների «հանգը» շատ չէր տարբերվում Օրթաճալայի կամ Յավլաբարի դարդիման քեֆչիների գռեհիկ հանգից, որ երբեմն ուղղակի հակադրվում էր ճշմարիտ գրականության արժանիքներին, չէր զգացվում բարոյական մաքրություն ու հոգու անկեղծ թրթիռ: Նրա համոզմամբ՝ «Սայաթ-Նովան դարաչողելու՝ նման է դիմում սիրած էակին»¹⁷: Եվ ի հավաստումն իր մտքի՝ մեջբերում է հետևյալ տողերը.

*Գինին խըմինք, լավ արաղըն էլ մերն է.
Սագանդար ու մեջլիս, սաղին էլ մերն է.
Եկ բաղմընչուն քըշինք, բաղըն էլ մերն է.
Քեփն անուշ է, ժամն անուշ, նուբարն անուշ:*

* Ղարաչողելի կամ դարաչոխելի - սև չուխավոր, մանրավաճառ, փերեզակ հին Թիֆլիսում (հիշեցնում էին դարդիման կինտոներին՝ միայն թե փոքր-ինչ լրջմիտ էին, ծանրաբարո (ծանոթությունը՝ Յ.Բ.):

Նման գնահատական է տրվում մի բանաստեղծի, որը սիրածին այնպես է ուզում համբուրել, ինչպես «խեչին է դաստուր»։ Բանավեճի մեջ չնտնելով հեղինակի հետ՝ նշենք միայն, որ, ճիշտ է, ճավճավածեն ունի սիրային քնարերգության հաջողված նմուշներ, բայց հենց իրենց՝ վրացի գրականագետների վկայությամբ՝ *«դրանք ապրած գգացմունքի արդյունք չեն, քանզի միատարր են, պարզունակ. դրանք ընդամենը տուրք են թեմային»* (Մ. Ջանդուկեյի)։

ճավճավածեն կնոջ սերը, գեղեցկությունն ու հմայքը հանգեցնում է վայելքին։ Նրա պոեզիայում գերակշռում են «լոթիանա» երգերը, որոնցում բոլորին խորհուրդ է տալիս ճաշակել, վայելել, առիթը երբեք բաց չթողնել։ «Երբ դեմքդ տեսնեն» ոտանավորում, օրինակ, բանաստեղծը ծանոթ կնոջը գայթակղում, թեթև ժամանցի է մղում, որովհետև, ասում է նա, *«այս դառն ու դաժան իրականությունից վերանալու միակ միջոցը դա է»*։ Նաև արտահայտում է այն միտքը, թե վայելքը ոչ միայն իմաստություն, այլև վարպետություն է, որ գալիս է փորձից ու համարձակությունից։

Սայաթ-Նովայի սիրո առարկան մեկն է, իսկ վրացի բանաստեղծինը՝ մի քանիսը։ Վերջինիս համար սերը ուղղակի և անմիջական վայելքի աղբյուր է. *«Վարդին մի՛ սիրեք հեռվից, մի՛ շրջանցեք, մոտեցե՛ք նրան մարմնով, որ ճաշակեք քաղցրությունը սիրո»*։ Կամ՝ *«Քանի ժամանակ ունես, վայելի՛ր, քեզ եմ ասում, հաճելի է, վայելի՛ր»*։ Նման մտքեր պարունակող բազմաթիվ ոտանավորներ կարելի է վկայել։

Խմբագրական նույն կազմը ակադեմիական նույն հրատարակության իրար հաջորդող հատորներում հայ բանաստեղծի տաղերի մասին տպագրել է տրամագծորեն հակադիր կարծիքներ։

Ինչ վերաբերում է Սայաթ-Նովայի վրացերեն խաղերի լեզվական ու տաղաչափական արվեստին, ապա պետք է ասել, որ նրա երգիծական ոտանավորներն անշուշտ զիջում են քնարական-սիրային և ներբողական բանաստեղծություններին. երգիչը դրանք հորինել է հանպատրաստից՝ խնջույքների, մեջլիսների, նվագ-մրցույթների ժամանակ, երբ խարազանել է առանձին ֆեոդալների, հանրությանն անհաճո մարդկանց, հոգևոր անարժան պետերին և այլոց, բայց հետագայում չի անդրադարձել, բնականաբար, չի մշակել դրանք։ Սրանով պետք է բացատրել, որ վրացերեն խաղերում ավելի շատ են այն ոտանավորները, որոնցում նա պախարակում է կամայականությունը, դավաճանությունը, բռնությունը, հալածանքն ու

քծնանքը՝ անհարիր երևույթներ, որոնց ականատեսն էր ամեն քայլափոխի:

Ամփոփում. չնայած վրաց որոշ գրականագետների հակասական գնահատականներին, խաղերի գեղարվեստական արժանիքներն ու վրաց բանաստեղծների՝ նրանից կրած ազդեցությունը ժխտելու միտումներին, այդուհանդերձ, Սայաթ-Նովան գնահատվում է իբրև նորարար բանաստեղծ, իբրև վրաց աշուղական երգարվեստի չգերազանցված վարպետ:

1. qarTuli literaturis istoria, Թբիլիսի, 1966, հ. II, էջ 647:
2. Саят-Нова, Лирика, Мոսկվա, 1963, էջ 5 (առաջաբանը՝ Ի. Գրիշաշվիլու).
3. qarTuli literaturis istoria, Թբիլիսի, 1966, հ. II., էջ 648:
4. "moambe", 1901, N 9, էջ 10:
5. Սայաթ-Նովա, Ի. Գրիշաշվիլու առաջաբանով և ծանոթագրություններով, Թիֆլիս, 1918:
6. Տե՛ս Թումանյանը ժամանակակիցների հուշերում, Երևան, 1969, էջ 662:
7. Սայաթ-Նովա, Ի. Գրիշաշվիլու առաջաբանով և ծանոթագրություններով, Թիֆլիս, 1918, էջ 47 (վրաց.):
8. qarTuli literaturis istoria, Թբիլիսի, 1954, հ. I, էջ 34:
9. ԽՏՎրտպԱՅՈՂՎՕռ Սցրր ՌրՅՏՐՈՌ ՊՐԿՉՎԱԶԻԳԾՂԻՎՐԱՏռ սՈՅԱՐՈՅԳՐՕ, Թբիլիսի, 1939, էջ 104:

Տե՛ս t. tabiZe, TxzulebaTa@krebuli or tomadqarTuli literaturis istoria

qarTuli literaturis istoria,

moambe

qarTuli literaturis istoria

t. tabiZe, TxzulebaTa@krebuli or toma

qarTuli literaturis istoria

qarTuli literaturis istoria

10. , Թբիլիսի, 1966, հ. II, էջ 241:
11. qarTuli literaturis istoria, Թբիլիսի, 1954, հ. I, էջ 477-478:
12. qarTuli literaturis istoria, Թբիլիսի, 1966, հ. II, էջ 647:
13. g. natroSvili, sityvas vetyvi, cam quxili daiwyos, Թբիլիսի, 1963, էջ 33, 40:
14. Տե՛ս qarTuli literaturis istoria, Թբիլիսի, 1954, հ. I, էջ 477-478:
15. Տե՛ս k. kekeIiZe, Aa. baramiZe, qarTuli literaturis istoria, Թբիլիսի, 1969, էջ 440:
16. i. griSaSvili, TxzulebaTa krebuli xuT tomad, Թբիլիսի, 1963, հ. III, էջ 5-123:
17. qarTuli literaturis istoria, Թբիլիսի, 1969, հ. III, էջ 63-64:

«Սայաթ-Նովայի վրացերեն խաղերի գնահատության շուրջ»
«Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, 1986 թ., N 2:

ձևեր ու իմաստալից բառակապակցություններ: Դրանով նա հարազատ է մնացել Թիֆլիսի հայ բարբառին, հարստացրել այն, ստեղծել կոլորիտ, սոցիալական ու տեղական ոճավորում, նպաստել հայ և վրաց թատերասեր հասարակայնության գաղափարական մերձեցմանը:

Սունդուկյանի ընտրած որոշ թեմաներ արդեն մշակվել էին հայ և վրաց դրամատուրգների կողմից, բայց նրանց երկերում չկար անհրաժեշտ խորություն, քանզի մնացել էին պարզունակ զավեշտի շրջանակներում, մինչդեռ մեծատաղանդ դրամատուրգը խորամուխ եղավ սոցիալ-քաղաքական կացության, երևույթների ծագման պատճառների մեջ, այսպես նու դատապարտեց չինովնիկությանը, արդարադատության կողմնակալ ներկայացուցիչներին, նրանց խոսքի ու գործի աղաղակող հակասությունները: Այդ ամենը նա վերլուծեց, վերարտադրեց և ի ցույց դրեց հանրությանը՝ տալով հասարակական հնչեղություն, սերմանելով մարդասիրական տրամադրություններ ու գաղափարներ:

Սունդուկյանի գործունեությունը տևեց շուրջ կես դար: Նա գրեց վոդևիլներ, կատակերգություններ, դրամաներ, ֆելիետոններ, թերթոններ, հոդվածներ:

Անդրադառնալով կենսական ամենահրատապ հարցերի (քաղաքը բարեկարգ տեսնելու ցանկություն, իրականության քննադատություն, կանանց իրավահավասարություն, հանընդհանուր պրոբլեմներ, ազգային-ազատագրական շարժում և այլն)՝ նա զգացել է քաղաքացու, գրողի և հասարակական գործչի իր պարտքն ու պարտականությունը, խոսքով ու գործով նպաստել հանրության հոգևոր կյանքի առաջընթացին: Առհասարակ հասարակության ճակատագրով մտահոգ դրամատուրգը ձգտում էր գտնել այն ուժերը, որ անհաշտ ու հետևողական պայքար պիտի մղեին ավատականության, կործանարար սովորությունների, կառավարող բյուրոկրատական ապարատի, հղվացած վաշխառուների, հասարակությանն անհարիր երևույթների դեմ: Եվ նա իր հույսերը կապեց Եվրոպայի ու Ռուսաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում կրթություն ստացած երիտասարդ և գործունյա մտավորականների հետ, որի ներկայացուցիչները քիչ չէին և վրաց իրականության մեջ: Ահա թե ինչու նրա պիեսները ավելի հաճախ վրացական թատրոններում էին բեմադրվում: Իսկ ամեն մի ներկայացման առթիվ վրաց թատերական և գրական-հասարակական միտքը հանդես էր գալիս ոչ միայն վերլուծական ծավալուն հոդվածներով, այլև դրվատանքի

խոսքով:

Գաբրիել Սունդուկյանի ստեղծագործություններին վրաց ընթերցողն ու հանդիսատեսը առաջին անգամ ծանոթացել են XIX դ. 70-ական թթ. սկզբին, մինչդեռ առաջին կարծիքը հայտնվել է գրեթե հինգ տարի հետո՝ 1875 թ., երբ Թիֆլիսի վրաց թատրոնում բեմադրվում է «Պեպոն»: Հրապարակախոս, գրական-հասարակական գործիչ Սերգեյ Մեսխին «Դրոբբա» («Ժամանակներ») թերթում տպագրում է բանիմաց հոդված: Նա գրում է. *«Սկզբից ևեթ պետք է ասենք, որ այսպիսի խորամիտ, բենի բոլոր պահանջները բավարարող և խորհել տվող պիես մեր (վրացական՝ Յ.Բ.) բենը դեռ չէր տեսել»:*

Հոդվածագիրը վկայում է հանդիսատեսների, ովքեր ներկայացումն ավարտվելուց հետո հրճվալից բացականչել են՝ որտեղ էին այս ուժերը, որտեղ էր այս կատակերգությունը, որտեղ էր այս հեղինակը...:

Ձուգադրելով Պեպոյի և Կակուլիի կերպարները՝ գրախոսը նշում է, որ Պեպոն սկզբունքային է, ողջախոհ. նա կյանքի մարդ է, և կյանքում տեղի ունեցող երևույթներն էլ պայմանավորում են նրա գործելակերպը: Գիտակցո՞ւմ է արդյոք Պեպոն, որ Զինգինովի երեսին նետած «էս օսկե պատիրը վուր սարքիլ իս, ո՞ւմ փուղով...» խոսքերը հասարակական շեշտված բողոք է: *«Պեպոն լուսավորված անհատ չէ,- պատասխանում է Մեսխին,- բայց նա բանականության դիրքերից է նայում կյանքի անցուդարձերին և եթե որևէ միտք է արտահայտում, ապա սեփական կաշվի վրա զգալուց հետո միայն»:*

Իսկ Կակուլի՞ն: Կենսախինդ, սրամիտ ու համակրելի Կակուլին տաքարյուն է, սրտի, զգացմունքի ու պահի ազդեցության տակ գործող¹:

Կատակերգության նկատմամբ անբարյացակամ է արտահայտվել Վալերիան Գունիան, որ, չժխտելով հանդերձ պիեսի գաղափարական արժանիքները, այդուհանդերձ, զեղարվեստական առումով «խաթաբալայից» ցածր է դասում՝ այն համարելով «լավ աստառ ու լավ երես ունեցող, բայց վատ կարված երկ»: Ըստ նրա՝ Պեպոյի կերպարը արհեստական է, շինծու: Գրախոսը Թիֆլիսի իրականության մեջ Պեպո չի տեսնում: *«Պեպոյի համար մեզ մոտ հող չկա,- հայտարարում է Գունիան,- Պեպոն ավելի պատվարժան Սունդուկյանի ֆանտազիայի բարն է, քան մեր իրականությունից առնված աշխատավոր մասսաներին ընդհանրացնող տիպ»²:*

Հակադրվելով Գունիային՝ ականավոր բանաստեղծ Ակակի Ծե-

րեթելին նշում է, որ Պեպոյի կերպարը և՛ հավաստի է, և՛ համոզիչ* :

1886 թ. Վաստ Աբաշիձեն իր բենեֆիսին ներկայացնում է «Խաթաբալան»։ Այդ առթիվ «Իվերիա» լրագրում հանդես է գալիս Վալերիան Գունիան։ Նա շեշտում է, որ Սունդուկյանը դրամատուրգիայում հավասարը ո՛չ ունեցել է, ո՛չ էլ ունի։ Իսկ խնդրո առարկա պիեսի մասին գրում է. «Սունդուկյանի հերոսները ավելի շատ խոսում են, դատողություններ անում... Պիեսն անչափ երկարաշունչ է, գործողությունները՝ ձգձգված ու ծանձրալի»։

Գունիան հեղինակին վերագրում է անհիմն մեղադրանք. «Սեզ զարմացնում է այն պարագան, թե նման տաղանդավոր ու բանիմաց հեղինակը ինչպես թույլ տվեց իրեն այնպես աններողամիտ, անզուք և նույնիսկ անարդարացի վերաբերվել Մարգրիտի նկատմամբ։ Տգեղ արարածը... կարեկցանքի, գթասրտության է արժանի, ոչ թե ծաղրի ու արհամարհանքի»⁶։

Բնական է, որ Գաբրիել Սունդուկյանը նույն թերթում հանդես է գալիս պատասխան խոսքով. «Մարգրիտի նկատմամբ ոչ թե ես եմ քանահրանքով, անզուք կամ անկարեկից վերաբերվում, այլ պիեսում գործող այն անձինք, ովքեր խմբված են նրա շուրջը, տանջում և այնպես են նայում նրան, ասես սաղացնելու ապրանք է։ Հենց այս հանգամանքն է պատճառը, որ բանականության աչքով դիտող հասարակությունը կարեկցանքով է նայում խեղճ Մարգրիտին, և այդ աղջկա ճակատագիրը մեկ հանդիսատեսի աչքից չէ, որ պրցունքներ է կորզել, երբ պիեսը ներկայացվել է ինչպես որ հարկն է»⁷։

Սունդուկյանի հիմնավոր բացատրությունը Գունիային չի բավարարել, ուստի նույն մեղադրականը կրկնում է նաև հետագայում լույս ընծայած «Վրաց թատրոնը 1879-1889 թթ.» աշխատության մեջ։

Այդուհանդերձ վրաց գործիչը բարձր է գնահատել Սունդուկյանի ծառայությունները վրաց բեմին։

Հիշատակված աշխատության մեջ անդրադառնալով հայ դրամատուրգի գրական ժառանգության ընդհանուր բնույթին՝ նա շեշտում է, որ Սունդուկյանի պիեսների թեմաները վերցված են կյանքից։ Դրանք հզոր տաղանդից բացի, պարունակում են շատ խոր գիտելիքներ, դառնում կյանքի դասագիրք։ Իր անկողմնակալությամբ ու անկեղծությամբ նա մեծ հեղինակություն է հայ և վրաց հասարակության մեջ. հենց դրա շնորհիվ է, որ վրաց թատերական խումբը իր

* Չժե Ս՞եՇԿ ԳԻՆՔ Ս՞ԿՆՍՍ՞ԵՄ Ի՞ՆՔ ԵՍԾԱ՞՞Ն ԱՆ ՍՇԵՂԱԾԱՍԾՅԻ՛ ՆԱ՛ԴԻՍԾՍ։

առաջին ներկայացումից առ այսօր սնվում է Սունդուկյանի պիեսներով: Նրա ստեղծագործությունները նպաստել են վրացական թատրոնի վերածննդին, ուստի Գաբրիել Սունդուկյանը *«իր արժանի տեղը պետք է զբաղեցնի նաև վրաց դրամատուրգիայի պատմության մեջ»*⁸:

1900 թ. Նատալիա Գաբունիա-Ցագարելին իր բենեֆիսի համար ընտրել է Սունդուկյանի «Էլի մեկ գոհ» պիեսը: *«Իվերիան»* այդ առթիվ գրում է. *«Այս թատերաշրջանում հանդիսատեսին այնքան էին ձանձրացրել բովանդակազուրկ պիեսներով, որ տիկին Գաբունիա - Ցագարելուն երախտահատույց պետք է լինել՝ ավելի քան հաջողված և խորիմաստ պիես ընտրելու համար»*: Թատերագետը պիեսը համարում է բովանդակալից, գործող անձանց հեղինակային իմաստավորումը՝ հիմնավոր ու հաջող: *«Միայն Միքայելն է թույլ, քանզի իբրև իդեալիստ՝ ավելի խոսում ու քարոզում է, քան գործում»*⁹:

Ի դեպ, վրացի գրեթե բոլոր թատերագետները նշում են Միքայելի՝ երազող, պասիվ, անհետևողական ու հովերով տարված լինելը:

Սունդուկյանի կյանքի ու գործունեության վերաբերյալ վրաց մամուլում բազմաթիվ հոդվածներ են լույս տեսնում 1901 թ. «Պեպո»-ի 30-ամյակի առթիվ: Դրանց մեջ կարելի է առանձնացնել երկուսը, որոնցում հանրագումարի են բերված դրամատուրգի ժառանգություններն ու գրական ժառանգությունը:

Վրաց թատերական արվեստի ականավոր գործիչ Կոտե Ղիփիանին նշում է, որ Սունդուկյանն աշխուժացրեց վրաց հասարակությանը, ուժգին թափ հաղորդեց վրաց գրականության առաջընթացին. նրա ազդեցությամբ երևան եկավ դրամատուրգների, թարգմանիչների ու փոխադրողների մի ամբողջ սերունդ. *«Հանդես եկաք Դուք,- իր ողջույնի խոսքում ասել է Ղիփիանին,- և վրաց թատրոնի համար սկսվեցին նոր ժամանակներ, սկսվեց նոր կյանք: Արթնանալով լեթարգիական քնից՝ վրա հասավ վերածննդի ժամանակաշրջանը: Այդ վերածննդով թատրոնն ամբողջությամբ պարտական է Ձեզ, քանզի Դուք, Ձեր երկերով թատրոնին նոր կյանք պարգևեցիք և նրա մարած զարկերակին հնարավորություն ընձեռեցիք գործել նոր ուժով»*:

Իսկ գրող և հասարակական գործիչ Անտոն Փուրցելածեն փորձում է արարել Սունդուկյան քաղաքացու և դրամատուրգի դիմանկարը. *«Ո՞վ է Սունդուկյանը. հա՞յ է, վրացի՞, ռո՞ւս. նա նախ մարդ է, քաղաքացի՝ իր թուլություններով, հասարակական իր*

կոչումով, մարդ, որ ցանկանում է վերափոխել կյանքը, հին, մաշված սովորույթները և սերմանել լավագույնը. այստեղ նա և՛ հայ է, և՛ վրացի, և՛ ռուս, և՛ այլազգի»¹⁰:

Դժվար չէ նկատել Փուրցելածեի տողերի նպատակուղղվածությունը. նա հակահարված է տալիս վրաց այն վայ հայրենասերներին, ովքեր ամեն կերպ ջանում էին ժխտել կամ առնվազն արժեզրկել Սունդուկյանի հսկայական լուսման վրաց թատրոնի ու դրամատիկական գրականության զարգացման գործուն:

Փուրցելածեն շեշտում է, որ Սունդուկյանն այդ պատվին արժանացել է իր հզոր տաղանդի շնորհիվ, կյանքի խոր և բազմակողմանի իմացության, սոցիալական արատներն ուսումնասիրելու, վերարտադրելու, հրատապ հարցեր հարուցելու և դրանց հասարակական հնչեղություն տալու շնորհիվ: Եվ այս առումով «մեր թանկագին Գաբրիել Նիկիտիչը վրաց և հայ դրամատուրգիայում հավասարը չունի, և թեկուզ Ռուսաստանի այս տեսակ գրականության մեջ էլ դժվար թե նշվի ավելի լավի անունը»:

Քննադատն իր տեսակետը հիմնավորում է նրանով, որ Սունդուկյանի ամեն մի տողը հետապնդում է բարոյական և մտային նպատակ, ունի դաստիարակչական, ուսուցողական նշանակություն:

Վրաց մանուկը խորունկ ցավով գուժեց հայ ժողովրդի զավակի մահվան բոթը. տպագրվեցին բազմաթիվ առաջնորդողներ, հողվածներ, հուշեր, ակնարկներ, ցավակցական հեռագրեր, մահախոսականներ, որոնցում կրկին ու կրկին անդրադարձ եղավ դրամատուրգի կենսագրությանն ու գրական-հասարակական գործունեությանը:

Լավագույններից է գրականագետ Կիտա Աբաշիձեի ելույթը՝ դրամատուրգի հուղարկավորության ժամանակ: «...Մեր երկու ժողովուրդների միասնական գործունեության համար հաստատուն հող նախապատրաստեց հանգուցյալ Սունդուկյանը: Երբ առաջին անգամ հնչեց նոր կյանք արարելու զանգը, մեր երկրի տաղանդավոր զավակներն իրենց ուժերը նվիրաբերեցին ժողովրդին ծառայելու գործին. Սունդուկյանը նրանց մեջ էր, նա նույնպես միացավ ընդհանուր գործին, կյանքի ու առաջընթացի ծանր լուծը հաճույքով կրեց իր ուսերին, և ահա՝ հանձին նրա՝ մենք ունենք լավագույն օրինակն այն բանի, թե որքան արգասաբեր և որքան հաճելի է ծառայել եղբայրական ժողովուրդներին՝ մշակութային ընդհանուր հողի վրա»¹¹:

Եվ, իսկապես, հայ մեծ երախտավորն անմնացորդ նվիրվեց հայ և վրաց ժողովուրդների իրավունքների պաշտպանության, նրանց մշակութային-քաղաքական առաջադիմության, գրական-թատերական հարաբերությունների ընդլայնման ու խորացման հանրաշահ գործին:

Գաբրիել Սունդուկյանը հայ այն գրողներից է, որի նկատմամբ վրացական մամուլը շատ ուշադիր է եղել: XIX դարի 70-ական թվականներից ի վեր ամսագրերն ու թերթերը թարգմանաբար տպագրել են հեղինակի պիեսների զգալի մասը, «Յամալի մասլահաթնիրը», «Յադիդի մասլահաթնիրը», տարաբնույթ հոդվածները, «Կտակը», անդրադարձել են նրա կյանքի ու գործունեության կարևորագույն փուլերին, հանդես եկել ստեղծագործությունների գնահատմամբ:

-
1. "iveria", 1975, N 34.
 2. valerian gunia, qarTuli Teatri 1879-1889, tfilisi. 1889, էջ 71.
 3. Նույն տեղում:
 4. "iveria", 1901, N170.
 5. Տե՛ս "droeba", 1877, N 38:
 6. " droeba", 1881, N 37.
 7. "iveria", 1886, N 44.
 8. "iveria", 1886, N 48.
 9. Տե՛ս valerian gunia, qarTuli Teatri 1879-1889, tfilisi, 1889, էջ 67:
 10. "iveria", 1901, N 92.
 11. "iveria", 1912, N 59.

«Երիտասարդ գիտաշխատող», Երևան, 1981, N 1:
(«Գաբրիել Սունդուկյանը նախախորհրդային վրաց գրական-հասարակական մտքի գնահատմամբ»)

ՎՐԱՑ ԳՐՈՂՆԵՐԸ
ՀԱՅ ԳՐԱԿԱՆ ՄՏՔԻ
ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

ՇՈՅԱ ՌՈՒՄԱԿԵԼԻ

Բազում դարեր ապրելով վրաց ժողովրդի հարևանությամբ, մի հատվածն էլ նրա հետ մեկտեղ ու նույն հողի վրա՝ հայ գրասերները զգալի դեր են կատարել վրաց բանաստեղծի երկը պահպանելու, բազմացնելու, ծաղկելու, թարգմանելու և քննախոսելու առումով: Հայագրի գրիչները, օրինակ, դարերին են կտակել «Ընծենավորի» (հայ իրականության մեջ թարգմանվել և հայտնի է նաև «Վագրենավորը» վերնագրով) ավելի քան տասնհինգ բարձրորակ ձեռագիր. դրանցից առաջինը և լավագույնը Վրաստանի Հանրապետության ԳԱԱ Կոռնելի Կեկելիձեի անվան ձեռագրերի ինստիտուտի 757-րդ ձեռագիրն է՝ արտագրված 1671 թ. Ալմուրանց Բաղդասարի որդի Գասպարի ձեռքով: Այն պոեմի հնագույն և ամբողջական օրինակն է. ներառում է 2126 տուն (համահավաք տեքստը 1587 քառատող է), այսինքն՝ երկն իր նախնական տեքստով ու հավելումներով: Իբրև գիտական հրատարակությունների հիմք ձեռագրի՝ սրա հետ են բաղդատվում եղած բոլոր գրչագրերը:

Հայերեն առաջին թարգմանությունը՝ «Ընծու մորթի հագած մարդը» վերնագրով տպագրվել է «Կռունկ հայոց աշխարհին» ամսագրի 1860 թ. N 6-ում, ապա 1861 և 1862 թթ. համարներում: Նախա-ծեռնողը բժիշկ, բանահավաք, գրականագետ Ստեփան Բաստանյանն էր (1815-1872)՝ բարձրագույն կրթությամբ, ժամանակի զարգացած մարդկանցից մեկը: Նա թարգմանությունն իրականացրել է Թիֆլիսի հայ բարբառի և գրական հայերենի խառնուրդով՝ ձգտելով պահպանել բնագրի տաղաչափական սկզբունքները: Այս թարգմանության մասին ժամանակին դրվատանքի խոսքեր շատ են ասվել, որին, անշուշտ, նա արժանի էր նախ և առաջ իբրև առաջին փորձ: Ահա ինչու, առանձին հատվածներ հետագայում արտատպվել են տարբեր առիթներով. մասնավորապես այն տեղ է գտել Ե. Ստալինսկու՝ 1888 թ. Թիֆլիսում հրատարակած «Ընծենավորը» ժողովածուում (նրանում առկա են նաև հատվածներ վրացերեն, ռուսերեն և գերմաներեն), իսկ Հովհ. Թումանյանը, նույն թարգմանությունը վերածելով գրական հայերենի, զետեղել է «Լուսաբեր» դասագրքի մեջ:

«Ընծենավորը» սիրվել ու գնահատվել է վրացահայերի կողմից:

Այս մասին վկայում է Ստ. Բաստամյանը՝ ամսագրի խմբագրությանն ուղղված իր նամակում. «*Էս թղթի հետ կուբերեն մէ կտոր բան, որը որ թարգմանած է վրացերենից: Գիրը, որտեղից վեր է առած էս կտոր բանը, ասում է «Վեփխիստղաոսանի», այսինքն՝ «Մարդ՝ ընծու մորթի հագած»:* Սրա գրողն է Շոթա Ռուսթավելը: *Էս մարդը էնքան հարգևոր է էլի վրացիներու մեջը, որ վեց հարյուր տարի է սրա շինած բանը էստեղ կարդվում է, ինչպես Յոմերոսի շինածները կարդում են ուրիշ ազգերի մեջ: Թիֆլիսեցի հայքը միշտ սիրել են Ռուսթավելու գրածները, ուրեմն հույս ունեն, թե չեն սխալվում, որ թարգմանած էլ բավական հավնեն»:*

Ահա մի հատված Բաստամյանի թարգմանությունից.

Արաբստան Ռոստևանը թագավոր էր շատ բաղաձոր,
Արդարադատ, խոնարհ, առատ ու չափիցը դուս փառավոր.
Ինչքան ասես ուներ ճորտեր, դոշումը հո հեսաբից դուս,
Հալալ մալալ ամեն մարդու գանգատանքն ականջ կոներ.
Գոված էր իրա վարվելով, ողորմած ու ամենի հետ,
Պոտիկ, մեծի նեղությունը՝ սիրտ ցավելով կփարատեր.
Կովի մեջը անօրինակ թշնամու հետ կոխվ կաներ,
Սիրտ դոշումին տալու համար ճարտար լեզու կու բանեցներ:

Ընթերցողների հետաքրքրասիրությանը բավարարություն տալու նպատակով հայ-վրաց գրական կապերի երախտավոր Հարություն Միրիմանյանը (1870-1952), 1896 թ. «Մուրճ» ամսագրի համարներում հոդվածաշար է տպագրում «*Վրաց գրականության լուսատու աստղի*» կյանքի ու գործունեության վերաբերյալ, հրատարակում պոեմի արձակ թարգմանությունը: Այնուհետև ուսումնասիրությունը և թարգմանությունը լույս է ընծայում առանձին գրքով:

Միրիմանյանը խորամուխ է եղել երկի բովանդակության մեջ, վեր հանել ու շեշտել յուրահատկությունները, ընդգծել ստեղծագործության առանցքը կազմող իդեալները՝ հավատարմություն, կնոջ պաշտամունք, հայրենասիրություն, բարեկամություն, մարդասիրություն, ազնվություն, անձնագոհություն, առատածեռնություն և անկաշառ սեր մարդկանց հետ հարաբերություններում:

1910 թ. Կովկասի հայոց հրատարակչական ընկերությունը որոշում է մայրենի լեզվով լույս ընծայել համաշխարհային գրականության գլուխգործոցներից մի քանիսը, դրանց թվում և «Ընծենավորը»: Պոեմի թարգմանությունը իրականացնելու խնդրանքով ընկերության վարչությունը դիմում է Հովհաննես Թումանյանին: Ահա բանաստեղծի համաձայնությունը հավաստող երկտողը. «*Ի պատասխան հարգելի վարչությանդ և խմբագրական մասնաժողովի խառն*

ժողովի թիվ 56 գրությանը ինձ արած առաջարկին, թե քանի ժամանակում և ինչ պայմաններով հայերենի կթարգմանեն Շոթա Ռուսթավելու «Ընծենավորը» հռչակավոր վիպերգությունը, պատիվ ունիմ հայտնելու, որ թարգմանությունը կանեն հինգ տարվա ընթացքում, յուրաքանչյուր տողին կառնեն մի ռուբլի, գործը կմնա սեփականություն ընկերությանը»:

Հասարակական գործունեությանը զբաղված լինելու, առողջական վիճակի թե պայմանները չընդունվելու պատճառով չի իրականացել այդ հանրաշահ գործը: Այդուհանդերձ նա ուսումնասիրել է պոեմը, նրա տաղաչափությունը, գնահատել ըստ արժանվույն, և որ շատ կարևոր էր ժամանակի համար, այն դիտել է իբրև վրաց ժողովրդի բանաստեղծական հանճարի դրսևորում. «*Վրացու անմիջական և սրտաբաց բնավորությունը, նրա սրտի ազնվությունը, բնական մաքրությունն ու անարատությունը, ազատության և գեղեցկության սերը, այս բոլորը ամեն կողմից լուսավորված կյանքի սիրով և նուրբ վշտով, առհավատչյա են այն բանի, որ վրաց բանաստեղծությանն սպասում է մեծ ապագա: Այդ հատկությունները զարմանալիորեն երևան են եկել Շոթա Ռուսթավելու մեջ, և նա իր ամբողջ երջանքը վրացի բանաստեղծ է»:*

Թումանյանը քննադատել է Ռուսթավելու երկի բալնոնոյան թարգմանությունը. «*Շոթա Ռուսթավելին մեծ գրող է. նրա գրվածքը շատ է գեղեցիկ, պատկերներով լիքը, սահուն հոսում է մեծ ու խաղաղ գետի նման, բայց Բալնոնոը հաջող չի թարգմանել, թեև նա վիրտուոզ է, խոսքի վարպետ... կարողանում է հանգեր սարքել, իրար զգել, բայց հոգին, շունչը չի տվել, չկա, մեռցրել է»:*

Հետաքրքիր է, որ բանաստեղծի անձնական գրադարանում եղել է «Ընծենավորի» լավագույն ձեռագրերից մեկը՝ արտագրված 1839 թ. (գրիչ՝ Ավետիք Գորգիջանով):

1913 թ. հունվարին վրաց ականավոր բանաստեղծ Ակակի Ծերթելին մեկնում է Մոսկվա, որտեղ համերկրացի ուսանողները իրենց ազգային գործչին դիմավորում են այնպիսի ջերմությամբ, հարգանքի, երախտիքի ու սիրո այնպիսի ցույցերով, որ տեղացիները ապշահար հարցուփորձ են անում, թե ով է, և ինչով է բացատրվում այդ մարդու նմանօրինակ մեծարումը: Նույն հարցով ռուս լրագրողներից մեկը դիմում է Վահան Տերյանին: «*Հզիտեմ: Ասացի ու առաջին անգամ կյանքումս ինձ շատ վատ զգացի՝ վրացերեն չիմանալուս համար, որովհետև ես չզիտեի անգամ, թե ինչ է գրել Ծերթելին: Ի՞նչ կարող էի պատասխանել հարցասեր ռուսին, - շարու-*

նակում է Տերյանը,- որը գիտեր, որ ես հայ եմ, բայց հավատացած էր, որ ես պիտի լավ ծանաչեմ վրացիներին: Եվ իրավացի էր, իհարկե, իմ ծանոթ ռուսը՝ սպասելով, որ ես ավելի տեղյակ կլինեմ մեր դարավոր հարևան ժողովրդի կյանքին ու գրականությանը»:

Ռուս ընկերոջ հարցը և Տերյանի պատասխանը, հավանաբար, աստեղային պահերից են, քանզի դրանից անմիջապես հետո բանաստեղծն սկսում է ուսումնասիրել վրաց լեզու և գրականություն, հատկապես «Ընծենավորն» ու ռուսթավեյան դարաշրջանը: Նրա հոգին տոգորված էր վեհ ցանկությամբ՝ ինչ-որ չափով վերացնել հայ և վրաց իրականության մեջ առաջացած ճեղքը և հայ ընթերցողի սեղանին դնել հարևան ժողովրդի անխամրելի փառքը համարվող երկի թարգմանությունը: Իր իղձն իրականացնելու նպատակով նա դառնում է «Բժախնդրության չափ բարեխիղճ մշակ ու համառությանը կատարում սկզբնական գիտելիքները յուրացնելու տաղտկալի սև աշխատանքը, որ անհրաժեշտ էր գիտական ավելի բարձր նվաճումների» և բարձրորակ թարգմանություններ կատարելու համար: Շատ շուտով նա յուրացնում է վրաց լեզվի հիմունքներն ու ձեռնամուխ լինում պոեմի թարգմանությանը:

Պոեմի նախերգանքից Տերյանի կատարած թարգմանությունը հավասարազոր է բնագրին: Ահա ինչու, վրացերենի նրա ուսուցիչը՝ Ն. Մառը, վկայում է, թե «կարելի է կարծել, որ Տերյանը չէ հայերեն բանաստեղծում, այլ ինքը՝ Շոթան»:

«Ինչպես է ծագել ռուսթավցի Շոթայի «Ընծենավորի» թարգմանության միտքը Վահան Տերյանի մեջ» հոդվածում Պ. Մակինցյանը գրում է. «Վ. Տերյանը, մի քանի տարի տքնելով, կավարտեր վրաց գրականության հոյակապ երկի հավասարարժեք թարգմանության գործը», բայց նրա վաղաժամ մահը զրկեց մեզ «մեր հարևանների պոեզիայի թագն ու պարծանքը» համարվող երկը բնագրին համազոր թարգմանությամբ ունենալու հարստությունից:

Ռուսթավելու մեծությանն անդրադարձել է նաև Ակսել Բակունցը: Խորհրդային գրողների համամիութենական առաջին համագումարում ունեցած ելույթում նա ասել է. «...Այստեղ լսեցինք Շևչենկոյի, Ռուսթավելու, Յոզիանենս Թումանյանի և այլոց մասին: Ես պետք է ասեմ, որ ճիշտ չի լինի հիշատակել նրանց անունները՝ չավելացնելով, որ նրանք պատկանում են բոլոր ժողովուրդներին: Ես՝ հայ գրողս, նրանց համարում եմ ինձ հարազատ այնպես, ինչպես Թումանյանին: Ես Ռուսթավելուն համարում եմ ինձ համար այնպիսի հարազատ գրող, ինչպես Խորենացուն. նրա ստեղծագործությունը

արդեն մտել է մեր ընդհանուր գանձարանը»:

1937 թ., պոեմի գրչության 750-ամյակի առթիվ, Երևանում պետհրատը լույս է ընծայում հայերեն առաջին ամբողջական թարգմանությունը, որ բնագրից իրականացրել էր բանասեր, արձակագիր և թարգմանիչ Գևորգ Ասատուրը: Նույնը վերահրատարակվում է 1966-ին՝ «Գրական հուշարձաններ» մատենաշարով: 1983 թ. Թբիլիսիում տպագրվում է ևս մեկ ամբողջական թարգմանություն, որ տասնյակ տարիների տքնաջան աշխատանքից հետո լույս աշխարհի հանեց թբիլիսահայ բանաստեղծ Յովհաննես Կարայանը:

Ռուսթավելուն ու նրա պոեմին անդրադարձել են նաև հայ նկարիչներն ու քանդակագործները: Դեռևս անցյալ դարի վերջերին Գևորգ Բաշինջադյանը «Ընձենավորի» մոտիվներով ստեղծել է նկարներ, որոնք, ցավոք, առայժմ չեն հայտնաբերվել: Ռուսթավելու դիմանկարն ստեղծել են Ռուբեն Շահվերդյանը, Ջոտտոն և ուրիշներ:

Ռուսթավելագիտության մեջ իրենց լուծման ունեն գրականության ու գիտության երախտավորներից Ալ. Շիրվանզադեն, Յովհ. Թումանյանը, Լեոն (Առաքել Բաբախանյան), Ավ. Իսահակյանը, Յովսեփ Օրբելին, Լևոն Մելիքսեթ-Քեկը, Գուրգեն Սևակը և ուրիշներ. նրանք բանիմացությամբ են արտահայտվել վրաց գրողի մասին. երկը դիտել են վրաց գրականության զարգացման օրինաչափ արդյունք, վրացական միջավայրի ու մտածելակերպի արտահայտություն: Պոեմի գրչության 750-ամյակին նվիրված հանդիսությունների ժամանակ Ավ. Իսահակյանն ասել է. «Շոթա Ռուսթավելին համաշխարհային այն եզակի հանճարներից է, որոնց մեջ ամփոփվում են ու բյուրեղանում մարդկության լավագույն իղծերը, մաքառումները, երազները, իդեալները, որոնց մեջ մարդկությունը հասնում է իր արշալույսին, կատարելությանը»:

Բերված փաստերով, իհարկե, չի սպառվում Շոթա Ռուսթավելու և նրա պոեմի նկատմամբ հայ ժողովրդի, հայ գրիչների, բանաստեղծների, նկարիչների, բանասերների ու թարգմանիչների հետաքրքրությունը: Նշենք նաև, որ Ռուսթավելուն պոեմներ ու բանաստեղծություններ են նվիրել Յովհաննես Թումանյանը, Յովհաննես Շիրազը, Սարմենը, Աշոտ Գրաշին, Սուրեն Վահունին, Գուրգեն Բորյանը, Յովհաննես Պողոսյանը, Յենիկ Թումանյանը և շատ շատերը: Ինչ խոսք, դրանց մեջ իր վեհությամբ և բովանդակության հագեցածությամբ շահեկանորեն առանձնանում է Յովհ. Թումանյանի «Նվեր Կրաստանի բանաստեղծներին» ձոնը.

Չէ՛, չի լռել մեծ Շոթայի
Երգի ձենը կաթոգին,
Ու դարավոր ցավն ամեհի
Չի խորտակել էն հոգին:
Թընդում է դեռ նոր ձեռքերում
էն քնարը գովանի,
Խընդում է դեռ նոր երգերում
Վըրաստանը գեղանի:

Հայ իրականության մեջ ռուսապելագիտությունն ունի և՛ ավանդույթներ, և՛ ձեռքբերումներ, որոնց վրա հիմնվելով՝ գրվում են ուսումնասիրություններ, ատենախոսություններ, հոդվածներ, կատարվում թարգմանչական նորանոր փորձեր:

«Շոթա Ռուսապելին նախախորհրդային հայ մամուլում» (վրաց.)
«Լիտերատուրուլի Սաքարթվելո»
(«Գրական Վրաստան»)
Թբիլիսի, 28 փետրվարի 1975 թ.

Այդ արժանիքներն են հաշվի առել հայ-վրաց գրական-մշակութային գործիչները, որ, ձեռնամուխ լինելով վրաց գրականությունը ծրագրված կերպով հայ հանրությանը ներկայացնելու աշխատանքին, սկսեցին Իլիա ճավճավաձեի (1837-1907) երկերից:

Հայ-վրաց գրական կապերի երախտավոր Տիգրան Փիրումյանը (1850-1934) «Մուրճ» ամսագրի 1891 թ. ապրիլյան համարում «ճավճավաձեի վեպի առիթով» անդրանիկ հոդվածում գրում է. *«Աչքի առաջ ունենալով այն անհաճո հանգամանքը, որ հայ գրականությունը վրաց համար և վրաց գրականությունը հայոց համար երկու անձանոթ աշխարհներ են, մտադրվեցի ծանոթացնել հայ ընթերցողին վրաց գրականության հետ՝ սկսելով «Մուրճի» սույն համարից տպել հարգելի իշխան Իլիա ճավճավաձեի ամենագլխավոր գործը»¹:*

Նա համառոտ ակնարկ է նետում վրաց ժամանակակից գրականության ու լրագրության վրա, տալիս ընթերցողի կողմից լայն ճանաչում գտած վիպասաններ Դանիել ճոնքաձեի, Լավրենտի Արդագիանիի, Գրիգոլ Ռջեուլիշվիլու, Ալեքսանդրե Ղազբեգիի երկերի սեղմ բնութագրումները: Ջերմությամբ է խոսում *«վիրական քնարի փայլուն աղանձողներ»* Ալեքսանդր ճավճավաձեի, Գրիգոլ Օրբելիանիի, Նիկոլոզ Բարաթաշվիլու, Ռափիել Էրիսթավիի, Ակակի Ծերեթելու, Իլիա ճավճավաձեի, ինչպես նաև *«մեծ ապագա խոստացող»*, երիտասարդ Ռազիկաշվիլու (Վաժա-Փշավելայի՝ Յ.Բ.) մասին, *«պատկառելի ու համակրելի քերթողներ, որոնց գողտրիկ ու դյուրիչ ոտանավորները կկարդացվեն դարուց ի դարս»:*

Այս էքսկուրսից հետո քննադատը մանրամասնում է ճավճավաձեի կենսագրությունը, գրական առաջին քայլերից մինչև զեղարվեստական այնպիսի երկերի ստեղծումը, որ *«երբեք չեն հնանա և հափշտակությամբ կկարդացվեն բոլոր դասակարգերից հավասարապես»:* Դա *«Մա՞րդ է արոյոք»* վիպակն է, *«լուսանկարչական մի գորտեղ պատկեր, որ ընթերցողին զարհուրեցնում է հին պորտաբույծ կալվածատերի հոգեկան անկումը՝ յուր առեղի մերկությամբ»:* «Մուրացկանի պատմածն» է, որտեղ նա *«ներկայացնում է ոչ թե ճորտական դրությունից փչացած կալվածատիրոջ, այլ այդ ճորտությունից թշվառացած մի ճորտի»:* «Օթարանց այրին» է, ուր հեղինակն ստեղծել է *«վերին աստիճանի համակրելի անձնավորություններով լցված մի փոքրիկ, վարդագույն աշխարհ»:*

«Մա՞րդ է արոյոք» վիպակի փիրումյանական թարգմանության արձագանքը գտնում ենք նույն ամսագրի 1892 թ. համարներից մե-

կուն: Խմբագրությունը տեղեկացնում է, որ ճավճավածի երկը մեծ հրճվանքով կարդացել են հայ ընթերցողները, այն «*մեծ պատիվ է բերում հեղինակի տաղանդին և վրաց գրականությանն առհասարակ*»²:

Հիշյալ թարգմանությունը 1892 թ. լույս է տեսնում առանձին գրքով: «Մշակն» արձագանքում է «*օգտակար երևույթին*», թեև խստորեն քննադատում է վիպակի անբավարար թարգմանությունը: Դավիթ Տեր-Դավթյանը, ի մի բերելով «Մուրճում» և «Տարագում» տպագրված վրաց հեղինակների երկերը, նշում է, որ շատ քիչ են թարգմանված առաջնակարգ գրողներ Ի. ճավճավածեն, Ա. Ծերեթելին, Ա. Ղազբեգին, Գ. Ծերեթելին, որոնց գործերը հայ ընթերցողի կողմից «*սիրով կկարդացվեն*»:

Դ. Տեր-Դավթյանը, իշխանների կերպարը համարելով հավաքական և համոզիչ, նշում է, որ թաթարիձենների «*մտավոր կրթությունը կատարյալ քառս է. նրանք պարարտացնում էին իրենց մարմինը, իսկ գլուխը թողնում դատարկ: Վիպակի մեջ ներկայացված է ճորտերի թշվառ կյանքը նույն իշխանների ձեռքին, որոնք կեղեքում էին նրանց և արյունը ծծում*»³:

«Տարագը» Ի. ճավճավածեից տպագրել է միայն «Էլեգիա» ոտանավորը⁴, բայց բազմաթիվ են այն գրախոսությունները, որոնցում քննարկվում են գրողի գործունեությունն ու երկերը: Շաբաթաթերթն ավելի ուշադրություն է դարձրել գնահատման միջոցով հեղինակի գրական ժառանգության մասսայականացմանը:

1892 թ. Վրաց հրատարակչական ընկերությունը լույս է ընծայում գրողի ժողովածուն չորս հատորով: Այդ առթիվ Հարություն Միրիմանյանը հանդես է գալիս «Տարագում»՝ քննարկելով «Տեսարաններ ճորտերի ազատության առաջին տարիներից» և «Օթարանց այրին» երկերը: Շարադրելով պիեսի բովանդակությունը՝ նա կարողանում է վեր հանել հեղինակի սարկազմը՝ ընդդեմ ֆեոդալների հակամարդկային արարքների: Ըստ նրա՝ ճավճավածեն քողագերծել է այն ճորտատերերին, ովքեր «*չեն ուզում մոռանալ իրենց բռնակալական իրավունքները*»: Այնուհետև նշվում է, որ ճավճավածեն «*բացարձակ կերպով կանգնում է գյուղացիների և ազնվականության հավասարության կողմը և կծու հեզնում այն մեկին, որ շարունակում է պնդել, թե գյուղացին՝ նախկին ճորտը, մարդ չէ*»⁵:

«Օթարանց այրին» վիպակի մասին Միրիմանյանը գրում է. «*Հեղինակի գլխավոր նպատակն է եղել նկարագրել այն վիճակը, որ գոյություն ունի տեսության և այն իրագործելու մեջ*»: Հետաքրքիր է նրա

մոտեցումը, որ տեսականի ու գործնականի հակասությունը ոչ միայն Արչիլի աշխատանքի մեջ է գտնում, այլև Գեորգիի՝ Կեսոյի հանդեպ տածած զգացումի մեջ. «Տեսականի ու գործնականի հակառակությունն երևում է երիտասարդ գյուղատնտեսի գործունեության և Գեորգիի սիրային պատմության մեջ: Այն, ինչ քարոզվում է, ցանկալի է հայտարարվում, չի իրականանում, մի դեպքում գյուղատնտեսական թերոփանների խիստ վերացականության, մյուս դեպքում՝ այն ուժեղ նախապաշարումների պատճառով, որ հասարակության՝ անգամ ամենազնիվ մասը ծծում է շրջակա մթնոլորտից...»⁶:

Ընդհանուր գիծ նշմարելով խնդրո առարկա ստեղծագործությունների միջև՝ նշվում է, որ Իլիա ճավճավաձեն ամենուր պաշտպանում է գյուղացու արժանիքները, մարդկայնությունն է բարձր դասում ամեն ինչից: Մարդը մարդ է ոչ միայն հարստությամբ, դիրքով, ծագմամբ կամ վայրիվերո ստացած գիտելիքներով, այլև ակտիվ գործունեությամբ, ազնվությամբ, բոլորին օգնելու պատրաստականությամբ: Նման բարեբեր մտքեր սերմանելու համար են «սիրում վրացի հեղինակի գրվածքները, և զարմանալի չէ, որ Իլիա ճավճավաձեն հարազատ ժողովրդի շատ սիրելի հեղինակներից է»:

«Մուրճի» 1904 թ. համարներից մեկում Տ. Փիրումյանը քննարկում է «խոշոր ու սիրելի բանաստեղծի»՝ ճավճավաձեի չափածոյի նորերս լույս տեսած հատորյակը: Նա նշում է, որ գրողը, տասը տարի առաջ հրատարակելով իր երկերի քառահատոր ժողովածուն, «այլևս ոչ մի գեղարվեստական գործ չի արտադրել... Իշխանը բոլորովին դադարել է գրելուց, չէ գործում նրա դյուքից քնարը, լռել է նույնպես հրապարակախոս գրիչը»: Դրվատելով ընտրանու լույսընծայումը՝ քննադատն ընդգծում է, որ այն «կարող է մատակարարել ժողովրդին անպայման օգտակար մտքեր ու զարթեցնել նրա մեջ համակրելի գաղափարներ»: Քերթվածքները կարդալով՝ Տ. Փիրումյանը բացականչում է. «...Ամբողջ գիրքը ծայրեիծայր ներշնչում է ընթերցողին ամենամարդասեր զգացումներ, պարսավում է ատելությունը դեպի մարդիկ: Բանից դուրս է գալիս, որ ճավճավաձեն բոլորովին ուրիշ մարդ է եղել մինչև ծերության հասակին հասնելը, և կամ նա մի առանձին երկյուղածությամբ է մոտենալիս եղել գեղարվեստի սուրբ տաճարին...»:

Այնուհետև շարադրում է «Վրացու մորը», «Բազալեթի լիճը», «Էլեգիա», «Գարուն», «Մայր և որդի», «Հարց և պատասխան», «Ի՞նչ արեցինք...» բանաստեղծությունների ու մի քանի քառյակ-

ների սյուժեները և շարունակում. «*Ահա թե ի՞նչ սքանչելի բարոյական սնունդ էր տալիս իր ընթերցողներին իշխան ճավճավածեն, երբ գործում էր իբրև բանաստեղծ և երբ հասակով էլ ավելի թարմ էր*»⁷:

Վրացական ԽՍՀ ՊՊ արխիվում ևս պահպանվել են հայ հեղինակների՝ Իլիա ճավճավածեին վերաբերող հոդվածներ, որոնց տպագրությունն ինչ-ինչ պատճառներով արգելել է գրաքննությունը: Այդ նյութերից մեկում հեղինակը «*հումանիզմի սիրահար հարգելի իշխանի մասին*» գրում է, որ նա ընթերցողի հոգուց հանում էր վատի ու չարի սաղմերը, քարոզում լավն ու բարին, ջերմացնում մարդկանց սրտերը, մեղմում կրքերը և «*մեր եղբայրակից ժողովուրդների մեջ համամարդկային զգացմունքներ ու իդեալներ սերմանում*»⁸:

Իլիա ճավճավածեի գրական-հասարակական գործունեությունը լուսաբանող բազմաթիվ թղթակցություններ են լույս տեսնում 1907 թ. սեպտեմբերից, երբ բանաստեղծը դառնում է ահաբեկչության գոհ:

«Եղեռնական ոճիրին» առաջինն արձագանքում է «Մշակը»: Հատկանշական են Ալեքսանդր Քալանթարի «Դա պարտություն է» («Մշակ», 1907, N 103) և Համբարձում Առաքելյանի «ճավճավածեի թաղումը» (նույն համարում) բովանդակալից մահախոսականները:

Ա. Քալանթարը, դատապարտելով բանաստեղծի դեմ պայքարելու «ստոր և հանցավոր» եղանակը, խոսում է ճավճավածեի հրապարակախոսի արժանիքների, գաղափարական պայքարում ունեցած հաջողությունների ու վրիպումների մասին: Բանավեճն ու քննադատությունը համարելով «*կռվելու ազնիվ ձև, հասարակական կյանքի ու գրականության հոգի*»՝ նա գրում է. «*Նույն ճավճավածեի վերաբերությամբ «Մշակ» լրագիրն առիթներ է ունեցել պայքար մղելու և նույնիսկ խիստ լեզու բանեցնելու: Մենք մեր բարոյական պարտականությունն ենք կատարել՝ քննադատելով այն, ինչ որ վիճելի էր, ինչ սխալ էր մեր կարծիքով*»:

Վրաց իրականության մեջ նույնպես Իլիա ճավճավածեն և՛ համախոհներ է ունեցել, և՛ ընդդիմախոսներ, և՛ հաղթել է, և՛ պարտվել, բայց այդ ամենը կատարվել է թույլատրելի միջոցներով՝ ճառերով, բանավիճելով, ընտրապայքարով:

«*Վրաց ազգն այսօր սզի մեջ է, - շարունակում է հոդվածագիրը, - խելագարության, թեթևամտության և մոլորության գոհ դարձավ այնպիսի խոշոր անձնավորություն, որպիսին է ազգային բանաստեղծը. ցնցվեց վրաց հասարակությունը, և նրա հուզմունքը դարձավ մի ահեղ բողոք*»:

Հայ գործիչն իր խոսքն ավարտում է կոչով՝ սթափվել, վերջ տալ հասարակական, քաղաքական գործիչների, հրապարակախոսների, գրողների և այլոց նկատմամբ վրեժխնդիր լինելու նման գործելավերպին:

Հաջորդ հոդվածում բերվում են ճավճավածեի հուղարկավորության մանրամասները: Նշվում է, որ նման «գրանդիոզ և համաժողովրդական թաղում թիֆլիսը վաղուց չէր տեսել. կարելի է ասել, որ ամբողջ Վրաստանը լացում և ողբում էր կիրակի օրը»:

Թաղման արարողությանը մասնակցել են վրացական, հայկական, ռուսական, հրեական հաստատությունների ու կազմակերպությունների ներկայացուցիչներ՝ հարգանքի տուրք մատուցելով «վրաց ժողովրդի ամենամեծ բանաստեղծին», որի «քմարի լարերը դեռ երկար կթրթռացնեն Վրաստանի զավակների սրտերը...»:

Իլիա ճավճավածեի մասին հոդվածաշար է տպագրված «Հովիվ» հանդեսի 1907 թ. 34-37, 39, 42, 46 և 47 համարներում: Այն կրում է «Իշխան Իլիա Գրիգորի ճավճավածե» վերնագիրը, ստորագրված է՝ Կ. Թեմ. (հավանաբար՝ Կարապետ Թեյմուրազյան՝ Յ.Բ.):

Հոդվածագիրը Իլիա ճավճավածեի գրական գործունեությունը բաժանում է երեք շրջանի. առաջին շրջանին վերագրում է «Մա՞րդ է արդյոք», «Կակո», «Մուրացկանի պատմածը» երկերը, երկրորդ շրջանի երկերում («Մայր և որդի», «Դավիթ թագավորը») ճավճավածեն «փառաբանում է հայրենասիրությունը և նրա փրկության համար կատարած անձնազոհությունը», երրորդ շրջանում «իշխանն իր գրիչը նվիրում է գեղարվեստին և տալիս... «Մենակյացը» սքանչելի պոեմն ու «Բազալեթի լիճը» բանաստեղծությունը»:

1911-1912 թթ. ճավճավածեի «ճգնավորը» պոեմի շուրջ վրաց գրաքննադատության մեջ արդեն որերորդ անգամ բանավեճ է սկսվում, որ երիցս կրում է սկզբունքային բնույթ:

«Հորիզոն» թերթը վկայում է, որ վեճի առիթ է դարձել վրացական «Մնաթրփի» հանդեսում արտահայտված կարծիքը, թե ճավճավածեն դեմ չի եղել ճգնավորությանը: Որպեսզի ընթերցողին պարզ լինի երկի բնույթը, նախ շարադրվում է պոեմի սյուժեն և ապա գնահատվում:

Իլիա ճավճավածեի երկը «վրաց գեղարվեստական գրականության ամենաընտիր գոհարներից է,- կարդում ենք թերթում,- այն շատ խոր տպավորություն է թողնում իր հոգեբանական վերլուծումով, ուժեղ լեզվով, գեղեցիկ, ներդաշնակ ռիթմով», դրա համար էլ վեճը գեղարվեստական արժանիքներին չի վերաբերում, քանզի այն

«ամեն կասկածից վեր է, այլ, թե ինչ վերաբերմունք է ցույց տալիս ինքը՝ հեղինակը, դեպի ճգնավորության, կուսակրոնության գաղափարը»: Վկայելով վրաց գրականագետների ներհակ հայեցակետերը՝ գրախոսը նշում է, որ ճավճավածի վերաբերմունքը բացասական չէ ճգնավորությանը, միաժամանակ հավելելով, թե «մեծ բանաստեղծին հաջողվել է շատ ազդու և գեղեցիկ կերպով ապացուցանել կուսակրոն կյանքի անբնականությունը»⁹:

Իլիա ճավճավածեն ձգտել է տալ մարդկային կյանքի ու բնության փոխկապակցությունը, ձգտել է որոշել մարդու իսկական տեղը, նրա կոչումն ու հասարակական պարտքը: Ի՞նչ մխիթարություն կտրվել հասարակությունից և փակվել անձավում. հոգու ի՞նչ անմահություն, հանդերձյալ կյանքի ի՞նչ հավատամք, Աստծուն միանալու ի՞նչ ցնորամիտ տենչ. դրանք ինքնախաբ սփոփանք են սոսկ:

Հարուցած նման հարցերին տալով գեղարվեստական հնչեղություն՝ ճավճավածեն պայքար է մղել ընդդեմ անհատապաշտության և «անձնական անմահության» տեսության:

Քննադատները դժվարացել են հետևել գեղագետի մտքի թռիչքին, խորանալ պոեմի փիլիսոփայության մեջ, պարզաբանել տարբեր մտքեր ու գաղափարներ մարմնավորող ճգնավորի ու հովվուհու կերպարների դրամատիզմը: Այդ պատճառով էլ հայ և վրաց որոշ գրականագետներ հանգել են թյուր եզրակացությունների, մինչդեռ հեղինակի վճիռն ասկետիզմի հանդեպ ակնհայտորեն բացասական է:

1913 թ. մայիսի 5-ին վրաց ժողովուրդն իր երախտիքն է մատուցում Իլիա ճավճավածեին՝ նրա գերեզմանին կանգնեցնելով Յակով Նիկոլաձեի քանդակած «Մծուխարե Սաքարթվելո» («Սգավոր Վրաստան») հրաշակերտ հուշարձանը:

Բացման արարողությանը ելույթ է ունենում նաև Ալ. Քալանթարը: Նա գնահատում է ճավճավածեի՝ իր երկրին մատուցած ծառայությունները. «Առանձին քաղաքացիներ մեռնում են, բայց չի մեռնում ազգը. չեն մեռնում և ազգի այն որդիները, ովքեր մարմնացնում են իրենց ազգի հանճարը, ազգի հոգեկան կրողը: Այդ հանճարն անմահ է: Նա, իբրև բարոյական խտացում ազգի ունակությունների և հոգևոր կյանքի, ապրում է դարեր՝ անցնելով սերնդից սերունդ»¹⁰:

Նույն թեմային է նվիրված «Հորիզոնի» մի հոդված (1913, N 105): Նրանում նախ նշվում են «վրացական բանաստեղծության կորիֆեյի» մահարձանի բացմանը նախորդած միջոցառումները, ապա մի քանի պոեմներ ու ներբողներ, որ «թվչանքով են լցնում

մարդու սիրտը, ընթերցողի հոգին ներարկում հայրենասիրական գգացումով»:

Իլիա ճավճավաձեի կյանքի ու գործունեության մասին հմուտ հոդվածաշար է տպագրված «Գաղափարի» 1916 թ. 105-109 համարներում (հեղինակ՝ Յուսիկ Գնթունի):

Կենսագրական հարուստ տեղեկություններ տալով՝ նա շեշտում է Ռուսաստանում կրթություն ստացած անդրկովկասցի երիտասարդ մտավորականների հայացքների ձևավորման վրա ռուս գրողների ու քննադատների ազդեցության մասին: Բայց անճշտություն է թույլ տալիս՝ հայտարարելով, թե «վաթսունական թվականների գործիչները գտնվում էին նարոդնիկական շարժման ազդեցության տակ. ...ճավճավաձեն ևս բացառություն չպետք է կազմեր այդ ընդհանուր հոսանքի մեջ»¹¹:

Չողվածագիրը թյուր պատկերացում է ունեցել վաթսունական թվականների գործիչների ու նարոդնիկական շարժման վերաբերյալ: Նշենք միայն, որ նարոդնիկական շարժումը, որի ներկայացուցիչներն են Մ. Ղիփիանին, Ի. Իոսելիանին, Վ. Սամադաշվիլին, Ն. Լոմոուրին, Ս. Մգալբլիշվիլին, Եկ. Գաբաշվիլին և ուրիշ գրողներ ու հասարակական գործիչներ, Վրաստանում սկիզբ է առել 1870-ական թթ., իսկ վաթսունական թվականների գործիչներ վրաց գրականության ու հասարակական մտքի պատմության մեջ համարվում են Ի. ճավճավաձեն, Ա. Ծերեթելին, Ն. Նիկոլաձեն, Գ. Ծերեթելին և այլք, ովքեր բացարձակապես զերծ են մնացել մնացն հովերից:

Քննարկելով ճավճավաձեի՝ ճորտատիրությունը դատապարտող մի քանի երկեր՝ Յ. Գնթունին գրում է, որ նա գրական գործունեության հենց սկզբից սկսեց խարազանել իրավակարգի հետամնացությունը, ֆեոդալների դատարկապորտությունն ու ծուլությունը:

Քննադատն անաչառ գնահատական է տալիս այդ թեմայով գրված երկերին:

Յ. Գնթունին Իլիա ճավճավաձեի բանաստեղծությունների համար «խոշոր պլյուս» է համարում, որ «նրանք կարողանում են թուփել արծարծած համազգային ու հայրենասիրական գաղափարներով և ապրեցնել ընթերցողին»¹²:

Իլիա ճավճավաձեն վրացի այն գրողներից է, որի նկատմամբ նախախորհրդային հայ մամուլը երբեք չի թուլացրել ուշադրությունը: 1891-ից մինչև 1916-ը թերթերն ու ամսագրերը անընդմեջ անդրադարձել են գրական, հասարակական-քաղաքական, կրթա-

կան-լուսավորական ոլորտներում գրողի՝ գործունեությանը: Հրապարակված հոդվածների, զրախոսությունների և ուսումնասիրությունների մեջ արտացոլված է Իլիա ճավճավաձեի կերպարն իր ողջ հասակով:

1. «Մուրճ», 1891, N 4, էջ 435:
2. «Մուրճ», 1892, N 3, էջ 506:
3. «Մշակ», 1898, N 82 («Մի՞թե մարդ է աղանորդին», վեպ Իլիա ճավճավաձեի, թարգմանեց Տիգրան Փիրումյանը):
4. Իլիա ճավճավաձեի «Գարուն» և «Էլեգիա» բանաստեղծությունները թարգմանել է Հովհ. Թումանյանը (Տե՛ս «Արոր», 1907, N 7):
5. «Տարազ», 1893, N 27, էջ 430 («Իլիա ճավճավաձեի գրվածքները»):
6. «Տարազ», 1893, N 27, էջ 431:
7. «Մուրճ», 1904, N 8, էջ 65:
8. Տե՛ս Վրացական ԽՍՀ ՊՊԿ արխիվ, ֆ. 480, ց. 1, N 1974:
9. «Հորիզոն», 1912, N 4, («Մի ընտիր վրացերեն պոեմա և ասկետիզմի հարցը»):
10. «Մշակ», 1913, N 97 («Իլիա ճավճավաձեի արձանի բացումը»):
11. «Գաղափար», 1916, N 105 («Իշխան Իլիա ճավճավաձե»):
12. «Գաղափար», 1916, N 109:

«Իլիա ճավճավաձեն և նախախորհրդային հայ մամուլը»,
«Մնաթորի», 1974 թ., N 4, էջ 140-145 (վրաց.)

Նույնը՝

«ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ» 1976 թ., N 3:

ՎԱԺԱ ՓՇԱՎԵԼԱ

Վաժա Փշավելայի (1860-1915) ստեղծագործություններին հայ ընթերցողի ծանոթությունը կայացել է 1894 թ., երբ Թիֆլիսում հրատարակվող «Աղբյուր» մանկական ամսագրում (խմբագիր՝ Տիգրան Նազարյան) Տիգրան Տեր-Դավթյանի թարգմանությամբ տպագրվում է «Եղջերուն» պատմվածքը: Դա Վաժա Փշավելայից կատարված առաջին թարգմանությունն էր այլ լեզվով: 1909 թ. Գարեգին Լևոնյանի «Գեղարվեստ» հանդեսում հրատարակվում է «Լեռան աղբյուրը» պատմվածքը: Թեև գեղարվեստական թարգմանությունները չնչին էին, բայց նրա լավագույն երկերին հայ ընթերցողը տեղյակ է եղել արծակ շարադրությամբ: Զգալով, որ դրանք էլ «*փշրանքներ են բանաստեղծի ճոխ սեղանից*», հայ մամուլն ավելի շատ ուշադրություն է դարձրել գրողի երկերը գրադատության միջոցով մասսայականացնելուն:

Վաժա Փշավելայի ստեղծագործությունների մասին առաջին կարծիքը հայ իրականության մեջ հայտնվել է «Մուրճ» ամսագրի (խմբագիր՝ Ավետիք Արասխանյան) 1891 թ. ապրիլյան համարում: Հոդվածը, որ կրում է «Ճավճավածեի վեպի առիթով» վերնագիրը, առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում: Հայ-վրաց գրական կապերի երախտավոր Տիգրան Փիրունյանը (1859-1934) ընթերցողին ծանոթացնում է արծակագիրներ Լ. Արդագիանիին, Դ. ճոնքածեին, Գ. Բչեուլիշվիլուն, Ալ. Ղազբեգիին և ուրվագծում նրանց վեպերում արծարծված թեմաները: Այնուհետև անցնում է «*վիրական քնարի փայլուն աղանամղներ*» Ա. ճավճավածեի, Գ. Օրբելիանիի, Ն. Բարաթաշվիլու, Ա. Ծերեթելու, Ի. ճավճավածեի, Ռ. Էրիսթավիի պոեզիայի գնահատմանը: Գրական անցքերին քաջատեղյակ թարգմանիչը նույն հոդվածում գրում է. «*Ներկա թուպեխ... վրաց ընթերցող հասարակայնությունն ուշիուշով հետևում է երիտասարդ Բազիկաշվիլու (Վաժա Փշավելայի՝ Յ.Բ.) ոտանավորներին, որոնց սրտառուչ, ինքնուրույն ու խիստ ուժեղ արտահայտությունը մեծ ապագա է խոստանում այդ նորելուկին*»¹:

Վաժա Փշավելան նոր ու հետաքրքիր երևույթ էր վրաց գրականության մեջ: Դժվար էր պատկերացնել, որ հանրությունն այնպես ջերմորեն կընդուներ ու կխնկարկեր մի բանաստեղծի, որ գրական

ասպարեզ էր իջնում այն ժամանակ, երբ համայն ազգի սրտի ու մտքի վրա իշխում էին Ի. Ճավճավաձեի և Ա. Ծերեթելու նման մեծություներ, երբ համայն Վրաստանի պաշտամունքը Շ. Ռուսթավելին էր՝ «Ընձենավորը» պոեմով, երբ գրեթե ամեն վրացի անգիր գիտեր Դ. Գուրամիշվիլու, Ալ. Ճավճավաձեի, Ն. Բարաթաշվիլու կենսահույզ երգերը:

Վաժա Փշավելայի դեմոկրատիզմը, լեռնցիների կյանքի կենդանի նկարագրությունը, համազգային մոտիվների ու թեմաների արժարժումը, անհատի ճակատագրի նկատմամբ մտահոգությունն արձագանք գտան ժողովրդի սրտում՝ լայն ճանաչում բերելով հեղինակին, որի արժանիքները անցյալի ու ժամանակակից կյանքի արտացոլման, փիլիսոփայական ընդհանրացումների, բանաստեղծական կերպարների սքանչելի պատկերասրահ ստեղծելու, գեղագիտական ինքնատիպ սկզբունքների մեջ են («Բախտրիոնի», «Յուրը և տանտերը», «Ալուդա Քեթելաուրի»):

Վաժա Փշավելան խորացրեց տիպականացման հնարանքները, բազմալար դարձրեց հայրենասիրական քնարը, ազգային պոեզիան հարստացրեց նոր մոտիվներով: Նա շատ բան արեց հայրենի պոեզիայի շրջանակներն ընդլայնելու և գեղարվեստական մակարդակը բարձրացնելու համար, ցույց տվեց, թե որքան անսպառ են վրաց լեզվի հնարավորությունները: Նրա պոեմներն աչքի են ընկնում կատարելությամբ, ձևերի բազմազանությամբ, գաղափարական խոր բովանդակությամբ:

Վրացի ոչ մի բանաստեղծ այնպես վարպետորեն չի գովերգել բնությունը, այնքան կապված չի եղել նրան, որքան Վաժա Փշավելան: Նա, կարելի է ասել, մերվել էր բնությանը, նրա հրաշալիքներին, երևույթների մեջ տեսել առտնին խնդիրներ, բացել նրա գաղտնիքները, անձնավորել ու շնչավորել: Այս առումով՝ վրաց չափածոյի մեջ (և ոչ միայն վրաց) առանձնահատուկ տեղ է գրավում «Օձակերը» պոեմը, որտեղ հեղինակը փորձ է արել բացահայտել ու պարզաբանել անհատի և բնության կապը:

Վաժա Փշավելայի արձարձած խնդիրներն ու հարուցած հարցերը հետաքրքրել են նաև վիրահայ մտավորականությանը:

Վրաց գրականության վերաբերյալ հողված է տպագրվել «Մուրճում»՝ հայ-վրաց գրական կապերի մեկ այլ երախտավորի՝ Յար. Միրիմանյանի (1870-1956) հեղինակությամբ, որտեղ խոսվում է նաև այս պոետի մասին: Հողվածագիրը շեշտում է հատկապես մի հանգամանք, որ վրաց իրականության մեջ Վաժա Փշավելան և նրա

կրտսեր եղբայրը՝ Բաջանան, որ նույնպես գրող էր, «*դուրս բերին թուշերի, խևսուրների ու փշավների՝ մինչ այդ անհայտ մնացած կյանքը՝ իրենց իսկական գույներով, նոցա զգացմունքներով, գաղափարներով*»²:

Ուշադրության արժանի է նույն ամսագրի «Վրաց կյանքից և գրականությունից. բանաստեղծ Վաթա Փշավելա, վիպագիր Շիո Արագվիսպիրելի» նյութը: Համառոտ տալով Վաթա Փշավելայի կյանքի ու գործունեության բնութագիրը՝ հեղինակը շեշտում է, թե ինչ անսպառ ակունքներից է թեմաներ ընտրում տաղանդավոր բանաստեղծը, ինչպես է հասարակ երկրագործ դարձած աշխատում համագյուղացիների հետ, ուսումնասիրում հայրենակիցների անցյալն ու ներկան, հաղորդակից դառնում նրանց հոգսերին ու վշտերին, ցավերին ու ձգտումներին: «*Կախեթի այդ լեռները լի են անթիվ ավանդություններով ժողովրդական նշանավոր հերոսների մասին, որոնց կտրիճության, անվեհերության գովքն ու պատմությունը երգվում-անցնում են բերնեբերան, ուժ ու աշխույժ ներշնչում սերունդներին: Եվ այ. Վաթա Փշավելան՝ այդ լեռների որդին, տոգորված այդ հերոսների աշխարհի մթնոլորտով, ընծայում է տարին մի քանի մեծ ու փոքր, չքնաղ, կախարդիչ պոեմա մայրենի գրականությանը, որոնք բոլորն էլ կարդացվում են անպայման հափշտակությամբ*»³:

Թեև հեղինակը չի վերլուծում կանանց կերպարները, այդուհանդերձ տալիս է դրանց, ինչպես նաև երկերի լեզվական արտահայտչամիջոցների գնահատականը: «*Այդ պոեմներում, - գրում է քննադատը, - հանդես են գալիս համարյա միշտ նաև լեռնցի համակրելի կանայք՝ իրենց նույնպես անվեհեր հոգով և անձնուրաց, լեռնական վճիտ աղբյուրների նման մաքուր, իստակ սիրով, շքեղ բնության ուժգին թափով շեշտված նկարագրություններ, որսորդական կյանքի հրապուրիչ պատկերներ, ժողովրդական լեզվի ճոխ դարձվածքներ ու բառեր: Նրա բոլոր արտադրությունները կրում են իրենց վրա արտադրողի մեծ խնամքի ու վարպետության կնիքը*»⁴:

Գրախոսը բանաստեղծի որոշ պոեմներում նշմարում է թերություններ ևս, հատկապես երկխոսությունների մեջ. «*Չի կարելի միայն չցավել, որ նա մի քիչ սիրում է ձգձգել իր մեծ պոեմները, նրանց մեջ պատահող խոսակցությունները: Այդ պակասությունից բոլորովին զերծ է... «էթերա» պոեմը, որ զարմանալի կատարելությամբ ձևած ու կտրած ամբողջություն է ներկայացնում*»⁵:

«Մուրճի» 1903 թ. N11-ում տպագրված է «Վրաց կյանքից և գրականությունից» խորագիրը կրող ծավալուն հոդված, որտեղ

խոսվում է Իլիա ճավճավաձեի և Ակակի Ծերեթելու գրական-հասարակական գործունեության մասին, ապա քննարկվում են Շ. Արագ-վիսպիրելիի, Դ. Կլդիաշվիլու և Վաժա Փշավելայի՝ վրաց մամուլում լույս ընծայած երկերը: Գրախոսն անդրադառնում է վերջինիս «Աշունը սարում» չափածո երկին և «Պապի աշխարհիկ խոհերը» պատմըվածքին: Ընթերցողի ուշադրությունը հրավիրվում է հատկապես գործող հերոսի՝ *«լեռնցի ողջամիտ, բարեսիրտ, մարդասեր ծերունու»* հայացքների վրա, որոնք *«մանկավարժական իմաստով շատ ուշագրավ խորհրդածություններ են բովանդակում»:*

Վաժա Փշավելայի մասին ևս մեկ հոդվածի հանդիպում ենք ամսագրի 1904 թ. N 2-ում: Վրաց գրական աշխարհի նորույթներին ծանոթացնելով՝ հանդեսը գրում է, որ վերջին երեք ամսվա ընթացքում վրաց պարբերականներում հրատարակվել են գրական երկեր, որոնցից հատկանշական են հայ ընթերցողին արդեն քաջածանոթ Վաժա Փշավելայի «Նոր տարին Փշավում» պոեմը և «Ասպետի գանգատը» բանաստեղծությունը: Շարադրելով դրանց սյուժեները, գրախոսն ընդգծում է, որ *«դրանք երկուսն էլ վերցված են լեռնականների կյանքից և կարդացվում են սիրով ու հաճույքով»⁶:*

Վաժա Փշավելային մամուլն անդրադառնում է երկարատև ընդմիջումից հետո միայն: Դա անտարբերության հետևանք չէր: 1904 թվականից ի վեր համաշխարհային ասպարեզում տեղի են ունենում տարաբնույթ տեղաշարժեր. գործադուլներն ու ապստամբությունները (նաև Անդրկովկասի արդյունաբերական խոշոր կենտրոններում), Վրաստանի գավառներում բռնկված խռովությունները, հայ եկեղեցապատկան կալվածքներն ու գույքը բռնագրավելու և հայկական դպրոցները փակելու մասին հրամանները, ռուս-ճապոնական պատերազմը, 1905-1907 թթ. ռուսական առաջին հեղափոխությունը, հայ-թաթարական, հայ-վրացական ընդհարումները, երիտթուրքերի սանձազերծած հայկական ջարդերը, վերջապես՝ ստոլիպինյան դաժան ռեակցիան և այլ իրադարձություններ կլանել էին հայ մամուլի ուշադրությունը: Եթե փաստենք, որ այդ տարիներին փակվել էին հայկական մի շարք առաջադեմ թերթեր ու ամսագրեր, դրանց թվում և հանրահայտ «Մուրճը» (1907), ապա պարզ կդառնա, թե ինչու մոտ մեկ տասնամյակ հայ պարբերականները «մոռացության» էին տվել Վաժա Փշավելային ու նրա ստեղծագործությունները, թեև բանաստեղծի մասին տեղեկությունների հանդիպում ենք Ի. ճավճավաձեի սպանությունը և Ա. Ծերեթելու գրական գործունեության 50-ամյա հոբելյանը (1908) լուսաբանող նյութերում:

1914 թ. «Հորիզոն»-ում հրապարակվում է Տ. Փիրունյանի ուշագրավ հոդվածը: Նա հետաքրքիր դեպքեր է նկարագրում վրաց լեռնականների կյանքից, հայ ընթերցողին ծանոթացնում Վաժա Փշավելայի և Ալեքսանդրե Ղազբեգի կերպարների նախատիպերին, խնդիրների ու դեկանոզների ընտրվելու կարգին, նրանց գործունեությանը: Լեռնականների բարոյական անաղարտության, մաքուր կենցաղի ու անկոտրում ոգու մասին է գրում քննադատը և հուշում, որ նրանց առօրյան պատկերող բազմաթիվ սրտառուչ պատմըվածքներ ու վիպակներ է գրել Ալ. Ղազբեգին, որոնցում քիչ չեն նաև վերը հիշատակված խնդիրների ու դեկանոզների, առհասարակ լեռնցի արիասիրտ ծերունիների կերպարները: «Ալ. Ղազբեգից հետո,- կարդում ենք հոդվածում,- մինչև այսօր վրաց լեռնականների կյանքից ընտիր պոեմներ ու բանաստեղծություններ է գրել տաղանդավոր բանաստեղծ Վաժա Փշավելան, որն իր ստեղծագործությունների մյուսը բացառապես վերցնում է այդ զավառներում ապրող փշավների ու խնտուրների նիստ ու կացից...»⁷:

Հիշյալ հոդվածը ազգագրական հետաքրքիր ուսումնասիրություն է ընթերցողի համար: Մանավանդ ուշադրության արժանի է հեղինակի այն միտքը, թե հայերիս Վաժա Փշավելան էլ Հովհաննես Թումանյանն է, թե Փշավելան և Թումանյանը Անդրկովկասի լեռնականների անզուգական երգիչներն են:

Հետագայում ևս հայ և վրաց գրականագետներից շատերը հաճախ են կրկնել տվյալ միտքը, թեև ոչ մեկը չի քննարկել «լեռնականների անզուգական երգիչներին» միացնող կամ նմանեցնող թեմաներն ու նոտիվները: Ոմանք էլ դրանով պարփակում կամ սահմանազատում էին բանաստեղծների արժարժած թեմաների համամարդկային շրջանակները:

Բայց դառնանք հարուցված խնդրին. կա՞ նմանություն նրանց միջև: Անշուշտ, կա: Եվ այդ նմանությունն արտահայտվում է այնքանով, որքանով երկուսն էլ ոգու թարգմանն են իրենց ժողովրդի իղծերի, խոհերի, սովորությունների, ավանդույթների, բարքերի, առօրյայի ու բնության: Նրանք նման են, քանզի ապրեցին ու արարեցին միևնույն դարաշրջանում, միևնույն սոցիալ-տնտեսական ու քաղաքական պայմաններում: Նման են իրենց գործունեությամբ, արժարժած խնդիրներով, ոգով, ապագայի հանդեպ հավատով, նույնիսկ ապրած տարիներով հավասար են:

1902 թ. Աբասթունյանից Յուրի Վեսելովսկուն հղած նամակում Հովհ. Թումանյանը գրում է, թե պոեմներն ստեղծելիս որ հեղինակ-

ներից է ազդել: Վկայելով Պուշկինի և Լերմոնտովի՝ Կովկասի լեռնականների ավանդությունների հիման վրա գրած չափածո երկերը՝ Յուլի. Թումանյանը գրում է. «*Ես՝ իբրև կովկասցի ու լեռնցի, սիրել եմ այդ երգերն ու պոեմները: Եվ, թեպետ լեռների սերն ու լեռնական կյանքի կարոտը ես ունեցել եմ իմ հոգում, բայց, անշուշտ, նրանք ազդել են ինձ ու սովել պոեմայի այն ձևը, որով գրել եմ ես, որովհետև մեր գրականության մեջ այդ տեսակ պոեմ չի եղել, որ երգեր մեր բնությունը, ժողովրդի սովորույթներն ու ավանդությունները*»⁸:

Նույնն է խոստովանում և Վաթա Փշավելյան՝ ի պատասխան իր այն քննադատների, ովքեր նրա պոեմները համարում էին փշավխևսուրական լեզենդների պարզունակ կրկնություն: Ժխտելու համար այդ կարծիքը՝ Վաթա Փշավելյան վկայում է Լև Տոլստոյի օրինակը, ըստ որի՝ աշխարհի հանդեպ ունեցած նրա հայացքների վրա ազդեցություն են թողել հողի մշակները: Վրաց բանաստեղծը հիշատակում է նաև Ա. Ս. Պուշկինին, որ նույնպես սովորել է ժողովրդից: «*Նա (Պուշկինը՝ Յ.Բ.) միս ու արյուն սովեց ժողովրդի հոգևոր գանձին, - գրում է Վաթա Փշավելյան, - սրանում է նրա մեծությունը, և խելահաս մարդիկ դա ոչ թե թերություն են համարում, այլ մեծագույն արժանիք: Ձեր խոնարհ ծառա Վաթա Փշավելյայի վրա նույնպես, պետք է խոստովանեն, մեծ ազդեցություն է թողել ժողովրդական ավանդությունը: Իմ պոեմների զգալի մասը գրել եմ ժողովրդից լսած երկու-երեք բառերի հիման վրա*»⁹:

Մինչ Վաթա Փշավելյայի ասպարեզ իջնելը վրաց գրականության մեջ նույնպես այդ բնույթի ու բովանդակության պոեմներ չկային: Նա առաջինն էր վրաց բանաստեղծներից, որ այնպես վարպետորեն երգեց վրաց «բնությունը, ժողովրդի սովորույթներն ու ավանդությունները»: Վաթա Փշավելյան և Յուլի. Թումանյանը բացեցին շատ հետաքրքիր, բայց հանրությանն անհայտ մի աշխարհ՝ ժողովրդի հոգևոր գանձարանը, որ կոչվում է բանահյուսություն: Բանահյուսական նյութերի մշակումն սկսվեց ռոմանտիկներից, որոնց հետևեցին շատ ու շատ գրողներ, բայց ոչ ռոմանտիկները, ոչ նրանց հետևորդները «*չհասան ֆոլկլորի օբյեկտիվ բովանդակության, ժողովրդի կյանքի ու մտածողության ճշմարիտ վերարտադրմանը*»¹⁰, չհասան, քանզի բանահյուսությունը նրանց համար ավելի շուտ պաստառ էր, որի վրա ստեղծեցին թեկուզև գեղեցիկ, բայց անձնական խոհերի, ապրումների ու ձգտումների թանձր քողով շղարշված կտավներ:

Այլ էին Յուլի. Թումանյանի և Վաթա Փշավելյայի սկզբունքները: Նրանք բանահյուսությունն ընդունեցին իբրև ժողովրդի կյանքն ար-

տացույղ հայելի և թեմաներ ու սյուժեներ պեղելով՝ ժողովրդական հերոսների կերպարներում մարմնավորեցին իրենց հավատամքը, հույզերն ու իդեալները:

Վաժա Փշավելան և Հովհ. Թումանյանը գյուղը պատկերել են բազմաձայն լարերով՝ հետամնացություն, սնահավատություն, նախապաշարմունք, ավանդապահություն, բարոյական անկում և անաղարտություն, ասպետական ոգի, նվիրվածություն, առանձին անհատների ըմբոստացում պապենական հնացած աղաթների, համայնքի ու բնության անսասան թվացող օրենքների դեմ (Անուշ և Սարո, «Անուշ», Ջողոլա և Ադազա, «Հյուրը և տանտերը», Ալուդա Քեթելաուրին համանուն պոեմից, Մինդիա, «Օձակերը» և ուրիշներ): Մի խոսքով՝ նրանցից ամեն մեկը հաստատել կամ բացասել է հարիրն ու անհարիրը, բարին ու չարը, զեղեցիկն ու անզեղը, հարազատն ու խորթը, բաղձալին ու անցանկալին: Եվ պատկերել են այնպիսի ուժով ու ցավով, որ քննադատներից շատերը երկար ժամանակ չեն կողմնորոշվել՝ ընդունում են նահապետական գյուղն իր հակասականությամբ, թե՞ արտացոլում են ինչպես որ է՝ վերապահելով սեփական կարծիքը: Միայն իրենց՝ գրողների բացատրություններից հետո պարզվեց, որ նահապետական գյուղում եղած զեղեցիկ երևույթներն ընդունել և գովերգել են պոետները: Միաժամանակ մերժել են հետամնացությունը, տարերքների ու չգրված օրենքների նկատմամբ կույր հավատը, որոնցից չնչին շեղումն անգամ անդունդ էր տանում:

Վաժա Փշավելան և Հովհաննես Թումանյանը ժամանակի ուրույն ըմբռնունով ազգային գրականություն բերեցին ուրույն աշխարհ, ուրույն լեզվամտածողություն: Նրանք որքան նման, նույնքան էլ տարբեր են, մինչդեռ փոխազդեցության մասին, որ երբեմն ակնարկում են, խոսք լինել է չի կարող: Իսկ եթե կան պատահական զուգադիպություններ, ապա դրանք հասկանալի են. քանի որ *«միևնույն մտածողությունն ու զգացողությունը ձևակերպվում են միևնույն բառերով կամ պատկերներով»*¹¹ (Պ. Սևակ):

Հովհ. Թումանյանը, իմանալով Վաժա Փշավելայի հիվանդության լուրը, գնում է տեսության: Գրչակից ընկերոջ այցելությունն ուրախացնում ու սփոփում է անկողնուն գամված բանաստեղծին: *«Հովհաննեսը ներողություն խնդրեց, որ վրացերեն չգիտե, և գրույցն սկսեցին ռուսերեն: Միմյանց մասին հարցուփորձ անելուց հետո խոսք գնաց պատերազմի ու նրա հետևանքների մասին, ի՞նչ կբերի պատերազմը փոքր ազգերին՝ երջանկույթո՞ւն, թե՞ դժբախտություն:*

Այնուհետև Յովի. Թումանյանը խոսք բացեց հայ-վրացական այն ժամանակվա հարաբերությունների մասին: Պոետների գրույցը չափազանց սրտառու էր»¹²:

Հայկական լրագրերը, հատկապես «Հորիզոնը» և «Մշակը», ցավով են հայտնում Վաթա Փշավելայի հիվանդության և վաղաժամ մահվան մասին: 1915 թ. հուլիս-օգոստոս ամիսներին հիշյալ լրագրերը տպագրում են բուժմանը վերաբերող տեղեկություններ, ապա և դամբանականներ:

Վաթա Փշավելային նվիրված հոդվածները ավելի պատմողական, նկարագրական բնույթ ունեն: Գրախոսները, հատկապես սկզբնական շրջանում, թեև լիարժեք չեն ներկայացրել նրա ստեղծագործությունների վերլուծությունը, այդուհանդերձ այդ գնահատականները անաչառ են և անմիջական: Հետաքրքիր է, որ հայ քննադատները արվեստագետին բնութագրելու հարցում զգալիորեն տարբերվում էին վրացի գործընկերներից, որ երգչի մի շարք կտավների ակունքները փնտրում էին այլոց ստեղծագործությունների մեջ կամ համարում էին փշավ-խևսուրական լեգենդների կրկնություն: Մինչդեռ հայ գրականագետները նշում էին, որ Վաթա Փշավելան, օգտվելով ժողովրդական պոեզիայի հարուստ գանձարանից, պեղելով կերպարներ ու մոտիվներ, դրանց տվել է նոր լիցք, նոր երանգ, նոր հնչեղություն:

Ի մի բերելով վերոշարադրյալը, կարող ենք հավաստել, որ վրաց ընթերցողից հետո հայ հասարակությունն է ավելի շատ հետաքրքրվել մեծ բանաստեղծի կյանքով, նրա ստեղծած գրականությամբ, պատշաճ կերպով գնահատել է ու զբաղվել դրանց մասսայականացումով:

1. «Մուրճ», 1891, N 4, էջ 435-436:
2. «Մուրճ», 1897, N 11-12, էջ 1591:
3. «Մուրճ», 1901, N 7, էջ 204:
4. Նույն տեղում:
5. Նույն տեղում:
6. «Մուրճ», 1904, N 2, էջ 161:
7. «Հորիզոն», 1914, N 73:
8. Յովի. Թումանյան, Երկերի ժողովածու, Երևան, 1945, հ. 5, էջ 235-236:
9. vaJa-fSavela, Pro domo sua, հ. 9, Թբիլիսի, 1964, էջ 180:
10. Էդ. Ջրբաշյան, Թումանյանի պոեմները, Երևան, 1964, էջ 72:
11. «Գրական Ադրբեջան», 1972, N 1, էջ 83:

12. kai yma (mogonebebi vaJa-fSavelaze), Tbilisi, «merani», 1986, էջ 335:

«Վաժա Փշավելան նախախորհրդային հայ մանուկուն»
«Ցիսկարի», 1974, N3, էջ 111-117 (վրաց.):
Նույնը լրացված՝ «ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
(գիտաինֆորմացիոն բյուլետեն), 1976, N 2, էջ 30-33:

ՀՈԳԵՎՈՐ
ՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆ

ԳԱՔՐԻԵԼ ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆ ԵՎ ԱԿԱԿԻ ԾԵՐԵԹԵԼԻ

Գեղարվեստական խոսքի մեծ վարպետ, արձակագիր, բանաստեղծ, դրամատուրգ, հրապարակախոս, հասարակական-քաղաքական գործիչ, ազգային-ազատագրական շարժման գաղափարախոս և առաջամարտիկ Ակակի Ծերեթելին ավելի քան կեսդարյա գործունեությամբ ոսկե էջեր է գրել վրաց հոգևոր կյանքի մատյաններում:

Ծնվել է 1840 թ. Սաչխերի շրջանի Սխվիտոր գյուղում, հարուստ ազնվականի ընտանիքում: Սովորույթի համաձայն Կակոյին (այսպես են կոչել նրան մանուկ հասակում) հանձնել են հարևան՝ Սավանե գյուղի ճորտ դայակներից մեկին: Գեղջուկ ստնտուի ընտանեկան հարկի տակ մեծանալով՝ ապագա բանաստեղծը լսել ու ընկալել է հասարակ մարդկանց լեզուն, ականատես եղել նրանց նիստ ու կացին, սովորույթներին ու կենսակերպին, դարձել ժողովրդի տառապանքի, տաժանակիր աշխատանքի, թավադների կողմից կեղեքումի ու հանապազօրյա դառնությունների վկան: 5-6 տարեկան մանուկ՝ նա արդեն գիտեր ինչպես խնամել կենդանիներին, նախաճաշի, ճաշի կամ ընթրիքի սեղան զգել, հաց թխել. սովորել էր վարել, ցանել, թորիսել, հնձել ու կալսել: Ունկնդրելով ժողովրդական բանահյուսություն՝ հաղորդակցվել է դրանց իմաստությանն ու դաստիարակվել նույն ոգով:

Գյուղական կյանքը, սովորույթներն ու բնաշխարհը խոր տպավորություն են թողել պատանու վրա. այդ ամենն ընդմիշտ մնացել է նրա հոգում ու հիշողության մեջ, որ ականավոր գրողը գերազանց արտացոլել է բանաստեղծություններում ու պոեմներում, դրամաներում, հեքիաթներում ու ակնարկներում: *«Զեմ կարող չխոստովանել,- գրել է Ծերեթելին,- որ թե իմ մեջ լավ ու բարի բան է մնացել, ապա դա շնորհիվ այն իրողության, որ ես մեծացել եմ գեղջկական ընտանիքում, գյուղացի երեխաների հետ»:*

Ծնողները, երեխային վերցնելով իրենց մոտ, վաղ հասակից վրաց և ռուսաց լեզուներով գրել-կարդալ են սովորեցրել: Կակոն այնպես է հափշտակվել ընթերցանությամբ, որ այլևս հրաժարվել է մանկական խաղերից, զբոսանքներից ու զվարճություններից:

Սովորել է Քուբայիսի նահանգական գիմնագիայուն, որ նույնն էր, ինչ գորանոցը, քանզի «*ուսուցունը տարվուն էր մտրակով, իսկ ուսուցման բուն նպատակը՝ տեղացիներին ռուսացնելն էր*»:

1859-ին ընդունվել է Պետերբուրգի համալսարանի արևելագիտության ֆակուլտետի հայ-վրացական բաժին՝ որպես ազատ ունկնդիր, իսկ 1861 թ. ապրիլին մագիստրական աստիճան ստանալու համար քննություն է հանձնել նաև հայոց լեզու, հայ գրականություն առարկաներից և գնահատվել լավ ու գերազանց:

Վերադառնալով հայրենիք և ծավալելով գրական-հասարակական գործունեություն՝ հենց սկզբից կարևորել է հայ և վրաց ժողովուրդների բարեկամությունը, ուշիուշով հետևել վիրահայերի կյանքում տեղի ունեցող իրադարձություններին, մտերմական կապեր հաստատել հայ մտավորականների հետ:

«Աներկյուղ և նախատինքից վեր այդ ասպետը» շատ է գրել նաև հայկական թեմաներով, այնքան, որ կարելի է հատորներ կազմել: Դրանք ոտանավորներ են, պամֆլետներ, ֆելիետոններ, հեքիաթներ, գիտական ու հրապարակախոսական հոդվածներ: Նա երգիծել, դատապարտել ու ձաղկել է նորելուկ բուրժուազիային, առևտրավաշխառուական խավին, ազգի ու ազգայինի հանդեպ անտարբեր այն անձանց, ովքեր եվրոպական կրթություն են ստացել, երբեմն էլ հաճախել «Մելպոմենեի տաճար», բայց ուրացել են հայրենիքը, լեզուն ու դավանանքը:

Մեր խնդիրը, սակայն, այդ նյութերի քննությունը չէ, նամանավանդ, որ ժամանակին դրանց անդրադարձել են ակադ. Ն. Մառը, Պետերբուրգի համալսարանի պրիվատ դոցենտ, հետագայում Թիֆլիսի համալսարանի ռեկտոր, ակադ. Իվանե Ջավախիշվիլին, նշանավոր այլ հայագետներ ու վրացագետներ: Այստեղ անդրադառնում ենք Ակակի Ծերեթելու և Գաբրիել Սունդուկյանի սրտառուչ մտերմությանը, ում բանաստեղծը համարել է իր ավագ եղբայրը, ժողովուրդների բարեկամության խորհրդանիշ: Դա թերևս պայմանավորված էր նրանով, որ Գաբրիել Սունդուկյանն էլ տարիներ առաջ սովորել էր նույն բուհի նույն բաժնում, որ մայրենիին հավասար գիտեր վրացերեն, գրվածքները համեմուն էր նաև վրացական ժողովրդական երգերով, առածներով, թևավոր խոսքերով ու դարձվածքներով, վրաց բանաստեղծների հուզաթաթավ ոտանավորներով, ինքն էր թարգմանում իր պիեսները, ինքն էլ վրաց լեզվով բեմադրում էր վրաց թատրոններում, ինչով մեծապես աջակցում էր ոչ միայն թատերական արվեստի զարգացմանն այդ երկրում, այլև

զինիս ազատաբաղձ ոգին ու համարձակ քայլերն այնքան սրտամոտ էին Ծերեթելուն, որ նա ստանձնել է հենց «Թերզի ջուր խնած» երիտասարդի կերպարը: Ծերեթելու խաղը համոզիչ չի եղել: Մամուլն անբարյացակամ է արտահայտվել և դերակատարումների մասին՝ պատճառ բերելով, թե «նման բովանդակությամբ պիեսներ, որտեղ պատկերված է «հայրերի» ու «որդիների» հակամարտությունը, մենք չատ ենք տեսել»:

Դժվար չէ կռահել, որ թատերախոսի համար չափանիշ եղել է գլխավոր հերոսի կերպավորումը: Ծերեթելու այդօրինակ խաղը պետք էր բացատրել նրա բանաստեղծական խառնվածքով, հարափոփոխ տրամադրությամբ: Ի վերջո նա դերասան չէր, ուստի էականը մասնակցությունն էր պիեսի բեմադրությանը: Եվ ճիշտ է Իոսեբ Գրիշաշվիլին, որ հանդես է եկել ի պաշտպանություն Ծերեթելի դերասանի. «...Բանն այն է,- գրում է նա,- որ պիեսը ներկայացվում էր բարեգործական նպատակով, և Ակակին՝ իբրև հասարակական գործիչ և ի պատիվ հեղինակի, ընդառաջել է կազմակերպիչների խնդրանքին ու ստանձնել դերի կատարումը»:

Ակակի Ծերեթելին հրատարակել է հայոց թատրոնին առնչվող ևս մեկ հոդված՝ հրատարակել է նույն թերթի այլ համարում՝ «Սեպտեմբերի 14-ի հայկական ներկայացումը»: Իր իսկ խոստովանությամբ, հայերեն չիմանալու պատճառով, գրեթե ոչինչ չի հասկացել, դիմել է պիեսը դիտող հայերին, բայց նրանք էլ չեն իմացել: «Յոգիս տանջվում էր այն բանից, որ ոչինչ չէի հասկանում, ուզեցի հարևաններիցս իմանալ, բայց նրանք էլ իմ օրում էին» («Դրո՛ւբա», 1879, N 192): Յայերի՝ մայրենի լեզվին չտիրապետելու տխուր փաստին վկա Ծերեթելին թե՛ զարմանք, թե՛ զայրույթ է ապրել:

Վրաց իրականության մեջ տարակարծությունների տեղիք է տվել «Խաթաբալա» պիեսը, որ վրաց թատրոնում առաջին անգամ բեմադրվել է 1877 թ.: Այդ ներկայացման առթիվ նշվում է, որ վրաց հանդիսատեսը հազվադեպ է ըմբռնվում նման բարձրարժեք և գրեթե անթերի պիես ու անթերի ներկայացում («Դրո՛ւբա», 1877 թ., N 38):

Նույն պիեսը 1881 թ. փետրվարի 15-ին կրկնվել է թատերական գործիչ Կոտե Դիփիանիի բեմեֆիսին (ի դեպ այս անգամ էլ դերերից մեկը, ավելի ստույգ՝ Բրիլիանտովի դերը, մարմնավորել է վրաց դասական գրականության մեկ այլ խոշորագույն ներկայացուցիչ, պատմավիպասան Ալեքսանդրե Ղազբեգին): Ակակի Ծերեթելին վկայել է, թե ինքը չի հիշում, որ վրաց թատերական խումբը երբևէ

նման հաջողությամբ ներկայացրած լիներ որևէ պիես, ինչպես Գաբրիել Սունդուկյանի «Խաթաբալան»։ Արժանին հատուցելով դրամատուրգի (որ նաև ներկայացման ռեժիսորն է եղել) տաղանդին՝ Ծերեթելին զուգահեռ է անցկացրել Օստրովսկու և Սունդուկյանի միջև, վերջինիս համարել ռուս դրամատուրգին հավասար տաղանդ, բայց Սունդուկյանին խորհուրդ է տվել տաղանդը զուր չվատնել այդ խավից տիպեր ստեղծելու վրա, իբրև թե նրանք արժանի չեն գեղարվեստական մարմնավորման։

Բանաստեղծը գրել է, որ Օստրովսկու կողմից նկարագրված տիպերում ոչ միայն վաճառականներ կան այլ խավի ներկայացուցիչներ են հանդիպում, այլև նրանցում տրված է համայն Ռուսաստանի կյանքը՝ բոլոր դրսևորումներով։ *«Իսկ ի՞նչ են ներկայացնում Սունդուկյանի կերպարները, ո՞ր ազգության են պատկանում նրանք,- հարցադրում է Ծերեթելին և պատասխանում,- նրանք (վաճառականները՝ Յ.Բ.) ոչ մի ազգության չեն պատկանում, և սխալվում են, ովքեր հույսեր են կապում այդ կարգի մարդկանց հետ, քանզի շուտով վերջ կտրվի նրանց քաղաքացիությանը»* («Դրոներա», 1881, N 37)։

Առարկելի է Ծերեթելու մեկնությունը. դրամատուրգը, որ երգիծել է վաճառական խավի և զարգացող բուրժուազիայի բազում ներկայացուցիչների, մի՞թե կարող էր սպասելիքներ ունենալ զիմզիմովներից, բրիլիանտովներից, օսկանպետրովիչներից ու փարսիղներից։ Գրախոսը պարզապես թյուր պատկերացում է ունեցել Վրաստանում իր դիրքերն ամրապնդող ու հզորացող հայ բուրժուազիայի մասին, որի դեմ հանդես էր գալիս կրքոտ ելույթներով։

Հակասական կարծիքներ են արտահայտվել նաև «Պեպո» կատակերգության վերաբերյալ։ Բանավեճին արձագանքել է նաև Ակակի Ծերեթելին։ Նա պիեսը համարել է *«որք մարգարիտ»*, Պեպոյի կերպարը՝ հանոզիչ և հավաքական։ Հատկապես ընդգծել է *«աշխատավոր և պատվավոր կինտոյի»* արդարամտությունը, սկզբունքանությունը, ազնվությունը, աշխատասիրությունը, նշել, որ *«ամենուր պեպոիզմ կա, նրա հիմքը ամեն տեղ նույնն է»*։ Ըստ բանաստեղծի՝ գործող գլխավոր անձը պաշտում է իր արհեստը, հպարտ է իր ազնիվ աշխատանքով... *«Երբ ուռկանը նետում է գետը, երբ ոտաբոբիկ ու կուրծքը բաց կանգնում է ջրի մեջ, և պաղ սյուքը շոյում է դեմքը, իսկ գլխավերևում աստղերը ցուլցում, առկայծում են, նա երջանիկ է, մանավանդ, որ նրա ուրախության հիմքում սուրբ աշ-*

խատանքն է. ...Վերևում Աստվածն է նրա համար, ներքևում՝ մարդկայնությունը»:

Ակակի Ծերեթելին մի հետաքրքիր միտք է արտահայտում՝ համեմատելով Պեպոյի և հասարակական գործիչների ճակատագրերը. «Իսկական հասարակական գործիչը նույն Պեպոն չէ՞ մեր կյանքի հորձանուտն ընկած: Նրա արդար, հանրությանն զգաստացնող խոսքերը նույն ուռկանը չէ՞ն, ուր և՛ ձկներ են ընկնում, և՛ գորտեր»:

Ակակի Ծերեթելին Սունդուկյանի հավատարիմ բարեկամն էր. բարեկամություն, որ պիտի բնորոշվեր իբրև «երկու ժողովրդին միացնող կամուրջ» (Ի. Գրիշաշվիլի): Երկու հզոր գործիչները դավանել ու մարմնավորել են հայերի և վրացիների համերաշխության գաղափարը: Նրանք, ի տես և ի շահ թիֆլիսաբնակ բազմազգ հանրության, թև թևի զբոսնել են մայրաքաղաքի կենտրոնական փողոցներում: Դա ինքնանպատակ չէր. 1900-ական թթ., զգալով, որ հայերի և վրացիների միջև անսքող անհանդուրժողականություն կա, որ գնալով վերածվում է փոխատելության, Ակակի Ծերեթելին «պատմական նույն թավայում տապակված» քրիստոնյա հարևաններին նախ հիշեցրել է, որ «մեր նախնիները միշտ էլ եղբայրական հարաբերություններ են ունեցել», ապա հորդորել է պահպանել դարերի խորքից ավանդված հայ-վրացական անխաթար միությունը. «Նրանց (հայերին՝ Յ.Բ.) սիրում են և ցանկանում են, որ մեր մեջ այնպիսի հարաբերություն լինի, ինչպես էր մեր նախնիների օրոք: Ցանկանում են, որ սրանից հետո զոնե ձեռք ձեռքի տված մի ուրիշ ճամփով ընթանանք դեպի ապագա, թե չէ իրար հետ թշնամությամբ ոչ մեկս հեռու չենք գնա»: Իսկ երբ ցարիզմի կովկասյան մուսուլմանները հայ-վրացական ընդհարումներ հրահրեցին, Ակակի Ծերեթելին առաջիններից մեկն ահազանգեց ու կոչ արեց հաշտության.

*Ի սեր Աստծու, պա՛հ են գտել.
Եղբայր եղբոր դեմ դաշույն է հեսանում.
Կկործանվեն երկուսն էլ.
Երկուսի թշնամին էլ նույնն է
Դեռու- հեռվում, սարերից անդին,
Նույն թավայում են երկուսն էլ,
Եվ նույն լուծն է նրանց ուսին:*

.....
*Միացե՛ք, եղբայրներ, միացե՛ք:
Ձեռք ձեռքի տվեք եղբայրաբար
Եվ դիմարդեք արտաքին թշնամուն՝
Ինչպես վայել է տղամարդուն:*

Տողացի թարգմ.

Այսքանով չի ամփոփվում Սուևդուկյան-Ծերեթելի թեման: Ականավոր բանաստեղծն իր ականավոր բարեկամին ծոնել է երեք ոտանավոր: Առաջինը Ծերեթելին գրել է 1901 թ., ամենայն հավանականությամբ «Պեպո» կատակերգության 30-ամյակի տոնակատարության առթիվ, որ փառահեղորեն նշվել է նաև վրաց իրականության մեջ:

1910 թ., դրամատուրգի ծննդյան 85-ամյակի առթիվ Ծերեթելին տպագրել է երկրորդ ներբողը, որ ներծծված է զգացմունքայնությամբ և նուրբ դիտողականությամբ, մեծ գործչի նկատմամբ պատկառանքով ու գորովանքով. «*Խոնարհվում եմ կրտսեր եղբոր պես՝ մեծ եղբոր առաջ*»: Այն ասես օրհներգի խոսքեր են՝ նվիրված հայ և վրաց ժողովուրդների բարեկամությանը.

*Ես մի վրացի, իսկ դու հայ ես մի,
Բայց մենք երկուսով եղբայր ենք հիմի.
Երկուսս էլ զավակ նույն հողի, քրի,
Եվ նույն բնության և նույն լեռների:*

Թարգմ.՝ Գեղամ Սարյան

1912 թ. Ծերեթելին նույնպես սգացել է իր բարեկամի կորուստը և նվիրել երրորդ քերթվածքը: Խոր վիշտ ապրելով «*աշխարհին ու մարդկանց լույսի շողեր սփռող*» դրամատուրգի վախճանով՝ շեշտում է, որ հանգուցյալն ամենուր եղբայրություն, հավասարություն և մարդկայնություն էր քարոզում, ուստի և արժանիորեն վաստակել է համաժողովրդական սեր ու պատկառանք:

*...Սրտումն ուներ հրաշագեղ
Իդձեր, տենչեր հուսալի.
Սարդ էր փնտրում ամեն տեղ
Եղբայրական սիրով լի:*

Թերթի նույն համարում («Թեմի», 1912, N 64) նա հրապարակել է հուշի պատառիկ, որով ընթերցողին հաղորդակից է դարձնում դրամատուրգի բանաստեղծական խառնվածքին, բնության հանդեպ նրա ունեցած պաշտամունքին: Ահա այդ հուզիչ տողերը. «*Մի անգամ՝ վաղ գարնան՝ առավոտ ծեգին, զնացի «Մուշտաիդ»:* Բնականաբար այդքան կանուխ ոչ զք չկար, և ես, սովորույթիս համաձայն, սկսեցի զբոսնել: Հանկարծ ինչ-որ բան զրավեց ուշադրությունս. այգու հենց սրտում՝ ծաղկառատ մի դեղձենու տակ, հայացքս ընկավ ծնկաչոք, ձեռքերը երկինք կարկառած, ասես քանդակված մի մարդու: Գաբրիել Սուևդուկյանցն էր: Ես վախ զգացի՝ մտածելով՝ ցնորվել է: Իսկույն հետ դարձա: Կես ժամ անց Սուևդուկյանցը մոտեցավ

ինձ և ոգևորված բացականչեց. «Ակակի ջան, ի՞նչ ես նստել այստեղ, գնանք քեզ այնպիսի՞ բան ցույց տամ,- և ձեռքս բռնած տարավ այն դեղձենու մոտ,- սա չէ՞ս տեսնում. ինչո՞ւ ծնկի չես գալիս և երկրպագում այս հրաշքն արարողին: Ես, է՛, ահագին ժամանակ է՛ ամեն առավոտ գալիս եմ այստեղ և աղոթում»:

Ծերեթելին ձգտել է պատկերագծել Սուևդուկյան մարդու դիմանկարը, շեշտել է դրամատուրգի տեղն ու դերը երկրի մշակութային կյանքում:

* * *

Մեծատաղանդ գործչի մասին, իր հերթին, շատ է գրել հայկական մամուլը, վերլուծել ու գնահատել նրա ամբողջ գործունեությունը, նույնիսկ անդրադարձել է տարբեր տարիների նրա հիվանդություններին ու բուժմանը: Օրինակ՝ 1904 թ., երբ բանաստեղծի առողջությունը խաթարվել է, ինչպես «Մուրճ» ամսագիրն է հաղորդում, «առաջնակարգ ծերունի գրողը դեմքի կաթված է ստացել»: Հայ հասարակությունը ուշիուշով հետևել է «մեր ժամանակի Ռուսթավելու» կազդուրման ընթացքին. թերթերը տպագրել են բժշկական հաղորդագրություններ, մարդիկ բարձրաձայն խորհրդածել են գրական ֆոնդ ստեղծելու և «այեգարդ հիվանդին օգնելու մասին»: Ամսագիրը, մշելով Իլիա Գավճավաձեի և Ակակի Ծերեթելու՝ «վրաց բանաստեղծական կաճառում» քառասուն տարի իշխելու մասին, նրանց համարում է երկու արեգակներ, որոնց շուրջ «պտտվում են այդ շրջանի մյուս բոլոր երիտասարդ և հասակավոր երգիչները» («Մուրճ», 1904, N 12, էջ 127-128):

Իսկ Ծերեթելու մահվան առթիվ կարդում ենք. «Այսօր չքնաղ Վրաստանը խորասուզված է վշտի մեջ. ողբում է մահը իր հոյակապ բանաստեղծի: Սրա քնարը ավելի քան կես դար մերթ դայլայլել է իր հրաշագեղ հայրենիքի փառքն ու գեղանիությունը օրինաբանելով, մերթ մոնչացել, կսկծացել հայրենիքի խոր վերքերն ու վշտերը քվարկելով...»:

Խոսելով ազգասիրական ու լուսավորական գործունեության մասին՝ թերթը գրում է այն խորունկ սիրո մասին, որ վայելում էր բանաստեղծը հայրենակիցների շրջանում. «...Եվ չմնաց ամբողջ Վրաստանում գեթ մի ռամիկ թե ազնվական, գեթ մի ծեր թե մանուկ, որ բերան արած չերգեր իր պաշտելի Ակակիի՝ մեկը մյուսից խորիմաստ ու սքանչելի մեղեդիները» («Տարագ», 1915, NN 2, 15, 19):

1940 թ. Ակակի Ծերեթելու ծննդյան 100-ամյակի առթիվ Երևա-

նուն լույս է տեսել նրա չափածոյի ընտրանին (թարգմանիչներ՝ Ավետիք Իսահակյան, Վահան Տերյան, Գեղամ Սարյան, Գևորգ Ասատուր, Սողոմոն Տարոնցի, Վաղարշակ Նորենց, Հովհաննես Կարայան և ուրիշներ), իսկ Հայֆիլհարմոնիայի համերգային դահլիճում տեղի է ունեցել հրեյանական երեկո՝ նվիրված քանաստեղծի կյանքին ու գործունեությանը: Հայոց մամուլը լայնորեն լուսաբանել է Խորհրդային Միության մյուս հանրապետություններում կայացած հանդիսությունները և:

ՆՅՈՒԹԵՐ «ԹՈՒՄԱՆՅԱՆԱԿԱՆ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆԻ» ՀԱՄԱՐ

Տարիներ առաջ Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագրությունը ձեռնամուխ եղավ «Թումանյանական հանրագիտարան» ստեղծելու աշխատանքին: Դա պիտի լիներ առաջին անհատական հանրագիտարանը հայ իրականության մեջ, քանզի Եվրոպայում և Ռուսաստանում նման հանրագիտարանների հրատարակությունը սովորական երևույթ է. վաղուց գոյություն ունեն հանրագիտարաններ՝ նվիրված Բեթհոլվենին, Բեռնսին, Դանտեին, Դիկենսին, Շեքսպիրին, Շիլլերին, Լերմոնտովին և համաշխարհային գրականության ու արվեստի մեծանուն այլ ներկայացուցիչների:

Մեծ գրողի հանրագիտարանն առհասարակ կոչված է ի մի բերելու և ընթերցողին ծանոթացնելու թումանյանագիտության ձեռքբերումներին, կյանքին ու գործունեությանը, նախորդներին ու հետնորդներին, մտերիմներին ու բարեկամներին, համակիրներին ու հակառակորդներին, երկերի, առանձին սյուժեների ու կերպարների հիման վրա ստեղծված գեղագիտական ու երաժշտական կտավներին, թատերական ներկայացումներին ու կինոնկարներին...

Քանի որ մեր ազգային հանճարը պատանեկան հասակից մինչև կյանքի վերջին օրերն ապրել ու ստեղծագործել է Վրաստանի մայրաքաղաքում, բնականաբար հանրագիտարանում պետք է ներառվեն նաև նրա մասին վրաց իրականության մեջ լույս տեսած մենագրությունները, ուսումնասիրությունները, հոդվածները, գրախոսությունները, հուշերը, ակնարկներն ու էսսեները, նրա կապերը վրաց գրականության ու վրաց գրողների հետ, երկերի վրացերեն թարգմանությունների պատմությունը, Թումանյանը վրաց արվեստում, այդ երկրում նրա անվան հետ կապված հիշարժան վայրերը և այլն:

Հովհաննես Թումանյանը Վրաստանում անձնական-բարեկամական կապեր էր ստեղծել տեղի մտավորականների հետ՝ Վաժա Փշավելա, Գրիգոլ Ռոբաքիձե, Վասիլ Բարնով, Իոսեբ Գրիշաշվիլի, Յակով Նիկոլաձե, Տիցիան Տաբիձե, Պաոլո Իաշվիլի, Վալերիան Գափրիմոզաշվիլի, Լևան Դիփիանի, Սիկո Փաշալիշվիլի, Դավիթ Կլդիաշվիլի, Իոսեբ Իմեդաշվիլի, Իյա Նակաշիձե, Գրիգոլ Դիասամիձե, Կոտե Մաղաշվիլի, Սանդրո Դանչելի և ուրիշներ: Նրանք մտերմացել

են հայ բանաստեղծի հետ, հաճախակի հավաքվել թոււմանյանի հյուրընկալ հարկի տակ, խորհրդածել գրականության ու արվեստի, իրենց ժողովուրդների անցյալի, ներկայի ու ապագայի մասին:

Բոլոր այս գործիչները Հովհաննես Թումանյանի մասին վրաց մամուլում տպագրել են հարյուրավոր նյութեր, որոնց մեջ կարելվոյնս գնահատել են բանաստեղծի կյանքը, ստեղծագործությունները, հասարակական գործունեությունը, որակական այն հատկանիշները, որ նա ներարկել է հայ չափածոյին ու արձակին, հայ գրականությանն առհասարակ: Հատկանշական է, որ վրացի բարեկամները աներկբա նշել են նրա ստեղծած արժեքների հասարակական ու ազգային ակունքները:

Վրաց բարեկամներից նման գնահատական առաջինը տվել է գրող, հրապարակախոս, հասարակական և քաղաքական գործիչ Սամսոն Փիրցխալավան (1872-1952): Նրա հոդվածը լույս է տեսել Թիֆլիսի «Սախալխո սաքմե» («Ժողովրդական գործ») թերթի 1919 թ. մարտյան համարներից մեկում (N 467):

Ս. Փիրցխալավան Հովհ. Թումանյանի ստեղծագործությունը համարում է հայ նոր գրականության առանցքը, կապում մեր ժողովրդի ճակատագրի հետ՝ դրանք դիտելով իբրև մեկ ամբողջություն: «*Գեղեցիկն ընթռնող ու գեղեցիկն արարող հզոր արվեստագետի*» երկերում նա տեսնում է «*Հայաստանը, նրա բնությունը, պատմությունը, այսօրվա ողբերգությունը և հույսն ապագայի հանդեպ*»: Հոդվածագիրն իր ընթերցողին հավաստում է, որ Հովհ. Թումանյանը «*Մեր ժամանակի հզոր բանաստեղծներից է, հայ ժողովրդի երգվյալ հավատարմատարը, նրա հոգևոր հարստության, նվիրական զգացումների ու իղձերի լավագույն արտահայտողը*»: Ահա թե ինչու նա արժանացել է համաժողովրդական սիրո, իսկ «*այդպես ամեն մի ժողովուրդ սիրում է իր ազգային կերպարը, իր անհատականությունը, իր ազնվությունը*»:

Փիրցխալավան ավստոսանք է հայտնում, որ նման վառ անհատականության ստեղծագործությունները վրաց բանաստեղծներն ու գրականագետները թարգմանությունների կամ գոնե հոդվածների միջոցով հանրության սեփականությունը չեն դարձրել, մինչդեռ, վստահեցնում է նա, դրանով զգալիորեն կհարստացնեին վրաց գրականության գանձարանը և մեծ ծառայություն մատուցած կլինեին ազգային գրականության վերածննդին:

Հակիրճ բնութագրումից հետո հեղինակն անցնում է Թումանյանի՝ իբրև մարդու ազնվագույն նկարագրին, իբրև քաղաքացու՝

տիտանական այն գործունեությանը, որ բանաստեղծը ծավալել է հանուն հայ և վրաց ժողովուրդների վտանգված բարեկամությունը կարգավորելու գործի. նպատակին հասնելու համար նա արիաբար մարտնչում է գրչով ու գործով, հաճախ վտանգում կյանքը, որովհետև *«հայ ժողովրդի վեհանձնագույն զավակը և վրաց ժողովրդի ամենասիրելի բարեկամը»*, առավել, քան որևէ մեկը, քաջ գիտակցում է երկու ժողովուրդների համերաշխության ու ի վերուստ նրանց տրված պատմական առաքելության գինը: *«Երբ սրվել են մեր և հայերի հարաբերությունները,- շարունակում է հեղինակը,- երբ մատնացույց են արել վրացատյաց հայերին (մի՞թե քիչ են հայատյաց վրացիները) և ասել, թե միայն զենքը վերջ կդնի տարածայնություններին, իմ աչքի առաջ հառնել է Յովհաննես Թումանյանի կերպարը, և ես կասեմ՝ ինչ էլ լինի, ինչ էլ պատահի, այդուհանդերձ, հնարավոր է մեր հաշտությունը»*: *«Հայերը,- կարդում ենք նույն հոդվածում,- սրտանց ցանկանում են դա. նրանք անկեղծ կողմնակիցն են այն բանի, որ հայերի ու վրացիների միջև միակ լեզուն բոլորովին էլ ատելությունը չէ...»*:

Փիրցխալավան ինքն էլ ջատագովում էր հայ և վրաց ժողովուրդների մերձեցման, կապերի վերականգնման ու խորացման գաղափարը՝ դա համարելով երկու երկրների քաղաքական ու մշակութային վերածննդի կարևորագույն նախադրյալ: Այդ քայլերի անհապաղ իրականացումը նա անհրաժեշտ, պարզապես երանելի էր համարում հենց այն օրերին, որովհետև Հայաստանն ու Վրաստանն ապրում էին անկախ կյանքով, մինչդեռ շրջապատված էին բազմաթիվ թշնամիներով, որոնք, բացահայտ կամ քողարկված, որոգայթներ էին սարքում, գործադրում ամեն ջանք՝ զրկելու համար ձեռք բերված ազատությունից: Ահա թե ինչու, ամփոփում է մտահոգ գործիչը, *«այսպիսի ժամանակ մեկմեկու ձեռք մեկմեկը հույժ կարևոր է»*:

Մերօրյա ընթերցողին հիշեցնեմ, որ այս կարգի հրապարակումը քաղաքացիական արիություն էր, եթե պատկերացնենք այն կացությունը, որ երկու երկրների հարաբերությունների միջև ստեղծվել էր 1918 թ. դեկտեմբերին:

Հոդվածի տպագրությունից անցել է ինը տասնամյակ, բայց այն ուսանելի է հենց հիմա, քանզի ունի խորապես արդիական հնչեղություն: Չէ՞ որ վերջին տարիներին միմյանցից օտարվել են մեր ժողովուրդները, մեր մտավորականները և մեր մշակույթները: Ուրեմն՝ գրիչ վերցնող որոշ գործիչներ դասեր պիտի քաղեն համերաշխությունն ու բարեկամությունն այնքա՛ն կարևորած մեր մեծերից և

երկու երկրների հարաբերությունները շոշափող նյութեր տպագրելիս չնոռանան նրանց պատգամները:

* * *

Իոսեփ Գրիշայի Գրիշաշվիլին (1889–1965) բանաստեղծ, գրականագետ, պատմաբան, թարգմանիչ, բանահավաք, մեմուարիստ, հասարակական գործիչ, Հայկ. ԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ (1945), Վրաց. ԽՍՀ ԳԱ ակադեմիկոս (1947), ԽՍՀՄ պետ. մրցանակի դափնեկիր (1950), Վրաստանի ժողովրդական բանաստեղծ (1959), Հոլմ. Թունանյանի մտերիմներից էր:

Ծանոթացել են 1914 թ. մայիսին՝ Թիֆլիսի հայկական Սուրբ Գևորգ եկեղեցու բակում Սայաթ-Նովայի արձանի բացման և նրա հիշատակին նվիրված Վարդատոնի օրը: «*Ինձ ու Հովհ. Թունանյանին Սայաթ-Նովան բարեկամ դարձրեց*», - գրում է Գրիշաշվիլին: Նա Թունանյանի կյանքի ու գործունեության առաջին հետազոտողն է վրաց իրականության մեջ. իր խոհերը նա առավելապես հայտնել է հողվածների, գրախոսությունների, հուշերի, մասամբ էլ բանաստեղծության միջոցով:

Հայրենի ընթերցողին պատշաճ ներկայացնելու համար Գրիշաշվիլին հոգածությամբ և ճաշակով թարգմանել ու հրատարակել է բանաստեղծի գրական ժառանգությունից մի գողտրիկ փունջ՝ ութ բանաստեղծություն, հինգ պատմվածք, երկու պոեմ և երկու լեզենդ (հետագայում՝ ամեն անգամ վերահրատարակելիս, 1932, 1937, 1948, 1952 և այլն, նորանոր թարգմանություններով լրացրել է ժողովածուն. հարստացրել է նաև առաջաբանը): Դրանով նա հանգուցյալի հիշատակի առաջ ազնվորեն կատարել է իր խոստունը (Գրիշաշվիլին հավաստում է, որ ինքը և Թունանյանը խոստացել էին միմյանց երկերը թարգմանել՝ Թունանյանը՝ հայերեն, Գրիշաշվիլին՝ վրացերեն):

Իր թարգմանություններով Գրիշաշվիլին վրաց ընթերցողի համար բացել է զարմանահրաշ ու խորախորհուրդ մի աշխարհ: Պատահական չէ, որ նրա թարգմանությունները գնահատվում են բնագրին համարժեք, քանզի պահպանված են երկերի նպատակաուղղվածությունը, ոճական շերտերը, պատկերավորման և արտահայտչական միջոցները, հանգն ու ռիթմը: «*Դա թարգմանություն չէ, բնագիրն է*, - գրում է գրականագետ Իվ. Գոմարթելին: - *Ինքը՝ Հովհ. Թունանյանն է գրում վրացերեն*»: Իսկ Գրիշաշվիլին նույն առիթով նշում է, թե Թունանյանի երկերը վրացերենի վերածելիս «բազում տողեր

առանց միջամտության շարվում էին թարգմանության մեջ, թեև որոշ բառեր էլ անհնազանդ երեխայի նման խնամք ու փաղաքշանք էին պահանջում»։ Չնայած վրացի բանաստեղծներից շատերն են թարգմանություններ կատարում թուրքերենի արձակից և չափածոյից, բայց Գրիշաշվիլու թարգմանություններն անխամրելի են, ուստի ավելի հաճախ դրանք են վերահրատարակվում։

1924 թ. լույս ընծայած ընտիր երկերի առաջաբանում հեղինակը նշում է, թե իրենք՝ վրացիները, Եվրոպայի գրողներին լավ-վատ գիտեն կամ ձգտում են իմանալ, քանզի այդ բնագավառում հետ մնալը համարվում է ամոթ, բայց, չգիտես ինչու, ամոթ չի համարվում հարևանների գրականությունից անտեղյակությունը, մինչդեռ հատկապես հայ գրականությունը եվրոպականից պակաս հետաքրքիր չէ։

Լավատեղյակ հայ հին ու նոր գրականությանը՝ Գրիշաշվիլին թուրքերենի գրական ժառանգությունը դիտում է դրանց զարգացման ընդհանուր շղթայում և եզրակացնում, որ «*հայ նոր գրականության կոհորտայում Յովի. Թումանյանը ճերմակահեր վարպետներից է*», որ հայ ժողովրդի ներուճակ ուժը լավագույնս դրսևորվել է Յովի. Թումանյանի քնարերգության մեջ, և նա մի ամբողջ դարաշրջան կազմող բանաստեղծ է։ Գրիշաշվիլին անդրադառնում է «Գիքորը», «Եղջերուն», «Ահմադը», «Քաջ Նազարը», «Անուշ», «Փարվանա», «Շունն ու կատուն», «Ամբախտ վաճառականներ» երկերին։

Մի շարք հոդվածներում, գրախոսություններում և հուշերում Գրիշաշվիլին գրական դիմանկարից բացի ներկայացնում է նաև թուրքերենի մարդկային ու քաղաքացիական նկարագիրը, հասարակական գործունեությունը, վրաց մտավորականների հետ հարաբերությունները և նրա՝ այդ երկրի ու ժողովրդի հանդեպ տածած զգացումները։ Աշխատության հեղինակը նկատում է, որ հարազատ զավակն էլ այնքան բուռն չի սիրել իրենց (ինա՝ վրաց՝ Յ.Բ.) երկիրն ու ժողովրդին, ինչպես թուրքերենն էր սիրում, քանզի Վրաստանի անցյալը, ներկան և ապագան բանաստեղծի հոգում լուրջ արծագանք էին գտնում։

Գրիշաշվիլին թուրքերենի նվիրել է մեկ բանաստեղծություն՝ «Վրաստանի բարեկամին», որի վերջին քառատողի վերաբերյալ տալիս է հետաքրքիր վկայություն. գրական մեծերի մասին զրույցի ժամանակ թուրքերենը հայտնել է իր վաղեմի իղծը, այն է՝ թարգմանել Յովերուսի, Ֆիրդուսու և Ռուսթավելու պոեմները։ Ահա ինչու, հայ բանաստեղծի մահվան կապակցությամբ չափածո խոսքը Գրիշաշվիլին վերջացնում է հետևյալ քառատողով.

*Կրացվի ծոցը անդրշիրիմյան,
Կթեքվի արևն հասկից ավելի,
Եվ քեզ կողջունե փունջն երրորդության՝
Ֆիրդուսին, Յոմերն ու Ռուսթավելին:*

Տասը տարի անց իր բանաստեղծություններից մեկում Չարենցը նույնպես պիտի հավաստեր թունանյանի մեծության չափը՝ նրան համարելով Յոմերուսին և Գյոթեին հավասար.

*Ես կարդում եմ նրան ու ասում.
-Այս հմուտ հանճարեղ լրոնեցին
Յոմերի, Գյոթեի հետ մի օր՝ հավասար՝
նստել է քեֆի...*

1923 և 1933 թթ. գրված այս բանաստեղծությունները թեև պատկանում են տարբեր ժամանակների ու տարբեր հեղինակների, բայց և՛ համահունչ են, և՛ համիմաստ:

Գրիշաշվիլու հոդվածները, գրախոսությունները, հուշերը և ներբողը սոսկ գրական, պատմաճանաչողական արժեքով չեն սահմանափակվել (թեև դա էլ պակաս ծառայություն չէ), նաև կայուն հիմնաքար են դարձել վրաց իրականության մեջ թունանյանագիտության հետագա ծավալման և զարգացման համար:

Գրիշաշվիլին գրել է նաև «Սայաթ-Նովա», «Հին թիֆլիսի գրական բոհեմը» (հայ. հրատ. 1989) աշխատությունները, հոդվածներ Մեսրոպ Մաշտոցի, Գ. Սունդուկյանի, Ավ. Իսահակյանի, Մ. Սարյանի, Գ. Փիրումյանի, Դ. Գուլակյանի, Յ. Հակոբյանի, հայազգի աշուղներ Սկանդար-Նովայի, Հագիրի (Աբրահամ Աբրահամյան), ինչպես նաև հայ-վրաց գրական-մշակութային առնչությունների մասին, բանաստեղծություններ է ձոնել «Սասունցի Դավիթ» էպոսի 1000-ամյակին, Ավ. Իսահակյանին, Սայաթ-Նովային, Խ. Աբովյանին, Միք. Նալբանդյանին, վրացերենի է թարգմանել Նահապետ Քուչակի, Նաղաշ Հովնաթանի, Ավ. Իսահակյանի, Հովհաննես Հովհաննիսյանի և ուրիշների քերթվածքները:

* * *

1921 թ. աշնանը Վրաստանի լուսժողովոնը Հովհաննես թունանյանին՝ իբրև Վրաստանի գրողների ընկերության պատվավոր անդամի, կենսաթոշակ է նշանակում: Այդ առթիվ թունանյանն իր բնակարանում ճաշկերույթ է կազմակերպում. մասնակցում են տարբեր ազգության տասնյակ ներկայացուցիչներ՝ գրողներ, մշակութային, հասարակական և գիտության գործիչներ: Վրացի ընկերներից ներկա

են եղել Վասիլ Բարնովը, Շիո Արագվիսպիրելին, Վալերիան Գափրիմդաշվիլին, Պաոլո Իաշվիլին, Գրիգոլ Ռոբաքիձեն, Տիցիան Տաբիձեն և ուրիշներ:

Վրաց դասական գրականության ականավոր ներկայացուցիչ **Վասիլ Բարնովը** (1857-1934) առաջին անգամ էր բանաստեղծի տանը, թեև մինչ այդ հրավերը թունամայանին գիտեր հեռվից հեռու և, իհարկե, ծանոթ էր նրա ստեղծագործություններին:

Գրողի տպավորությունն այնքան խորն է եղել, որ *«ոտքը նրա տան շենից ներս դնելուն պես ականա դարձել է համակ ուշադրություն»*, հետևել *«քանքարավոր գրողի կիրթ ու անբռնազբոս շարժումներին»*, զննել *«նրբազգաց և չափազանց խոհուն այդ մարդուն»*, ունկնդիր եղել *«նրա զգացմունքների հորձանքին ու թևավոր մտքերի»* տարափին...

Բարնովը լուսաբանում է թունամայանի գործունեությունը և գրական-գեղարվեստական ու գեղագիտական հայացքները: Վկայակոչելով մեծ լոռեցու անձն ու գործը՝ նա նշում է, որ իսկական գրողը նախ և առաջ հասարակական գործիչ է: Ըստ նրա՝ ժողովուրդը ճիշտ ժամանակին ծնում է նման խոշոր անհատ, որ ծառայի իրեն, միայն թե այդ ծառայությունը պետք է լինի անշահախնդիր և անբասիր: Գրողը ժողովրդի հավատարմատարն է այնքանով, որքանով նրա ձգտումներն ու նպատակներն համապատասխանում են ժողովրդի ձգտումներին ու նպատակներին: Դրան հասնելու համար թունամայանը՝ որպես աստվածատուր արվեստագետ, ուսումնասիրել և յուրացրել է անչափ հարուստ այն գանձարանը, որ ժողովուրդն անբարել է իր ընդերքում:

Սակայն թունամայանի մեծությունը չի տեղավորվում ազգային շրջանակներում, որովհետև նա *«բոլոր ազգերի, համայն մարդկության ավետաբերն ու լուսավորիչն է»*, իսկ որպես հայ պոեզիայի ջահակիր՝ շատ ավելի լայնահուն է դարձրել ազգային քնարերգության դժվարանցանելի ուղին, ուստի *«հետնորդները հեշտությանը ու հաջողությանը կանցնեն նրա կողմից լուսավորված ճանապարհով»*:

Այդ նշանավոր երեկոյի ընթացքում թունամայանը արվեստի ու գրականության վերաբերյալ արտահայտել է չափազանց խորիմաստ մտքեր, որոնցից մի քանիսը գրողը ներկայացնում է ընթերցողին:

«Արվեստի քրմերը զգում, ճաշակում են գեղեցիկը, բարին, ճշմարիտը և վերարտադրում՝ նույնը ներարկելով անհատին, հանրությանը, համայն մարդկությանը»:

«Պոեզիան հավերժ պաշտելի Աստված է, մարդկությանը միավորող ու ջերմացնող ամենակարևոր գործոններից մեկը»:

«Պոեզիան պետք է դառնա ապագայի ընդհանուր կրոնը, սերունդների անփոխարինելի հավատն ու հավատամքը»:

«Իսկական արվեստագետը պարտավոր է ուսումնասիրել և յուրացնել այն անսպառ գանձը, որ կուտակել է ժողովուրդը»:

Այս և մի շարք այլ ատույթներ վերարտադրելուց հետո Բարնովը հավաստում է, որ Թումանյանը միշտ հավատարիմ է եղել այդ սկզբունքներին ու գաղափարներին, և բացարձակապես հակասություն չկա նրա տեսական դրույթների ու գեղարվեստական երկերի միջև: Ավելին՝ սիրո, գեղեցիկի, բարու և ճշմարիտի արարումով ու քարոզով, *«խավարի դեմ լույսն առատ դարձնելու պայքարով»* Թումանյանը՝ *«քերթողների մեջ ամենակատարյալը»*, կապող օղակ է ահատի ու հասարակության միջև:

«Կամուրջ - 2009»

(Վրաստանի գրողների
ստեղծագործական միություն)
Թբիլիսի, 2010, էջ 333-340:

ՀՈՎԻԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ԵՎ ԳՐԻԳՈՆ ՌՈՒՄԻՆՅԱՆԸ

Բոլորովին պատանի էր Հովհաննես Թումանյանը, երբ ուսումնառության նպատակով մեկնեց Թիֆլիս: Այդ հետաքրքիր, ինքնատիպ քաղաքը դարձավ նրա ստեղծագործական կյանքի հայրենիքը: Հետագայում հայ մեծ գրողն ամենայն անկեղծությամբ պիտի խոստովաներ. «*Ես՝ իբրև բանաստեղծ մարդ, անհունորեն սեր տածելով առհասարակ դեպի ժողովուրդները, առանձնապես սիրել եմ մեր եղբայրական վրաց ժողովուրդը, որի մեջ անց են կացրել իմ կյանքի մեծագույն մասը և որի հետ կապված են շատ թանկագին, խոր ու ամուր կապերով*»¹:

Այո՛, նա կարող էր ասել՝ տեսա, սիրեցի, մնացի: Եվ ցմահ ապրեց Արևելյան Հայաստանի հոգևոր կենտրոն վրաց մայրաքաղաքում:

Հովհաննես Թումանյանը բարեկամական «խոր ու ամուր» կապեր է հաստատում տեղի՝ նաև վրաց մտավորականների հետ: Նրանց հուշերը բովանդակում են մանրամասներ, նրբերանգներ, որոնցով կարելի է որոշ էական գծերով գունավորել հայոց հանճարի մարդկային, հասարակական ու ստեղծագործական դիմանկարը: Նրանք պատկերում են իրենց հերոսի ոչ միայն արտաքինը՝ մանրամասնելով, այլև բնավորությունը. եզակի անհատականություն է երևելի գրողը. նա միշտ բարեհոգի է, կենսախիճ, ներշնչող, համակրելի, լույս ճառագող ժպիտով: Գրական-հասարակական անվանի գործիչ Իոսեբ Իմեդաշվիլին մեկնամուլանոց հուշագրությունն սկսում է այսպես. «*Հովհաննես Թումանյան... Արևի առաջին ճառագայթ, վաղորդյան թարմաշունչ սյուրբ, վաղ զարնան ձնծաղկի արթնացում, մանուշակի ժպիտ. ահա թե ով է ինձ համար Հովհաննես Թումանյանը...*»²:

Վրաց գործիչների հուշագրությունները, ակնարկներն ու հոդվածները, որ հազեցած են անխառն բանաստեղծականությամբ, սիրով, հմայքով ու հրճվանքով, ունեն սկզբնաղբյուրների արժեք, հայվրաց գրական-մշակութային կապերի ամենալուսավոր էջերից են, որոնց զգալի մասը առաջին անգամ են դրվել գիտական շրջանառության մեջ, և, կարծում են, արժանի են գրականագետների,

մասնավորապես, թունանյանագետների ուշադրությանը:

Ուշագրավ է, սակայն, մի իրողություն. ոչ միայն վրացի, այլև հայ գրողները (Վահան Թոթովենց, Վահրամ Ալազան, Գուրգեն Մահարի, Յոզիփսիմե Պողոսյան) վրաց իրականության հետ թունանյանի առնչությունները լուսաբանող հուշագրություններում ու հետազոտություններում հայ մեծ գրողի և իրենց վրացի նույն մտերիմներից բոլորին հիշատակում են, բայց ոչ մեկը անգամ թռուցիկ տեղեկություն չի հաղորդում թունանյանի «հոգևոր եղբոր», ժամանակի վրաց ամենանշանավոր գրողներից մեկի մասին, մինչդեռ նրանց մտերմությունը հատում է գրական բարեկամության շրջանակները և ընդգրկում ավելի լայն մասշտաբներ: Պատահական չէ, որ Եղիշե Չարենցը թունանյանին նվիրված հրաժեշտի խոսքում նշելով, թե «*ամեն ժողովրդի ու ցեղի պոետ, ամեն մշակույթի տիպական ներկայացուցիչ նրա շուրջն էին խմբվում, հարազատանում նրան, և դեպի իրենց հեռու ու մոտիկ հայրենիքներ տանում Յոզի. թունանյանի՝ այդ հմայիչ լռուցու մասին սիրելի հիշողություններ, հարգանք ու մեծարանք*»³, վրացիներից վկայում է հենց այդ գործչին: Դրանից բացի, 1929 թվի հունիսին Յայաստան ժամանած վրաց գրողների պատվիրակության ղեկավարը նա է եղել և հանրության հետ հանդիպումների ժամանակ, սովորական ելույթներից բացի, գրականության և արվեստի վերաբերյալ հանդես է եկել իմաստալից դասախոսություններով:

Խոսքը վերաբերում է XX դարի 20-30-ական թվականների տաղանդավոր արձակագիր, բանաստեղծ, դրամատուրգ, փիլիսոփա, արվեստաբան, էսսեիստ Գրիգոր Ռոբաքիձեն:

Ինչո՞վ էր պայմանավորված «մոռացությունը»:

1920-ական թթ. երկրորդ կեսից բոլշևիկյան կուսակցությունն սկսում է գրականությունն ու արվեստը մամլել ցենզուրա կոչվող մեքենայի ատամնանիվների տակ, ամեն տաղանդավոր գրողի մեջ թշնամի է որոնում, իսկ ամեն տաղանդավոր երկում՝ հակախորհրդային գաղափարներ: Ռոբաքիձեն անսխալ կռահում է սպասվող վտանգը և գերմանացի կնոջը բուժելու պատրվակով 1931-ին մեկնելով Գերմանիա՝ այլևս չի վերադառնում (ճիշտ էր նրա գուշակությունը. «Կապույտ եղջյուրներ» խմբակի բոլոր բանաստեղծները, իսկ դրա հիմնադիրներից և գործուն ղեկավարներից մեկը Ռոբաքիձեն էր, 1937 թ. գնդակահարվեցին որպես «ժողովրդի թշնամիներ»):

Ավելի քան կես դար գրողը բացակայել է հայրենիքից. նա արգելված հեղինակ էր՝ «հայրենիքի դավաճանի» խարանը ճակատին.

անունը տալն անգամ վտանգ էր արտաբերողի համար: Դա նաև այն պատճառով, որ այնտեղ նա, գեղարվեստական գրականությունից բացի, հեղինակում է նաև սոցիոլոգիական-փիլիսոփայական երկեր («Աղուֆ Յիտլերն այնպես, ինչպես նրան տեսնում է մի օտար պոետ», «Մուսուլին՝ օծված արևից», «Դևը և մյութոսը» և այլն)՝ արժանանալով տեղի գրական մրցանակների և մամուլի դրվատանքին:

Վերջին երկու տասնամյակների ընթացքում, ձերբազատվելով քաղաքական ու գաղափարական պարտադրված կաղապարներից, և ելնելով այն իրողությունից, որ ստեղծագործական ու գիտական վաստակով եվրոպական մասշտաբի գրողն այլևս անդարձ հանգրվանել է հայրենի մշակույթի ամրաստանում, հնարավորություն ունենք իմաստավորելու հայ մեծ բանաստեղծի հետ նրա մտերմությունը:

Գրիգոր Ռոբաքիձեն ծնվել է 1880 թ. Իմերեթում (Արևմտյան Վրաստան, վախճանվել է Շվեյցարիայում, 1962 թ. նոյեմբերի 19-ին): Ուսանել է Տարտուի կայսերական և Լայպցիգի համալսարաններում: 1900-ականներին վերադառնալով հայրենի երկիր՝ սկիզբ է դնում համաշխարհային քաղաքակրթության վերաբերյալ հրապարակային դասախոսությունների շարքին՝ ունկնդիրներին զարմացնելով ու զարգացնելով իր արտասովոր գիտելիքներով: 1910-20-ական թթ. նրա անունը թնդում է ողջ Վրաստանում: Նա բեղուն գործունեություն է ծավալում դրամատուրգիայի, արձակի, չափածոյի, գրաքննադատության, արվեստագիտության ոլորտներում: Լայն մտահորիզոնի տեր՝ նա դասախոսություններ է կարդում եվրոպական և համաշխարհային գրականության ու արվեստի, փիլիսոփայության, պատմության, բանահյուսության թեմաներով: Հատկապես վրաց գրականության պատմության ու ընթացիկ վիճակի մասին ելույթներով հանդես է եկել նաև թիֆլիսահայ հանրության առաջ՝ Հայ գրողների կովկասյան ընկերության և Հայարտան հրավերով: Նման մի զեկույց էլ Հայարտանը կարդում է 1921 թ. մայիսին. անդրադառնում է XII-XX դարերի վրաց գրականությանը՝ զարգացման փուլերին, վերածնությանը, գրական հոսանքներին, մշակութային հարցերի:

Հաջորդ օրը, սակայն, տեղի ռուսալեզու թերթերից մեկը՝ «Սոց. Ֆեդերացիա», խեղաթյուրված է ներկայացնում հեղինակային որոշ դրվագներ: Բանախոսը մեղադրվում է Շոթա Ռուսթավելու, Արևելյան Վրաստանի բնակչության և մայրաքաղաք Թիֆլիսի հասցեին իբրև թե վիրավորական արտահայտություններ անելու մեջ:

Թումանյանը «Կավկասկոյե սլովո» լրագրում հոդված է տպագրում «Ճշմարտությունը վերականգնելու համար» խոսույն վերնագրով (նույնը լույս է տեսել նաև «Տրիբունա» թերթում, 1921, N 5): «Արդարությունը պետք է վերականգնել, ինչպես նրանց համար, ովքեր ներկա էին Գրիգոր Ռոբաքիձեի դասախոսությանը, այնպես էլ նրանց համար, ովքեր թյուրիմացության մեջ են ընկել...»: Թումանյանը վկայում է, որ Ռոբաքիձեի ելույթի մեջ Ռուսթավելու հասցեին վիրավորական խոսք չի եղել. նա պարզապես շեշտել է, որ Ռուսթավելուց հետո վրաց գրականությունը ձևի կատարելության առումով այնպիսի բարձունքի չի հասել, ինչպիսին ունի հիմա. «Այս իմաստով նույնիսկ մրցում է Ռուսթավելու հետ»: Ահա «մրցում է»-ն ոմանք հասկացել են՝ «գերազանցել է». թյուրընկալությունը դրա մեջ է: Սխալ հասկացված հաջորդ խնդրի՝ «Ռուսթավելին պարտվել է» արտահայտության մասին կարդում ենք. «...Կարող էր ոմանց մոտ այնպիսի տպավորություն ստեղծվել, թե նա հենց այդ խումբը նկատի ուներ, երբ շոշափում էր վարպետության և ձևի կատարելության առումով Ռուսթավելու հետ մրցելը: Այստեղ բառ անգամ չասվեց, թե Ռուսթավելին պարտվել է: Թող իմ վրաց ընկերները չկասկածեն, որ եթե այդպես ասվեր, ապա հայ գրողները դրան հիմնավոր հակահարված կտային»:

Բանաստեղծն անդրադառնում է նաև Արևելյան Վրաստանի և Թիֆլիսի մասին գրվածին: Արձանագրությունից քաղվածքների անելով (դասախոսությունը սղագրել է Դերենիկ Դեմիրճյանը)՝ հերքում է նաև այդ մեղադրանքները և այնքան հիմնավոր, այնքան համոզիչ, որ Ռոբաքիձեն այլ հոդված գրելու հարկ չի համարել:

Հավուր պատշաճի գնահատում է նաև դասախոսությունը. «...Ռոբաքիձեն իր հռետորական տաղանդով ու գրական հմտությանը առատ նյութ տվեց և մեծ հետաքրքրություն ու պատկառանք առաջ բերավ դեպի վրաց գրականությունը...»⁴:

Հայ մեծ բանաստեղծն իր կրտսեր բարեկամին նվիրել է մի քառյակ: Ի դեմս իր «սգավոր եղբոր», մեկ անգամ ևս խորունկ սեր ու նվիրվածություն դրսևորելով դրկից երկրի ու ժողովրդի հանդեպ: Դա գրված պետք է լինի ազգամիջյան ընդհարումների օրերին. «սգավոր եղբայրը» այցի է գնում իր «վշտահար եղբորը», ով համակված է նույն հոգսով ու նույն ցավով.

*Ինչ դալուկ ես քու երկրի պես
ու սրգավոր դու էսօր,
Բայց ողջ ու վեհ քան երբևէ,
թովիչ ու խոր դու էսօր.
Եղբորդդ մոտ եկած վըշտոտ՝
տանջում ես նոր դու էսօր,
Տանջանք անվերջ իմ սրբոտի մեջ
ու սեր հրզոր, դու էսօր:*

Թումանյանի և Ռոբաքիձեի հանդիպումը կայացել է 1910-ական թվականների սկզբին և հաճախակի դարձել 1915-1916-ից. խորհրդակցել են երկու երկրների հարաբերությունների, սպասվող վտանգների շուրջ, քննարկել գրականության և արվեստի խնդիրներ: Ռոբաքիձեն գրառել է իրենց զրույցները՝ հետագայում տպագրելու մտադրությամբ: «*Հավանաբար երբևէ կտպագրվեն Հովհաննեսի հետ ունեցած իմ զրույցները*», - կարդում ենք հուշերում:

Այդ տարիներին Թումանյանից հատուկենտ թարգմանություններ կային վրաց լեզվով, ուստի դժվար է ասել՝ Ռոբաքիձեն ծանոթ էր կամ բավարար պատկերացում ունե՞ր ավագ գրչընկերոջ գրականության վերաբերյալ: Ամեն դեպքում՝ համաշխարհային մշակույթին քաջատեղյակ գրողի ու փիլիսոփայի այնպիսի մակդիրներ, ինչպիսիք են «*հանճար, քաղցր ու ասպետական, լուսեղեն, սիրո և ազնվության մարմնացում*» խոսքերը լոկ մարդկային նկարագրի, մեծարման կամ քաղաքավարության դրսևորումներ չեն:

* * *

1921 թ. դեկտեմբերի 11-ին Հովհաննես Թումանյանը վրաց ականավոր քանդակագործ Իսկոբ Նիկոլաձեի գործունեության 25-ամյակի առթիվ ուղերձ է հղում հոբեյարին, որն ընթերցվում է հոբելյանական նիստին և խոր ու հաճելի տպավորություն է թողնում ներկաների վրա: Հայ գրողի ողջույնի խոսքում այնքան սեր ու գորովանք կար գեղեցիկն արարող, «*անկյանք քարերի մեջ անմահություն դնող*» արվեստագետի՝ «*հոգով քնքույշ ու վեհ Վրաստանի*» տաղանդավոր այդ զավակի հանդեպ, որ Ռոբաքիձեն հիացմունքով ու երախտագիտությամբ արծագանքում է դրան:

Ժամանակագրորեն Ռոբաքիձեի՝ Թումանյանին վերաբերող գրավոր առաջին խոսքը, մի քանի երկտողերից, հեռագրերից ու շնորհավորական բացիկներից բացի, հենց այդ նամակն է՝ հղված 1922 թ. դեկտեմբերի 22-ին, այսինքն՝ բանաստեղծին Մոսկվա տեղափոխելու նախորդ օրը: Խնդրո առարկա նամակի մասին տեղե-

կանում ենք նրա իսկ հուշերից. որ լույս է տեսել թիֆլիսում, համա-վրացական նոր գրականության օրգան «Ռուբիկոնի» շաբաթաթեր-թի 1923 թ. ապրիլի 8-ի համարում, «*Լուսեղեն Հովհաննեսը*» վերնա-գրով (թերթի զգալի մասը նվիրված է բանաստեղծի հիշատակին՝ գծանկար, հուշագրություններ, բանաստեղծություններ, մահախո-սական, ցավակցական հեռագրեր): Թումանյանի հիվանդությամբ մտահոգ գրողը հարցում է անում Կարա Դարվիչին: Վերջինս հայտ-նում է բանաստեղծին Մոսկվա փոխադրելու լուրը: Ռոբաքիձեն ան-հանգստանում է՝ տեսնես նախօրյակին գրած իր նամակը ստացե՞լ է, կարդացե՞լ է բանաստեղծը:

«Մի անգամ, աշխատանքի պահին՝ ցերեկվա ժամը երկուսին, նրան խոսք ասելու անհաղթահարելի ցանկություն առաջացավ մեջս՝ համարյա հրաժեշտի կամ վերջին խոսքի պես մի բան,- գրում է Ռոբաքիձեն,- իսկույն նամակ գրեցի ու շտապ ուղարկեցի: Հաջորդ օրը հանդիպեցի Կարա Դարվիչին և հայտնեցի զգացածս: Ասաց՝ Հովհաննեսին երեկ երեկոյան Մոսկվա տարան: Արդյոք մեկնելու պահին նամակս հանձնե՞լ են, իսկ գուցե չի՞ ստացել: Անչափ ցա-վալի կլինի ինձ համար, եթե ստացած չլինի»:

Ծանր հիվանդ բանաստեղծը հավանաբար չի տեղեկացվել, քանզի դեկտեմբերի 22-ին և հաջորդած օրերին հարազատների գրառումներում նամակի մասին խոսք չկա, կամ գուցե, զգուշանա-լով անախորժություններից, վերացրե՞լ են (Թումանյանի ժառանգ-ները, հետագայում խուսափելով «ժողովրդի թշնամի» գրողի նա-մակն ունենալու վտանգից, հավանաբար, նրա՝ Գերմանիա մեկնե-լուց հետո՝ 1930-ական թթ. դժնի տարիներին մկրատել են հեղինա-կի անուհ-ազգանունը): Ինչևէ, Ռոբաքիձեն գրում է, որ ինքն անձամբ հայ բանաստեղծի խոսքերում շոշափելիորեն զգացել է Վրաստանի նկատմամբ անժիր սեր, որ «*կարող է ապրել միայն մեծ մարդը*», և դա իր մեջ հզոր ուժ է ներարկել, իրեն մղել է խորամուխ լինելու «*բնության անանուն բեկորների պարզության մեջ*», որ «*իմաստու-թյուն է ավելի*»: Վրաց գրողն այդ հույզերի մեջ տեսնում է իր ավագ եղբորը և անձնական դժբախտություն համարում նրա հիվանդու-թյունը. իր աղոթքներում հաճախ լսում է բանաստեղծի անունը: Դա սիրո բարձրագույն արտահայտություն է, սեր, որ «*եթե հասցվի վերջնական սահմանին, ապա մահը կչքանա*»: «*Եթե ես քեզ սիրում եմ, մարդ, մինչև վերջ,- շարունակում է Ռոբաքիձեն,- ապա հավեր-ժական հանգստի թագավորության մեջ կտեսնեն քեզ... Քանի որ դա այդպես է, ուրեմն մահ չկա...*»: Նամակի վերջին ակորդները հուսա-

բեր են, գորովալից. «Սիրելի՛ Յովհաննես, մի՛ կարծիր, թե մոռացել են քեզ կամ նման ինչ-որ բան: Յիշիր, որ քեզ հիշում են սիրով, մանկական զգացումներով, որդիական նվիրվածությամբ»:

Այսքան անկեղծ, հագեցած ու խորքային նամակ՝ օտարի կողմից ուղղված թուժանյանին, դժվար է հիշատակել:

Յուզիչ են նաև հուշերը, ահա սկիզբը. «Բանաստեղծի մահը բանաստեղծի համար իր մահն է, առավել ևս Յովհաննես թուժանյանի մահը: Շատ մեծ է մեր վիշտը, որովհետև Յովհաննեսը Բանաստեղծ էր: Յովհաննեսը Սարդ էր: Յովհաննեսը Բարեկամ էր: Եվ ամեն ինչում կատարելապես լուսեղեն: Ջուր չեն նրան Չորրորդ Ավետարանիչի անունով կնքել: Նման անհատ հարյուր տարին մեկ է շողարծակում, և Յովհաննեսը նախևառաջ անհատ էր՝ միշտ շողարծակ ժպտով: ...Յոգին՝ ամենատես, նուրբ, բարի, ամենաբարձրյալի պես միշտ խանդավառ: Սիրտը՝ պարզ, բաց, կրակված, մանկական, անապական»⁵:

Գրիգոլ Ռոբաքիձեի հեռագրերը (շնորհավորանքներ ծննդյան օրվա առթիվ, ամանորյա մաղթանքներ, հետաքրքրություն հիվանդության և հետվիրահատական ընթացքի մասին, ցավակցություն Օլգա թուժանյանին և հայ ժողովրդին), հուշագրությունն ու բանաստեղծությունը, նամակն ու բացիկները վկայում են գրող արվեստագետի վեհության ու վսեմ նկարագրի մասին:

* * *

Վրաստանի խորհրդային գրողների ֆեդերացիայի պատվիրակությունը 1929 թ. հունիսի սկզբին ժամանում է Յայաստան: Նրա կազմում գրական հոսանքների ներկայացուցիչներ էին՝ սիմվոլիստներ (Գրիգոլ Ռոբաքիձե, Տիցիան Տաբիձե, Նիկոլո Միծիշվիլի), ակադեմիականներ (Ալեքսանդրե Աբաշելի, Արիստո Չումբաձե, Իոսեբ Գրիշաշվիլի), պրոլետարական գրողներ (Սանդրո Էուլի, Շալվա Ռադիանի, Իոնա Վակելի, Պետրե Սամսոնիձե, Կոնստանտինե Լորքբիֆանիձե), լեֆականներ (Դեմնա Շենգելաիա, Սիմոն Չիքովանի), գրական որևէ խմբակի չհանդամագրված, բայց ֆեդերացիայի մեջ մտնող գրողներ (Միխեիլ Ջավախիշվիլի, Սանդրո Շանշիաշվիլի, Լեո Քիաշելի, Գեորգի Քուչիշվիլի, Գալակտիոն Տաբիձե), պաշտոնական տվյալներով՝ 20 հոգի, արձակագիրներ, բանաստեղծներ, դրամատուրգներ, գրականագետներ:

ԽՍՀՄ կազմավորումից հետո խորհրդային ժողովուրդների համերաշխության ու բարեկամության թեման այն գագաթն էր, որտե-

ղից գրողները պարտավոր էին տեսնել ու իմաստավորել նոր կյանքը հաստատելու հասարակական-քաղաքական, տնտեսական ու մշակութային գործոնները և, իհարկե, մտավորականության ու բանվորագյուղացիական խավերի եղբայրական համերաշխ հարաբերությունները: Դա առաջնային պիտի լիներ պոեզիայում: Այդ նպատակով ստեղծագործողները գործուղվում էին հանրապետություններ, լինում էին գործարաններում, ֆաբրիկաներում, ձեռնարկություններում, նորակառույցներում, մշակութային օջախներում: Միևնույն ժամանակ հայ և վրաց գրողները երկուստեք այցելություններով ամրակայում էին նախնիների սկզբնավորած փոխիմացության հիմքերը: Հատկանշական է, որ վրաց գրողների շրջագայությունը Հայաստանում էական մանրամասներով վրաց ընթերցողին ներկայացրել է հենց Ռոբաքիձեն (Հայաստան, էսսե, «Քարթլիս ցխովրեբա», 1929 թ.):

Էսսեիստը ոգեշնչված պատկերում է Ղարաքիլիսան, Դիլիջանի լեռնանցքը, Սևանա լիճը, որ դժվար է որոշել՝ «եզիպտական շափյուղա՞ է, թե՞ հնդկական զմրուխտ», հիմավորց վանքերով կղզին, որ «Հին աստվածներ» դրամայի գործողությունների՝ քրիստոնեական և հեթանոսական ուժերի բախման վայրն է, և որտեղից «հմայված դիտում ես ժանգագույն ցելերով ակոսված զոլավոր սարալանջը», ասել է թե՛ հայացքը շոյում են սարյանական երանգները, ցուանում է բիբլիական Արարատը, այնուհետև՝ Արարատյան դաշտը, Էջմիածինը՝ «ճարտարապետական զարմանահրաշ կառույցներով, ամբողջ Արևելքի հպարտությունը հանդիսացող հռչակավոր Մատենադարանով»: «Տեսա էջմիածինը, շնչեցի անցյալ ժամանակների բույրը, մազաղաթների վրա արտացոլված են վաղեմի ապրումներ, աղոթք, աղերս, վաստակ...»: Փիլիսոփայի տրամաբանությունն ու բանաստեղծի երևակայությունը համադրելով՝ հուշագիրը մեջընդմեջ հակիրճ, բայց բնորոշ խոսքերով ուրվագծում է հայոց մեծագույն անհատականությունների՝ Հովհաննես Թումանյանի, Ավետիք Իսահակյանի, Թորոս Թորամանյանի, Ալեքսանդր Թամանյանի, Մարտիրոս Սարյանի, Ալեքսանդր Սպենդիարյանի, մեր մշակույթն արարող ականավոր այլ գործիչների դիմանկարները: Արժարժում է նաև հայ գաղթականների ու նրանց ճակատագրի հարցերը: Պարզապես քնարական ակորդներ են հնչում ունկերիդ մեջ, երբ կարդում ես հայ երգի՝ «կարոտակեզ, թախծալուր» ու հայոց պարի՝ «աշխույժ, մոլեգին», հայոց աչքերի՝ «ուրախ, ինչով վարակում են», և թախճոտ, «որով բնավ չեն դրդում տխրել» տողերը: Ռոբաքիձեն

շեշտում է Հայաստանի թարմ շնչառությունը, ինքնատիպ ու անկրկնելի բնաշխարհը, «որտեղ առաջին հերթին տեսնում են Հովհաննեսին՝ լույսով ու թախծով»:

Հուլազարի անփոփոմը ավելի հետզորություն է և հռետորական հարց՝ ուղղված հանրությանը, դիվանագետներին, քաղաքագետներին, պաշտոնյաներին. «Ի՞նչ էին անում մեր նախնիները: Ինչո՞ւ չէին այցելում Հայաստան: Ո՞ր էին գրողները: Եթե այցելեին, «ազգային պահխուղոզիզմներն» ավելի պակաս կլինեին»⁶:

Գրիգոլ Ռոբաքիձեի էսսեն շնչում է սիրով ու քնարականությամբ, ընթերցողին հաղորդակցում է հայոց անկրկնելի բնապատկերներին, տեսարժան վայրերին, ժամանակի «անխառն իրականությանը», ձեռքբերումներին, պայքարի ու արարման գործընթացներին. այն արվեստագետ բարեկամի ճամփորդական տպավորիչ խոհերի, զգացմունքների, գեղարվեստական ու հրապարակախոսական ժանրերի ուրույն շաղախ է՝ տարածական դիտարկումներով, մարդասիրության բարձրագույն արտահայտությամբ:

¹ Հովհաննես Թումանյան, Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 5, էջ 463:

² «Ուղեցույց աստղը». վրացի մտավորականները Հովհաննես Թումանյանի մասին (կազմեց, վրացերենից թարգմանեց և առաջաբանը գրեց Հրաչիկ Բայրամյանը), «Չանգակ-97» հրատ., Երևան, 1999 թ., էջ 103:

³ Թումանյանը ժամանակակիցների հուշերում», Երևան, 1969, էջ 899:

⁴ Հովհաննես Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու 10 հատորով, հ. 7, էջ 521:

⁵ «Ռուբիկոնի» (համավրացական նոր գրականության շաբաթաթերթ), Թիֆլիս, 8 ապրիլի 1923 («Լուսեղեն Հովհաննեսը»):

⁶ Գրիգոլ Ռոբաքիձե, «Հայաստանում» (էսսե), (վրացերենից թարգմանեց Անահիտ Բոստանջյանը), Երևան, 2003, էջ 39:

ՀՈՎԿԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ ԵՎ ՏԻՑԻԱՆ ՏԱԲԻՉԵ

*«Մենք՝ վրացիներս ու հայերս,
խայտառակ չափով քիչ ենք
ճանաչում միմյանց»:*

Տիցիան Տաբիժե

Մեծ լռեցու վրացի երևելի մտերիմներից էր բանաստեղծ, գրականագետ, թարգմանիչ, հասարակական գործիչ Տիցիան Տաբիժե (1895–1937): Նա Հովհաննես Թումանյանի հետ ժանոթացել է 1917 թ., հետագայում բարեկամացել են ընտանիքներով: Ահա թե ինչ է գրում Տաբիժե իրենց առաջին հանդիպման մասին. «1917 թվականի ամառն էր: Սոսկվայից նոր էի վերադարձել Թիֆլիս: Ինձ հետ ժամանել էր նաև Կոնստանտին Բալմոնտը: Հուլյսերի ու հեղաբեկումների ժամանակ էր... Հովհաննես Թումանյանին առաջին անգամ տեսա վրացական ակումբի այգում՝ ընթրիքի ժամանակ, որ Բալմոնտի պատվին կազմակերպել էր Սանդրո Ղանչելին: Բալմոնտը բոլորին նվիրում էր էքսպրոմտներ և բառախաղեր: Թումանյանը միանգամայն անկախ էր պահում իրեն, այնպես, որ նույնիսկ ռուսերեն էքսպրոմտներ էր ասում Բալմոնտի հետ»: Այդ հանդիպմանը ներկա է եղել նաև Թիֆլիսի գեղեցկուհիներից մեկը՝ ազնվականուհի Եկատերինա Ամիրեջիբին (մահացել է 1984 թ.): Բալմոնտը, սովորության համաձայն, գեղանի կնոջը նվիրում է հետևյալ էքսպրոմտը.

*Отходя в ночи ко сну,
В мыслях я тебе шепчу,
Ты почувствуешь меня,
Как касанье огня.*

*В голубых твоих глазах
Как зарница вспыхнет страх,
Но, не бойся, красота,
Поцелую лишь уста...*

Բալմոնտի էքսպրոմտից հետո Հովի. Թումանյանը, դիմելով Եկատերինա Ամիրեջիբին, ասում է. «Ռուս գրողը Ձեզ ներկայացնում է երազներում, իսկ ես, մայելով Ձեզ, խոնարհվում եմ Ձեր հմայքի և Ձեր երկնագույն աչքերի առջև»:

համերաշխության գաղափարներ ամրակայելու լավագույն առիթ: Իսկ բանաստեղծի մահվան կապակցությամբ գրած հուշերում («Ռուբիկոնի», 8 ապրիլի, 1923) անկեղծորեն ու անմիջական ներշնչանքով խոսում է թունանյանի հետ առաջին ծանոթության, ստացած տպավորությունների և նրա հասարակական եռանդուն գործունեության մասին: Տաբիձեն գրում է. *«Յովհաննես թունանյանը մերօրյա իրականության բացառիկ փայլուն անհատականություններից է: Ով Յովհաննեսին անծանր չի ճանաչել, նրան կարող է չափազանցություն թվալ այն ամենը, ինչ ասվում է նրա մասին: Այդ անհատի մեջ մարդկային մեծ հմայք կար, որով հրապուրվում և հավերժ նրա բարեկամն էր դառնում յուրաքանչյուր ոք, ում հետ նա գրուցում էր»:*

Հուշերի հեղինակն ըստ արժանվույն գնահատում է նաև թունանյանի մատուցած բացառիկ ծառայությունները 1910-ական թթ. հակամարտությունները խաղաղեցնելու գործուն քայլերը:

«Առաջին մարդը, որն ավելի շատ էր մտատանջվում Յայաստանի և Վրաստանի եղբայրության հարցով, Յովհաննես թունանյանն էր: Վրաստանում բոլորը հավատում էին նրա անկեղծությանը: Դա հավաստեց թիֆլիսը նրա 50-ամյա հորեյանին»:

Բանաստեղծի ընտանեկան մթնոլորտը հուշագիրը ներկայացնում է իբրև ջերմեռանդ երկրպագու. *«Նրա ընդարձակ բնակարանը, մեծ բուխարին և նրանցում իշխող արևելյան բուրմունքն ստեղծում էին մտերմական մթնոլորտ և մղում բանաստեղծական իմպրովիզացիաների»:*

Ծանոթացնելով վրաց մտավորականների հետ ունեցած կապերին՝ Տաբիձեն գրում է, որ թունանյանը մասնակցում էր իրենց բոլոր միջոցառումներին, հետաքրքրվում էր նույնիսկ աննշան թվացող մանրուքներով և տալիս օգտակար խորհուրդներ: *«Ի վերջո պարզվում էր,- ամփոփում է Տաբիձեն,- որ տվյալ գործի հաջողության համար նա ավելի շատ բան է արել, քան վրացի բոլոր գրողները միասին վերցրած»:* Նրա՝ այս կամ այն միջոցառմանը հայտնվելը իրադարձության էր վերածվում մտերիմների շրջանակներում:

Եվ, իրոք, թունանյանն արձագանքել է անհատական ու հասարակական բոլոր ձեռնարկումներին, հանդես է եկել հրապարակային ելույթներով: Նա ոչ միայն գրական-մշակութային, այլև հանրային կյանքում իրականացվող միջոցառումների ամենասակտիվ կազմակերպիչներից է եղել. այլևս չխոսելով տասնյակ բազմաբնույթ հող-

վածների, գրախոսությունների, վրացերենից կատարած թարգմանությունների մասին:

Թումանյանների և Տաբիձեների ընտանիքների բարեկամական ջերմ հարաբերությունների մասին է վկայում այն փաստը, որ Տաբիձե անուսիներին անդրանիկ զավակի՝ Նիտայի կնքահայրը, պայմանավորվածության համաձայն, պետք է լիներ Թումանյանը: «*Ես և դուստրս սպասում ենք այն երջանիկ օրվան, երբ Դուք կառնեք նրան Ձեր սուրբ ձեռքերին, կտանեք օծելու և մեռոն ընդունելու*», - հիվանդ Թումանյանին շուտափույթ առողջություն մաղթելուց հետո իր երկտողում գրում է Նինո Տաբիձեն: Հիվանդության պատճառով, սակայն, կնքահոր դերում հանդես է եկել Թումանյանի դուստրը՝ Նվարդը: «*Ես երջանիկ եմ, որ այդպես հարազատացանք*», - հետագայում սրբազան զգացումով փաստում է Տիցիանի կինը:

Թումանյանի մահից 3 տարի անց Տիցիան Տաբիձեն ավելի բովանդակալից է դարձնում վրաց մամուլում («Քարթուլի մծերլոբա», 1927 թ., N 1) Թումանյանի կյանքն ու գործունեությունը արտացոլող իր ակնարկը, միևնույն ժամանակ ձեռնամուխ է լինում բանաստեղծի մասին վրաց լեզվով եղած նյութերն ի մի բերելու և առանձին գրքով լույս ընծայելու գործին:

Տաբիձեն կազմել է հեղինակների և նրանց հողավածների (ինքը դրանք որակել է նամակ՝ Հ.Բ.), ակնարկների, բանաստեղծությունների, հուշերի ուրվագիրը՝ ձևի ու բովանդակության հետևյալ տեսքով.

Ներկայացված նյութեր

1. *Վասիլ Բարնով* - նամակ
2. *Գրիգոլ Ռոբաքիձե* - նամակ
3. *Գրիշաշվիլի* - նամակ
4. *Տիցիան Տաբիձե* - նամակ
5. *Սանդրո Ղանչելի* - նամակ
6. *Գրիգոլ Ռոբաքիձե* - բանաստեղծություն
7. *Պաոլո Իաշվիլի* - բանաստեղծություն
8. *Գրիշաշվիլի* - բանաստեղծություն
9. *Տիցիան Տաբիձե* - Բաց նամակ Հովհաննես Թումանյանին
10. *Թումանյանի բանաստեղծությունը* - «Նվեր Վրաստանի բանաստեղծներին»
11. *Տիցիան Տաբիձեի նամակը* - Վրաց գրողների պատվիրակությունը երևանում
12. *Վրացի գրողները Հովհաննեսի զերեզմանի մոտ:*

Պակասում են՝

1. *Հովհաննեսի պատասխանը Տիցիան Տարիծեին*
2. *Հովհաննեսի մասնակը Կովկասի մասին*
3. *Հովհաննեսի մասնակը պոեզիայի օրվա առթիվ*

Ցանկը պարունակող թերթիկի ձախ անկյունում համապատասխան պաշտոնյայի ստորագրությամբ (24/ 2/ 1927) կա մակագրություն, որով Վրացպետիրատին հրահանգվում է ընթացք տալ նյութերի տպագրությանը: Կարգադրության համաձայն՝ ժողովածուն պետք է լույս տեսներ 1927 թվականին, բայց ինչ-ինչ պատճառներով չի իրականացվել*:

Իր այս նախաձեռնության մասին Տիցիանը հիշատակել է նաև Երևանում. 1929 թ. հունիսին վրաց գրողների պատվիրակության կազմում նա ժամանում է Հայաստան և շրջագայում մեր երկրում: Հարցազրույցներից մեկում խոսելով թունանյանի հետ վրաց գրողների մտերմության մասին՝ նա ասում է. «*Քանաստեղծների մեր խումբը սերտ կապված էր բանաստեղծ Հովհաննես թունանյանի հետ. նա շատ է աշխատել հայ և վրաց ժողովուրդների մշակութային մերձեցման համար: Այդ տեսակետից նրան պետք է համարել ռահվիրա*»:

Վերադառնալուց հետո նա գրում է «Հայաստանում» շարքը: Շարքի լավագույն բանաստեղծություններից մեկը՝ «Իրականացավ երազանքը պոետների», նվիրված է թունանյանին: Արտահայտելով իր խորունկ սերը բանաստեղծի հանդեպ՝ նա նշում է, որ հայոց աշխարհում կատարվել են դրական փոփոխություններ, «փակվել են վշտի դռները», ժողովուրդը իր ճակատագրի տերն է, ինքն էլ պարտավորվում է զրչակիցների հետ շարունակել բարեկամության, համերաշխության, միասնության թունանյանական ավանդույթները.

* ԽՍՀՄ-ի ԼՍՊԿՍԿ Կենտրոնական Կոմիտեի Կրթության և գիտության նախարարության կողմից 1999 թ. հունիսին հրատարակված «Հովհաննես Տարիծեի և Տիցիանի նամակները» գրքի 1927 թ. փետրվարի 24-ի և 1929 թ. հունիսի 2-ի նամակները (հավելումներ) համապատասխանաբար համեմատվել են Կովկասի մասին նամակի հետևյալ տեքստի հետ. «Տիցիանը հիշատակել է նաև Երևանում. 1929 թ. հունիսին վրաց գրողների պատվիրակության կազմում նա ժամանում է Հայաստան և շրջագայում մեր երկրում: Հարցազրույցներից մեկում խոսելով թունանյանի հետ վրաց գրողների մտերմության մասին՝ նա ասում է. «Քանաստեղծների մեր խումբը սերտ կապված էր բանաստեղծ Հովհաննես թունանյանի հետ. նա շատ է աշխատել հայ և վրաց ժողովուրդների մշակութային մերձեցման համար: Այդ տեսակետից նրան պետք է համարել ռահվիրա»:

*Եղբայրներին հետ եկել եմ ես էլ
Այս եղբայրությանն ասելու նոր երգ,
Այն երգը, որ դու էիր սկսել,
Կշարունակենք այսօր ահա մենք:*

Տաբիձեն բարեկամական սերտ կապեր է ունեցել նաև Ալ. Շիրվանզադեի, Պ. Մակինցյանի, առհասարակ թիֆլիսաբնակ հայ մտավորականների հետ:

Նա վրացերեն է թարգմանել Ավ. Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» պոեմը (Թիֆլիս, 1931, II հրատ.՝ 1936), Սայաթ-Նովայի վրացերեն խաղերի և Ալ. Շիրվանզադեի կյանքի ու գործունեության մասին գրել է ծավալուն հոդվածներ, հայ և վրաց գրողներին կոչ է արել սովորել միմյանց լեզուն ու բնագրով հաղորդակցվել երկու ժողովուրդների գրականությանը, պատմությանն ու մշակույթին: Եղել է Չարենցի լավագույն և անշահախնդիր բարեկամներից մեկը: Նրա «Տասնութ թվական» պոեմը արձագանքն է 1918 թ. դեկտեմբերին սկսված ու վերջացած հայ-վրացական արյունահեղության:

Հովի. Թումանյանի մասին սրտառուչ հուշեր է գրել նաև Տիցիանի այրին՝ Նինո Տաբիձեն:

ԳՐԱԿԱՆ ԿՈՐԻՖԵՅՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՍՈՒԹՅՈՒՆ
ՄԵՐԿՈՒՅԹՆԵՐԻ ՄԵՐՁԵՑՄԱՆ
ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԳՐԱՎԱԿԱՆ՝

Եղիշե Չարենցի գրական մկրտավայրը՝ թե՛ բանաստեղծական երախայրիքը տպագրելու և թե՛ նրա՝ իբրև խոստումնալից պոետի մասին գնահատանքի առաջին գրավոր խոսքերը հանրությանն ավետելու առումով եղել է Վրաստանի մայրաքաղաքը: Հետագայում արդեն մեծահռչակ բանաստեղծ՝ Չարենցը երկար ժամանակով հաճախ եղել է Թիֆլիսում և, բնականաբար, ակտիվորեն մասնակցել է տեղի գրական կյանքին, աշխատակցել թերթերին ու հանդեսներին, կարդացել զեկուցումներ ու դասախոսություններ: Նա Թիֆլիս է գնացել, մեր կարծիքով, երկու գորավոր պատճառով. նախ՝ երևանյան միջավայրը բավականին անձուկ էր իր համար, իսկ գրական միջակություններն էլ արդեն սկսել էին թունավորել նրա հոգին, ուստի կաղապարներ ու շղթաներ չհանդուրժող և մենության դատապարտված «որբ հոգին» հոգևոր օթևան գտնելու հույսով հեռացել է հեղձուցիչ միջավայրից և երբեմն ժամանակավոր խարիսխ նետել իր անկրկնելի կոլորիտն ու հմայքը պահպանած Թիֆլիսում, այն Թիֆլիսում, որ Ամենայն հայոց բանաստեղծի գհահատմամբ «մի առանձին ինքնուրույն աշխարհք ու զվարթ կյանք էր ներկայացնում իր աղ ու հացով, նիստ ու կացով...», այն Թիֆլիսում, որ սիրել է նաև ինքը՝ Չարենցը, և որը, իր հերթին, միշտ զրկաբաց է ընդունել XX դարասկզբի մեծագույն երգիչներից մեկին: Չմոռանանք, որ Վրաստանի մայրաքաղաքն այդ տարիներին էլ Անդրկովկասի գրական, գիտական և մշակութային ամենախոշոր կենտրոնն էր, և 20-30-ական թվականներին գրական պայքարն այստեղ ավելի հետաքրքիր էր, սուր և անզիջուն, իսկ դա Չարենցի տարերքն էր... Երկրորդ և ամենակարևոր պատճառը գրական, հրատարակչական և հասարակական-քաղաքական խնդիրներն էին, որ նրա առաջ ծառացել էին Հայաստանի պետական հրատարակչությունում ղեկավար աշխատանք կատարելու տարիներին: Նա շատ լավ գիտակցել է, որ

* «añ»e ½»İáðóáóÙ İ°ñ³óı»É ĺ 2002 Ā. Ù³ÙÇeÇ 21-25-Á ĀμÇÉÇeÇáóú İ°Ù³óı Ø°ñÇ 'ñáe»Ç İÝÝ'Ù³Ý 200-³ÙÙ³ÍÇÝ ÝÍÇñıí İáíı³e³.»ıÝ»ñÇ ÙÇç³½-³ÙÇÝ ·Çı³ÁáŌáíáóÙ (İá³-ñíáóÙ ĺ Éñ³óáóÙÝ»ñái):

շրջանակները՝ թիֆլիսից հասցնելով Երևան: Բանաստեղծի համար գեղարվեստական թարգմանությունը թե՛ քաղաքակրթության զարգացման ազդակ էր, թե՛ միմյանց ճանաչելու կարևորագույն նախապայման, ուստի Հայաստանի պետտիրատուն աշխատելու տարիներին ձեռնամուխ է եղել այդ հանրաշահ, «բարի և անհրաժեշտ գործի» իրականացմանը: «Վրաց ժամանակակից գրողներին ու կլասիկներին Չարենցը հաճախ էր մտցնում պլանները և ընթացք տալիս դրանց տպագրությանը»¹, - գրում է հրատարակչության նախկին աշխատակից Սուրեն Հարությունյանը: Նա շատ լավ գիտեր, որ հայ թարգմանական արվեստն սկիզբ է առել հայ գրի ու դպրության հետ միասին և դարերի ընթացքում որոշակի, երբեմն էլ վճռորոշ դեր կատարել թե՛ ազգային գրականության զարգացման և թե՛ երկրի հասարակական-քաղաքական կյանքում: Եվ 1930-ական թթ. պետական հիմքերի վրա է դնում համաշխարհային դասական գրականության տասնյակ արժեքների հայերեն թարգմանության հանրաշահ գործը՝ դրանց մեջ առաջիններից մեկը նշելով Շոթա Ռուսթավելու «Ընձենավորը»: Իսկ մինչ այդ նրա անմիջական մասնակցությամբ կազմվել, խմբագրվել և լույս էին տեսել «Նմուշներ վրաց գրականությունից» (1929), «Վրաստանի ժամանակակից գրականություն» (1933) ժողովածուները: Իր նախաձեռնությամբ են հայերեն թարգմանվել և տպագրվել Տիցիան Տաբիձեի «Վրաց նոր գրականություն» աշխատությունը (1931), Միխեիլ Ջավախիշվիլու «Վրսեն Մարաբդելի» վեպը (1936), Շիո Արագվիսպիրելու, Կոնստանտին Լորթքիփանիձեի և այլոց երկերը: Իսկ 1930-ական թվականների սկզբին հայկական դպրոցների միջին դասարանների համար հրատարակած «Գրականության դասընթացներում» զետեղել է վրաց տասներեք գրողների արձակ և չափածո երկեր: Կարելի է ասել, որ նա սկսել էր վրաց գեղարվեստական գրականությունը հայերեն թարգմանելու շարժում, որը, ցավոք, ընդհատվեց իր և նույն գործին լծված իր վրացի բարեկամների (Ն. Միծիշվիլի, Մ. Ջավախիշվիլի, Տ. Տաբիձե, Պ. Իաշվիլի) ողբերգական վախճանի հետ:

Հայտնի է, որ Չարենցը ստանձնել էր Ռուսթավելու պոեմի հայերեն թարգմանության խմբագրությունը, բայց հալածանքների ու հաշվեհարդարի պատճառով չի կարողացել իրականացնել այդ աշխատանքը: Անկատար են մնացել նաև հայ-վրաց գրական կապերի զարգացմանն ուղղված նրա շատ ծրագրեր:

Բանաստեղծը միշտ հետաքրքրվել է վրաց գրականությամբ, մասնավորապես վրաց ժամանակակից պոեզիայի նորություններով:

Պատահական չէ, որ խորհրդային գրողների առաջին համագումարի ամբիոնից իր նախընտրած բանաստեղծների թվում՝ Պաստերնակ, Տիչինա, Բաժան, տվել է նաև Տիցիան Տաբիձեի և Պաուլո Իաշվիլու անունները: *«Ես գիտեմ խորհրդային գրականության լավագույն վարպետներին,- ասել է նա,- ես տեսնում եմ, որ այդ ընկերների արվեստում կա մի բան, որ հատուկ է միմիայն նրանց, և այդ տեսակետից նրանք բազմացնում են խորհրդային ողջ պոեզիայի ստեղծագործական փորձը: Նույնը կարող եմ ասել իմ վրաց բարեկամների՝ ընկ. ընկ. Տ. Տաբիձեի և Պ. Իաշվիլու բարձր վարպետության մասին»²:*

Վրաց բանաստեղծներին տված գնահատականը համագումարային տրամադրության արդյունք չէր, ոչ էլ *«Ժամանակավոր և շուտանցիկ ոգևորություն»*, - ինչպես կասեր Գուրգեն Մահարին: Մեկ տարի անց Աղասի Խանջյանին հղած նամակներից մեկում (10 հունիսի 1935 թ.) նա նշել է, որ ինքը լավ գիտի *«արդի խորհրդային պոեզիան և նրա ամենակարևոր ներկայացուցիչներին՝ Պաստերնակին, Բաժանին, Իաշվիլուն»³:*

Քաջատեղյակ գրական-հասարակական կյանքին, գրողների ու պետական այրերի հարաբերություններին՝ Չարենցը, առանձին դեպքերում իբրև ուսանելի օրինակ, վկայակոչել է վրաց իրականությունը: Այսպես, որպեսզի իր դժգոհությունը հիմնավորի ԽՍՀՄ գրողների համամիութենական առաջին համագումարում Հայաստանի գրողների միության կազմկոմիտեի նախագահ Դրաստամատ Սիմոնյանի զեկուցման առթիվ, իբրև լավագույն ելույթ վկայել է Վրաստանի գրողների միության նախագահ Մաղաքիա Տորոշելիձեի ելույթը: *«Համենատեք Դ. Սիմոնյանի զեկուցումը Մաղաքիա Տորոշելիձեի զեկուցման հետ,- ասել է Չարենցը,- մենք ամաչում ենք խոսել մեր գրողների մասին. վրացիները սիրում են իրենց կուլտուրան... Բոլոր հարցերում համագումարում վրացական պատվիրակությունն իրեն դրսևորեց լավագույն կողմերով»⁴:* Իսկ երբ Երևանում արգելել են Մուրացանի պատմական երկերի հրատարակությունը, կրկին օրինակ է բերել Վրաստանում տարվող գրական քաղաքականությունը և նշել, որ վրացական կառավարությունը չի խոչընդոտում նման երկերի տպագրությանը:

Անդրադառնալով Հայաստանի գրողների սոցիալական պայմաններին՝ դառնորեն խոստովանել է նաև, թե Հայաստանում *«ինչքան ուզում ես գրի՝ մեկ է՝ սովից կմեռնես, այնինչ վրաց բանաստեղծները հիանալի են ապրում. այնտեղ նրանց հովանավորում է կառավարությունը»⁵:*

Եղիշե Չարենցի ստեղծագործությունների նկատմամբ վրաց իրականության մեջ հարաճուն հետաքրքրություն է առաջացել, երբ Կոլաու Նադիրաձեն թարգմանել է «Ամբոխները խելագարված» պոեմը և որոշ հատվածներ տպագրել «Մնաթրփի» ամսագրի 1925 թ. N 2-ում: Հետագա տարիներին, մինչև 1936 թվականը, Վալերիան Գափրինդաշվիլու, Ալիո Միրցխուլավայի և Դավիթ Գաչեչիլաձեի թարգմանությամբ վրացերեն տպագրվել են Չարենցի երկերից մի քանիսը՝ հիմնականում լեռնիյան և վրացական թեմաներով գրվածքներ, բացառությամբ «Գարուն», «Գալիքի որմնադիրները» բանաստեղծությունների և «Երկիր Նաիրի» վեպի, որը չնայած թարգմանվել է 1936-ին, բայց լույս է տեսել 1967 թ. թարգմանչի՝ պրոֆ. Իլիա Աբուլաձեի ընդարձակ առաջաբանով, որտեղ նա լուսաբանել է հայ բանաստեղծի կյանքն ու գործունեությունը և գնահատել վեպը:

Մինչև Չարենցի 80-ամյակը թարգմանվել են հատուկեմտ քերթվածքներ ևս, գրվել են հոդվածներ ու գրախոսություններ: 1977 թ. «Մերանի» հրատարակչությունը լույս է ընծայել բանաստեղծի անդրանիկ ժողովածուն (ընդամենը՝ 25 գործ)՝ Գրիգոլ Աբաշիձեի հակիրճ առաջաբանով և Ջանսուղ Չարկվիանիի, Մորիս Փոցխիշվիլու, Ալիո Միրցխուլավայի, Օթար Գիլաձեի, Գիվի Շահնազարի և այլոց բարձրորակ թարգմանություններով:

Տարբեր ժամանակներում, տարբեր առիթներով Չարենցին բանաստեղծություններ են ձոնել Իրակլի Աբաշիձեն, Ռևազ Մարգիանին, Իլիա Խոշտարիան, Կարլո Կալաձեն, Խուտա Բերուլավան:

Վերը նշեցինք, որ հաճախակի լինելով Թիֆլիսում, Չարենցը մտերմացել և գործնական կապեր էր հաստատել վրաց գրականության և արվեստի ականավոր ներկայացուցիչների հետ. հայ բանաստեղծի հետ իրենց հանդիպումների ու մտերմական կապերի մասին հուշեր են գրել Կոնստանտինե Գամսախուրդիան, Գեորգի Լեոնիձեն, Սիմոն Չիքովանին, Ալեքսանդրե Սիգուան, Նինո Տափձեն և ուրիշներ:

Նինո Տափձեն (1900-1965)՝ ժամանակի լուսավոր կանանցից մեկը, իրավամբ կարող էր կրկնել մեծահամբավ Աննա Քեռնի (1800-1879) խոսքերը և ասել, որ ինքը ևս ծնվել է դարի հետ միասին, մանավանդ, որ, լինելով պոեզիայի և արվեստի ջերմ երկրպագու, ականատեսն ու մասնակիցն էր 1920-1930-ական թվականների գրական-մշակութային եռուն և չափազանց հետաքրքիր կյանքի:

«Վիթի նման նրբագեղ և արագասահ Նինոն» (Հռիփսիմե Պողոսյան) և «հռոմեական կայսեր թե հույն փիլիսոփայի դեմքով Տի-

ցիանը» (Վահրամ Ալազան) իրենց՝ թեև հարմարություններից զրեթե զուրկ, բայց ընդարձակ ու հյուրընկալ հարկի տակ բազմիցս ընդունել են այնպիսի մեծությունների, ինչպիսիք էին Ալ. Շիրվանզադեն ու Յովհ. Թումանյանը, Եղ. Չարենցն ու Պ. Մակինցյանը, Ս. Եսենինն ու Կ. Բալմոնտը, Ա. Բելին ու Յու. Տինյանովը, Վլ. Մայակովսկին ու Բ. Պաստեռնակը, բնականաբար, նաև հայրենի գրականության, գիտության ու արվեստի տասնյակ ներկայացուցիչների, որոնց հետ ունեին բարեկամական ջերմ կապեր, քանզի բարեկամ լինելն ու բարեկամություն հաստատելը այդ սքանչելի զույգի համար կենսական պահանջ էր:

Գրելով այդ հանդիպումների, մայրաքաղաքի գրական-մշակութային կյանքի նշանակալից իրադարձությունների, իրենց բնականաբար ունեցած կազմակերպած հետաքրքիր միջոցառումների (ընթերցումներ, քննարկումներ, դասախոսություններ) մասին՝ Նինո Տաբիձեն հարուստ նյութ է թողել ոչ միայն վրաց, այլ նաև հայ մասնագետների՝ մասնավորապես՝ թումանյանագետների և չարենցագետների համար:

Նրա հուշերը հետաքրքիր են, բովանդակալից, պարզ և հակիրճ: Նկարագրելով բանաստեղծների, արձակագիրների և գրականագետների հավաքությունները՝ Շիրվանզադեի, Մակինցյանի, Փիրումյանի և ուրիշների մասնակցությամբ, նա տեսանելի է դարձրել նրանց բարեմասնություններն ու պահվածքը, տեղն ու դերը այդ հավաքներում: Նման երեկույթների թե ցերեկույթների ժամանակ *«չափազանց խորագիտակ մի մարդ՝ գեղեցիկ, մաքրամաքուր հոգու և արտասովոր ճաշակի տեր, հասարակության սիրտն ու հոգին՝ Պ. Մակինցյանը, խոր ներշնչանքով կարդացել է Չարենցի բանաստեղծություններից»*, իսկ Սիմոնիկ Փիրումյանը թարգմանել է հայոց լեզուն չինացողների համար: Չարենցի պոեզիան հիմնականում այսպես է թափանցել վրաց գրողների շրջան, ու թեև նրանցից շատերը ոչ ծանոթ էին, ոչ տեսել էին բանաստեղծին, բայց մտերիմների պատմածների հիման վրա ստեղծել էին նրա կերպարը: Եվ ահա նշանավոր «Ստելլա» զբոսայգում Տաբիձե ամուսինների, Ն. Միծիշվիլու և հայ բարեկամների ներկայությամբ չարենցյան պոեզիայի *«հերթական երեկույթի»* ժամանակ անակնկալ հատմվում է բանաստեղծը՝ ուրախություն պատճառելով իր տաղանդի երկրպագուներին: *«Եղիշեն ցածրահասակ էր,- գրում է Ն. Տաբիձեն,- դեմքը՝ մտախոհ, աչքերն՝ անսովոր խելացի»*: Տիցիանը Չարենցին ճանաչել է հենց այդ «անսո-

վոր աչքերից», իսկ Չարենցը՝ Տիցիանին՝ *«նրան այնքա՛ն բնորոշ ժպիտից»*:

Ուշադրության արժանի հոգեբանական մի նրբերանգ. երբ Չարենցն զգացել է, որ ներկաներից ոմանք իր աչքերին նայելով ցանկանում են թափանցել հոգու խորքերը՝ գեղեցիկ մի հնարանքով՝ աչքերը կկոցելով, հոգու դռները փակել է հետաքրքրասեր զրուցակիցների գննող հայացքների առաջ⁶:

Այդ հիշարժան հանդիպումը տեղի է ունեցել արտասահմանյան շրջագայությունից (դեկտեմբեր 1924 - հունիս 1925) Չարենցի վերադառնալուց հետո. լինելով բարեկամության ջատագով, ներգրավվելով վրաց գրական մթնոլորտ՝ նա ամուր կապեր է հաստատել հոգեմոտ այդ աշխարհի հետ՝ դառնալով նրանց քննարկումների ու զրույցների առարկան:

Չարենցը և Տաբիձեն, անշուշտ, բանաստեղծական տարբեր անհատականություններ էին, թեև 20-ական թթ. առաջին կեսին գրեթե նույնն էին իրենց մտածողությամբ, գեղագիտական հավատամքով, նույնիսկ ոճով ու խառնվածքով, նպատակաուղղվածությամբ, իրենց անմիջական նախորդներին հերքելով ու հակադրվելով:

Նիհո Տաբիձեն գրում է, որ ամեն անգամ Թիֆլիս գալով՝ Չարենցն այցելում էր իրենց, և երկու բարեկամները՝ Տիցիանն ու Եղիշեն, հաճախ մինչև լուսաբաց զրուցում էին հայ և վրաց ժողովուրդների պատմության, գրականության ու մշակույթների մասին: Նրանք ուրախացել են մեկմեկու հաջողություններով ու հաղթանակներով, տրտմել հիասթափություններով ու դառնություններով, կյանքի դժվարագույն պահերին միմյանց սատարել են նյութապես, գործով ու խոսքով: Այսպես՝ իմանալով՝ Չարենցը ձերբակալվել է և գտնվում է Երևանի ուղղիչ տանը, Տիցիանը թիֆլիսահայ գրողներին հարցուփորձ է արել, թե Հայաստանի մտավորականներն ինչ միջոցներ են ձեռք առել բանաստեղծին կալանքից ազատելու համար: Չստանալով գոհացուցիչ պատասխան՝ ինքն է փորձ արել համախմբել մտերիմներին ու ծանոթներին, որ ժամ առաջ օգնության հասնի օգնության կարոտ իր բարեկամին⁷: Իր հերթին, երբ Չարենցը հերթական անգամ հյուրընկալվել է Տաբիձե ամուսինների ընտանեկան հարկի տակ և Տաբիձեի գրասեղանի վրա տեսել XIX դարի վրաց գրականության պատմությանը վերաբերող ձեռագիր աշխատությունը, առաջարկել է վերջացնելուն պես ուղարկել իրեն, որ թարգմանի ու տպագրի Երևանում: *«Թող հայ ընթերցողները ծանոթանան իրենց դրկից ու բարեկամ ժողովրդի գրականությանը»*, - ասել է նա:

Եվ, իրոք, 1931 թ. վերջերին Տիցիանի գիրքը լույս է տեսել Հայ-պետհրատի կողմից՝ «Վրաց նորագույն գրականությունը. XIX դար (սեղմ ակնարկ)»: Դժգոհելով տպագրության որակից՝ Չարենցը մեկ օրինակ շքեղ կազմել և ուղարկել է հեղինակին՝ հետևյալ մակագրությամբ.

*«Թանկագի՛ն Տիցիան,
Օ՛, Տիցիան:*

Քանի որ թղթի սուղ պայմաններում գիրքդ տպագրել ենք ոչ այնքան փառահեղ, ուստի կարգադրեցի այս օրինակը ոսկեզօծել նախաջրհեղեղյան ժամանակների մեր կազմերի ոճով: Ընդունի՛ր, թող սիրտդ կախ չմնա Հայաստանի հրատարակչությունից: Սրտագի՛ն ողջույն:

Եղիշե Չարենց:

1932. 03. 14. Երևան»:

Հետաքրքիր մի փաստ էլ կա Նինո Տաբիձեի հուշերում: Նա գրում է, որ Մարտիրոս Սարյանի՝ 1923 թ. վրձնած հայտնի դիմակարը մինչև 1927 թվականը եղել է իրենց տանը, և Չարենցը երկտողով խնդրել է վերադարձնելու պայմանով իրեն տրամադրել այն: Ահա Չարենցի այդ գրությունը ևս.

«Թանկագի՛ն Տիցիան.

Գրքիս համար հարկավոր է Սարյանի նկարած իմ դիմապատկերը, որը Ձեզ մոտ է: Վաղը բեր և թող այստեղ (Չարենցը նկատի է ունեցել Վրաց-պետհրատը՝ Հ.Բ.): Ես կգամ ու կվերցնեմ: Կվերադարձնեմ երկու օրից: Ողջո՛ւյն: Ինչո՞ւ չես երևում:

Քո Չարենց»:

13.06.1927:

Չարենցը և Տիցիանը շատ լավ հասկացել են, որ քաղաքակրթությունների ու գեղարվեստական մշակույթների փոխադարձ ուսումնասիրությամբ միայն կարելի է հասնել ճշմարտության և ջերմացնել մեր ժողովուրդների սրտերը: Նպատակներին հասնելու համար նրանք հայկական և վրացական թեմաներին զգալի տեղ են հատկացրել նաև գեղարվեստական երկերում, ակնարկներում, հոդվածներում, գրախոսություններում, գրական դիմանկարներում ու նամակներում: Դրանով նրանք ընթերցողների համար նորանոր ուղիներ են բացել դեպի դրկից ժողովուրդները, նրանց գրականություններն ու արվեստները:

Վրաստանի հանդեպ սիրո և ակնածանքի արտահայտություն են Չարենցի «Չուգունե մարդը» (1927-1929), «Բորիս Չնելաձե» (1931), «Տաղ սրտառուչ եղբայրական Վրաստանին» (1936) երկերը: Չնայած երեքն էլ տուրք են ժամանակի թելադրանքին, բայց և այնպես

դրանք բանաստեղծի սրտաբուխ խոսքերն են առ Վրաստան և վրաց ժողովուրդը: Հատկապես «Տաղ սրտառուչ»-ում Չարենցը Վրաստանը դիտում է իբրև սքանչելի մի երկիր, որը մարտնչել է բազում թշնամիների դեմ, անցել պատմության քառուղիներով, իսկ այժմ ձգտում է իրականացնել իր վաղեմի երազանքները: Նա նշում է, որ Ռուսթավելու նման հանճար ծնած ժողովուրդը մոտ ապագայում ևս լույս աշխարհ կբերի նույնպիսի հանճարներ, որոնք կգովերգեն վրացիների գեղեցիկ երկրի զարմանալի գեղեցիկ կյանքը...

Եղիշե Չարենցը ծրագրել էր գնալ Կախեթ, շրջագայել Վրաստանի այդ սքանչելի անկյունում և բանաստեղծություններ գրել նրա մասին: «Կախեթի գլխով շատ դժբախտություններ են անցել,- ասել է նա,- պարսիկների և լեզգիների հարձակումներ, Շահ-Աբասի և բազում օտարների ասպատակություններ, ավարառություններ, ավերներ, տազնապներ... Մտադրվել եմ՝ հատկապես Կախեթի և, առհասարակ, Ծինանդալի մասին քնարական սոնետներ գրել», - վկայում է Չարենցի մտերիմներից մեկը՝ արվեստաբան և գրական-հասարակական գործիչ Ալեքսանդրե Սիգուան⁸:

Համանման բաղձանք փայփայելով՝ 1929 թ. հունիսին վրաց գրողների պատվիրակության կազմում Տաբիձեն ժամանել է Հայաստան, շրջագայել երկրում, ավելի հանգամանալից ուսումնասիրել ժողովրդի անցյալն ու ներկան, ծանոթացել նրա նվաճումներին, իսկ հայրենիք վերադառնալուց հետո տպագրել բանաստեղծությունների շարք՝ «Հայաստանում» ընդհանուր խորագրով: Նա սրտագին գեղումներով ներբողում է Երևանը, Մասիսը, Սևանը, Մատենադարանը, Զվարթնոցը, Գառնին ու Գեղարդը, ինչպես նաև հայի էական հատկանիշները: Շարքը աչքի է ընկնում գեղարվեստական կատարելությանը. բովանդակությամբ նույնպես հետաքրքիր է, որովհետև ունի վավերագրական արժեք. հեղինակի մտորումներից ու տպավորություններից բացի, իմաստավորված է 1920-ական թվականների հայ իրականությունը, ուստի պատահական չէ, որ այդ բանաստեղծություններն իրենց մնայուն տեղն ունեն հեղինակի երկերի ժողովածուների բոլոր հրատարակություններում:

Չափածոյի այս բնագավառում Տաբիձեն շարունակել է Հովհաննես Թումանյանի ավանդները.

*Տես, եկել ենք քեզ ու կուզենք ասել,
Որ աճել ենք մենք նույն կաղնու բնից,
Բայց առաջինը քեզնից ենք լսել
Այն, ինչի մասին երգելու ենք միշտ...*

Գրել ու երգել է այն, ինչ ուսանել էր իր ուսուցչից՝ ինքն էլ դառ-

նալով ուսուցիչ ժամանակակիցների ու սերունդների համար: Այդ ամենը նա արել է իբրև անգուգական գործիչ, իբրև ազնվագույն քաղաքացի: Արել է, որ դրկից ու հավատակից ժողովուրդներին մոտիկից ծանոթացնի միմյանց գրականությանը, մշակույթին, պատմությանն ու առօրյային, որ նրանց հեռու պահի թյուրիմացություններից ու ոչ վաղ անցյալի սխալներից: Մտահոգ գործիչը համոզված էր, որ սխալներ ու թյուրիմացություններ լինում են, որովհետև *«մենք՝ վրացիներս ու հայերս, խայտառակ չափով քիչ ենք ճանաչում մեկմեկու. պիտի դրական քայլեր անենք փոխադարձ ճանաչողությունը իրական հողի վրա դնելու առումով»*: Եվ իր գործունեությամբ ձգտել է գրչընկերների շրջանում խորացնել հետաքրքրությունը հայ գրականության ու արվեստի հանդեպ:

Ալ. Սիգուան հավաստում է, որ Չարենցի, Տաքիձեի, Իաշվիլու, Միծիշվիլու և նրանց բարեկամների բոլոր հանդիպումները վերածվում էին գրական ասուլիսների, որի ժամանակ նրանք ի հայտ էին բերում հարևան երկրների պատմության, մշակույթի, կենցաղի ու ավանդույթների վերաբերյալ բացառիկ գիտելիքներ: Հավաքույթներից մեկի ժամանակ, օրինակ, Տիցիանը բանախոսել է հայ պոեզիայի մասին, անդրադարձել Գրիգոր Նարեկացու, Ներսես Շնորհալու, Նաղաշ Հովնաթանի, Նահապետ Քուչակի, Սայաթ-Նովայի, Միքայել Նալբանդյանի, Հովհաննես Հովհաննիսյանի, Հովհաննես Թումանյանի, Ավետիք Իսահակյանի, Վահան Տերյանի ստեղծագործություններին և այնպես բանիմաց, որ խորապես զգացված Չարենցը ողջագուրվել է ու բացականչել, թե նա երբ է յուրացրել հայ գրականության գրեթե ամբողջ գանձարանը: *«Հայ բանաստեղծն անչափ ուրախ էր. նա զգաց, որ գտնվում է ամենասիրելի բարեկամների շրջապատում, բարեկամներ, որոնք գիտեն՝ ինչ են եղբայրությունն ու բարեկամությունը, և դրանք ինչ են պարտավորեցնում մեզ»*⁹: ճաշկերույթից հետո, երբ *«գինին իր բարերար ազդեցությունն էր թողել սեղանակիցների վրա»*, վրաց և համաշխարհային գրականության իր փայլուն իմացությունն է դրսևորել Չարենցը: Եզրափակելով իր խոսքը՝ նա հուզմունքով արտասանել է Նիկոլոզ Բարաթաշվիլու հանրահայտ «Մերանիի» ռուսերեն թարգմանությունը և հավաստիացրել իր բարեկամներին, որ անպայման հայերեն կթարգմանի վաղամեռիկ հանճարի բանաստեղծություններն ու նամականին: Նա ցավ է հայտնել, որ այդ մեծ քերթողին չի կարող կարդալ բնագրով:

Հոդվածներից մեկում խոսելով հայ գրականության մասին՝ Տա-

քիժեն, ըստ արժանվույն գնահատելով Հովհ. Հովհաննիսյանի, Հովհ. Թումանյանի և Ավ. Իսահակյանի ծառայությունները, նրանց համարում է երրորդություն, քանզի նրանք ոչ միայն հայ նոր քնարերգության հիմնադիրներն են, գրում է նա, այլև գրականությունը լայն մասսաներին վերադարձնողները:

Այո՛, Տաքիժեն և Չարենցը առանձնակի ջերմությամբ են կապված եղել թե՛ միմյանց, թե՛ դրկից ժողովուրդներին և միշտ պատկառանքով են խոսել այդ ժողովուրդների ու իրենց գրական բարեկամների մասին: Նրանք նույնիսկ կոչ են արել գրչակիցներին սովորել հայոց և վրաց լեզուները, որպեսզի բնագրով հաղորդակցվեն մեկմեկու գրականությանը, մշակույթին ու պատմությանը:

Չարենցի, Տաքիժեի, Իաշվիլու բարեկամության մասին է խոսում նաև Վահրամ Ալազանը և նշում, որ դա շատ ավելի ակնբախ էր ԽՍՀՄ գրողների առաջին համագումարի օրերին: Ամեն անգամ՝ նիստերից հետո, նրանք հավաքվել են Չարենցի սենյակում, բանախոսել հայ, վրաց, ռուս և համաշխարհային գրականության ու օրվա հրատապ խնդիրների շուրջ: Այդ ժամանակ հաճախ ասմունքել է Տիցիանը. նա *«մեղմ, քնքուշ ձայնով արտասանում էր իր քնարական բանաստեղծությունները, որից հետո Չարենցը վեր էր թռչում տեղից և ոգևորված ծափահարում ...»*¹⁰:

Թիֆլիսի միջավայրը և հատկապես վրաց բարեկամների հետ շփումները չէին կարող ստեղծագործական լիցք չհաղորդել Չարենցի քանքարին, նամանավանդ, որ նա ողջ էությամբ մերվել էր այդ մթնոլորտին, շնչել նրա կազդուրիչ օդը և պարպվել ծանր ու հոգեմաշ մտածումներից:

Հայ և վրաց գրողները վկայում են, որ Չարենցի և Տաքիժեի հանդիպումների ժամանակ գրույցները հիմնականում ընթացել են գրողի կոչման, հայ և վրաց մշակույթների ու ժողովուրդների մերձեցման, մտավորականների համագործակցության, երկու երկրների կապերն ամրապնդելու հարցերի շուրջ: *«Լավ է, երբ գրողներն ու արվեստագետները հանդիպում են»:* *«Լավ է, երբ հարևանները սիրում են իրար»*, - այսպիսի կարգախոսներով են առաջնորդվել և ամեն ինչ արել, որ խոսքն ու խոհը գործ դառնան:

Երկու մեծ հայրենասերներն իրենց անձնական հարաբերություններով և գրական-հասարակական գործունեությամբ համախմբեցին բազում ընկերների, ստեղծեցին անկեղծ ու սրտառուչ միջավայր և կարևոր դեր խաղացին մեր ժողովուրդների մերձեցման, փոխադարձ ճանաչման, մշակութային ու բարեկամական առնչու-

թյունների խորացման գործում: Ցավոք, նրանց գործունեության այս բնագավառն ըստ արժանվույն գնահատված չէ մասնագետների կողմից: Ավելին՝ ոչ Տաբիձեի հոգեսուն քերթվածքներն են հայ ընթերցողին տեսանելի իրենց ամբողջ փայլով, ոչ էլ Չարենցի քնարն է վրացերեն հնչում բնագրի թարմությամբ ու շքինդով: Եղածներն էլ Հայաստանին կամ Վրաստանին նվիրված շարքերից են, թեև, ինչ խոսք, նաև դրանց շնորհիվ են երկու երկրներն ու ժողովուրդները մերձենում ու հասկանալի դառնում իրար:

Նրանց մտերմության տարիները համընկան իրենց ուժերի ծաղկման հետ, բայց արդեն սև ամպեր էին կուտակվում ստեղծագործ ուժերի երկնակամարում. հասարակական-քաղաքական և գեղագիտական միտքը անվերապահորեն խցկվում էր պատրաստի կաղապարների մեջ, իսկ տաղանդավոր մտավորականներն ուղարկվում էին կառավարան:

Ինչևէ, այսօր՝ ժամանակի ու տարածության հեռավորությունից երբ հայացք ենք գցում նրանց հանրաշահ գործունեության վրա՝ համոզվում ենք, որ այդ աշխատանքները մասշտաբների և բովանդակության շնորհիվ դուրս են գալիս անձնական հարաբերությունների շրջանակներից, ստանում համազգային նշանակություն և դառնում հրամայական ու անչափ ուսանելի հատկապես մեր օրերի համար:

1. Հուլյեր Եղիշե Չարենցի մասին, Երևան, 1986, էջ 350:
2. Եղիշե Չարենց, Երկեր, հ. 6, Երևան, 1967, էջ 273:
3. Եղիշե Չարենց, Նորահայտ էջեր, Երևան, 1996, էջ 276:
4. Նունը, էջ 354-355:
5. Նույնը, էջ 357:
6. nino tabiZe, ticiani da misi megobrebi,, @Tbilisi, "sabWoTa saqarTvelo", 1985, էջ 44-45:
7. Տեն Ծերուն Թորգոմյան, Հոգեթով հույզեր, Թբիլիսի, 1975, էջ 153:
8. aleqsandre sigua, werilebi da portretebi, Tbilisi, 1977, էջ 121-122:
9. Նույնը, էջ 123:
10. Վահրամ Ալազան, Հուլյեր, Երևան, 1972, էջ 372-373:

«Չարենցը և վրաց իրականությունը»
«Չարենցյան ընթերցումներ»
Երևան, 1998, գիրք 6, էջ 176-190:

ԴԻՄԱՆԿԱՐԱՅԻՆ
ՈՒՐՎԱԳԾԵՐ

ՋԱՆՍՈՒՂ ՉԱՐԿՎԻԱՆԻ

«Սաբճոթա Սաքարթվելո» հրատարակչությունը վերջերս լույս ընծայեց ժամանակակից վրաց տաղանդավոր բանաստեղծ Ջանսուղ Չարկվիանու «Ընտիր բանաստեղծություններ ու պոեմներ» ժողովածուն: Թեմատիկ առունով բազմազան ու ընթերցողի առաջ նոր հորիզոններ բացող այս ժողովածուն մի տեսակ ամբողջացումն ու հանրագումարն է հեղինակի վերելքների ու վայրէջքների, ընդմիջումների, հաղթանակների ու դառնությունների, բայց որոնումներով ու պրպտումներով հագեցած 25-ամյա ստեղծագործական ուղու: Գրքում ամփոփված են նախորդ ժողովածուների լավագույն գործերը, վերջին մի քանի տարվա ընթացքում գրված բանաստեղծություններն ու չորս պոեմ:

Թեև նրանում ընդգրկված բանաստեղծությունների ու պոեմների հենքն արդիականությունն է, հասարակական հրատապ հարցերի արծարծումը, ժողովուրդների բարեկամության գովքը («Էրեբունի», «Մտորումներ դրոշների մասին», «Մրավալժամիեր», «Ուկրաինա», «Բարեկամները»), ներբողները, որոնք բանաստեղծական դիմանկարներ են՝ նվիրված Ավետիք Իսահակյանին, Մարտիրոս Սարյանին, Վաժա Փշավելային, Իլիա Ճավճավաձեին, Գարսիա Լորկային և այլոց, խոհական-փիլիսոփայական մտորումները («Ծաղկած արև» և «Ափսոսանք» շարքերը), մարդկային սրբազան զգացումները, սերը՝ իր բազմալար քնարով, բանաստեղծական ու «ոչ բանաստեղծական» բազում թեմաները, որոնք նրա գրչի տակ դարձել են պոետական հարուստ, խոսուն, գեղարվեստական խտացված ու հագեցված իրականություն, այդուհանդերձ Ջ. Չարկվիանու իսկ խոստովանությամբ՝ իր հույզերի, խոհերի ու ստեղծագործական ներշնչանքի անսպառ ակունքը, գլխավորը եղել ու մնում է հայրենիքը: Հայրենիքը ամենալայն հասկացությամբ. հոգսերով ու կացությամբ, անցյալով ու ներկայով, հայրենի բնաշխարհը՝ իր հինավուրց մշակույթով ու պատմությամբ, ճարտարապետական անկրկնելի հուշարձաններով («Տաճարներ և ամրոցներ», «Գելաթի», «Իմ Թբիլիսի», «Իվերիա», «Հարյուր հազար վրացական բառ» և այլն), այդ բնաշխարհի մարդիկ՝ իրենց միատուկացով, հոգու ջերմությամբ ու երազանքներով, ժողովրդական սրբացած հերոսները, բանաստեղծ-

ներն ու հասարակական գործիչները:

Ջ. Չարկվիանին գրել է մոտ տասը պոեմ, որոնցից ժողովածուում զետեղել է չորսը՝ «Մուժղվեր-արևը գնում է», «Հավատի պատը», «Երկաթե զրահաշապիկը» և «Երեք Թամար»: Առաջին երկուսը խոհական-փիլիսոփայական մտորումներ են կենսական տարբեր հարցերի շուրջ: Սրանցում և ընդհանրապես իր լավագույն գործերում Չարկվիանին հանդես է գալիս որպես և՛ մտածող, և՛ բանաստեղծ: Նա ավելի վերլուծում է, հիմնավորում, քան պատմում կամ նկարագրում: Բայց չպետք է կարծել, թե նրա պոեզիան հուզագուրկ է: Իսպանացի բանաստեղծի հայտնի արտահայտությունն անվարան կարելի է հասցեագրել Ջ. Չարկվիանուն և ասել, որ իր բարձրարվեստ ստեղծագործություններում նա ուղեղով հուզվում է, սրտով մտածում:

«Երեք Թամար» պոեմը բանաստեղծական հուզալից պատում է, նրբակերտ կոթող հավատարմության, անմար ու հավերժող սիրո: Գյուղական երանավետ (բայց ոչ իդիլիկ) կյանք, պարման-պարմանուհիներ, հասունություն, սիրո բողբոջում, գողունի հայացքներ, անքուն գիշերների շարան, վարդագույն անուրջներ, ամուսնություն: Պատերազմ: Ռազմաճակատ՝ կամավոր: Եվ այսօր էլ 20-ամյա պատանու թռնատեր այրին սպասում է սիրած տղայի վերադարձին: Սպասում են երեքով՝ երեք Թամար՝ մեկը ամուսնուն, մյուսը՝ հորը, երրորդը՝ պապիկին: Ամեն տարի, հաղթանակի տոնը նշելուց հետո, նրանց սպասումը ահագնանում է, կարոտը՝ հրդեհվում...

Իսկ «Երկաթե զրահաշապիկը» պոեմում, որը իրավամբ կարելի է անմահության պոեմ համարել, բանաստեղծը գովերգում է մեծ աշխարհամարտում ազատության համար նահատակված վրաց քաջորդիներին, ինչպես նաև՝ կողք կողքի մարտնչած սովետական բազմազգ ժողովրդի ուստրերին ու դուստրերին...

Առաջին հայացքից թվում է, թե ոճական տարբեր սկզբունքներով գրած այս պոեմների թեմաները ներկայացնում են ոչ պոեմային՝ գեղարվեստական ներքին կապ ունեցող բանաստեղծություններ (այդ է հուշում նաև վերնագրերի առատությունը), բայց հեղինակը, էպիկականությունը և քնարականությունը (ձևաբովանդակային առումով) միաձուլելով, հանգել է կոմպոզիցիոն միասնության և թեմային տվել սոցիալական մեծ իմաստ:

Լայն ու համապարփակ է Ջ. Չարկվիանու բանաստեղծական մտահորիզոնը: Ի տարբերություն ժամանակակից ոչ քիչ թվով ստեղծագործողների, որոնք կտրվում են հայրենի հողից ու ջրից,

անտեսում ժողովրդի հոգևոր մշակույթի անսպառ հարստությունները և խարխափում մողեռն կոչվող խորթ ու ժամանակավրեպ «արվեստի» հորձանուտներում, Ջ. Չարկվիանին ստեղծագործաբար յուրացնում է վրաց դասական գրականության նվաճումները, ազգային բանավեստի ձևերն ու թեմաները, դրանք բեկում սեփական աշխարհընկալման պրիզմայով, թրծում իր հոգու բովում և, ժողովրդական իմաստությամբ զինված, արարում է բանաստեղծական ներհուն, հետաքրքիր ու ինքնատիպ աշխարհ, հարստացնում ու զարգացնում է ավանդական ձևերն ու թեմաները:

Որպես իսկական բանաստեղծ՝ Չարկվիանին կարողանում է ներանձնական խոհերը, հույզերն ու ապրումները դարձնել անանձնական, ընդհանրացնել, խտացնել ու բարձրացնել մի այնպիսի աստիճանի, որ դրանք ձեռք են բերում հասարակական արժեք, ընթերցողի մտքի ու զգացմունքի վրա թողնում բարերար ազդեցություն, նրան համակում հեղինակի տրամադրությամբ, լինի թախիծ, վիշտ, գուևս ժպիտ թե այլ վիճակ:

Այս է պատճառը, որ անհատական զգացումներ արտահայտող նրա քնարերգությունը այնքան մարդկային է, իրական ու հոգեհարազատ, որ քնարական հերոսի սուբյեկտիվ աշխարհը ընթերցողը համարում է իրենը, իսկ բանաստեղծին՝ իր հոգու թարգմանը: Չարկվիանին վաղուց է հասել դրան, այսօր նրա պոեզիան բազմահազարերկրյա գուևներ ունի վրաց և այլալեզու ընթերցողների մեջ, քանզի գրում է պարզ, ապրումով, ջերմությամբ ու սիրով, նաև՝ ցավով ու տառապանքով, առանց սեթևեթանքի, առանց քաղցրահինչյուն բառերի ու պաթետիկ արտահայտությունների, առանց բարոյախոսության ու խրատքարոզների:

Բժախնդրորեն կազմված այս ժողովածուն վկայում է հեղինակի պոետական հասունության, իմաստության ու վարպետության, նրա ստեղծագործությունների որակական նոր, բարձր աստիճանի մասին:

«Ներբող՝ լույսի և հայրենասիրության»

«Սովետական Վրաստան»

Թբիլիսի, 18 հունվարի 1977 թ.

ՍՈՍ ՍԻՄԱՎՈՐՅԱՆ

Ջավախքը հայտնի է հարուստ ավանդություններով, պատմական փառահեղ անցյալով, լեգենդ դարձած հոյակերտ հուշարձաններով, գրողներով, երգիչ-գուսաններով ու բանասացներով: Այս գողտրիկ անկյունում ծնված ու մեծացած գրականության համեստ մշակ Սոս Սիմավորյանը մինչև այժմ ընթերցող հասարակայնությանը հայտնի է որպես փոքրածավալ գեղարվեստական ստեղծագործությունների (պատմվածք, նովել, մանրաքանդակ), ակնարկների ու գրախոսությունների շնորհալի հեղինակ: Այս անգամ նա հանդես է եկել չափածո երկերով: Ժողովածուի երկտող-հանձնարարականը փոքր-ինչ տարակուսանք է պատճառում, քանզի ականա մտածում ես, թե ինչպե՞ս է այդչափ պատասխանատու և դժվարին գործը հաղթահարել հեղինակը: Բանասաց-վերապատմողի դերո՞վ է հանդես եկել, թե՞ ասել է իր սեփական խոսքը: Ի պատիվ հեղինակի, պիտի ասել, որ նա հաջողությամբ է դուրս եկել այդ պարտականություններից՝ հիմնավորապես ու ստեղծագործաբար յուրացնելով դարերի խորքից եկող ու իր անվանի նախորդների՝ Թումանյանի, Իսահակյանի, Շիրազի, Սարմենի և այլոց կողմից լեգենդներ, բալլադներ ու զրույցներ մշակելու հարուստ և ուսանելի ավանդույթները: Ժողովածուն կարդալուց հետո ականա մտաբերում ես Հովի. Թումանյանի այն խորհուրդ-պատգամը, որ «բանաստեղծի ուտքը հարազատ ու իրական հողի վրա պետք է լինի»: Սոս Սիմավորյանն իսկապես քայլում է (ուղղակի թե անուղղակի իմաստով) հոգեհարազատ, իրական ու ամուր հողի վրա: Այս են վկայում հեղինակի ոչ միայն ընտրած թեմաները, այլև այդ թեմաների գեղարվեստական-իմացաբանական մեկնաբանությունները, դրանց բնույթն ու մակարդակը: Ընդհանրապես, հոգևոր կապ է զգացվում հեղինակի ու իր ստեղծագործությունների միջև, քանզի սիրո մասին լեգենդը սիրո կարոտ է ծնում, ուրախությամբ ուրախանում ես, ողբերգականը ցավ է պատճառում, դառնություն, թախիծ ներարկում, հերոսականը՝ քաջալերում ու ոգևորում:

Վերցնելով որևէ պատում՝ այս կամ այն երևույթի ու իրադարձության վերաբերյալ կամ աշխարհագրական տեղավայրի ժողովրդական ստուգաբանություն-մեկնություն, լեգենդ ու զրույց, ավան-

դապատումից մի երկու կցկտուր խոսք (այս առումով գիրքը ստանում է նաև բանահյուսական արժեք), հեղինակը ստեղծում է հուզիչ պատմություն՝ անհրաժեշտ սյուժեով, կերպարներով ու բովանդակությամբ, տվյալ ավանդությանը տալիս է գեղարվեստական նոր ու բարձր մակարդակ, հայտնաբերում և ընթերցողին է մատուցում թաքնված գեղեցկություններ. նյութը հղկում, համեմուն ու ընթերցողին է ներկայացնում այնպես, որ «և՛ գեղեցիկ դուրս գա, և՛ ժողովրդականի համն ու հոտը չկորցնի»:

Ժողովածուի մեջ զետեղված ստեղծագործությունները, ազգային լինելով հանդերձ, նաև համընդհանուր են: Համընդհանուր են, որովհետև մեծան թեմա, սյուժե և մոտիվ կան տարբեր ժողովուրդների, հատկապես մոտ ու հարևան ժողովրդի բանահյուսության մեջ: Ես սա ընդգծում եմ ոչ թե ստուգաբանական-տիպաբանական զուգահեռ անցկացնելու նպատակով, այլ հուշելու, որ ընտրված ավանդություններն ու լեգենդները ինքնանպատակ չեն, որ դրանք շոշափում են համամարդկային հատկանիշներ: Ուրախությամբ պետք է մշել, որ ընտրված գործերը լիովին բավարարում են այդ հատկանիշների և խստապահանջ ընթերցողի գեղագիտական պահանջները:

Իսկ ի՞նչ խնդիրներ, հարցեր ու թեմաներ է շոշափում խնդրո առարկա ժողովածուն: «Պատգամ մեծացը» կարելի է բաժանել թեմատիկ բաժինների՝ սիրո, հայրենասիրության, հայ և վրաց ժողովուրդների բարեկամության: Ինչ խոսք, սրանք էլ մեկուսի ու պատմեշված չեն, այլ բուն նյութի և իմաստի հետ բովանդակում են նաև հարակից իմաստներ, որով դառնում են ավելի տարողունակ, հետաքրքիր ու բազմալար: Կուռ ու ներդաշնակ ամբողջությամբ առանձնանում են «Քրոջ սերը», «Դեղնածաղիկ» և «Սիրի-սիրի» ավանդությունները:

Անպատասխան ու ողբերգական սիրո հյուսվածք է «Դեղնածաղիկ» ավանդավեպը, որտեղ պատմվում է արքայադստեր նկատմամբ աղքատ պատանու սիրո մասին: Նետով խոցված տղան, տավիղը ձեռքին, զոր ու գիշեր սեր է երգում աղջկա պատուհանի տակ, չանսալով ո՛չ մոր հորդորներին, ո՛չ աղջկա քար անտարբերությանը, ո՛չ դաժան ժամանակաշրջանին, ո՛չ էլ պալատից եկող սպառնալիքներին: Ի վերջո, կրծքի հմայիչ ու բուրավետ վարդը մվիրելու փոխարեն, անսիրտ աղջիկը տղայի ոտքերի տակ է նետում թառամած դեղնածաղիկ, որը ոչ միայն մերժում էր գուժում, այլև խենթ սիրահարի մահավճիռը: Տղան թեև կործանվում է աղջկա սերը մվաճելու ճանապարհին, բայց մինչև վերջ հավատարիմ է մնում սրտի ձայնին:

Այս ողբերգական պատմության մեջ հեղինակը ընդգծում է ճշմարիտ, անարատ ու սրտաբուխ զգացմունքի ամենահաղթ ուժը:

Առավել ողբերգական է «Սիրի-սիրի» ստեղծագործությունը: Ըստ ավանդության՝ երեք եղբայր սիրահարվում են մի աղջկա և խանդելով ու նախանձելով՝ սրախողխող են անում մեկմեկու: Նրանց հեղված արյունից ծլում է սիրի-սիրի եռատերև բույսը: Այս մի քանի կցկտուր խոսքերից Ս. Սիմավորյանը ստեղծել է բավական հուզիչ, դրամատիզմով հագեցած երկ, կերտել է դիմանկարները ռանչպար, աշխատասեր, իրենց հոգս ու ցավով, արյուն-քրտինքով ապրող երեք եղբայրների, որոնք որքան զիջող, միմյանց նկատմամբ հոգատար ու բարեհամբույր են առօրյայում, նույնքան չար, անգութ ու վայրագ են, երբ փորձում են վճռել սիրած էակին տիրանալու հարցը: Անտեսելով բանականության ձայնը՝ կուրորեն հպատակվում են զգացմունքի թելադրանքին:

Մայր Արաքսի մասին նույնպես տարբեր ավանդություններ կան, որոնք մշակվել են մեր բանաստեղծների կողմից: Բայց Սիմավորյանը մեզ մատուցում է լեզենդի նոր, լրացված տարբերակ: Բարեհնչյուն և աֆորիզմներով հագեցած ստեղծագործությունում հեղինակն այլաբանական հնարանքներով պատմում է Արաքս գետաղջկա կյանքի դրաման, կյանք, որը սիրո, հավատարմության ու սխրանքի սքանչելի օրինակ է:

Գրքում տեղ գտած լեզենդներից թեմատիկ հատկանիշներով չի տարբերվում, բայց ձևի ու մատուցման սկզբունքով առանձնանում է «Ով ինչ գիտե» պոեմի մեզ մատուցված հատվածը: Ձեռնդրված մասերը, որոնք զրկված են ջերմությամբ ու բանիմացորեն, հետաքրքրությամբ կկարդացվեն ավագ և կրտսեր տարիքի ընթերցողների կողմից: Պոեմն օգտակար կարող է լինել հատկապես դպրոցահասակ երեխաներին, ոչ այն պատճառով, որ գործող անձինք հիմնականում երեխաներ են, այլ այն, որ, իր նպատակն ու հղացումն իրականացնելիս, հեղինակը հաշվի է առել նրանց ընկալման առանձնահատկությունները, ճաշակը, պահանջները: Անցումները ևս կատարել է շատ բնական, հարթ ու սահուն, որ խոսում է կոմպոզիցիոն հյուսվածքի ներդաշնակության ու օրգանական միասնության օգտին: Պարզ, անպաճույճ, կենդանի ու հյութեղ պատումը, ճանաչողական ու գեղագիտական խոր ընդհանրացումով, բացում է հայոց լեռնաշխարհի պատմաաշխարհագրական որևէ անուն, իսկ խտացված ու իմաստավորված բովանդակությունը և՛ հաճույք է պատճառում, և՛ գեղարվեստական խոսքի ուժով ներգործում ըն-

թերցողի մտքի ու սրտի վրա:

Ս. Սիմավորյանի նախասիրություններից մեկն էլ հայ և վրաց ժողովուրդների բարեկամության թեմատիկան է: Եթե Արաքսի մասին լեգենդում «Քրոջ վիշտը քույրը միայն կիմանա» ասույթը կապում է Արաքս գետի Կուրի մեջ թափվելու փաստին և խորհրդանշում երկու ժողովուրդների բարեկամությունը, ապա «Պատգամ մեծաց» պոեմում զարգացնում է այն միտքը, որ հարևան ու փոքրաթիվ ժողովուրդների գոյատևման առիավատյան նրանց դաշինքն է, միասնությունն ու համերաշխությունը: Մահամերձ տոհմապետի պատգամը հնչում է որպես հավերժ ճշմարտություն ու բարոյական իմաստություն: Ավանդական, բայց միշտ նոր այս թեմային ևս հեղինակը մոտեցել է յուրովի, տվել հասարակական-գեղագիտական հնչեղություն: Անշուշտ, գեղեցիկ մտահղացում է Հայոսի և Քարթլոսի համատեղ ճակատամարտը Բելի դեմ: Սա, իսկապես, եղբայրական վերաբերմունք է եղբայրության թեմային: Մի հանգամանք ևս. այլ հեղինակներ պատկերում են միայն մեր ժողովուրդների ռազմական համագործակցությունը, այն էլ պատմողական, ավելի ճիշտ, ճարտասանական ոճով: Մինչդեռ «Պատգամ մեծաց»-ում նրանց տեսնում ենք խաղաղ աշխատանքի ու որսորդության, տոնահանդեսի ու պատերազմի ժամանակ: Բացի այդ, անհրաժեշտ էպիկականության հետ, հեղինակը թեմային տվել է նաև քնարական շունչ ու դրամատիկական հագեցվածություն: Վիշտն ու ուրախությունը, մաքառումն ու մտահոգությունը, պարտությունն ու դառնությունը, պայքարն ու հաղթանակը արտացոլել է բանականության ու զգացմունքի, տրամաբանության ու հույզի չափավոր շաղախով:

Թերություններ իհարկե կան, օրինակ՝ տեղ-տեղ զգացվում է մտքերի, պատկերների կրկնություն, բռնահանգ և այլն: Բայց ժողովածուն, որ ճաշակով լույս է ընծայել Թբիլիսիի «Մերանի» հրատարակչությունը, վկայում է հեղինակի լուրջ հաջողությունը:

«Գրողը հարազատ հողի վրա է»

«Սովետական Վրաստան»

Թբիլիսի, 29 մարտի 1979 թ.

ԲԵՆԻԿ ՍԵՅՐԱՆՅԱՆ

Բեղուն և վաստակաշատ գրող էր Բենիկ Սեյրանյանը՝ վիպասան, դրամատուրգ, նովելիստ, մանկագիր, թարգմանիչ, լրագրող: Գրական կյանքում նրա ձեռքբերումներն ակնհայտ են և վաղուց ի վեր արժանացել են համընդհանուր ճանաչման:

Բենիկ Սեյրանյանը գրական ասպարեզ է իջել 1930-ական թթ. սկզբին. քսաներկու տարեկանում տպագրել է նովելների և պատմըվածքների անդրանիկ ժողովածուն՝ «Քարափի կածանները»: Տասնամյա ընդմիջումից հետո լույս է ընծայել երկրորդ՝ «Ծիրանաքար» ժողովածուն, որին հաջորդել են «Ծաղկած հուշարձան», «Լեռնային բյուրեղ», «Աղբյուրներ» և էլի մի քանի գրքեր: Դրանցում թեև զգալի է գրելու արվեստին տիրապետելու նրա ձիրքը, բայց ակնհայտ է նաև ժամանակի կնիքը, այն է՝ հռետորական պաթոս, հրապարակախոսական ոճ, նկարագրական վերարտադրություն:

Սակայն տաղանդը չէր կարող պարփակվել ո՛չ կաղապարների, ո՛չ էլ կաշկանդող օղակների մեջ. տարիների ընթացքում գրողը հասունացավ, վերելք ապրեց, գուցե թե դանդաղ, բայց այլևս անդարձ ու աննահանջ:

Ասվածի օգտին է խոսում այն հաճելի փաստը, որ անցյալ դարի 50-ական թվականների վերջում և հաջորդ տասնամյակում երևան հանեց «Աստղերի հովիտ» քնարական խորագիրը կրող երկհատոր վեպը և մի քանի վիպակ: Քննադատությունը դժկամորեն ընդունեց հատկապես վեպը. արդարամիտ դիտողությունների հետ եղան և աչառու գնահատականներ, որ անշուշտ հետևանք էին ոչ թե թեմայի շրջանակների նեղացման կամ ճանաչողական արժեքի թուլացման, ինչպես պնդում էին որոշ գրականագետներ, այլ հենց քննադատական մտքի կաղապարվածության ու անբարյացակամ վերաբերմունքի:

Վեպում հեղինակը մարմնավորում է մեր մտավորականության այն ներկայացուցիչներին, ովքեր իրենց ողջ հնարավորությունը ներդրին հաղթանակի հասնելու համար, ցուցաբերեցին անձնագր-հույսուն, ապրելու և արարելու ջանք ու ջիղ: Նոր պայմաններում նրանք ձգտում են գաղափարների բախման սկզբունքով հասու լինել կյանքի ճշմարտությանը, գտնել իրենց բաժին երջանկություն-

նը, եթե իհարկե կա այդպիսին, բայց երբեմն ընկրկում են, ընկճվում, ինչու չէ՝ նաև հոգեկան ճգնաժամի ու հուսահատության պահեր ապրում: Այս տարողունակ վեպում բացահայտված են հերոսների հասարակական դիրքորոշումն ու կեցությունը, նրանց հույզերն ու խոհերը, հաղթանակներն ու պարտությունները, ուրախություններն ու դառնությունները:

Վեպը հոգեբանական խոր կնիք է կրում, ունի հասարակական ընդգծված միտվածություն, բարոյաէթիկական կանխադրույթներ և դրանց մանրամասների ընդհանրացում: «Աստղերի հովիտը» մտավորականության կյանքի պատմություն է՝ զարգացման ընթացքի և տեղատվության մեջ, և քանի որ հեղինակը այդ ամենը վեր է հանել ժամանակի բարձր դիրքերից, ուրեմն, վեպն էլ պետք է վերանայվի ու վերագնահատվի ըստ պատշաճի:

Սեյրանյանի ստեղծագործության հետաքրքիր էջերից են վիպակներն ու «Ծարավ հոգիներ» վեպը: Դրանցում գրողը խորությամբ վերարտադրել է մարդու կենսունակությունը, մարտական և աշխատանքային սխրանքները՝ պատերազմի դաշտում, թիկունքում, վերականգնման տարիներին, ստեղծագործելու պահին. նա այսպանում է նաև հասարակության առաջընթացն արգելակող երևույթները:

Ինչ խոսք, բոլոր այս երկերը համարժեք չեն (երբեմն պետք է խստապահանջ լիներ սեփական գրչի ու տպագրության ներկայացվող գործերի նկատմամբ), բայց էականը կենսականորեն անհրաժեշտ և հրատապ հարցերի արժարժումն է, գեղագիտական որոշակի մակարդակը, ժամանակի հոգեբանության վերհանումը, կյանքի բարդ երևույթները վերլուծելու վարպետությունը:

Վեպի ու վիպակի, դրամատուրգիայի ու թարգմանության, մանկական գրականություն ստեղծելու և գեղարվեստական ակնարկի բնագավառներում գրողի վաստակն ավելի քան մեծ է, թեև առայսօր չի գնահատվել: Այլ է մասնագետների վերաբերմունքը Սեյրանյան նովելիստի հանդեպ: Իսկապես, նրա տաղանդն առավել վառ դրսևորվեց հոգեբանական նովելի և պատմվածքի ժանրերում: Այստեղ արդեն նա տարերքի մեջ է, այսօրվա դրությամբ թերևս անմրցելի: «Սրտի ծուխ», «Վլայիական հովվերգություն», «Սիրո լույս», «Մեր հի՛ն-հին ձորերի այն հի՛ն-հին ձայները», «Տերևաթափ» և էլի բազում գործեր այնպիսի սրտահույզ և նրբախյուս արժեքներ են, որ ընդմիշտ կմնան հայ գեղարվեստական արձակի անդաստանում՝ հարևանությամբ Թունանյանի, Իսահակյանի, Դեմիրճյանի, Ջորյա-

Ոհ, Բակունցի, Անանյանի պատմվածքների ու նովելների:

Հաջողությունների նախադրյալները. նա գրում էր բնության, հարազատ լեռնաշխարհի մարդկանց հանդեպ անխարդախ սիրով, կարոտով, ասել է թե՛ մանկության ու բնօրրանի զգացողությամբ:

Նրա արձակը սոցիալական, կենսական ընդհանրացումներով հանդերձ՝ քնարաշունչ է, անպաճույճ, համեմված ժողովրդական բառ ու բանով, թևավոր արտահայտություններով, նուրբ ու կենարար հուճորով: Սա անմեկնելի գաղտնիք չէ, քանզի Սեյրանյանի ծննդավայրը Գուգարքն է՝ բանաստեղծական մի աշխարհ, որ անսպառ լիցք է տվել իր զավակի ստեղծագործական քանքարին: Ով գեթ մեկ անգամ եղել է հայոց աշխարհի այդ մշտազվարթ անկյունում, նրա համար պարզ կդառնա, թե ինչ սքանչելի ակունքներից են բխել գրողի «Լեռներում», «Սիրո լույս», «Կարոտի կրակներ», «Կապույտ երգ» ժողովածուների պարզությունն ու իմաստությունը, խորությունն ու գեղեցկությունը, բնապատկերների հարստությունն ու լույսի առատությունը: Այո՛, նրա նորավեպերի զգալի մասի հենքն ու ատաղձը հայրենի եզերքն է, նրա սարերն ու կուսական անտառները, այդ սարերի լանջերին ու անտառների փեշերին ծվարած գյուղերում ապրող մարդկանց կենցաղը, վարք ու բարքը, ուրախությունն ու տրտմությունը, տքնաջան աշխատանքն ու բարությունը, հոգսերն ու հոգիների ջերմությունը: Եթե այդ լեռնաշխարհին նվիրված երկերն ի մի բերվեն, արդյունքում կունենանք գեղարվեստական համահավաք գեղեցիկ ասք. Գուգարաց աշխարհը նույնպես կմտնի հայ արձակի աշխարհագրական ծիրի մեջ:

Չի կարելի չնշել նաև Սեյրանյան մանկագրի անուրանալի վաստակը, որի գողտրիկ նովելներից ու պատմվածքներից մի քանիսը տասնամյակներ շարունակ իրենց մնայուն տեղն ունեն դպրոցական դասագրքերում, իսկ «Մասրուտի եղնիկը» ժողովածուն, համոզված ենք, մեր մանուկների ու դեռահասների սեղանի գրքերի շարքում է:

Մեր հայրենակցի ստեղծագործական դիմանկարի ուրվագիծը փոքր-ինչ նշմարելի դարձնելու նպատակով խոսենք նաև նրա քաղաքացիական նկարագրի մասին, որ նույնպես բովանդակալից է և հարուստ:

Նա բազմաբեղուն գործիչ էր. 1933-ից մինչև կյանքի վերջին օրերը՝ ուղիղ 70 տարի, աշխատում էր Թբիլիսիում հայոց լեզվով լույս տեսնող «Վրաստան» թերթի խմբագրությունում՝ որպես գրականության և արվեստի բաժնի վարիչ, ավելի քան երեք տասնամյակ դեկավարում էր Վրաստանի գրողների միության հայկական մասնա-

Ճյուղի աշխատանքները, մեծ ջանքեր էր ներդնում վրաց հողում ծնված հայ ստեղծագործ ուժերը ի հայտ բերելու, համախմբելու համար, բազմապիսի միջոցառումներ էր կազմակերպում Վրաստանի հայաբնակ վայրերում ու հայկական դպրոցներում՝ ունենալով հայությանը հայ պահելու նպատակ: Այդ ամենը նա անում էր սիրով ու նվիրումով, առանց կուրծք ծեծելու, առանց որևէ հավակնության: Քիչ չէ նրա լուսնան հայ և վրաց ժողովուրդների տարաբնույթ կապերի զարգացման բնագավառում:

Բնակվելով Թբիլիսիում՝ Սեյրանյանը սերտ կապեր էր հաստատել վրաց գրողների, գիտնականների, արվեստագետների ու մշակութային գործիչների հետ. նա շարունակում էր նախորդների՝ Սուսուրուկյանի, Թունանյանի, Դեմիրճյանի, Իսահակյանի, Չարենցի և մեր մյուս երախտավորների ավանդները:

Յ.Գ. Տաղանդավոր գրողը, գրական-մշակութային ու հասարակական վաստակաշատ գործիչը հավատարիմ մնաց իր անվանը (Բենիկ, Բենիամին՝ ուժեղ, կորովի) ու զուգարքցու երկարակեցությանը, երկար տարիներ պահպանեց Աստծու պարզևս կորովն ու եռանդը, արարեց հոգեսուն երկեր և ինը տասնամյակի վաստակն ուսերին՝ 2003 թվի ապրիլի 24-ին, կնքելով երկրային կյանքի վախճանը, բռնեց հավերժի ճամփան:

«Փոքր կտավի մեծ վարպետը»

«Առվեստական Վրաստան», Թբիլիսի, 2 սեպտեմբերի 1989 թ.

Նույնը՝ «Կամուրջ - 2008»

(Վրաստանի գրողների ստեղծագործական միություն)

Թբիլիսի, 2008, էջ 261-263:

ԳԻՎԻ ՇԱՅՆԱԶԱՐ

Թարգմանիչներին կարելի է կոչել գրախույզներ, որ, ազնիվ առաքելությանը համակված, հետախուզում հայտնաբերում են գրական արժեքներ և պատասխանատվության մեծագույն զգացումով դարձնում իրենց ազգային գրականության սեփականությունը: Այսպիսի գրախույզ թարգմանիչ է թբիլիսաբնակ մեր հայրենակից Գիվի Շահնազարը, որ ավելի քան կես դար նվիրումով ծառայում է հայ գրականությունը վրաց հանրությանը ներկայացնելու գործին: Նրա բարձրարվեստ թարգմանությունների շնորհիվ հայ միջնադարյան, նոր և նորագույն շրջանի քերթության հարյուրավոր էջեր արդեն իսկ դարձել են վրաց թարգմանական գրականության անբաժանելի մասը: Վրաց գրական հանդեսներում հաճախ են տպագրվում բանիմաց հոդվածներ, գրախոսություններ և ակնարկներ, որ խոսում է վրաց հանրության մեջ մեր գրականության հանդեպ նրա առաջացրած հետաքրքրության մասին: Նա ինքն էլ հետաքրքրվել և հետաքրքրվում է հայ գրական-հասարակական կյանքով: Սկսած 60-ական թվականներից, մեր հանրապետության գրական կյանքում չի եղել որևէ իրադարձություն, որին նա մասնակցած կամ արծագանքած չլիցի: Հատկապես Վրաստանում նա պարբերաբար ելույթներ է ունենում, կարդում դասախոսություններ, տպագրում հոդվածներ: Երբեմն էլ կազմակերպում է ինքնատիպ միջոցառումներ ոչ միայն Թբիլիսիում, այլև Երևանում, որոնցից կարելի է հիշատակել Պարույր Սևակի «Եղիցի լույս» ժողովածուի՝ իր թարգմանությամբ լույս տեսնելու առիթով Հայաստանի գրողների միությունում տեղի ունեցած բնույթով եզակի և հուզիչ խնջույք երեկոն:

Իբրև իսկական հայրենասեր՝ նա ջանք ու եռանդ չի խնայում հայ և վրաց գրական-մշակութային գործիչների մտերմական կապերն ավելի ընդլայնելու համար: Նրա շնորհիվ շատ բանաստեղծներ, արձակագիրներ, դրամատուրգներ, թարգմանիչներ և գրականագետներ մտերմացել և ստեղծագործական սերտ կապերի մեջ են եղել և են: Նրա հենց այս գործունեությունը նկատի ունենալով՝ բանաստեղծ Գիվի Գեգեճկորին գրում է. *«Երկու ժողովուրդների միջև զգված կամրջի սյուները մարդիկ են ամրացնում, և որպեսզի այդ կամուրջը հավերժ ծառայի իր նպատակին, հավերժ կանգուն*

մնա, որպեսզի ջուրը նրա վրայով չհոսի, Գիվի Շահնագարի նման մարդիկ են հարկավոր»:

17-ամյա պատանին միջնակարգն ավարտելուց հետո ընդունվեց Թբիլիսիի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժինը: Ընդունվեց՝ իմանալով հայերեն ընդամենը չորս բառ՝ արև, բարև, հայր, մայր, բայց ի հայտ բերելով լեզվական զարմանալի ունակություններ՝ ջանասիրություն ու եռանդ, կարճ ժամանակամիջոցում յուրացրեց հայրական լեզուն և դեռևս երկրորդ կուրսի ուսանող՝ մայրականի՝ վրացերենի թարգմանեց Միքայել Նալբանդյանի «Ազատություն», «Մանկության օրեր» բանաստեղծությունները՝ արժանանալով ուսանողության, դասախոսների և հատկապես ամենաթծախնդիր գիտնականներից մեկի՝ պրոֆ. Լևոն Մելիքսեթ-Քեկի բարձր գնահատականին:

Ոգևորված առաջին հաջողությունից՝ նա թարգմանեց նաև Ավ. Իսահակյանի քնարերգության նմուշներից, ասես նախագգալով, որ շուտով իրականանալու է մեծ բանաստեղծին տեսնելու իր երազանքը: Իսկապես, շատ չանցած, հայ պոեզիայի պատրիարքը Թբիլիսիում մասնակցում է Համայն Վրաստանի պատրիարք-կաթողիկոս Գեորգի VI-ի հուղարկավորությանը, և պրոֆ. Լ. Մելիքսեթ-Քեկը Գիվիին ներկայացնում է Վարպետին՝ նշելով նրա ծիրքը թարգմանության բնագավառում: Ավ. Իսահակյանը փաղաքշուն-գուրգուրում է երջանկությունից շփոթահար պատանու գլուխը և նահապետի իր խոսքն ուղղում նրան. «Օրհնվես, որդի՛, օրհնյալ գործի ես լծվել, պատվով աշխատիր»: Այդ օրից, բանաստեղծի պատգամը սրտում, նա պատվով ու պատասխանատվությամբ ծառայում է հայ գրականության լավագույն էջերը վրացերեն թարգմանելու իսկապես օրհնյալ գործին:

Գիվի Շահնագարի տաղանդը բանաստեղծական է, տարերքը՝ թարգմանական: Նա այն եզակի թարգմանիչ բանաստեղծներից է (թարգմանիչը մղում ենք առաջին պլան, որովհետև նրա հրաշալի պոեզիան առանձին անհատների է միայն մատչելի), որ գտել է ընդերքի չափ խոր, հարուստ ու բազմաշերտ հայ պոեզիան պեղելու և թարգմանելու գաղտնիքը:

Նա կարողանում է պահպանել մեր ազգային բանաստեղծների հայկականությունն ու հայ ոգին, կարողանում է տալ և՛ գեղեցիկ, և՛ «հավատարիմ» թարգմանություն, հաղորդել ծաղկի և՛ գույնը, և՛ բուրմունքը: Կարողանում է, քանզի վերուստ տրված ձիրքի, բանա-

ստեղծական խոր զգացողության հետ կատարելապես տիրապետում է հայոց և վրաց լեզուներին (նաև այլ լեզուների), հիմնովին ուսումնասիրել է իրեն հարազատ ժողովուրդների պատմությունը, կենցաղի, բարքերի, ավանդույթների, բառաշերտի, լեզվամտածողության, լեզուների քերականական կառուցվածքների և բազմաթիվ ու բազմապիսի նախապայմանների ընդհանրություններն ու առանձնահատկությունները: Իհարկե, այսչափ պաշար կուտակած ամեն մի անհատ ի վիճակի կլինի հնարավորինս պահպանել բնագրի նպատակաուղղվածությունը, գույները, ոճական շերտերը, ազգային ոգին ու ժամանակի կոլորիտը: Համազոր թարգմանելուն նպաստում է մի շատ կարևոր հանգամանք ևս, որի մասին նշել է դեռևս Նիկողայոս Մառը Շոթա Ռուսթավելու «Ընձենավորը» պոեմի նախերգանքի տերյանական թարգմանության առթիվ: «Իմ ուսանող Վահան Տերյանի հիշատակին» հոդվածում նա գրում է. «...Հայ լեզվի կառուցվածքին թե՛ ի բնե, թե՛ կուլտուր-պատմականորեն հատուկ է լավագույն կերպով արտահայտել վրաց լեզվի բնույթն ու առանձնահատկությունները: Ծիշտ է՝ հայերենի և վրացերենի միջև խոշոր տարբերություն կա բանաստեղծության համար առանձնապես կարևոր տեխնիկայի մեջ... բայց ներքին ռիթմը, պատկերավորումներն ու ոճերը, հայ և վրաց ժողովուրդների բուն հոգեբանությունն ամբողջապես... ոչ միայն հարազատ են իրար, այլև նույնն են ըստ էության՝ տարբերվելով ձևականորեն»:

Գիվի Շահնազարը գործի մարդ է. գործ է անում և գործ պահանջում, գործով հաստատում է, գործով ճանաչում, գործով պատասխանում է, գործով հանդուհում, գործով է ապացուցում՝ ինչ է բարեկամություն, նվիրվածություն, մարդկային-ընկերական հարաբերություն ու հոգեկան անաղարտություն: Օժտված նման առաքինություններով, լինելով անսահման բարի, անմիջական ու ներողամիտ՝ նա նաև անկաշառ է, անաչառ ու հաստատուն սկզբունքի տեր: Նա բոլորովին չի զիջում, երբ, ասենք, խոսքը միջակներին թարգմանելու մասին է: «Միջակ ստեղծագործողները շատ շատ են,- ասում է նա,- արևշատություն իրենց, թող գրեն ու տպագրեն մայրենի լեզվով, բայց բարի լինեն և հասկանան, որ թարգմանության համար պետք է ընտրել այն հեղինակներին, որոնց ստեղծագործությունները չեն տեղավորվում ազգային շրջանակներում և նոր հորիզոններ նվաճելու համար չեն հանդուրժում ոչ մի պատմեչ ու պատվար: Նրանք պետք է հասկանան, որ թարգմանվող արձակը կամ չափածոն այլալեզու ընթերցողի համար ինչ-որ տեղ դառնում է նաև տվյալ

ժողովրդի ստեղծած գրական արժեքների ընդհանուր գնահատության չափանիշը»:

Նա բացասաբար է տրամադրված հատկապես այն անձանց նկատմամբ, ովքեր սեփական նախաձեռնությամբ անընդհատ բախում են այս կամ այն խմբագրության, հրատարակչության, հեղինակավոր գրողների դռները, տողացիներ մուրում և բնագրից թարգմանածի քողի տակ հրամցնում ընթերցողին, ապա նույն ճանապարհով իրենցը պարտադրում՝ որպես փոխհատուցում: Հակագրական այս երևույթի դեմ նա պայքարում է առանց վերապահումի: Ավելին՝ իր սկզբունքին հավատարիմ՝ երբեք տուրք չի տալիս անձնական ծանոթությանը և բանաստեղծների ու արձակագիրների երկերն ընտրում է ամենայն բժախնդրությամբ:

Իրոք, քաջատեղյակ ամբողջ հայ պոեզիային՝ գողթան երգիչներից, միջնադարյան տաղերգուներից, գուսաններից մինչև մերօրյա անվանիներն ու սկսնակները, շատ-շատերից ընտրում է նրանց, ում ստեղծագործություններն իսկապես արժեք են հայ գրականության համար, կարող են պատվավոր տեղ զբաղեցնել նաև որևէ ժողովրդի, այդ թվում և վրաց թարգմանական գրականության գանձարանում: Նահապետ Քուչակ, Սայաթ-Նովա, Հովի. Թումանյան, Ավ. Իսահակյան, Վահան Տերյան, Եղիշե Չարենց, Հովի. Շիրազ, Համո Սահյան, Հրաչյա Հովհաննիսյան, Սիլվա Կապուտիկյան, Պարույր Սևակ. ահա այն բանաստեղծները, որ հանձին Գիվի Շահնազարի ունեն իրենց հիանալի թարգմանիչն ու մեկնաբանը: Թարգմանել է հայկական արձակի և դրամատուրգիայի ընտիր նմուշներից ևս: Բազմաթիվ են թարգմանությունները, բայց ուզում ենք առանձնացնել երկու ժողովածու, որ արժանացան վրաց նրբաճաշակ ընթերցողների ու քննադատների հիացմունքին, որոնց մասին գովական գրախոսություններ տպագրեց վրաց մամուլը՝ դրանք համարելով վրաց թարգմանական պոեզիայի անխամրելի էջեր:

Առաջինը Սայաթ-Նովայի հայերեն խաղերի ժողովածուն է (Թբիլիսի, 1972)՝ հաճելի նորույթ վրաց ընթերցողի համար, որովհետև հանճարեղ երգիչը իր ամբողջ հասակով ու հմայքով առաջին անգամ էր ներկայացվում նրան: Ամբողջ հմայքով ու հասակով, քանզի վրացերեն խաղերը, բացառությամբ սիրային և ներբողական մեկ տասնյակի հասնող երգերի, որ իսկապես կատարյալ քերթվածքներ են, բանաստեղծական արվեստի տեսակետից զիջում են հայերեն խաղերին: Ուստի, երբ խոսում ենք նրա եռալեզու պոեզիայի հավասարարժեքության մասին, վրացերեն խաղերի պարագայում, հենց

հանուն բանաստեղծի, վերապահուն պետք է անենք՝ նկատի ունենալով, որ նման արտահայտությունը կարող է չափանիշ դառնալ նաև հայերեն ու թուրքերեն խաղերը գնահատելիս:

Ժողովածուն նորություն էր նաև թարգմանության առումով: Բանն այն է, որ Սայաթ-Նովայի հայերեն խաղերի թարգմանիչները մինչ այդ նույնությամբ փոխանցել են բնագրի օտարամուտ բառերն ու արտահայտությունները, որ հատկապես ժամանակակից ընթերցողի համար որոշակի դժվարություններ են առաջացնում՝ լիովին ըմբռնելու բնագրի հմայքն ու ոգին:

Իսկ ի՞նչ սկզբունք է ընտրել Գիվի Շահնագարը: Նախ լսենք իրեն. «*Վրաց ընթերցողին նախապես ուզում են հիշեցնել, որ եթե ժողովածուում ժամանակակից վրաց լեզվի կանոններից շեղումներ նշմարի, հաշվի առնի մի հանգամանք. թարգմանությունն արված է Սայաթ-Նովայի վրացերեն խաղերի, նրա վրացական բառազանձի «իմիտացիոն մեղեդայնությամբ»*: Իսկապես, Գիվի Շահնագարը դրանք գրականացրել է նրբորեն ու բարձր ճաշակով՝ պահպանելով պատկերավորման և արտահայտչական տարրերը, հանգը, ռիթմը, հուզականությունն ու մեղեդայնությունը, այն փոխառյալ բառերը, որ նույն նշանակությամբ գործածվում են գրական վրացերենում:

Երբ գրականացված թարգմանությունները պարբերաբար տպագրվում էին մամուլում, վրացերեն երգերին քաջատեղյակ ընթերցողը իսկույն ընկալեց ու ընդունեց նորամուծությունը:

Հայերեն խաղերի վրացերեն թարգմանության՝ քննություն բռնած փորձից ելնելով՝ ուզում ենք հիշեցնել մի չլուծված խնդիր, որ բազմիցս արծարծվել է մեր մամուլում և գիտական գրականության մեջ, բայց ցայժմ այդ ուղղությամբ ոչինչ չի արվել: Խոսքը Սայաթ-Նովայի հայերեն խաղերը գրականացնելու մասին է: Այս հարցը տասնամյակներ առաջ հարուցել է վաստակաշատ սայաթնովագետ Մորուս Հասրաթյանը. «*Հետագայում, - գրում է գիտնականը, - անհրաժեշտ կլինի աստիճանաբար մեղմել անգամ երգչի հայերեն խաղերի լեզուն, որպեսզի այն հասկանալի դառնա... ավելի շատ ընթերցողների»*:

Մորուս Հասրաթյանը նույն միտքը կրկնել է նաև հայերեն, վրացերեն և թուրքերեն խաղերի 1959 և 1969 թթ. հրատարակություններում՝ մասամբ գրականացված չորս խաղ զետեղելով գրքի հավելվածում:

«Նորացած Սայաթ-Նովան» գրախոսականում Պարույր Սևակը նույնպես գրում է, որ դա միանգամայն հասունացած խնդիր է, որ

հաճախակի բառարանի օգնությամբ դիմելը «անհարիր է գեղագիտական հաճույք ստանալու հոգեբանությանը»: «Բանաստեղծի անկրկնելի արվեստի համն ու հոտը, դարաշրջանի կոլորիտը չեն տուժի դրանից,- շարունակում է Սևակը,- քանի որ ինչքան էլ Սայաթ-Նովայի լեզուն հայացվի ու գրականացվի, այնուամենայնիվ այդ լեզուն իր գերակշռությամբ կմնա սայաթնովայական»:

Ժամանակն է, որ գոնե հիմա հայերեն խաղերը բեռնաթափվեն օտարամուտ-անհասկանալի բառերից, իսկ վրացերեն ու թուրքերեն խաղերը թարգմանվեն վերստին և գրական հայերենով. ավանդույթի ուժը շատ մեծ է, բայց պետք է հաղթահարել, քանզի մեր գրական լեզուն մաքրվում է օտար և բարբառային տարրերից, իսկ դրանց առկայությամբ Սայաթ-Նովան դառնում է դժվարընկալելի:

Գիվի Շահնագարի տաղանդի ու ոգեշնչումի երկրորդ, բարձրագույն արտահայտությունը Պարույր Սևակի «եղիցի լույս» (Թբիլիսի, 1979) ժողովածուն է:

Պարույր Սևակի ծննդյան 60-ամյակի առթիվ Գ. Շահնագարը գրեց. «Վրաստանն իր գորեղ ձեռքով սեղմում է մեծ բանաստեղծի աջը, որովհետև նրա բարձրագույն զանգակատան դողանջները հնչեցին նաև Վրաստանում՝ ազդարարելով՝ եղիցի լույս...»:

Սևակի զանգակատան, տվյալ դեպքում՝ պոեզիայի դողանջները, որքան էլ հզոր ու հուժկու, դժվար թե հնչեին Վրաստանում, դժվար թե հասնեին վրաց և վրացալեզու ընթերցողի սրտին, հոգուն ու մտքին, եթե չլիներ ինքը՝ տաղանդավոր և բազմափորձ ժամհար թարգմանիչը:

Պարույր Սևակի ստեղծագործությունները՝ բարդ ու ինքնատիպ կառուցվածքով, խոհական-հուզական նրբերանգներով, խոսքի դիմամիզմով ու պատկերային հագեցվածությամբ, փիլիսոփայական խորությամբ, առնական ու նրբին ելևէջներով դժվարություններ են հարուցում թարգմանության համար, մանավանդ, եթե թարգմանիչը արհեստավոր չէ, թարգմանվող երկի հանդեպ տոգորված է սիրով, նաև տազնապով և մտահոգված է ձևով ու բովանդակությամբ համազոր թարգմանություն վերստեղծելու:

Ակներև է, որ Սևակ բանաստեղծը գալիս է Աստվածաշնչից, գալիս է հայկական էպոսից, հայոց բանահյուսությունից, Նարեկացուց, Քուչակից, Սայաթ-Նովայից, Չարենցից, որ նա ստեղծագործաբար շարունակեց իր մեծ նախորդների ավանդները և հայ պոեզիան դուրս բերեց նոր ուղեծիր:

Գիվի Շահնագարը տարիներ շարունակ Սևակի ստեղծագործու-

թյան արտաքին ու ներքին ազդակները, ակունքները, զարգացման ընթացքն ու սևակագիտության ամբողջ գրականությունը սովորելուց հետո միայն ձեռնարկեց թարգմանությունը: Այդ բազմամյա տքնանքի շնորհիվ է, որ բնագրի բառային հմայքները համարյա միշտ և ճշգրտորեն իրենց համարժեքն են ստացել թարգմանության մեջ, իսկ այն բառերը, որ չեն ցանկացել հարմարվել նոր լեզվամտածողությանը, թարգմանիչն այնպես հմտորեն է հանդերձավորել, որ «ամբարիշտ» բառը լիովին մերվել է ու ներդաշնակել նոր միջավայրին: Այս դեպքում ստեղծել է նոր բառեր, շրջանառության մեջ է դրել բառային միավորներ ու արտահայտություններ (այս պարագայում էլ նա հետևել է Սևակի օրինակին), բայց այնպես զուսպ ու չափավոր, որ հասկանալի է բոլորին և ո՛չ ծանոթագրելու պահանջ է զգացվում, ո՛չ էլ բառարանների օգնությանը դիմելու: Նա կարողացել է թարգմանչի ես-ն աննկատ պահել բնագրի ծալքերում, հեղինակի մտահղացումները չի հարմարեցրել իր անհատականությանը, գրական իր հավատամքին. մի բան, որ կամա թե ակամա անում են որոշ թարգմանիչներ՝ խաթարելով բնագրի ամբողջականությունը:

Հաջողության նախապայմաններից է այն, որ Գիվի Շահնագարի արմատների մի մասը հայոց հողում է, մյուսը՝ վրաց, որ նա՝ նույնպես վառ անհատականություն, բանաստեղծի ժամանակակիցն է, կյանքի նկատմամբ ունի նույնպիսի հայացակետ, նույնպիսի վերաբերմունք և, միանգամայն բնական է, որ գերազանց է զգում հեղինակին ու նրա հոգեկան աշխարհը: Ահա թե ինչու, սևակյան բանաստեղծությունը, մտքի ու հույզի միասնությամբ, ազգային դիմագծով ու համամարդկային ընդգրկունով հայերենից հետո վեհորեն հնչում է նաև վրաց լեզվով: Ահա թե ինչու, նույնիսկ հիմա՝ մեր օրերում, Սևակի ստեղծագործությունը բնագրից թե տողացիներից թարգմանել ցանկացողները պահանջ են զգում ուսումնասիրելու Շահնագարի թարգմանական պրակտիկան:

Գիվի Շահնագարի նվիրական բաղձանքն է նաև հայոց հանճարի «Սատյան ողբերգության» ամբողջական թարգմանությունը (քսան-քսանհինգ տարվա իր կատարած հսկայական աշխատանքը նա համարում է սոսկ նախապատրաստական շրջան): Թարգմանված հատվածներն արդեն իսկ վկայում են, որ գոյության ու մաքառումի բարձրագույն իդեալների գեղարվեստական մեծագոր կտավը նույնպես վրաց ընթերցողին կհասնի անխաթար փայլով ու ամբողջականությամբ:

Բազմիցս խրախուսվել է Գիվի Շահնագարի գործունեությունը.

հունգարացի Յոժեֆ Կատոնայի «Քանկ-բան» դրամայի թարգմանությունը (բեմադրվել է վրաց պրոֆեսիոնալ թատրոններում) Խորհրդային Միությունում կայացած հունգարական դրամատուրգիայի փառատոնում նշվել է հատուկ մրցանակով: «Սովետական գրականություն» ամսագրի հատուկ մրցանակի է արժանացել Պարույր Սևակի «Եղիցի լույս» ժողովածուի թարգմանության համար: Հայ գրականությունից կատարած բարձրորակ թարգմանությունների և նրա ակտիվ պրոպագանդման համար պարգևատրվել է Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության պատվոգրով, իսկ Վրաստանի գրողների միությունը նրան պարգևել է Իվանե Մաչաբելու անվան մրցանակ:

Գիվի Շահնագարը երկար ժամանակ աշխատել է «Վրացֆիլմ» կինոստուդիայում և վրացերենի թարգմանել ավելի քան հարյուր ֆիլմ: Այնուհետև տասնյակ տարիներ եղել է Վրաստանի գրողների միությանն առընթեր գեղարվեստական գրականության թարգմանության և գրական փոխհարաբերությունների գլխավոր խմբագրական կոլեգիայի ավագ գիտական խմբագիր: Լինելով Վրաստանի գրողների միության թարգմանական մասնաճյուղի բյուրոյի անդամ՝ նա իր ամբողջ եռանդն ու էներգիան նպատակամղել է վրաց թարգմանական արվեստի զարգացման և երիտասարդ թարգմանիչների պրոֆեսիոնալ մակարդակը բարձրացնելու հանրաշահ գործին:

1983 թվականի մայիսից Գիվի Շահնագարը եղել է Թբիլիսիի Ստեփան Շահումյանի անվան (այժմ՝ Պետրոս Ադամյանի անվան) հայկական պետական դրամատիկական թատրոնի տնօրենը: Այդ աշխատանքում ևս իրեն դրսևորել է լավագույն կողմերով և նոր էջերով հարստացրել երկու ժողովուրդների գրական-թատերական կապերի պատմությունը:

Վերջերս վրաց գրական հասարակայնությունը նշեց նրա ծննդյան 50-ամյակը, ասել է թե՛ մեր գրականության լիազոր դեսպանն ու անխոնջ մշակն ունի բազմաթիվ պլաններ, ծրագրեր ու մտահղացումներ. ցանկանանք նրան կայուն առողջություն, ստեղծագործական բեղուն գործունեություն ի շահ հայ և վրաց ժողովուրդների բարեկամության, հայ և վրաց գրականությունների թարգմանական անդաստանների հարստացման ու մերձեցման:

«Սովետական գրականություն», Երևան, 1985, N 3:

“Литературная Армения”, Ереван, 1985, N 9.

ԳՈՒՐԱՍ ՓԱՆՋԻԿԻՉԵ

Վրաց գրականությունն անդառնալի կորուստներ է կրում: Ժողովուրդը դեռ խնկում էր վաղաժամ վախճանված անզուգական Նոդար Դունբաձեի հիշատակը. նրա սիրտը դեռ մխում էր մեկ այլ քանքարավոր գրողի և երևելի մարդու Ռևազ Իմանիշվիլու մահվան կսկիծից, և, ահա, նորից գույժ. Վրաստանը հավերժություն է ճամփում ականավոր արձակագիր, հրապարակախոս և հասարակական գործիչ Գուրամ Փանջիկիձեին:

Երկրային կյանքի ծով անարդարությունների դեմ աներեր մարտնչող գրողը քաջագիտակ էր իրական ծովի խարդավանքներին ու խորհրդավոր գաղտնիքներին, միշտ հաղթանակով էր դուրս գալիս նույնիսկ փոթորկուն ալիքների դեմ ոգորումներից, բայց այս անգամ երերաց, պարտվեց ու ընկավ անհավասար պայքարում:

Երևի թե տարերքը պիտի տապալեր այդ հսկային, որ ավելի լավ երևար նրա հասակը, նրա մեծությունը, նրա տեղն ու կշիռը Աստծո ընտրյալների շարքում:

Գուրամ Փանջիկիձեն թեև կյանքից հեռացավ վաթսուհինգը չբոլորած՝ արձակագրի համար բաղձալի կենսափորձի և իմաստության տարիքում, բայց գեղարվեստական արձակում այնպիսի նվաճումների է հասել և բարձրացել կատարելության այն աստիճանին, որ արժանի էր կրելու կենդանի դասականի տիտղոսն ու ծիրանին: Առաջին իսկ վեպերով՝ «Յոթերորդ երկինք» (1967), «Ակնաքար» (1972, հայ. հրատ. 1982 թ.), որոնց տպագրությունները ընդմիջված որոտներ էին խորհրդային գրական կյանքի արևկա երկնքում, Փանջիկիձեն համարձակ թռիչք կատարեց դեպի եվրոպական գրականության բարձունքները:

Տաղանդավոր ավանգարդիստը առաջիններից մեկը գրական հերոսների նախատիպեր ընտրեց ճշգրիտ գիտությունների ոլորտից՝ իմժեներ-մետալուրգ, ֆիզիկոս, մաթեմատիկոս, բժիշկ վիրաբույժ և այլն՝ իրենց հոգեբանությամբ, մտածողությամբ, կենսակերպով, բարոյական ըմբռնումներով, որոնք, իբրև խոշոր գիտնականներ, զբաղվում են ամենաարդիական պրոբլեմներով, մասնագիտական դիրքերից են զննում, արժևորում մարդկանց ու ավանդույթները, առարկաներն ու երևույթները, նրանք էլ աշխատում են ու դա-

տում, խորհում ու երազում, ուրախանում ու վշտանում, սիրում ու տառապում, հաղթում կամ պարտվում. ձգտում են կարիերայի, անձնական բարեկեցիկ կյանքի, գիտահետազոտական նվաճումների: Տաղանդավոր են, այո՛, բայց մեկն ազնիվ, բարի ու անբասիր՝ մանկան պես միամիտ է ու անօգնական, ուստի և թույլ ու անզոր պայքարի մեջ, մյուսը, նույն դրական հատկանիշներն ունենալով, ամուր կանգնած է հողին և արժանապատվորեն ու արիաբար հաղթահարում է ամենասարսափելի և ամենամարդկային փորձությունները: Գրողն ուսումնասիրեց, վերլուծեց և ցույց տվեց, թե գիտատեխնիկական հեղափոխության պայմաններում ինչ փոփոխություններ կարող են տեղի ունենալ «ուժեղ անհատների» հոգեբանության, գոյության ու կեցության մեջ:

Գրողի և քաղաքացու հավատամք պահվածքի միաձուլումով Գուրամ Փանջիկիձեն երևան հանեց սոցիալական պրոբլեմների այն շարքը (հովանավորչություն, կաշառակերություն, ղեկավար աշխատանքի սպրդած միջակության կողմից տաղանդավոր երիտասարդների անպատիժ հալածանք, բարձրաստիճան պաշտոնյաների բարոյական ու ծառայողական խոր և հանդիչ նկարագիր), որ ծագել էր հասարակարգի ընդերքում և առաջադրվել ժամանակի կողմից: Միայն եզակի անհատները կարող էին անտեսել պետականորեն մամլոյ մեքենայի սարսափները և գեղարվեստական խոսքի ուժով տարփողել այսօրինակ ճշմարտություններ: Նա այն եզակի գրողներից էր, որ կարողացավ ազգային և համազգային իդեալները մարմնավորել նախևառաջ իր մեջ և ապա՝ երկերում: Եվ այդ ամենը հոգեբանական խորությամբ, գրական անըստօրուտ վարպետության և գաղափարական հրատապության համադրումով:

Գուրամ Փանջիկիձեի վեպերը գրված են արձակի ամենաարդիական ոճով, ունեն կոմպոզիցիոն անթերի կառուցվածք, հագեցած են դրամատիզմով, առածգական են և տարողունակ, հակիրճ և ռացիոնալ: Այս ամենով հանդերձ՝ բոլոր վեպերն արմատապես տարբեր են իրարից. ամեն մեկը նոր և յուրօրինակ աշխարհ է, ամեն կերպար՝ մի մոդել, որ երբեք չի տարրալուծվում այլ կերպարների մեջ: Եվ եթե առաջին երկու վեպերը աչքի են ընկնում խոր և հրատապ պրոբլեմների արձարծունով, գեղագիտական, սոցիալական սուր հարցադրումներով, ժամանակակից մարդու բարդ ու հետաքրքիր կերպարներով, ապա իր բացառիկությամբ առանձնանում է «Պարույր» վեպ-ֆանտասմագորիան. իսկ «Սատանի անիվ» վերջին վեպ-էպոպեա դարակազմիկ երկը մրցակցությունից դուրս է, և միայն

ժամանակի ընթացքում կարող է գնահատվել ըստ արժանվույն:

Գ. Փանջիկիձեի որոշ հերոսների երբեմն համեմատում են Ֆ. Աբրահամովի, Չ. Այթնատովի, Վ. Աստաֆևի, Վ. Բելովի, Ն. Դումբաձեի, Յր. Մաթևոսյանի, Յու. Նազիբիհի, տաղանդավոր այլ գրողների հերոսների հետ՝ մոռանալով կամ մոռացության տալով այն իրողությունը, որ թե՛ «Յոթերորդ երկինք», թե՛ «Ակնաքար» ստեղծագործություններով, անգամ 1978-ին լույս տեսած «Ակտիվ արևային տարի» հանրահայտ վեպով Փանջիկիձեն ժամանակագրորեն նախորդում է հիշյալ ընտրյալներից մի քանիսին:

Ականավոր գրողը վարել է բազմաթիվ պաշտոններ. հիմնադրել է ընկերություններ ու հասարակական կազմակերպություններ, եղել է դրանց գործող կամ պատվավոր նախագահը: 1992-ից մինչև կյանքի վերջին օրը ՎԳՄ ղեկավարն էր: Համատարած ավերումների ու փլուզումների այս դժնդակ տարիներին նա ոչ միայն կանխեց այդ կազմակերպության պառակտումը, այլև կայուն հիմքեր ստեղծեց գրականության զարգացման, գրողի արժանապատվությունը, հեղինակությունն ու պատասխանատվությունը պատշաճ բարձրության վրա պահելու, նրա կենսապայմանները բարելավելու համար: Միաժամանակ նրա հոգսն ու նպատակը հայրենիքն էր, և ակտիվորեն մասնակցելով նոր Վրաստանի կառուցմանը, ասպետաբար մարտնչում էր և՛ գրչով, և՛ զենքով: Ուստի պատահական չէ, որ գրող մարտիկի քանակաշատ պարգևների մեջ առավել շողարձակը մեծն Վախթանգ Գորգասալի շքանշանն է, որին արժանացել է հայրենի երկրի պաշտպանության և նրա միասնության համար պայքարում ցուցաբերած խիզախության համար:

Գուրամ Փանջիկիձեն գիտատեխնիկական ժուռնալիստիկայի հիմնադիրը և չգերազանցված մարզական լրագրողն էր Վրաստանում:

Հանրաճանաչ գրողի երկերից հայերեն լույս են տեսել «Ակնաքար» վեպը և մի քանի պատմվածք:

«Գիրը՝ ժամանակին, կյանքը՝ հավերժությանը»

«Հայաստանի Հանրապետություն»

Երևան, 25 հոկտեմբերի 1997 թ.

Նույնը՝ «Վրաստան»

Թբիլիսի, 29 նոյեմբերի 1997 թ.

ՆՈՂԱՐ ԴՌՄԲԱԾԵ

Նողար Դումբաձեի ստեղծագործությունը վրացական է ոգով, միջավայրով, կերպարներով, կյանքի օրենքներով ու օրինաչափություններով, նաև այն արմատներով, որ գտնվում են նախ ազգային և ապա համաշխարհային մշակույթի ու գրականության ընդերքում: Ասվածի վկայությունն է, որ ամեն ընթերցող, անկախ տարիքից ու մասնագիտությունից, նրա արձակում տեսնում է իրեն սրտամոտ ու հոգեհարազատ զգացումներ, խոհեր, ապրումներ ու բաղձանքներ, քանզի այդ արձակը խորապես մարդկային է և առինքնող:

Ծնվել է 1928 թ. հուլիսի 14-ին Թբիլիսիում: Ինը տարեկանում զրկվելով ծնողներից՝ մինչև վերջ պարպում է ճակատագրի բերումով իրեն բաժին ընկած որբության դառը մրուրը: 1940-1945 թթ. ապրում է Գուրիայում, իր իսկ ասելով՝ չափազանց խիստ, բայց և չափազանց բարեսիրտ ու իմաստուն տատի մոտ: Յենց այնտեղ՝ աշխատավոր մարդկանց միջավայրում, նա զգում է սիրո և գործվանքի, բարության ու ջերմության կենարար ուժը, մարդուն կարեկից լինելու և գեղեցիկի զգացողությամբ ապրելու հմայքը, որ պահեց ամբողջ կյանքի ընթացքում և դարձրեց իր ստեղծագործության ատաղձն ու հիմնական մոտիվը: Հիշելով գյուղում անցկացրած տարիները՝ Դումբաձեն հաճախ ասում էր, թե, ճիշտ է, 47 տարի ապրել է Թբիլիսիում և միայն 5 տարի՝ գյուղում, բայց գրողի իր ամբողջ պաշարը այնտեղից է բերել:

1945 թ. Նողար Դումբաձեն վերջացնում է Չոխատաուրիի միջնակարգ դպրոցը և ընդունվում Թբիլիսիի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետ, որն ավարտելուց հետո, մինչև 1957 թ. մնում է նույն ֆակուլտետի ժողովրդական պլանավորման և վիճակագրության ամբիոնում որպես լաբորանտ, բայց շատ շուտով գրողի բնատուր շնորհքը հաղթում է գիտնական դառնալու նրա ցանկությանը, և նա աշխատանքի է անցնում երիտասարդական «Ցիսկարի» («Արշալույս») գրական-գեղարվեստական և հասարակական-քաղաքական ամսագրի խմբագրությունում իբրև երգիծանքի և հումորի բաժնի վարիչ, մի քանի տարի անց տեղափոխվում է «Նիանգի» («Կոկորդիլոս») երգիծական հանդեսի խմբագրություն, որտեղ վարում է նախ խմբագրի տեղակալի, ապա գլխավոր խմբա-

գրի պաշտոնները: 1972 թվականից Վրաստանի գրողների միությունում էր, սկզբում՝ վարչության քարտուղար, իսկ 1981-ից մինչև կյանքի վերջին օրը՝ նախագահ:

Վախճանվել է 1984 թ. սեպտեմբերի 14-ին:

* * *

Նոդար Դումբաձեի ստեղծագործական կյանքն սկիզբ է առնում ուսանողական տարիներից, երբ համալսարանի «Պիրվելի սխիվի» («Առաջին ճառագայթ») գրական ավանախում տպագրվում են նրա բանաստեղծությունները: Սկսում է քնարերգությամբ, գրում բազմաթիվ հիանալի բանաստեղծություններ, որոնք աչքի են ընկնում արտահայտչական միջոցների թարմությամբ ու ասելիքի համարձակությամբ: Պոեզիային զուգահեռ նա իր ուժերը փորձում է նաև երգիծական արձակի ժանրում՝ տպագրելով ուշագրավ ժողովածուներ, բայց և այնպես ընթերցողի սիրտը գրավում է գեղարվեստական արձակով:

1959 թ. «Ցիսկարի» անսագրում տպագրվեց երեսնամյա գրողի «Ես, տատիկը, Իլիկոն և Իլարիոնը» վեպը, որ դարձավ վրաց գեղարվեստական գրականության ամենահետաքրքիր երևույթը: Վեպի առաջացրած մթնոլորտի մասին ահա թե ինչ է գրում գրականագետ Գուրամ Ասաթիանին. «Ես գրքեր են կարդում ավելի քան քառասուն տարի, բայց չեն հիշում, որ իմ հարազատ քաղաքում ինչ-որ բան կարդացվեր այդպիսի համընդհանուր հափշտակությամբ, և որ գրական անսագրի հերթական համարին սպասեին այդքան անհամբեր: Երկի մասին խոսում էին ամենուր, վերապատմում էին սյուժեն, արտասանում էին ամբողջական էջեր, լրացնում էին մեկմեկու, ենթադրություններ էին անում հերոսների նախատիպերի մասին: Եվ այս ամենը ոչ միայն գրական միջավայրերում, այլև տրանսպորտում, մարզադաշտերում, ընթերցասրահներում, սրճարաններում, դասասենյակներում, հեղինակավոր հիմնարկներում, նույնիսկ ամենագործնական նիստերի ընդմիջումներին»:

Դա շնորհիվ այն իրողության, որ ինչպես գրում է պրոֆ. Զրանտ Թամրազյանը, «Նոդար Դումբաձեն հայրենի գրականությանը բերում է կենսական հարուստ բովանդակություն, հաղթահարում մոտիկ անցյալի գրական սխեմաներն ու մոլորությունները: Նա իր սերնդի հետ կրկին մարդուն բարձրացնում էր իր արժանի տեղը, գրականության մեջ բերում ժողովրդական կյանքի շերտերը»:

Կյանքի երևույթներն արտացոլելով քաղաքացիական ակտիվու-

թյամբ ու հոգեբանի իմացությամբ՝ Նոդար Դումբաձեն երկը հագեցրել է պայծառ լավատեսությամբ, արտասովոր քնարականությամբ, հոգեպարար հուճորով, հյուսիսեղ բառ ու բանով: Դա նորարարություն էր, ուստի բնական է, որ պատճառ դարձավ բուռն վեճերի. բախվեցին ավագ և կրտսեր սերնդի գրողների ու քննադատների կարծիքները, եղան իրարամերժ գնահատականներ: Այդուհանդերձ վեպի չորս հերոսները, որ մարմնավորում են մարդասիրությունն ու քաղաքացիականությունը, մարդկային կեցությունն ու բնավորության գծերը՝ բարձրագույն արտահայտությամբ, սիրելի դարձան ամենալայն զանգվածներին՝ սկիզբ դնելով հեղինակի այլևս անխամրելի փառքին:

Կրքերը դեռ չէին հանդարտվել, լույս տեսավ գրողի «Ես տեսնում եմ արևը» վեպը, որ ավելի բորբոքեց ու խորացրեց թե՛ ընթերցողների և թե՛ քննադատների հետաքրքրասիրությունը «արևային տաղանդի» հանդեպ: Այստեղ արդեն հոգեբանությունը, կերպարն ու պատկերը վերջնականապես դառնում են գեղարվեստական մարմնավորման նրա անխախտ սկզբունքը:

Այս երկերում Նոդար Դումբաձեն այնպիսի վարպետությամբ է արտացոլել մեծ աշխարհամարտի և հետպատերազմյան տարիների վրացական գյուղի կյանքն ու գեղջուկի հոգեբանությունը, որ շատերին թվացել է, թե հեղինակը գյուղացի է: Նկատի ունենալով այս պարագան, Դումբաձեն ասել է. «*Չաճախ գրողին շփոթում են նրա հերոսների հետ: Ահա այդպես, երբ լույս տեսան իմ առաջին գործերը՝ ինձ համարեցին գյուղում մեծացած: Իրականում ես քաղաքի տղա եմ. ծնվել եմ Թիֆլիսում, նրա հին թաղամասերից մեկում, որի բարքերը նկարագրել եմ «Կուկարաչա» վիպակում: Իսկ լեռնային Խիդիսթավի գյուղում՝ տատիս մոտ, ես ապրել եմ ընդամենը հինգ տարի: Դրանք, իհարկե, տղամարդու համար կարևոր տարիներ էին, որ կոչվում է պատանեկության շրջան, գուցե հենց դրա շնորհիվ է, որ ես շատ լավ եմ հիշում և սիրում եմ գուրիական գյուղերը, աշխատասեր և ուրախ գուրիացիներին»:*

Այս «աշխատասեր և ուրախ» մարդիկ սիրանքներ չեն գործում, բայց միշտ հավատարիմ են ընկերական հարաբերություններում, սիրում են իրար, նաև դատապարտում ու դաստիարակում, ազնվորեն ծառայում իրենց կոչմանը:

Նոդար Դումբաձեի մուտքը վրաց գրականություն մեծագույն իրադարձություն էր նաև այն առումով, որ նա առաջիններից մեկը ուշադրություն դարձրեց գյուղի մարդկանց, և դարձավ նրանց հոգ-

սերի ու հույսերի, իղձերի ու հաղթանակների, կենսասիրության ու բանաստեղծական ոգու մեկնաբանը:

«Ես, տատիկը, Իլիկոն և Իլարիոնը» և «Ես տեսնում եմ արևը» վեպերն արժանացան մրցանակների, վերածվեցին պիեսների և բեմադրվեցին Խորհրդային Միության ու արտասահմանյան մի շարք առաջատար թատրոններում, նրանց հիման վրա նկարահանվեցին գեղարվեստական ֆիլմեր:

Սրանց շարունակությունն է «Արևոտ գիշեր» երկը, որ լույս տեսավ 1967 թ.: Նախորդ վեպերում հանդես եկող Ջուրիկեյա-Սոսոիան այստեղ ուսանող է՝ Թեյմուրազ Բարամիձե: Դեպքերը տեղի են ունենում 50-ական թվականների սկզբին, երբ հասարակական կյանքում ստեղծվել էր բարդ ու հակասական կացություն:

Այս վեպում հեղինակը վերջացնում է իր հերոսի մանկապատանեկան շրջանը և ճամփում բանակ. հերոսը՝ Ավթանդիլ Ջաղելին, ակտիվ քաղաքացի է կամ այդպիսին պիտի դառնար, ուստի կյանքը լավ ճանաչելու համար անհրաժեշտ էր, որ անցներ նրա դպրոցներից մեկի բովոյվ: Այդպես երևան է գալիս «Մի՛ վախենա, մայրիկ» ստեղծագործությունը: Ի դեպ ասենք, որ, բանակի առօրյան ավելի լավ և ճիշտ նկարագրելու նպատակով, Նոդար Դումբաձեն վեց ամիս ծառայում է սահմանապահ զորամասերից մեկում: Ինչպես միշտ, նա հավատարիմ է իր ստեղծագործական սկզբունքին. նախ տեսնել, զգալ, ապրել ու վերապրել, հետո միայն գրիչ վերցնել ձեռքը: Ահա թե ինչ է գրում այդ առթիվ. *«Երբ ես որոշեցի սահմանապահների մասին գիրք գրել, ինձ առաջարկեցին այցելել ինչ-որ ուղեկալ: Բայց ես, անկեղծ ասած, այնքան էլ չեմ հավատում «գրական դեսանտներին», որ երեք օրվա մեջ մի ամբողջ վեպի նյութ են հավաքում: Եվ որպես սպա գնացի ծառայելու սահմանապահ զորամասում. մի քանի ամիս անցկացրի այնտեղ և, թվում է, փոքր-ինչ հասկացա ծառայությունը և ծառայող մարդկանց»:*

Կատարելով հայրենիքի հանդեպ ունեցած պարտքը, առնականանալով և կյանքից որոշակի դասեր առնելով՝ Ավթանդիլ Ջաղելին վերադառնում է տուն: Նա որոշել է դառնալ բժիշկ և ծառայել ժողովրդին:

* * *

1971-ին լույս է տեսնում «Սպիտակ դրոշներ» վեպը, որ այնքան տարակարծությունների տեղիք տվեց:

Գործողությունը տեղի է ունենում մի գորշ բանտախցում, որտեղ գտնվում են նախնական քննության համար կալանավորված տար-

բեր ազգության, տարիքի, կրթության, մասնագիտության, զբաղմունքի ու պաշտոնի մարդիկ, և որոնք անհամբեր սպասում են իրենց ճակատագրին ու դատավճռին: Այստեղ կան նաև կասկածանքով բանտարկվածներ, որոնցից մեկի՝ Ջագա Նակաշիծեի աչքով էլ դիտվում է բանտախցի ամբողջ անցուդարձը: Ովքե՞ր են նրանք՝ գողեր, ռեցիդիվիստներ, կաշառակերներ, սպեկուլյանտներ, այլասերվածներ, մարդասպաններ ...

Նոդար Դումբաձեն բացահայտում է նրանց արարքները պայմանավորող հանգամանքներն ու հոգեբանական դրդապատճառները: Գտնվելով բանտախցում, լիովին մեկուսացած իրենց «գործունեության» ոլորտներից, համախոհներից ու գործակիցներից, կտրված դրսի աշխարհից՝ նրանք խոստովանում են իրենց արարքներն ու համոզմունքները, սթափ ու զգաստ քննության առնում իրենց վարքուբարքը, դատապարտում իրար, նախատում, խստագույն պատիժներ կանխորոշում, ոմանց էլ մարդասիրաբար վերաբերվում:

Խղճի ու մարդկայնության դատ՝ ահա «Սպիտակ դրոշներ» երկի բարոյագիտական ու վիպական անկյունաքարը:

* * *

1970-ական թթ. Նոդար Դումբաձեն հասավ առավել մեծ հաջողությունների, որ պայմանավորված էր Վրաստանում տեղի ունեցող իրադարձություններով: Բանն այն է, որ նշված ժամանակաշրջանում ստեղծագործող մտավորականության առաջ խնդիր դրվեց համակողմանի արտացոլել մասսաների առօրյան, դրականը վեհացնելու հետ միասին ստեղծել նաև իրականությանն անհարիր երևույթներն այլաանող երկեր և այնպես, որ ներգործուն ուժ ունենան հասարակության հոգեբանության վրա: Իսկ քննադատությունից պահանջվեց հաղթահարել կաշկանդող արգելքները և ըստ արժանվույն գնահատել թե՛ հեղինակավոր գրողների և թե՛ սկսնակների գործերը: Նպատակին հասնելու համար հիմնադրվեցին գրական հանդեսներ, ավանախներ ու թերթեր, որոշ ամսագրեր ունեցան իրենց հավելվածները: Այս հանրաշահ վերաբերմունքը հատուցվեց բարձրարժեք երկերով: Գրողներն ասես լիցքավորվեցին ու մտան իրենց տարերքի մեջ:

70-ական թվականներին առաջատարը դարձյալ Նոդար Դումբաձեն էր: *«Ոչ ոք չի կարող ժխտել այն փաստը,- գրում է գրականագետ Գուրամ Գվերդիթելին,- որ 60-70-ական թթ. վրաց գրականության մեջ բոլոր ֆունդամենտալ տեղաշարժերը կապված են Նոդար*

Դոււնբաձեի անվան և ստեղծագործության հետ»:

1978 թ. լույս է տեսնում Նոդար Դոււնբաձեի «Հավերժության օրենքը» վեպը, որտեղ գրողն արծարծում է սուր և հրատապ պրոբլեմներ, ուրույն մոտեցումով (նաև համարձակորեն) բացահայտում իրականության արատներն ու չարիք ծնող երևույթները, նկարագրում մարդու հոգեկան վերակառուցման գործընթացը:

Բազմապլան այս վեպի հիմքում ընկած են բոլոր ժամանակների համար հույժ կարևոր դասեր ու օրենքներ, որոնցից հավերժության օրենքը արդարության, բարության, երջանկության օրենքն է, ժողովրդին ծառայելու, մարդկանց մենակությունից հեռու պահելու, համերաշխ ապրելու, նրանց հոգիները անմահացնելու օրենքը: *«Այս օրենքի էությունն այն է, որ... մարդու հոգին անհամեմատ ավելի ծանր է, քան մարմինը, այնքան ծանր, որ մարդն ինքնին չի կարող կրել այն: Ահա թե ինչու քանի դեռ կանք, ապրում ենք, պետք է ձեռք մեկնենք իրար, պետք է ձգտենք ինչ-որ կերպ անմահացնել մեկ-մեկու հոգին՝ դուք իմը, ես՝ ուրիշինը, նա՝ մի ուրիշինը, և այսպես շարունակ, որպեսզի այդ ուրիշի մահից հետո չորբանանք ու մենակության չղատապարտվենք այս աշխարհում...»:*

Երկում արծարծված է նաև անհատի ինքնագիտակցությունը խորացնելու խնդիրը:

«Հավերժության օրենքը» 1980 թ. նշանավորվեց Խորհրդային Միության բարձրագույն՝ Լենինյան մրցանակով:

* * *

1970 թվականից մինչև մահը Նոդար Դոււնբաձեն գրեց քսան պատմվածք. դա հաճելի անակնկալ էր բազմամիլիոն ընթերցողի համար:

Դոււնբաձեն այդ դժվարագույն ժանրում նույնպես հավատարիմ է իր ոգուն ու նախասիրությանը, անդրադառնում է չարի և բարու, անհատի ու միջավայրի, ոգու և բնության, կյանքի և մահվան, սիրո և կարոտի, թախծի և ուրախության, հիասթափության ու բարոյական հաղթանակի փոխկապվածության հարցերին: Գրողը ջանում է մարդկանց դաստիարակել գեղեցիկի զգացողությամբ, անշահախնդիր օգնության, արժանապատվության, ազատատենչության ու արդարամտության ոգով: Այսպիսի հարցեր են շոշափվում հատկապես «Արևը», «Ապերախտը», «Դիդրո», «Արյունը», «Ցլամարտ», «Շունը», «HELLADOS», «Աստված, ինչի՞ համար» պատմվածքներում: Հատկանշական է, որ բոլոր դրական հերոսները՝ Գուդուլի,

Դիդրո, Քիշվարդի, Սպիրիդոն, Յանգուլ, Գևորգ, մեռնում են: Մեռնում են տարբեր հանգամանքներում, բայց, որպես օրենք, շրջապատի հետ կապի մեջ: Այս միջավայրն ու շրջապատը, բուսական ու կենդանական աշխարհը՝ արևը, լուսինը, ծովը, ծառը, ծաղիկը, շողը, նույնպես խոսում են, խորհում, մտահոգվում, թառանջում, թախծում, հուզվում ու ցավում մարդու ճակատագրի համար:

Գրողի անհատականությունն ընդգծվում է նաև նրանով, որ ամեն բնույթի հարց շոշափելիս անխտիր հունոր է շաղախում: Հունորով է նկարագրում նաև մարդու վախճանը. մահը անխուսափելի է, ուստի պետք է դիմավորել սառնասրտորեն, հանգիստ, արցունքի ու ժպիտի շաղախով: Հիշենք, թե ինչ անվորով հանգստությամբ է հարյուրամյա Գուդուլի Բերեժիանին («Ապերախտը») ինքնասպանությունից առաջ հրաժեշտ տալիս մարդկանց, կենդանիներին, բուսական աշխարհին, արևին, գինու կարասին ու իր սրտին: Այսպես նաև Քիշվարդին, Սպիրիդոնը, Դիդրոն, Գևորգ քեռին և ուրիշներ: Իսկ ինչպիսի՞ թեթևությամբ է թռանն ու հարևաններին հրաժեշտ տալիս «Ես, տատիկը, Իլիկոն և Իլարիոնը» վեպի հերոսուհին՝ Օլգա տատը: Ի լրումն այս ամենի, Նոդար Դումբաձեի «Սիրտը» ակնարկից բերենք մի հատված, որտեղ նա, իրեն հատուկ հունորով, խոսում է սրտանկանի հերթական ինֆարկտին հաջորդած ժամերի մասին. *«Գրեթե մեռած ինձ տարան Սուխումիի երկրորդ հիվանդանոց: ...Աչքերս բացում են ու տեսնում՝ հրեա, հույն, հայ, ռուս, վրացի, բոլորը կանգնել են սնարիս մոտ: Մտքովս երբեք չէր անցել, որ մահն էլ ինտերնացիոնալիստ է եղել...»*: Ընկերները վկայում են, որ բառացիորեն վերջին շնչում Նոդար Դումբաձեն նստել է անկողնում և երգել... Այսպիսին էր Նոդար Դումբաձեն կյանքում, այսպիսին է և գրականության մեջ: Նա կարողանում է ամենալուրջ և ամենացավոտ հարցերի մասին խոսել արցունքախառն ժպիտով: Իսկապես, դժվար է որոշել, թե որտեղ է սկսվում կոմիկականը, կամ որտեղ է վերջանում ողբերգականը: Ճիշտ է նկատվել, որ ողբերգական կացությամբ առաջացած արցունքներն իսկույն փոխարկվում են ծիծաղի արցունքների և, հակառակը, կոմիկականից առաջացած արցունքներդ չցամաքած՝ կոկորդ սեղմում է ողբերգականի հեղձուկը:

Քննադատները հավաստում են, որ գրական հունորը իր իսկական բնույթով վրաց գրականություն է բերել Նոդար Դումբաձեն: Սա, անշուշտ, ճիշտ է, բայց ճիշտ է և այն, որ նույն հունորը գրականությունից վերադառնում է կյանք:

Մի առիթով Նոդար Դումբաձեն ասել է. «Հայերը և վրացիները հնագույն կուլտուրայի ժողովուրդներ են: Մենք միասին ենք քայլել պատմության քառուղիներով: Մենք հարևաններ ենք ֆիզիկապես, մինչդեռ ոգով, պաթոսով, արարմամբ նույն էությունն ենք: Մեր հարազատությունը ճակատագրով է տրված մեզ»:

Եվ նա հարազատի պես էր սիրում Հայաստանը, հայ ժողովրդին, հայ գրականությունն ու մշակույթը: Երկար տարիներ ջերմ կապեր էր պահպանում հայ գրչակից բարեկամների հետ: Նոդար Դումբաձեի համար հայ ժողովրդի հաջողությունն ու առաջընթացը բաղձալի էին: Նա հետևում էր հայ իրականությանն առնչվող գրեթե բոլոր իրադարձություններին, հաճախ մասնակցում ու հանդես գալիս ելույթներով: Ահա մի պատահիկ 1981 թ. մայիսին Սայաթ-Նովայի Վարդատոնի նրա բացման խոսքից. «Երեք հարյուր տարի է, որ երեք ազգերս ցանկանում ենք մեր մեջ բաժանել Սայաթ-Նովային, բայց չենք կարողանում, քանզի նա՝ Կովկասի այդ որդին, մեկն է, բայց իր մեջ ամփոփում է մեր երեք ժողովուրդների մաքրամաքուր հոգին, միսն ու արյունը: ...Մեկ այլ ազգի մեջ հազիվ թե գտնվի ավելի դեմոկրատ, ավելի ժողովրդական, ընդհանուրի կողմից առավել սիրված ու ճանաչում գտած այնպիսի երգիչ, ինչպիսին Սայաթ-Նովան է: Իսկ դա հանճարեղության առաջին նշանն է ու բնորոշ հատկանիշը»:

Մի ուրիշ խոսք՝ ասված Վիլյամ Սարոյանի աճյունասափորը Երևան տեղափոխելու կապակցությամբ, որ նաև խոստովանանք է գրական ազդեցության և պարտքի զգացում՝ հոգևոր ուսուցչի հանդեպ. «Ասված խոսք է՝ մարդ կա իր տնից է գնում, մարդ կա՝ իր երկրից, մարդ էլ կա՝ աշխարհից... Սարոյանը աշխարհից գնաց... Մեծ էր նրա վիշտը՝ հայրենիքի կարոտի ցավը, ցավ, որ այլ բառով կոչվում է «նոստալգիա»: Նա գիտեր, որ այդ ցավը կամոքվի միայն հայրենի հողում, ուստի և շատ հասկանալի է, որ նա կտակեց իր աճյունի մի մասը հանձնել հայրենի հողին: Դրանով մեծ մարդասերը միավորեց իր սիրտը, ոգին և մարմինը: Հասավ այն բանին, ինչին ձգտում էր իր գրքերում. հայրենի փի հասավ»:

Շիրազի մասին. «Դեպի Շիրազը տանող ճանապարհը Հայաստանն է, դեպի Հայաստան տանող ճանապարհը՝ Շիրազը: Այսքան միաձուլյ, այսքան միասնական քիչ է պատահում»:

Սրանք պերճաշուք խոսքեր չեն, այլ գնահատականներ, որոնցով նա արժևորում է մեր ազգային մեծերի և ժողովրդի փոխադարձ

սերը: Այսքան դիպուկ բնութագրումները նաև հուշում են, որ ուսումնասիրել է նրանց ստեղծագործությունները, կատարել որոնումներ ու վերլուծումներ: Սրանք նաև ոգու թելադրանք են, սրտաբուխ մտքեր ու խորհրդածություններ:

Սիրո գինը սերն է, ասում է ժողովրդական խոսքը: Ուրեմն օրինաչափ է, որ հայ ընթերցողը սկզբից ի վեր ուշադրությամբ հետևել է Դումբաձեի գրական կյանքին և նրա լավագույն երկերը թարգմանել ու դարձրել իր սեփականությունը: Սկսած 60-ական թվականներից Երևանի և Թբիլիսիի հայկական պարբերականներում տպագրվում են գրողի պիեսները, պատմվածքներն ու մանրապատումները, շատ գործեր ներկայացվել են մեր հանրապետության թատրոններում. ռադիոն և հեռուստատեսությունը բեմադրել են դրամատիկական երկերը: 1985 թ. հայկական հեռուստատեսությունը տողերիս հեղինակի սցենարով ստեղծեց վավերագրական կինոնկար: «Սովետական գրող» (այժմ՝ «Նաիրի») հրատարակչությունը 1978 և 1983 թվականներին տպագրեց «Սպիտակ դրոշներ» և «Հավերժության օրենքը» վեպերը, 1987-ին՝ երկերի ընտրանին՝ երկու հատորով, իսկ 1990-ին՝ պատմվածքների լիակատար ժողովածուն և «Կուկարաչա» վիպակը («Արևիկ»): Մեծ ակտիվություն էր հանդես բերում նաև մեր գրականագիտական միտքը. նկատի ունենալով Հրանտ Թամրազյանի «Ցաված սրտի և լուսավոր երազների գիրքը» հոդվածը, որ գրողի ստեղծագործության լավագույն վերլուծումներից է առհասարակ, վստահորեն կարելի է ասել, որ մեր իրականության մեջ արդեն իսկ դրված են Ն. Դումբաձեի գրական ժառանգության ուսումնասիրման հիմքերը: Այս ամենը հավաստում է, որ հայ գրական միտքն արժանին է հատուցում մեր ժողովրդի, մեր երկրի, գրականության ու արվեստի բարեկամի հիշատակին:

* * *

Պատահիկներ հուշերից. - Նոդար Դումբաձեն XX դարի 60 -70-ական թվականների ականավոր գրողներից էր, համաշխարհային մեծություն: Նրա երկերը վաղուց դուրս են եկել ազգային շրջանակներից և դարձել շատ ու շատ ժողովուրդների սեփականությունը: Սա չափազանցություն չէ, քանզի նրա վեպերը, վիպակները, մեկը մյուսին գերազանցող պատմվածքները, դեռ թանաքը չչորացած, թարգմանում և կարդում էին (հիմա էլ կարդում են) երկրագնդի այն անկյուններում, որտեղ կա գիր ու գրականություն, որտեղ ունեն գեղեցիկի ու բարու զգացողություն. Դումբաձեի հերոսները նվաճեցին աշ-

խարհը և դեռ շարունակում են իրենց հաղթարշավը տարբեր մայր-
ցամաքներում:

Այս աննախադեպ հաջողությունը պայմանավորված էր այն իրո-
ղությանը, որ Դումբաձեն գրում էր անկեղծորեն, առանց մտացածին
իրավիճակների, առանց կեղծ ու պատիր հնարանքների: 1960-1970-
ական թվականներին նա գեղարվեստական երկի նյութ էր դարձնում
այնպիսի թեմաներ ու երևույթներ, ինչի մասին իր գրչակիցները չէին
համարձակվում բարձրաձայնել անգամ ընկերական միջավայրում:

...Հավանաբար քչերին է հայտնի դժբախտությունների այն շա-
րանը, որ բաժին հասավ Նոդար Դումբաձեին. որք մանկություն, բա-
րոյական տառապանք, որ կրել է իբրև թե ժողովրդի թշնամի ծնողնե-
րի պատճառով, հասուն տարիքում ամբաստանվել է սպանության
մեղադրանքով և նետվել բանտ, գրկվել է հնգամյա որդուց, երկու
անգամ սրտամկանի ինֆարկտ է տարել, իսկ վերջին տարիներին
անբուժելի հիվանդությունը նրան անընդհատ գուժում էր, որ պահ
առ պահ մոտենում է վախճանը: Բայց այդքանից հետո էլ նա հոգու
կրակը բաշխում էր բոլորին, վատը լավ տեսնում, մնում անքեն,
ազնիվ ու բարի թե՛ երկերում, թե՛ առօրյայում, թե՛ օրհասական պա-
հերին...

Այո՛, Նոդար Դումբաձեն լուսեղեն տաղանդ էր գրականության
մեջ, լուսեղեն էր նաև նրա մարդկային, քաղաքացիական նկարա-
գիրը, որ ավելի ցայտուն է դառնում տարիների հեռավորությունից:

Առանց վերապահումի կարելի է ասել, որ մեծ հայասեր էր նաև,
քանզի ուշիուշով հետևում էր հայ ժողովրդի կյանքում տեղի ունե-
ցող անցուդարձերին, հետաքրքրվում էր գրական-մշակութային նո-
րույթներով և անկեղծորեն ուրախանում Հայաստանի հաջողու-
թյուններով: Իր ջերմագին սերը նա վավերացրել է՝ գրեթե բոլոր եր-
կերում հանդես բերելով հայազգի համակրելի հերոսներ՝ իրենց
բնորոշ հոգեբանությամբ, սովորույթներով, հոգսերով ու հաջողու-
թյուններով, թերություններով ու ծիծաղաշարժ կողմերով, աշխատե-
լու և արարելու եզակի ունակությամբ: Նրանց խոսքն էլ համեմված է
ժողովրդական բառ ու բանով, (հիշենք Վանիչկային, Արտավազդին,
Գևորգին, Ռուբենին, Տիգրանին և ուրիշների): Այդ քայլով նա խախ-
տեց ազգային գրականության մեջ (կրոնական, պատմագիտական,
գեղարվեստական, հրապարակախոսական) հարյուրամյակներ
առաջ սկիզբ առած մի տխուր ավանդույթ. դրական ոչ մի հատկա-
նիշ չնշմարել հայ մարդու մեջ:

Հանդիպումներից մեկի ժամանակ համարձակվեցի հիշեցնել

այդ մասին և թվարկեցի XI-XX դարերն ընդգրկող տասնյակ երկերի ու հեղինակների անուններ. նախ դառնացած խոստովանեց, որ բավականին թանկ է հատուցում իր հայասեր լինելու համար, ապա ավելացրեց. «Բազմիցս առիթ եմ ունեցել ասելու և կրկնում եմ՝ հայ ժողովրդի հանդեպ իմ սերը իմ հոգու հարստությունն է, և շատ խոր ու զուլալ եմ ակունքները...»: Այդ զրույցից մի քանի օր անց «Լիտերատուրուլի Սաքարթվելո» («Գրական Վրաստան») շաբաթաթերթում լույս տեսավ վրացատառ հայերենով վերնագրված «Աստված, ինչի՞ համար» պատմվածքը, որ, իմ խորին համոզմամբ, գրողի լավագույն երկերից է: Այս սքանչելի երկը, կարելի է ասել, բարության, կարեկցանքի ու գեղեցկության խտացում է, ինչպես և նրա բոլոր գործերը:

Ինձ համար հաճելի է, որ բնագրով ըմբռնված եմ նրա ստեղծած արժեքները և դրանց հաղորդակից դարձնում այդ հնարավորությունը չունեցող հայ ընթերցողին, ասել է թե՛ Նոդար Դումբաձեի թարգմանիչը լինելու պատիվն ունեն: Թարգմանել եմ երեք վեպ, մեկ վիպակ, քսան պատմվածք, մի քանի ֆելիետոն, նրա մասին գրել եմ հոդվածներ, իսկ իմ սցենարով նկարահանված 70 րոպե տևողությամբ վավերագրական ֆիլմը բազմիցս ցուցադրվել է թե՛ հայկական և թե՛ վրացական հեռուստատեսությամբ (ռեժիսոր՝ Արտակ Արզումանյան):

Տարիների շարունակ հանդիպումներ եմ ունեցել այդ խոշոր գրողի ու մեծ մարդասերի հետ, հրավիրվել եմ տուն, աղ ու հացի մատել, եղել զրուցակիցն ու մտերիմը: Մասունքի պես պահում-պահպանում եմ ստացածս գրքերը, նամակները, հեռագրերը, լուսանկարները: Այսքանից հետո զուցե թե ինձ իրավունք է վերապահվում մի քանի հուշապատառիկ ներկայացնել ընթերցողին:

* * *

Հայաստանի գրական և ոչ գրական հանդեսներում հաճախ տպագրվում էին նրա պատմվածքներից: Հոնորարը կանոնավոր ուղարկվում էր: Մի անգամ գրասեղանի դարակից հանեց «Սովետական գրականություն» ամսագրի մի համար, որտեղ տպագրված էին իր պատմվածքներից մի քանիսը՝ տողերիս հեղինակի թարգմանությամբ, և ասաց.

- *Թարգմանված պատմվածքների համար այսչափ հոնորար ուղարկել օտար գրողի, թեկուզ դա լինի Նոդար Դումբաձեն, նշանակում է կողոպտել, պարզապես կողոպտել սեփական հեղինակներին:*

Խնդրում և հանձնարարում են քեզ. իմ անունից շնորհակալություն հայտնիր ինձ տպագրող բոլոր խմբագիրներին և ասա, որ Նոդար Դումբաձեի համար ամենամեծ պարգևը և ամենաբարձր հոնորարը իր երկերի թարգմանություններն են իր եղբայր ժողովրդի լեզվով:

* * *

«Սովետական գրող» հրատարակչության թարգմանական գրականության խմբագրության բաժնի վարիչ Դորա Եսայանի հանձնարարությամբ մեկնեցի Թբիլիսի՝ Նոդար Դումբաձեի համաձայնությունն առնելու և համապատասխան պայմանագրի շուրջ բանակցելու՝ Լենինյան մրցանակի արժանացած «Հավերժության օրերնքը» վեպը հայերեն թարգմանելու համար:

Հարցրի՝ ինչո՞վ բացատրել, որ խորհրդային կառավարությունը ոչ միայն չկասեցրեց, ոչ միայն չարգելեց կոմունիստական հասարակարգն այսչափ սուր քննադատող վեպի տպագրությունը, այլև արժանացրեց երկրի բարձրագույն մրցանակին:

- *Ամենայն հավանականությամբ ամեն հանրապետությունից մի գրողի թույլատրվում է քննադատական խոսք ասել,-* ժպտաց Նոդար Դումբաձեն,- *ձերոնցից՝ Հրանտին, այնտեղ՝ Չինգիզին, ռուսներից՝ Վասիլիին, մերոնցից էլ՝ երևի թե ինձ...*

Նրա խոսքն ընկալեցի այսպես՝ անկախ իրավակարգում գործող օրենքներից, անկախ գրաքննչական ավերումներից ու պարտադրվող կաղապարներից, քանքարը, պատասխանատվությունը ժողովրդի առաջ և քաղաքացիական պարտքն ու արիությունը դառնում են անտրոհելի, ինչպես անտրոհելի է սուրբ երրորդությունը:

* * *

Նոդար Դումբաձեն Վրաստանի գրողների միության իր աշխատասենյակում չէր: Ասացին՝ հիվանդ է: Չանգեցի տուն, հարցրի առողջությունից և ուզեցի պայմանավորվել հանդիպման տեղի և ժամանակի մասին:

- *Ի՞նչ տեղ ու ժամանակ, արի՛ տուն և, եթե ժամանակ ունես, հենց հիմա:*

Գնացի:

- *Մեկ խորհուրդ՝ ավագի պահանջ-իրավունքով՝ իմ հայ եղբայրը իմ տուն պիտի գա առանց զանգի ու նախապայմանի, հյուր կունենամ, չեմ ունենա, անկողնում կլինեն թե ոտքի վրա, իմ դուռը միշտ բաց է քո առաջ...*

Եվս մեկ անգամ խոսք եղավ հայազգի հերոսների մասին: Ասացի, որ պատկերասրահը թեև հարուստ է ու անչափ գեղեցիկ, բայց և այնպես ինձ շատ է դուր գալիս Վանիչկան (այդ ժամանակ «Աստված, ինչի՞ համար» պատմվածքը լույս չէր տեսել): այդ կերպարը հրաշալի տպավորություն է թողնում. գունեղ է, կենսական ու համոզիչ: Վանիչկայի և վեպի գլխավոր հերոսի՝ պատանի Ավթանդիլի հարաբերությունը հայրուորդիական է, թերևս՝ ավելի ջերմ ու անմիջական: Մի՞թե այդչափ խոր և հանգամանալից է ուսումնասիրել հայ մարդու հոգեբանությունը:

- Բատոնո Նոդար,- ավելացրի կատակով,- մեր ժողովրդի թշնամիներն այնքա՞ն շատ են, իսկ բարյացակամներն այնքա՞ն քիչ, որ այդ քչերի երակներում անպայման ուզում ենք հայի արյուն հայտնաբերել: Չեզ նման ազնվագարմ վրացու երակներում՝ նույնպես:

Աշխարհի բոլոր «հայերին», սկսած Նոյից, մեկառմեկ թվարկելուց հետո, ծիծաղը հագիվ զսպելով, ասաց.

- *Փառասիրությունը սահմաններ չի ճանաչում, և շատ ունեցողն է ավելիին ձգտում: Մի՞թե քիչ են հանրահայտ հայերը: Ինչ վերաբերում է իմ հայ հերոսներին, ասեմ, որ այստեղ մտացածին ոչինչ չկա, առանց բացառության, նրանք կյանքից են առնված, բոլորին ճանաչել են շատ լավ, նույնիսկ անուն-ազգանունները չեմ փոխել: Իսկ քո հավանած Վանիչկան իմ հարազատ մորաքրոջ ամուսինն էր. ուսանողական բոլոր հինգ տարիներին ապրել են նրանց հետ, նույն հարկի տակ: Ահա այդքանով ես «հայ» եմ:*

Նոդար Դունբաձեն չէր հետաքրքրվում՝ իրենից ինչ կամ ինչպես են թարգմանում: Ես էլ, անկեղծ ասած, սովորություն չունեի և չունեմ թերթը, ամսագիրը, նույնիսկ առանձին գրքով լույս տեսած երկերը հեղինակներին ուղարկելու: Մի անգամ, սակայն, խոստովանեց, որ ռուսերենից բացի, այդուհանդերձ որոշ թարգմանությունների վերաբերյալ այլազգի մտերիմներից կարծիք է հարցնում: Ասաց, պատուհանի գոգից վերցրեց «Գարուն» ամսագրի երկու համար, մեկնեց ինձ ու գրեթե վրդովված բացականչեց.

- *Սա ի՞նչ բան է, եղբայր, կես միլիոն հայ գրում-կարդում է վրացերեն, տասնյակ բանաստեղծներ ու արձակագիրներ հավասարապես ստեղծագործում են թե՛ հայերեն և թե՛ վրացերեն, փա՞ռք Աստծու, մեզ մոտ էլ, ձեզ մոտ էլ կան բարձրորակ, հեղինակավոր*

թարգմանիչներ, մինչդեռ վրացի գրողին Երևանում թարգմանում են միջնորդ լեզվից: Ես ինչպե՞ս շնորհակալ լինեմ նման աշխատանքի համար...- Ապա փոքր-ինչ դադարից հետո ավելացրեց,- թարգմանիչը գրել է, որ վեպը լույս է տեսնելու առանձին գրքով, խնդրում և պարտավորեցնում են քեզ, եթե նույնիսկ տպարանում լինի, անպայման վերցնում ես, խմբագրում և հետո միայն հանձնում տպագրության:

Խնդրո առարկա վեպում անհատական և սոցիալական ոճավորման նպատակով հեղինակը գործածել է բազմաթիվ դարձվածքներ, բարբառային խոսքեր, ժարգոնային արտահայտություններ, նաև բանաստեղծություններ, զգալի մասը՝ ռուսերեն և ռուսատառ: Տեսնելով ռուսերենի հետք չկա հայերեն թարգմանության մեջ՝ զանգել էր գրական-թատերական գործիչ Սուրեն Ավչյանին և խնդրել կարծիք հայտնել: Նա՝ հայտնի հայերենից վրացերեն և վրացերենից հայերեն թարգմանություններով, չափազանց ուղղամիտ և նույնքան էլ անաչառ ու սկզբունքային մարդ, ինչպես ասում են՝ տեղը տեղին գրախոսել, գնահատել էր այդ աշխատանքը:

* * *

Փարիզից ստացել էր «Հավերժության օրենքի» ֆրանսերեն թարգմանությունը: Կազմի վրա նստարան էր, նստարանի մի ծայրին վեպի հերոսներից քահանա Իորամն էր, գլխավերևում՝ խաչ, մյուս ծայրին՝ կոմունիստ Բաչանան, գլխավերևում՝ մուրճ ու մանգաղ: Ոգևորված խոսեց, գոհունակություն հայտնեց սրամիտ ձևավորման համար, ապա ժպտալով ավելացրեց.

- Կարմիր պաստառի վրա՝ խաչ և մուրճ ու մանգաղ: Պատկերացնո՞ւմ ես՝ սա ինչ է նշանակում. մեր կառավարությունն այս մասին հենց որ տեղեկացավ, նախ գրքի տպաքանակն այրել կտա, հետո էլ ինձ տաժանակրության կաքսորի Սիրիր:

* * *

«Սովետական գրականություն» ամսագրի գլխավոր խմբագիր Ստեփան Կուրտիկյանը հանձնարարել էր Դումբաձեից մի քանի պատմվածք թարգմանել, իսկ հեղինակից խնդրել լուսանկար և հայ ընթերցողին հղված խոսք և ներկայացնել իրեն:

Հիվանդ էր: Հրավիրեց տուն: Միառժամանակ գրուցեինք, հետո զգալով՝ հոգնում է, վեր կացա, որ հրաժեշտ տամ: Մոտեցավ գրասեղանին, դարակից հանեց այդ օրերին լույս տեսած իր հերթական

գիրքը, մեկ լուսանկար և երկուսն էլ պատշաճ մակագրություններով նվիրեց ինձ: Գրածներն աչքի անցկացրի, շնորհակալություն հայտնեցի ջերմ խոսքերի համար, բայց զարմանքս չկարողացա թաքցնել՝ այնքա՛ն մեծ էր տարբերությունը լուսանկարի Դումբաձեի և իրական՝ իմ առջև կանգնած Դումբաձեի միջև:

- *Մի՛ զարմանա,-* ասաց՝ նկատելով հայացքիս հարցականը,- *նկարվելիս ծանրքաշային էի, սրտամկանի ինֆարկտից հետո դարձել եմ թեթևագույն քաշի:*

- Թեկուզ այդպես,- պատասխանեցի,- Դուք երկու անգամ արդեն գետնել եք այդ հրեշի՞ն, նա այլևս չի համարձակվի մոտենալ Ձեզ:

- *Է՛հ, եղբա՛յրս, մոռանում ես, որ երրորդ ռաունդ էլ կա, իսկ իմ ուժերն սպառվում են. պարտությունս անխուսափելի է:*

Երրորդ՝ վերջին ռաունդը տեղի ունեցավ 1984 թ. սեպտեմբերի 14-ին:

«Կամուրջ - 2008»

(Վրաստանի գրողների
ստեղծագործական միություն)
Թբիլիսի, 2008, էջ 246-253:

ՀՈԴՎԱԾՆԵՐ

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ
ԹԲԻԼԻՍԻ ԴԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ
(համառոտ ակնարկ)

Թբիլիսիի պետական համալսարանը հիմնադրվել է 1918 թ. հունվարի 26-ին՝ վրաց արքա Դավիթ Շինարարի (1073-1125) հիշատակի օրը: Չնայած այդ ժամանակ համալսարանն ուներ միայն իմաստասիրական ֆակուլտետ, բայց առաջին իսկ օրից նրա ուսումնական ծրագրերում մտցվել են հայագիտական առարկաներ, մասնավորապես՝ գրաբար (դասավանդել է Ալակի Շանիծեն), ժամանակակից հայոց լեզու (Դմիտրի Դիվչիձե), հայ հին պատմական գրականություն (համալսարանի հիմնադիր անդամ և իմաստասիրական ֆակուլտետի ղեկան Իվանե Ջավախիշվիլի):

Իվանե Ջավախիշվիլին (1876-1940) հայագիտության մեջ մասնագիտանալու համար Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների ֆակուլտետում ուսանելիս աշակերտել է Նիկողայոս Մառին: 1903-1917 թթ. նույն համալսարանում եղել է հայ-վրացական բանասիրության ամբիոնի պրիվատ դոցենտ և դասավանդել է հայագիտական առարկաներ: Գիտական առաջին մենագրությունը՝ «Հին Վրաստանի և հին Հայաստանի պետական կառուցվածքը» (հատոր I), հրատարակել է դեռևս 1905 թ. ռուսերեն, որտեղ քննության է առել երկու երկրների վարչական, էթնիկական, տոհմաբանական և սոցիալական խնդիրներ:

1908 թ. տպագրել է «Յոթերորդ դարի սկզբին վրաց և հայոց եկեղեցիների բաժանման պատմությունը»: Այստեղ էլ վերլուծել է «Գիրք թղթոց» և Ուխտանեսի «Պատմություն բաժանման վրացի հայոց» երկերը:

Թբիլիսիի պետական համալսարանում աշխատելու տարիներին Իվ. Ջավախիշվիլին հրատարակել է «Մի էջ գյուղացիական շարժումների պատմությունից հին Հայաստանում» (հայ. հրատ., 1936), «Նյութեր Հայաստանի սոցիալական շարժումների պատմու-

* ԾօՍ-ինօճ մօԿթեՇննօՒՒօճՅ .ՇիֆօԿ ԿեօՇաէՇԿ ՆՇՍԿՅ՝ՇնԱ »Օ»É շօԿթեՇննօՒՒօճ Յ՝ 1/2ԿՅԿ, ինֆեճ.»՝ ՍՇԻՒՒՒօճ ԾօէԱ (1865-1934): Ս՝ ՆՇՍԿՅ՝ՇնԿ շ Յ՝ "Тексты и разыскания армяно-грузинской филологии" ՍօԿԿՅ՝ՇնՇ, ճն էճօՍե շ ի»É1900-1913 ԱԱ.:

թյունից IX դարում XIII դարի սկզբներին» (հայ. հրատ., 1937), «Հայ հին պատմական գրականություն» (Գիրք I, 1935, վրաց.) աշխատությունները:

Նա անդրադարձել է նաև «Սասունցի Դավիթ» հայ ժողովրդական վեպին և հողավածներ տպագրել Հայաստանի մամուլում¹:

Նշվածից բացի, Իվ. Ջավախիշվիլին իր աշխատություններում² զգալի տեղ է հատկացրել նաև Հայաստանի և հայ ժողովրդի հին և միջնադարյան քաղաքական ու եկեղեցական պատմությանը, Հայաստանում սոցիալական շարժումների պատմությանը, հայ աղբյուրագիտության, Հայաստանի պատմական աշխարհագրության, հայ պատմագիտական երկերի ու պատմիչների կյանքի առանձին դրվագների լուսաբանմանը: Բարձր է գնահատել հայ հին և միջնադարյան պատմագրությունը՝ հարևան երկրների՝ դրանց թվում և Վրաստանի «...պատմության համար ունեցած առանձնահատուկ նշանակության համար»: Նա հաճախ է շեշտել, որ Վրաստանի պատմության, վրաց մշակույթի և վրաց լեզվի գիտական ուսումնասիրությունը լիարժեք չի կարող լինել առանց հայկական աղբյուրների ու հայագիտությանը կատարելապես տիրապետելու:

Իվ. Ջավախիշվիլին ոչ միայն գրչով, այլև գործով հաստատել է հայ ժողովրդի, նրա պատմության ու մշակույթի հանդեպ ունեցած իր համակրանքը: Այսպես՝ երբ հայ մտավորականները որոշել են Թբիլիսիից Երևան տեղափոխել ազգագրական ընկերության հայկական հավաքածուները, վրացի շատ պաշտոնյաներ ու գործիչներ ոչ միայն ընդդիմացել են և արգելել, այլև փորձ են արել տեր դառնալ այդ հարստությանը: Ջավախիշվիլին հայրենակիցներին դատապարտել է հայ ժողովրդի շահերն անտեսելու համար և հիմնավորել, որ հայերն են միակ ու իրավական տերերը իրենց ազգային հարուստության:

Համալսարանը հայագիտական հետազոտությունների կենտրոն դարձնելու նպատակով Իվ. Ջավախիշվիլին 1918 թ. հոկտեմբերին աշխատանքի է հրավիրել տակավին երիտասարդ, բայց արդեն ճանաչված գիտնական, Օդեսայի համալսարանի 1913 թ. շրջանավարտ, վիրահայ Լևոն Մելիքսեթ-Բեկին, միաժամանակ ընդլայնել է հայագիտական դասընթացների ցանկը. ուսուցանվող առարկաներին ավելացրել է հայ ժողովրդի պատմություն, հայ գրականության պատմություն, հայ իրավագիտության պատմություն, հայ բարբառագիտություն, տեքստաբանություն և այլն, առհասարակ վրաց իրականության մեջ նա ավելի ընդլայնեց հայ-վրացական բանասիրու-

թյան շրջանակները՝ նրանում առաջինը ներդնելով զուտ պատմական թեմատիկա: Սեփական կադրեր ունենալու նպատակով Երևան է գործուղել բանասիրական ֆակուլտետի առաջին շրջանավարտներից մեկին՝ Իլյա Աբուլաձեին, որի անվան հետ է կապվում Վրաստանում հայագիտության առավել ակտիվ զարգացումը:

Իլյա Աբուլաձեն (1901-1968) աշակերտել է մեծանուն Զրաշյա Աճառյանին: (Ի դեպ՝ Աճառյանը գովեստով է խոսում իր սանի մասին: Նա գրում է. «Մեր համալսարանում վրացի երիտասարդ Իլյա Աբուլաձեն սովորեց ինձ մոտ հայոց լեզվի պատմություն: Ավարտելուց հետո գնաց Թիֆլիս և աշխարհաբար լեզվով մի նամակ գրեց ինձ. նամակը ցույց տվի ռեկտոր Զակոբ Զովհաննիսյանին, հիացավ, թե ինչպես վրացին կարող է այսքան հայերեն իմանալ: Ես ասացի, թե նա գրաբար էլ գիտե: Խնդրեց, որ դիմեն իրեն և մի հատ էլ գրաբար նամակ խնդրեմ, որ գրի: Ստացա մի բաց նամակ գրաբար լեզվով, կարդաց ռեկտորը և ավելի հիացավ. մեր ընկերներից շատերին ցույց տվեցի նույն նամակը, ամենքն էլ զարմացան և ուրախացան...»³:

Վերադառնալով մայր բուհ՝ սկզբում նա աշխատել է հայոց լեզվի և գրականության ամբիոնում, ապա տեղափոխվել է ակադեմիայի համակարգ, հիմնադրել ձեռագրերի ինստիտուտը, որտեղ և պատրաստել է վրաց հայագետների մի ամբողջ փառանգ:

Հայագիտության համար առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում վերջինիս «Զովհաննես Դրասխանակերտցի» (1937) և «Հայ-վրաց գրական կապերը IX-X դարերում» (1944) ուսումնասիրությունները: Նա էր, որ 1937 թ. Մեսրոպ Մաշտոցի անվան ձեռագրերի ինստիտուտում՝ Սատենադարանում, հայտնաբերեց աղվանական գիրը (N 7117 ձեռագիր):

ճանաչված հայագետներից էր Թբիլիսիի պետական համալսարանի հիմնադիր անդամ, ՎՅ ԳԱ ակադեմիկոս, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ Ակակի Շանիձեն (1887-1987): Նա սովորել է Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների ֆակուլտետում, ապա նույն համալսարանի հայ-վրացական բանասիրության մագիստրատուրայում: Հայագիտության գծով ունկնդրել է Ն. Մառին (հայ-վրացական բանասիրություն) և Նիկողայոս Ադոնցին (Հայաստանի պատմություն և հայոց լեզու):

1914 թ. Շանիձեն գործուղվել է Էջմիածնի Սատենադարան, որտեղից մեկնել է Ալեքսանդրապոլ (Գյումրի)՝ տեղի բարբառը ուսում-

նասիրելու և ժամանակակից հայոց լեզվի իր իմացությունը խորացնելու նպատակով:

Ակակի Շանիձեն թբիլիսիի պետական համալսարանում դասավանդել է գրաբար, զբաղվել հայոց և վրաց լեզուների զուգադրական քերականությամբ, հայ բարբառագիտությամբ, դրանց վերաբերյալ հրատարակել է հոդվածներ և ուսումնասիրություններ: Նա էր, որ հայոց լեզվի քերականական համակարգը ցանկացած զուգադրել վրաց լեզվի համար իր իսկ կողմից ստեղծված սկզբունքներին (հետագայում բայական համակարգի համար նույնը կրկնեց պրոֆ. Իվ. Շիլակաձեն, ինչը, բնականաբար, մերժեցին հայ լեզվաբանները):

1922 թ. Իվ. Ջավախիշվիլին՝ իբրև համալսարանի ռեկտոր (այդ պաշտոնը նա վարել է 1919-1926 թթ.), նոր առաջընթաց քայլ է կատարել՝ հիմնադրելով հայագիտության ամբիոն: Գիտխորհուրդը Լ. Մելիքսեթ-Քեկին շնորհել է դոցենտի կոչում և նշանակել նորաստեղծ ամբիոնի վարիչ: Ավելի քան քսան տարի ամբիոնի մասնագետներն սպասարկել են բուհի հումանիտար ֆակուլտետները՝ դասավանդելով վերը թվարկած առարկաները:

Լևոն Մելիքսեթ-Քեկը (1890-1963), լինելով լայն մտահորիզոնի տեր գիտնական, տարբեր տարիներին համալսարանի մի շարք ֆակուլտետներում կարդացել է հայոց լեզու և հայ գրականության պատմություն, Հայաստանի և Անդրկովկասի պատմական աշխարհագրություն, հայ իրավունքի պատմություն և այլն: Նրա գիտական հետաքրքրությունների, անշուշտ, նաև կարողությունների շրջանակներն ընդգրկել են կովկասագիտության գրեթե բոլոր բնագավառները՝ ազգագրություն, աղբյուրագիտություն, արվեստաբանություն, բանահյուսություն, բարբառագիտություն, գրականագիտություն, գրական-մշակութային առնչություններ, իրավագիտություն և իրավունքի պատմություն, լեզվաբանություն, տեքստաբանություն և այլն, որոնց վերաբերյալ տարբեր լեզուներով տպագրել է հարյուրավոր հոդվածներ:

1920-ական թվականների սկզբին Լեոն Մելիքսեթ-Քեկը վրացական բուհերի ուսանողների համար հրատարակել է գրաբարի քերականության տարրական դասընթացներ և քրեստոնմատիական ժողովածուներ («Ծաղկաքաղ բառից նախնի հայերեն հանդերձ հայ-վրացերեն բառգրքովք»), 1941-ին՝ հայ հին գրականության պատմություն, որտեղ գեղարվեստական արժեքներից բացի, ներառել է հայ մատենագրության գրեթե բոլոր նշանավոր երկերը:

Գիտնականի ձեռքբերումներից է «Վարդապետք հայոց հյուսիսային կողմանց» (դոկտորականատենախոսություն, վրաց. հրատ., 1928 թ.) աշխատությունը, որտեղ, հիմնվելով հայոց և վրաց աղբյուրների վրա, անաչառ և սպառիչ վերլուծել է Հյուսիսային Հայաստանին (Գուգարաց աշխարհ) վերաբերող մի շարք կարևորագույն խնդիրներ, ինչպես նաև XI-XIII դդ. հայ-վրաց պատմական, գրական-մշակութային և իրավագիտական կապերը:

Հայ բանասիրության մեջ քաջ հայտնի են Լ. Մելիքսեթ-Քեկի «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» ժողովածուները (Գիրք Ա, Ե-ԺԲ դար, 1934: Գիրք Բ, ԺԳ-ԺԸ դար, 1935: Գիրք Գ, ԺԸ-ԺԹ դար, 1955): Դրանք պարունակում են քաղվածքներ վրացերեն բնագրերից՝ հայերեն թարգմանությամբ, ներածական խոսքով, պատմաբանասիրական և աղբյուրագիտական ընդգրկուն մեկնություններով ու հավելվածներով:

Գնահատանքի արժանի է «Հայ գրողները և Վրաստանը» (1964) աշխատությունը, որտեղ նա ըստ ամենայնի ներկայացրել է XIX-XX դդ. շուրջ երեսուն այն գրողներին, ում կյանքն ու գործունեությունն ամբողջովին կամ մասամբ կապված է եղել Վրաստանի հետ, և ովքեր իրենց ստեղծագործություններում անդրադարձել են հայ և վրաց ժողովուրդների ռազմական, հասարակական-քաղաքական, գրական-մշակութային հարաբերություններին, պատկերել են այդ երկրի անցյալն ու ժամանակակից իրադարձությունները, բնությունն ու կենցաղը:

Զգալի թիվ են կազմում նաև անտիպ երկերը. հատկանշական են հայոց աղբյուրների քարտարանը, որտեղ իրեն բնորոշ բժախնդրությամբ նշել է բոլոր այն երկերն ու ձեռագրերը, որոնցում տեղեկություններ կան Վրաստանի և վրաց իրականության վերաբերյալ, «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին»-ի IV գիրքը և այլն: Միայն վերջերս (Թբիլիսի, 1996) լույս տեսավ վաստակաշատ գիտնականի՝ դեռևս 1930-ական թվականներին կազմած «Հայերեն-վրացերեն բառարանը»:

1945 թ. բանասիրական ֆակուլտետի արևելյան լեզուների և գրականության բաժինը վերակազմավորվել է արևելագիտության ֆակուլտետի, իսկ մինչ այդ գործող հայագիտության ամբիոնին առընթեր ստեղծվել է հայոց լեզվի և գրականության բաժին՝ ուսանողների չորս տարին մեկ ընդունելություն կատարելու իրավունքով: Այստեղ դասավանդվում է գրաբար, ժամանակակից հայոց լեզու, հայ գրականության պատմություն (հին, նոր և նորագույն շրջան-

ներ), հայ ժողովրդի պատմություն, հայ բանահյուսություն, հայ բարբառագիտություն, սանսկրիտ, պահլավերեն, պարսից լեզու, հնդեվրոպական լեզուների համեմատական քերականություն, կառուցվածքային լեզվաբանության հիմունքներ, համեմատական լեզվաբանություն, եվրոպական լեզուներ, հատուկ դասընթացներ և, իհարկե, վրացագիտական առարկաներ:

Բաժնի գոյությամբ էր պայմանավորված թե՛ ուսումնական և թե՛ գիտահետազոտական աշխատանքների ընդլայնումը: Կովկասագիտության մաս կազմող նրա գրապահոցի հազարավոր գրքեր մահից հետո հանգրվան գտան հայագիտության ամբիոնին առընթեր իր իսկ անունը կրող աշխատասենյակում, իսկ գրադարանն ամբողջությամբ, որ մի ամբողջ հարստություն էր, ժառանգները նվիրեցին Թբիլիսիի պետական համալսարանի գիտական գրադարանին:

Պրոֆ. Լ. Մելիքսեթ-Քեկի մահից հետո հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ նշանակվեց պրոֆ. Իվանե Շիլակաձեն:

Զգալի են Իվ. Շիլակաձեի (1910-1978) ծառայությունները բուհական և դպրոցական դասագրքերի, քրեստոմատիաների, բառարանների ստեղծման և պատմական ու գեղարվեստական երկերի թարգմանության գործում: Նրա շնորհիվ է, որ Թբիլիսիի պետական համալսարանն այսօր ապահովված է հայերենին վերաբերող իր սեփական բուհական ձեռնարկներով՝ «Յին հայերենի քերականություն» (1955, վերահրատ.՝ 1975), «Ժամանակակից հայոց լեզվի քերականություն» (1971), իսկ «Արդի հայերենի խոնարհման կատեգորիաները» աշխատությունը⁴ հետաքրքիր է հեղինակի հարցադրումով, փաստարկումներով, հայերենի բայական համակարգի մեկնության ինքնատիպությամբ, որ պայմանավորված է վրաց լեզվի համար ստեղծված համակարգով և բխում են այդ սկզբունքներից: Թեև լեզվաբանը շրջանցել է հայ քերականական մտքի ավանդական մոտեցումները, բայց և այնպես հանդես է եկել տեսական դրույթներով ու առաջարկություններով:

Իվ. Շիլակաձեի նախաձեռնությամբ 1971 թ. պարբերաբար անցկացվել է հայագիտական հատուկ սեմինար: Վրաստանում ապրող ու ստեղծագործող հայագետները տարին մեկ անգամ հանդես են եկել գրաբարի, ժամանակակից հայերենի, հայ բարբառագիտության, հայ և վրաց լեզվական հարաբերությունների, հայ-վրաց գրական-մշակութային առնչությունների և բանասիրության ու պատմագիտության տարբեր բնագավառներին վերաբերող զեկուցումներով:

1979 թվականից հայոց լեզվի և գրականության բաժինը ղեկա-

վարում է ՎՅ ԳԱ ակադեմիայի թղթակից անդամ, պրոֆ. Ջազա Ալեքսիձեն: Նա շարունակում է իր նախորդների ստեղծած ավանդույթները և գիտահետազոտական բազմաբնույթ աշխատանքներին զուգընթաց հատուկ ուշադրություն է դարձնում նաև դասագրքեր, բառարաններ հրատարակելու գործին: Իր աշխատություններից կարելի է հիշատակել «Արսեն Սափարեցու «Բաժանումն վրաց ի հայոց» (1980) և «Աթենի Սիոնի չորս արձանագրությունները» (1983): Ամբիոնի աշխատակիցները տպագրության են պատրաստել «Նոր և նորագույն հայ գրականության քրեստոմատիա» և «Ժամանակակից հայոց լեզվի լինգվաֆոնային դասընթաց» ձեռնարկները:

Այսօր, հիշյալ բաժնում հայագետներ պատրաստելուց բացի, գիտական աշխատանքներ են տարվում հետևյալ ուղղություններով. հայ-վրաց լեզվական առնչություններ, հայ-վրաց գրական կապեր, հայ-վրաց աղբյուրագիտություն, վիմագրություն և տեքստաբանություն:

Վրաստանի մայր բուհում հայագիտության զարգացման գործում իրենց վաստակն ունեն ականավոր գիտնականներ Լեոն (Առաքել Բաբախանյան), Ստեփան Լիսիցյանը, Գևորգ Ասատուրը, Հակոբ Մանանդյանը, Հայկ Ազատյանը, Արսեն Տերտերյանը, Արարատ Ղարիբյանը, Գուրգեն Սևակը (Գրիգորյան), Էդվարդ Ջրբաշյանը, Գևորգ Ջահուկյանը և ուրիշներ:

Թբիլիսիի պետական համալսարանը Հայաստանից դուրս միակ բարձրագույն ուսումնական հաստատությունն էր, որին իրավունք էր վերապահված հայագիտության գծով դոկտորական ատենախոսություն պաշտպանելու, և հայագիտության գծով դոկտորական առաջին ատենախոսությունը պաշտպանվել է հենց այդ բուհում. այնտեղ վրացագիտության գծով ասպիրանտական ուսումնառություն են անցել ԵՊՀ մի շարք շրջանավարտներ:

Թբիլիսիի պետական համալսարանում հայագիտության տարբեր բնագավառների վերաբերյալ հետազոտություններ կատարելուց, հայոց լեզվի, հայ գրականության պատմության դասագրքեր, ձեռնարկներ, քրեստոմատիաներ, բառարաններ և ուղեցույցներ հրատարակելուց բացի, ուշադրություն է դարձվում նաև հայ-վրաց բանասիրության և պատմամշակութային կապերի ուսումնասիրությանը: Սակայն թե՛ անցյալի և թե՛ հատկապես վերջին տասնամյակների հրապարակումներում վրաց մասնագետները տուրք են տալիս ազգային սնապարծությանը և առաջադրում գիտական բարեխղճությանն անհարիր սկզբունքներ ու լուծումներ՝ դրանք բխեցնելով

վրաց ընթերցողի պահանջներից: Ուստի պատահական չէ, որ նման բովանդակությամբ «հետազոտությունները» որոշակի ազդեցություն են թողնում ժամանակի ոչ միայն գիտական, այլև քաղաքական մտքի վրա: Մինչդեռ ազգամիջյան հարաբերություններին առնչվող ինչ-ինչ հարցեր վճռելու կարևորագույն գործոններից մեկն էլ պատմական հայացակետերի անաչառ վերլուծությունն ու ըստ արժանավույն գնահատելը պետք է լինի:

-
1. "ԽՏՎՎցվորՑ", 1938, 14 դեկտ., «Գրական թերթ», 15 սեպտեմբերի 1939 թ.:
 2. Հրաչյա Աճառյան, Կյանքիս հուշերից, Երևան, 1967, էջ 217:
 3. Վրաստանի պատմություն, հհ. 1-5: Վրաց իրավունքի պատմություն, հհ. 1-2: Վրաստանի տնտեսական պատմություն, հհ. 1-2: Վրաց հնագրություն: Վրաց դրամագիտություն: Վրաց հին պատմական գրականություն և այլն:
 4. «Լեզվի և ոճի հարցեր», հ. 2, Երևան, 1964:

«Բանբեր Երևանի համալսարանի»
(հասարակական գիտություններ)
2001, N 2, էջ 204-207:

րության ու արվեստի տարածմանը երկրամասում:

Եթե ոչ ամենաառաջինը, ապա առնվազն առաջիններից մեկն էին Հախվերդյանները, որ արդեն իսկ XIX դարի 10-ական թթ. Թիֆլիսում ստեղծեցին եվրոպական տիպի գրական սալոն: Թեոդոր Եսայի Հախվերդյանը (1773-1820) ռուսական բանակի գեներալ էր, Վրաստանի կառավարիչ (1808-1814), ապա և վրացական առանձին կորպուսի հրետանու պետ (1816-ից): Բնակվելով հայահոծ Սուլուակ թաղամասում՝ երիտասարդ զորականն իր տունը դարձրել էր շնորհաշատ գրողների, նկարիչների, երաժիշտների, բարձրաստիճան պաշտոնյաների, գինվորականների ու դիվանագետների հավաքատեղի: Այդտեղ կազմակերպվել են շաբաթօրյա ընթերցումներ, թատերախաղեր, տոնախմբություններ և, իհարկե, դիմակահանդես-պարահանդեսներ: Հայերից, վրացիներից և տեղաբնակ ռուսներից բացի, հավաքույթներին հաճախել են Ռուսաստանից և եվրոպական երկրներից ժամանած կամ «Տաք Սիբիր» աքսորված շատ մտավորականներ:

Գեներալի վաղաժամ մահից հետո սալոնի գործունեությունը շարունակել է նրա կինը՝ Պրասկովյա Նիկոլայի Հախվերդովան (օրիորդական ազգանունը՝ Արսենևա)՝ *«պատվարժան, հիանալու չափ խելացի, բարձրակիր»* մի անձնավորություն, որ չափազանց մեծ սեր ունենալով գրականության, *«գիտելիքների ու արվեստների հանդեպ, աչքի էր ընկնում մաս սիրալիր հյուրընկալությամբ»*:

Թիֆլիսում գտնվելու միջոցին սալոնի մշտական հյուրն է եղել Ալեքսանդր Գրիբոյեդովը: Անվանի դրամատուրգն ու դիվանագետը այդ սալոնում է ծանոթացել իր ապագա կնոջ՝ Նինո ճավճավաձեի հետ:

Հախվերդյանների փառահեղ ապարանքը 1810-1820-ական թթ. եղել է *«Թիֆլիսի ամբողջ բարձրակիր հասարակության կենտրոնավայրը...»*¹: Շատ մեծ է նրանց դերը մտավորականներին մերձեցնելու գործում:

Նշենք, սակայն, որ ռուսական ու եվրոպական բարքերով ապրող անուսիճները հայ մտավորականներին միավորելու նպատակ չեն ունեցել և չէին կարող ունենալ:

Այդպիսի նպատակ ունեցել են Աբգար և Դարյա Հովհաննիսյան անուսիճները: Արևելահայ իրականության մեջ նրանք առաջինն են բացել գրական սալոն (1880-ական թթ.), որտեղ ծանոթացել և շփվել են Գ. Սունդուկյանը, Ղ. Աղայանը, Րաֆֆին, Ռ. Պատկանյանը, Ծերենցը, արվեստի ու գիտության տասնյակ ներկայացուցիչներ:

Սալոնականները կազմակերպել են գրական գրույցներ, տպագիր և անտիպ երկերի ընթերցումներ, ասուլիսներ, արծարծել են հայ ժողովրդի մտավոր կյանքին, հայ գեղարվեստական գրականությանը, գրական քննադատությանը, մատենագիտությանը, առհասարակ հայագիտությանն առնչվող բազմաբնույթ հարցեր, քանզի նրանց խնդիրը եղել է այդ ամենի վերելքին նպաստելը:

Թիֆլիսահայ մտավորականության սիրված հավաքավայրերից է եղել արծակագիր, հասարակական գործիչ Մարիամ Խատիսյանի (1845-1914) սալոնը, ուր հաճախակի հյուր են եղել հայ գրականության և արվեստի անվանի գործիչներից շատերը: Նրանք նույնպես բանախոսել են արծակ, չափածո, դրամատիկական երկերի ու թարգմանությունների շուրջ, կարդացել են գրականության և մշակույթի հարցերին նվիրված գեկուցումներ:

Պատվավոր առաքելություն էր ստանձնել դպրության քուրմ հանճարեղ լուռեցին: 1899 թ. Թիֆլիսի Բեհթության փողոցի N 50 տան իր բնակարանում հիմնադրած «Վերնատունը», որ մասնակի ընդմիջումներով գոյատևել է մինչև 1908 թ. վերջը, և՛ գրական խմբակ էր, և՛ գրական միավորում, և՛, իհարկե, գրական սալոն: «Վերնատանը» (հիմնական անդամներ՝ Յոզի. Թումանյան, Ղ. Աղայան, Ավ. Իսահակյան, Լ. Շանթ և Դ. Դեմիրճյան) կազմակերպվել են ընթերցումներ, գրույցներ, քննարկումներ, ուսումնասիրվել են համաշխարհային գրականությունն ու մշակույթը, ժողովրդական բանահյուսությունը, դրանց վերաբերյալ եղել են հետաքրքիր դասախոսություններ: Սալոնի աշխատանքներին մասնակցել են թե՛ շարքային գրասերներ, թե՛ հանրության մեջ հեղինակություն վայելող արծակագիրներ, բանաստեղծներ, գրականագետներ, թարգմանիչներ, դրամատուրգներ, լրագրողներ, հրապարակախոսներ, նկարիչներ, գիտնականներ, հասարակական գործիչներ, մասնավորապես՝ Պ. Պռոշյանը, Նար-Դոսը, Ալ. Շիրվանզադեն, Լեոն, Ն. Աղբալյանը, Վրթ. Փափազյանը, Վ. Տերյանը, Ստ. Լիսիցյանը, Փ. Վարդազարյանը, Մ. Թումանյանը, Գ. Բաշինջաղյանը, Կ. Գալֆայանը և այլք: Գրականության և արվեստի այդ աշխարհիկ տաճարում «...*հայոց գրականությունը գտնում էր մի հարազատ անկյուն, տաքացված ու փայփայված ընկերական անուշ վերաբերմունքով, եղբայրական սրտակցությամբ*»²:

Բնական է, որ բարոյական ու նյութական աջակցություն են ստացել հատկապես առաջին քայլերն անող երիտասարդ ստեղծագործողները. այդտեղ են ձևավորվել նրանցից շատերի հասարակա-

կան-քաղաքական հայացքներն ու գեղագիտական հավատամքը: «...Նրա տունը մի կատարյալ ուխտատեղի էր սկսնակների համար, կարողում ենք ժամանակակիցներից մեկի հուշերում,- որտեղ նրանք իրենց սպասած խոսքն ու քաջալերանքն էին լսում, և քանի~քանիսը դրանցից շարունակել են գրել, և այդ գրելն ապարդյուն չի անցել»³: Վերնատունականների կարևորագույն խնդիրն է եղել «զարգացնել ինքնուրույն գրական կյանք, վստահություն, ոգի ներշնչել գրականության մշակներին՝ թեթևացնելով նրանց դառն կացությունը, և այդպիսով գրական հարստություններ արդյունավորել...»⁴:

Չափազանցություն չի լինի ասել, որ «Վերնատանը» միախլուսվում էին հայկական, ռուսական և եվրոպական մշակույթները:

«Վերնատան» ուղղվածությունն է ունեցել Տիգրան Նազարյանի (1858-1926) գրական-գեղագիտական սալոնը (1906-1919), որտեղ ուրբաթ օրերին հավաքվել են առնվազն քառասուն-հիսուն հոգի՝ հայ, ռուս, հրեա, վրացի գրողներ, դերասաններ, իրավաբաններ, խմբագիրներ, հրատարակիչներ, երաժիշտներ, նկարիչներ՝ կին թե տղամարդ: Վրաց արվեստաբան Իոսեբ Իմեդաշվիլին (1876-1952) Տ. Նազարյանի սալոնի մասին իր հուշերում գրում է. «Թիֆլիսում (Գուլովինի պողոտա) «Չարյա Վոստոկա»-յի խմբագրության դեմ հանդիման այժմ էլ վեր է հառնում եռահարկ մի շենք՝ N 4: Ժամանակին համընդհանուր ուշադրություն էր գրավում այդ վեհաշուք կառույցը, որի վերին հարկում բնակվում էր դարաբաղցի հայ մշանավոր գործիչներից մեկը: Դա եվրոպական միստոկացով անբասիր մի մարդ էր, որ, գրականության բնագավառում աշխատելուց բացի, հռչակված էր նաև իր սալոնի ուրբաթօրյա երեկույթներով... Նշանակված օրը՝ երեկոյան ժամը յոթից ութը, սանդղամատին կանգնած, եվրոպական արտահագուստով, ճերմակ թևածալերով ու օձիքով, սափրած երեսով Տիգրան Նազարյանը բոլոր այցելուներին դիմավորում էր ժպիտը դեմքին, սրտաբաց և ձեռքսեղմունով»⁵:

Գրական երեկոներն անցել են բավականին հետաքրքիր. նշվել են հոբեյաններ, ծննդյան տարեթվեր ու հուշ-երեկոներ, և, իբրև կանոն, եզրափակվել թեյի, մրգեղենի ու քաղցրավենիքի հյուրասիրությանը: Հուշագիրը հավաստում է, որ Տ. Նազարյանի սալոնը եղել է «համերաշխության ու եղբայրական միասնության զգացումներ բուցավառող քուրա», քանզի «այս կամ այն անհատին նվիրված երեկոն ընթանում էր ժողովուրդների միջև համերաշխություն և փոխադարձ սեր հաստատելու նշանաբանով»⁶:

Նշված սալոններից շահեկանորեն առանձնացել է հայ հոգևոր

կյանքի մեծագույն երախտավորներից մեկի՝ հասարակական և մշակութային գործիչ, մեծ բարերար, իշխանուհի Մարիամ Թումանյանի (1870-1947) սալոնը: Նրա տանը տեղի ունեցող «հինգշաբթիների» հիմնականում մասնակցել են հայ գրականության երևելիները. նրանք ունկնդրել և քննարկել են մտերմական ամենասերտ կապերի մեջ գտնվող արձակագիրների, բանաստեղծների, դրամատուրգների երկերը: Այդ մասին ահա թե ինչ է գրում ինքը՝ իշխանուհին. «Մեր «հիգշաբթիներին» Թումանյանն ու Շանթը բերում էին կարդալու իրենց նոր գրվածքները, և մենք երկար խոսակցություններ ու երբեմն վիճաբանություններ էինք ունենում դրանց շուրջ: Հիշում եմ՝ Շանթի առաջին դրաման մենք այնքան խիստ քննադատեցինք, որ նա պատռեց ձեռագիրը և երկար ժամանակ չէր սկսում նորը գրել: Դրանից հետո նա գրեց «Հին աստվածները»: ...Մեր «հինգշաբթիները» միշտ շատ կենդանի և ուրախ էին անցնում: Մենք ամբաստան 5 հոգի էինք՝ Գ. Թումանյան, Լ. Շանթ, Ֆ. Վարդազարյան, Բժիշկ Զարգարյան և ես՝ Ս. Թումանյան, բայց իբրև հյուր երբեմն գալիս էին՝ Դ. Դեմիրճյան, Ա. Իսահակյան, Դ. Աղայան, Շիրվանզադե և ուրիշները»⁷:

Ունենալով հետաքրքրությունների լայն շրջանակ՝ գրականությունից բացի նրանք մտահոգվել են հասարակական և ազգային հարցերով ևս: Բեդուն գործունեություն է ծավալել հայրենասեր իշխանուհին. նա կազմակերպել և ուղղորդել է գրական (և ոչ միայն գրական) կյանքը, խոսքով ու գործով սատարել գրողներին, նյութական օգնություն ցույց տվել նրանց ընտանիքներին: Դե իսկ հայ հանրությանը քաջ հայտնի են «անզուգական բարեկամուհու» անշահախնդիր և անգնահատելի ծառայությունները Ամենայն հայոց բանաստեղծի անձնական, հասարակական և գրական-ստեղծագործական կյանքում ու նրա երկերի հրատարակությունների գործում:

Ամփոփելով մեր խոսքը՝ ասենք, որ սալոնները մշտապես ուշադրության կենտրոնում են պահել հայ գրականության հիմնահարցերը, դրանց մի մասը եղել է հայ, ռուս և վրաց մշակութային ուսումնասիրության ու միավորման կենտրոն: Պատահական չէ, որ սալոնների հաճախակի հյուրերից են եղել նաև ռուս, վրացի և այլ ազգերի ականավոր գործիչներ: Անկախ իրենց ծավալից ու մասշտաբից, սալոնները մեծապես նպաստել են հավաքների մասնակիցների ստեղծագործական ունակությունների բացահայտմանը, հասարակական-քաղաքական հայացքների և գեղագիտական ճաշակի ձևավորմանն ու զարգացմանը, հայության մեջ առաջավոր մտքերի ու

լուսավորության տարածմանը, հայ մտավորականների համախմբմանը, քաղաքական ակտիվացմանը, առհասարակ նրանց մտավոր ու հոգևոր կյանքի վերելքին:

Մամուլ

1840-ական թթ. կեսին, երբ Կովկասի առաջին փոխարքա Մ. Վորոնցովը (1782-1856) անցկացրեց վարչական ռեֆորմ և կառավարման ռազմական ձևը փոխարինեց քաղաքացիականի, հատկապես թիֆլիսի հայ հոգևոր կյանքում տեղի ունեցան զգալի տեղաշարժեր ու փոփոխություններ. երևան եկան կրթական և մշակութային կենտրոններ, հրատարակվեցին մի շարք պարբերականներ, մասնավորապես լույս տեսան «Կովկասը» (1846-1847), «Արարատը» (1850-1863), «Մեղու Հայաստանին» (1858-1886), «Կռունկ Հայոց աշխարհին»-ը (1860-1863), «Հայկական աշխարհը» (1864-1871), «Գարունը» (1866): 1870-ական թթ. հաջորդեցին «Մշակ» (1872-1921), «Փորձ» (1876-1881), «Արձագանք» (1882-1898), «Աղբյուր» (1883-1918), «Նոր Դար» (1884-1916), «Մուրճ» (1889-1907), «Տարագ» (1890-1919), «Լուսա» (1896-1911), «Հասկեր» (1905-1917, 1922), «Հուշարար» (1907-1913), «Գեղարվեստ» (1908-1922), «Խաթաբալա» (1906-1916), «Սուրհանդակ» (1909-1912), «Հորիզոն» (1909-1918), «Պատանի» (1910-1915), «Հովիտ» (1910-1917), «Նոր հոսանք» (1913-1915), «Հայրենիք» (1915-1918), «Պայքար» (1915-1919), «Ազատամարտ» (1917-1918) և գրական-հասարակական, քաղաքական ու նեղ մասնագիտական բազում այլ թերթեր ու ամսագրեր, որոնց քանակը, կապված կապիտալիստական հարաբերությունների զարգացման և հանրության առաջ ծառայած խնդիրների հետ, XIX դարի վերջին քառորդում և XX դարի սկզբում տասնապատկվեց՝ հասնելով շուրջ 170-ի: Մամուլը մեծապես նպաստել է համայն հայության մեջ առաջավոր մտքերի ու լուսավորության տարածմանը, հայության համախմբմանը, նրա քաղաքական ակտիվացմանը, մտավոր ու հոգևոր վերելքին. նրան զինել է ազգային-ազատագրական և սոցիալական պայքարի գաղափարներով: Այս քանով հանդերձ՝ իր էջերում զգալի տեղ է հատկացրել հայ դասական գրականության հիմնահարցերին ու մեր երևելիների բազմաբնույթ նյութերին, ռուս և համաշխարհային գրական արժեքներին: Այն մեծապես խթանել է հանրության գեղագիտական դաստիարակությանը, օգնել գրական հանդեսներին, թեթևացրել նրանց վրա ծանրացած բեռը:

Գրահրատարակություն

Թիֆլիսը եղել է հայ գրահրատարակության հարուստ և առաջնակարգ կենտրոններից մեկը: Գրքերի տպագրությունն այստեղ սկզբնավորվել է 1823 թ., Պարսկաստանից Վրաստանի մայրաքաղաք տեղափոխված հայտնի վաճառական և հասարակական գործիչ Գևորգ Արծրունու (1771-1830) անմիջական նախաձեռնությամբ և միջոցներով: Այդ տպարանն առաջիններից էր արևելահայ իրականության մեջ և հիմնադրելուց կարճ ժամանակ անց Արծրունին Ներսես Աշտարակեցու խնդրանքով սարքավորումները նվիրել է նորաբաց Ներսիսյան դպրոցին: Նույն՝ 1823-ին այս տպարանում լույս է տեսել Դ. Մկրտչյան Կարբեցու գրքույկը խոլերայի մասին, ապա հետևել են գեն. Սայազիհի «Ազդարարություն առ հայս», «Առաջադրություն հայոց նոր սարքվող գործի համար», «Երախայրիք Ներսիսյան դպրոցի» գրքերը (1828), «Դարաստան խրատուց...» թևավոր խոսքերի ու ասույթների ժողովածուն (1829): Տպագրվել է մոտ քառասուն գիրք, այդ թվում՝ Ն. Շնորհալու «Ողբ Եղեսիոն» (1829) և Խ. Աբովյանի «Վերջ Հայաստանին» (1858), «Կովկաս» (1846-1847) և «Մեղու Հայաստանի» (1858-1861) թերթերը: Տպագրական գործունեությունը դադարեցվել է 1860-ական թթ. կեսերին՝ մրցակցությանը չդիմանալու պատճառով:

Ժամանակագրական առումով հաջորդը Դավիթ և Հակոբ Արզանյան եղբայրների տպարանն էր, որն իր գործունեությունն սկսել է 1834 թ. սեպտեմբերին և ավարտել 1843-ին: Առաջին անգամ այստեղ է լույս տեսել Խ. Աբովյանի «Նախաշավիղը» (1838): Արզանյանների տպարանն զգալի դեր է կատարել հայերեն, ռուսերեն, վրացերեն, թաթարերեն և լատիներեն տարաբնույթ գրքերի, մասնավորապես՝ բառարանների, ուսումնական ձեռնարկների և, իհարկե, գեղարվեստական երկերի տպագրման գործում:

Մանկավարժություն, բառարաններ ու դասագրքեր, պարբերական մամուլ, հրատարակչական գործ, գիտություն ու տնտեսություն. ահա հայրենասեր եղբայրների գործունեության բնագավառների ոչ լրիվ ցանկը:

Տեսնելով՝ եղբայրների տպարանը սարքավորումներով և տառանիչերով ամենահարուստն է, Կովկասի փոխարքան նրա հիմքի վրա իր գրասենյակին կից ստեղծել է տպագրական գլխավոր վարչության կենտրոն:

Լայն ճանաչում է ունեցել գրավաճառ, ձեռագրահավաք և հրա-

տարակիչ Համբարձում Էնֆիաճյանցի (1824-1896) տպարանը (ընկերակցությամբ՝ Գաբրիել Մելքունյանի), որ հիմնադրվել է 1859 թ., և որտեղ մինչև 1883 թ. լույս են տեսել Խ. Աբովյանի, Գ. Սունդուկյանի, Բաֆֆու, Ղ. Աղայանի, Պ. Պռոշյանի և այլ գրողների երկերը: Աղայանը և Պռոշյանը՝ իբրև գրաշար, ապա սրբագրիչ, աշխատել և իրենց գրական առաջին քայլերն արել են հենց այս տպարանում, որ իրենց իսկ հավաստումով եղել է գրական փոքրիկ սալոն-օջախ: Նրանց վրա բարերար ազդեցություն է ունեցել տպարանատերը: *«Ոչ ոք մեր գրական գործի վրա այնքան մեծ զոհողություն չի արել այդ ժամանակ, ինչքան պ. Էնֆիաճյանը,- խոստովանում է Ղ. Աղայանը: - ...Նա մտքրեց մեր մեջ բուն ազգային ուղղություն և թև տվավ Թիֆլիսի նորածին երիտասարդությանը: Ազնվություն և շիտակություն էր փայլում երիտասարդության մեջ, անկեղծ ազգասիրություն կար»⁸:*

Այստեղ են տպագրվել Էնֆիաճյանցի իսկ հիմնադրած «Կռունկ Հայոց աշխարհին», «Մեղու Հայաստանի», «Հայկական աշխարհ», «Փորձ» լրագրերը: Նա բարեփոխել է հայերեն տառատեսակները: *«Աչքի ընկնող մաքուր տպագրություն, անցյալի համեմատ մեծ ճաշակավորություն-այս հատկություններով էր, որ Էնֆիաճյանցի տպարանը շուտով բոլորովին խլացրեց Ներսիսյան դպրոցի տպարանը և իր ձեռքն առավ համարյա բոլոր հայերեն տպագրությունները»:*

Տպարանը 1883 թ. անցել է Ս. Ռոտինյանցին, որը մինչև 1900 թ. հրատարակել է ավելի քան 200 գիրք, պարբերականներից՝ «Մուրճ» ամսագիրը: 1900-ական թթ. տպարանն անցել է որդուն՝ Տ. Ռոտինյանցին և գործել մինչև 1920-ը: Հատկանշական է, որ այստեղ ևս նյութերն ընտրվել են ժամանակի պահանջներին համապատասխան:

Ակտիվությամբ աչքի են ընկել Հովհ. Մարտիրոսյանը և նրա որդիները՝ Կոնստանտինը և Մնացականը: Լավագույն սարքավորումներով հագեցած նրանց հաստատությունում 1875-1900 թթ. լույս են տեսել շուրջ 500 գիրք և մի քանի պարբերական՝ «Մշակ», «Թատրոն», «Մանկավարժական թերթ», «Արձագանք»: 1887 թ. այստեղ է տպագրվել Պետրոս Աղայանի «Շեքսպիրը և յուր «Համլետ» ողբերգության աղբյուրն ու քննադատությունները» աշխատությունը:

1881 թ. գործել է Մ. Վարդանյանի տպարանը. տպագրվել են հիմնականում գեղարվեստական երկեր (շուրջ 200 գիրք) և մի քանի պարբերական:

Հայրենի Շուշիից Թիֆլիս տեղափոխվելուց հետո (1881 թ.) հրատարակչական լայն գործունեություն է ծավալել հրատարակատարակիչ-խմբագիր Տիգրան Նազարյանը: Նա Եվրոպայից գնել էր տպագրական նորագույն սարքավորումներ: Տ. Նազարյանի հիմնադրած «Արոր» տպարանում (1890-1915) հայ և համաշխարհային գեղարվեստական գրականությունից բացի, տպագրվել են նաև հասարակական, քաղաքական, տնտեսագիտական երկեր, ալբոմներ, ուսումնական ձեռնարկներ, բառարաններ, օրացույցներ:

Հրատարակչական աշխատանքներ են ծավալել նաև Հ. Աղայանի, Ն. Աղայանցի, Հ. Արզումանյանի, Մ. Հակոբյանի, Ա. Մելիք-Շահնազարյանի, Գ. Պատկանյանի, Լ. Պողոսյանի, Մ. Տեր-Իսրայելյանի և այլոց տպարաններում: Ընդհանուր առմամբ Թիֆլիսում գործել է ավելի քան 30 հայկական տպարան, որտեղ լույս են տեսել բանասիրական, պատմագիտական, իմաստասիրական, քաղաքական, կրոնական, ուսումնական, գեղարվեստական, բժշկական, ինքնուրույն և թարգմանական հարյուրավոր գրքեր, բառարաններ, քարտեզներ, ալբոմներ, տարեցույցներ, թերթեր ու ամսագրեր:

Հայոց լեզվով գրքեր ու պարբերականներ տպագրվել են նաև փոխարքայի գլխավոր կառավարչության, Վրաց հրատարակչական ընկերության, «Էպոխա», «Պրոգրես», «Բրատստվո», «Նադեժդա», «Սլովո», «Գուտենբերգ», «Շրոմա», «Քարթլի», Կերեսելիձեի, Կիլածեի, Սիխելտոնի, Շարածեի, Քութաթելածեի և այլոց տպարաններում:

Հրատարակչական ընկերություններ

Հայ գրասերների ջանքերով ստեղծվել են նաև հրատարակչական ընկերություններ, որոնք բացառիկ դեր են խաղացել գրական կյանքի պատմության մեջ:

1879 թ. սեպտեմբերից սկսել է գործել «Թիֆլիսի ընկերության հայերեն գրքերի հրատարակությունը» (կանոնադրությունը հաստատվել է 1880 թ. հունվարին), որն առաջնորդվել է երկու սկզբունքով.

- ա. հայ գրողների ինքնուրույն ստեղծագործությունների և
- բ. օտարալեզու գրականությունից թարգմանված երկերի հրատարակում:

Միայն 1890-ական թթ. ընկերությունը լույս է ընծայել Սայաթ-Նովայի, Խ. Աբովյանի, Ղ. Ալիշանի, Մ. Պեշկոպաշյանի, Գամառ-Քաթիպայի (Ռ. Պատկանյան), Պ. Պռոշյանի, Ղ. Աղայանի, Հ. Պարոնյանի,

Պ. Դուրյանի, Ալ. Շիրվանզադեի գեղարվեստական երկերը, հայ պատմիչների բազմաթիվ բնագրեր, ժողովրդական բանահյուսության նյութերի ժողովածուներ, գիտական աշխատություններ, դասագրքեր: Կարևորագույններից են Մովսես Խորենացու «Հայոց Պատմությունը», Ստ. Պալասանյանի «Պատմություն հայոց»-ը, Յ. Դարդելի «Ժամանակագրություն հայոց»-ը, Ասողիկի (Ստեփանոս Տարոնեցի) «Պատմություն տիեզերական»-ը, Ա. Գարագաշյանի «Քննական պատմություն հայոց»-ը (չորս հատորով), Ստ. Մալխասյանի «Սերեոսի պատմությունը և Մովսես Խորենացի»-ն, Հ. Արարատյանի «Վաղարշապատցի Հարություն Արարատյանցի կյանքը», Գ. Տեր-Ալեքսանդրյանի «Թիֆլիսեցոց մտավոր կյանքը», Գ. Շերենցի «Վանա Սազը» (երկու հատորով), Եր. Լալայանցի «Ջավախքի բուրմունքը», Գարեգին Սարկավազի «Փշոանքները»: Հարկ է նշել, որ ընկերության գրքերի մի մասը լույս է ընծայել Շարածեի տպարանը:

Քաջ գիտակցելով, որ ազգային գրականությունը կարող է լիցք ստանալ համաշխարհային գրականության լավագույն արժեքներից, որ ժողովուրդների մերձեցման, մշակույթների փոխազդեցության և հանրության գեղագիտական դաստիարակության անհրաժեշտ նախապայմաններից մեկն էլ այդ արժեքներին հաղորդակցվելն է, ընկերությունը ձեռնամուխ է եղել գեղարվեստական թարգմանության գործընթացին: Ելնելով հասարակության մեջ ստեղծված ազգային, սոցիալական ու հոգեբանական գործոններից և ժամանակի հրամայականից՝ ընկերությունը հրապարակել է թարգմանության համար նախատեսած հեղինակների ու նրանց ստեղծագործությունների ցանկը և հետևել, որ դրանք կատարվեն բնագրերից (միջնորդավորվածը վերապահվել էր մի քանի լեզվի՝ ճապոներենին, չինարենին, հնդկերենին, քանզի հայ իրականության մեջ այդ լեզուներին տիրապետողներ չկային): դրանք տպագրել են մրցութային կարգով: Այն իրողությունը, որ թարգմանությունները հիմնականում իրականացրել են Հովհ. Թումանյանը, Հովհ. Հովհաննիսյանը, Ղ. Աղայանը, Պ. Պռոշյանը, Ալ. Շիրվանզադեն, Հովհ. Մասեհյանը, Տ. Հովհաննիսյանը, Գ. Բարխուդարյանը, Փ. Վարդապարյանը, խոսում է նպատակաուղղվածության և պրոֆեսիոնալ բարձր մակարդակի մասին: Ընկերության սկզբունքային պահանջների շնորհիվ 1890-ական թթ. հայ թարգմանական արվեստը թևակոխեց նոր շրջան՝ նշանավորելով նոր փուլ՝ V դարից և Միսիթարյան հայրերից հետո: Ընկերության լույս ընծայած Վիլյամ Շեքսպիրի, Ալֆոնս Դոդեի, Հենրիկ Սենկևիչի, Էլիզա Օրթեշկոյի, Հարիետ Բիչեր-Սթոուի, Ա. Պուշկինի, Մ. Լերմոնտովի, Ն. Գոգոլի, Լ. Տոլստոյի, Մ. Սալտիկով-Շչեդրինի, Վս. Գարշինի

գործերից շատերը բռնել են ժամանակի քննությունը, հրատարակվել ու վերահրատարակվել և իրենց մնայուն տեղն ունեն հայ թարգմանական գրականության անդաստանում:

1881 թ. նոյեմբերի կեսին Թիֆլիսում հիմնադրվում է Կովկասի հայոց բարեգործական ընկերությունը, որ նույնպես մեծ աշխատանքներ է ծավալել գրահրատարակչության ուղղությամբ. տպագրելով հանդերձ բազմաթիվ հայերեն գրքեր՝ այդ թվում՝ անվճար դասագրքեր, ընկերությունը բացել է գրադարան-ընթերցարաններ, հիմնադրել սեփական տպարան, նյութական օգնություն ցույց տվել հայ կարիքավոր գրողներին, գրականագետներին, արվեստագետներին, ուսուցիչներին, հովանավորել ստեղծագործելու ունակություն դրսևորած պատանիներին ու երիտասարդներին, որով խթանել է գրականության զարթոնքին ու զարգացմանը: Հիշյալ ընկերության կառուցվածքն ու սկզբունքները գրեթե անփոփոխ որդեգրել է Կովկասի հայոց հրատարակչական ընկերությունը, որը, ծավալելով արգասավոր գործունեություն, հայահոծ վայրերում ստեղծել է մասնաճյուղեր, որ, իրենց հերթին, վերածվել են գրական-մշակութային փոքր ու մեծ օջախների: Ընկերությունը լույս է ընծայել հայ գրողների ստեղծագործությունները, գիտահանրամատչելի և ուսումնակրթական բազմաբովանդակ գրքեր. համաշխարհային գրականությունից՝ Ջորջ Բայրոնի, Էմիլ Զոլայի, Գի դը Մոպասանի, Կնուտ Համսունի, Չարլզ Դիկենսի, Էթել Լիլիան Վոյնիչի, Հենրիկ Իբսենի, Հերման Զուդերմանի, Գրիմմ եղբայրների, Ալ. Գրիբոյեդովի, Լ. Տոլստոյի, Ի. Տուրգենևի երկերը:

Հոգ տանելով մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության մասին՝ իշխանուհի Մարիամ Թումանյանը 1896 թ. սկիզբ է դրել «Մանկական գրադարան» գունավոր գրքույկների մատենաշարի, որ հայ իրականության մեջ առաջին և բավականին հաջողված փորձն էր:

1908 թ. իշխանուհի Մարիամ Թումանյանը հանդես է եկել ևս մեկ նախաձեռնությամբ. հիմնադրել է «Իշխանուհի Մ. Թումանյան և ընկ.» հրատարակչությունը և իր իսկ ծախսերով տպագրել հայ գրողների բազմաթիվ գրքեր: Ժամանակի մամուլը գովասանքով է անդրադարձել նրա այդ նախաձեռնությանը ևս: Երբ հրատարակվել են Հովհ. Թումանյանի հեքիաթներն ու լեգենդները, լույս է տեսել գրախոսական, որտեղ կարդում ենք. «*Թումանյանի գրքույկները հրատարակել է իշխանուհի Մ. Թումանյանը, և պատկերազարդել է Գ. Երիցյանը: Ահա այսպես՝ բանաստեղծության հետ միանալով նրա գուրգուրացող, ազնիվ սիրտը և նկարչական շնորհը՝ մեր մանկական աշխար-*

հին ընծայել են այս գեղեցիկ գործույկները, որոնք, իբրև մանուկների կենսական պահանջ, պետք է առատորեն նվիրվեն նրանց»:

1910-ական թթ. սկսում են գործել հայ «ազգային գրականության բարգավաճմանը» նպաստող և հայ գրողներին միավորող մի շարք ընկերություններ՝ Կովկասի հայոց գրական ընկերությունը՝ Յովի Թումանյանի ղեկավարությամբ (1912), Թիֆլիսի հայ պատանի գրասերների գրական միավորումը (1913), Տպագրական բանվորների միությունը (1913), որ լույս է ընծայել «Նոր գրադարան» մատենաշարը, «Կարմիր մեխակներ», «Բանվորի ալբոմ» ավանախները: Հայկազյան ընկերությունը (1917), Հայ հայրենակցական միությունը (1919), Հայ-վրաց մշակութային հաստատությունը (1919):

Գրահրատարակության գործում իրենց նպաստն են բերել Հ. Աղաբաբը, Գ. Բարխուդարյանը, Հ. Գենջյանը և ուրիշներ:

* * *

1920-ական թթ. սկզբին հայ մտավորականներից շատերը Թիֆլիսից գալիս են Երևան, որ քիչ չէին և ներկայացնում էին տարբեր սերունդներ, արվեստի, գրականության ու գիտության ոլորտներ, տեղում շարունակում են իրենց գործունեությունը:

1921 թ. փետրվարին հիմնադրվում է Հայ գրչի մշակների միությունը, (նախագահ՝ Յովի. Թումանյան), նարտին՝ «Հայարտունը», որին շնորհվում է Վահան Տերյանի անունը: «Հայարտունը» (Հայ արվեստի տուն) ուներ տարբեր բաժիններ. ղեկավարում էին Յովի. Թումանյանը՝ գրական (մահից հետո հաջորդաբար փոխարինել են Դ. Դեմիրճյանը, Ս. Խանոյանը, Աղ. Վարդանյանը), Ռ. Մելիքյանը՝ երաժշտական, Գ. Շարբաբյանը՝ նկարչական, Ստ. Քափանակյանը՝ թատերական: Այս շրջանում գրական կյանքի ակտիվ գործիչներն էին Յովի. Թումանյանը, Դ. Դեմիրճյանը, Ստ. Ջորյանը, Կարա-Դարվիշը (Հակոբ Գենջյան), գրականագետներից՝ Հ. Սուրխաթյանը, Պ. Մակինցյանը, Արշ. Մելիքյանը, Ալ. Մյասնիկյանը, Արտ. Կարինյանը:

Գրական բաժինը կազմակերպում է Չարենցի, Շանթի, Իսահակյանի և այլոց ստեղծագործությունների քննարկումներ, դասախոսություններ՝ նվիրված հայ քնարերգությանը, «Սասունցի Դավիթ» դրուցագներգությանը, պրոլետարական գրականության խնդիրներին, քսանական թվականների դրամատուրգիային: Նշվում են Շ. Ռուսթավելու, Գ. Սունդուկյանի, Հ. Հակոբյանի, Հ. Աղաբաբի և այլ գրողների հոբելյանները, կազմակերպվում մեծարժան հանդեսներ, ներկայացումներ, այլ միջոցառումներ:

1922 թ. Հ. Հակոբյանի նախածեռնությամբ հիմնադրվում է

Վրաստանի պրոլետարական գրողների ասոցիացիայի հայկական մասնաճյուղը: Հրատարակվում է նրա ծրագիրն ու կանոնադրությունը: Առաջադրված խնդիրների տեսանկյունից բավական աղքատիկ էին գրականության կոչման և հասարակական դերի նրա սահմանումները, մանավանդ, որ ասոցիացիայի կազմում, առանց բացառության, ընդգրկվել էին մերձգրական արհեստավորներ, այնպիսի մարդիկ, որ հեռու մնային հոսանքներից, ազգային ավանդներից և կարողանային ստեղծել «զուտ պրոլետարական», «զուտ դասակարգային» գործեր:

«Հայարտան» գրական բաժանմունքի և պրոլետգրողների ասոցիացիայի հիման վրա 1926 թ. ստեղծվում է Հայ գրողների միությունը: Դրա անդամներն սկսում են պայքար մղել «վնասակար» և «ծայրահեղ» գրական ընկերությունների, միավորումների, խմբակցությունների ու կազմակերպությունների դեմ և կոչ են անում հավատարիմ մնալ պրոլետարական գրականության սկզբունքներին, Հոկտեմբերյան հեղափոխությանը, սոցիալիստական շինարարության թեմաներին, ստեղծել ժողովուրդների եղբայրությունն ու հավասարությունը քարոզող գործեր. արձակում թե չափածոյուն իշխում էին վերամբարձ դատողությունները, ճառաբանությունն ու նկարագրայնությունը, ներբողայնությունն ու շեփոթաթմբուկային խլացուցիչ աղմուկը: Նշված ժամանակաշրջանում տեղի գրական կյանքում իրենց կայուն տեղն են զբաղեցնում Ծ. Թորգոմյանը, Գ. Գրիգը, Վ. Ատրյանը, Պահարեն (Հայկ Պետրոսյան), Աղ. Վարդանյանը: «Բանվորի գրադարան» և «Պրոլետարի գրադարան» մատենաշարերով հրատարակվում են ավագ ու կրտսեր սերնդի ներկայացուցիչների բազմաթիվ գրքեր:

1920-ական թթ. Թիֆլիսի գրական մամուլը զգալիորեն հարստանում է. հանրապետական թերթերին առընթեր լույս են տեսնում տարաբնույթ հավելվածներ, հրատարակվում են նոր պարբերականներ: Այսպես՝ հանրապետական «Կարմիր աստղ» (1920-1923) թերթին առընթեր 1921 թ. հրատարակվում է «Կարմիր աքլոր» երգիծական հանդեսը, «Մարտակոչին» (1923-1927) առընթեր՝ «Մարտակոչ» (1923-1927) շաբաթօրյա հավելվածը, «Պրոլետարին» (1927-1938) առընթեր՝ «Արվեստ, Գրականություն, Գիտություն» (1928-1929), «Գրական շաբաթ» (1929-1930), «Գրական արշավ» (1930-1931), «Կարին» (1930-1931) հավելվածները: «Պրոլետարը» հրատարակում էր նաև գրական պատկերազարդ համանուն ամսաթերթ (1931), «Գրոհ» (1931-1932) և «Բարձունքներում» (1934) ամսագրերը, որոնցում գեղարվեստական երկեր և տեսական-քննադատական

հողվածներ էին տպագրում ինչպես Վրաստանի, այնպես էլ Հայաստանի գրողներն ու գրականագետները:

Գրական-գեղարվեստական երկերին, թարգմանություններին և առհասարակ գրականության հիմնահարցերին առավել ուշադրություն են դարձրել «Խաթաբալա» (1922, 1925-1926), «Նոր աշխարհ» (1922), «Դարբնոց» (1922-1923), «Դիրքերում» (1924), «Ձարթոնք» (1926), «Խելովներա-Արվեստ» (1926), «Լուսաբաց» (1926-1931), «Կարմիր ծիլեր» (1923-1941. 1939-ից՝ «Հոկտեմբերյան սերունդ»), «Արշավ» (1932-1941) հանդեսները: Վերջինս (1941-ից՝ «Գրական հանդես») Վրաստանի պրոլետգրողների ասոցիացիայի (1934-ից՝ Վրաստանի խորհրդային գրողների միության) հայկական մասնաճյուղի գրական-գեղարվեստական, տեսական-քննադատական երկամսյա, ապա եռամսյա հանդեսն էր: 1933 թ. նոյեմբերից միառժամանակ լույս է տեսել «ՃՈ ԲցոպՋպ ԹՏրՑՏՍՈՒ» գրական թերթը, որ նույնպես զգալի տեղ է հատկացրել հայ գրականությանը:

Այսօրվա դիրքերից դժվար է գնահատել այն հոսանքների, խմբավորումների ու կազմակերպությունների գրական քաղաքականությունը, որ, գտնվելով որոնումների ճանապարհին և վարելով սկզբունքային բանավեճեր, հաճախ հակասում էին իրենց, անհատական պայքարից անցնում խմբային պայքարի, ապա վերստին հակադրվում մեկմեկու և անհիմն մեղադրանքներ բարդում միմյանց վրա: Տպագրելով համախոհների անկատար գործեր՝ դրանք ներկայացնում էին իբրև խոսքարվեստի անթերի արտահայտություններ, մինչդեռ անխնա դատափետում էին իրենց գաղափարները չդավանող, բայց շնորհալի գրողներին ու նրանց իսկապես արժեք ներկայացնող երկերը: Թեժանալով ու հանդարտվելով՝ կացությունը տևեց մինչև 30-ական թվականների կեսը, իսկ Վրաստանի գրողների միության հայկական մասնաճյուղի կազմավորումից հետո (սեպտեմբեր, 1934) բանավեճերը կորցրին իրենց հետաքրքրությունն ու ոգին: Գրական փոթորկուն կյանքն իր հորդահոս վտակներով այլևս անդարձ դրվեց մեկ ընդհանուր և նախորոշված կաղապարի մեջ: Փակվեցին գրական գրեթե բոլոր հանդեսները, հավելվածները, մինչդեռ բազմաբնույթ հրատարակությունների առկայությունն էր հնարավոր դարձնում հասարակական մտքի տարակարծությունների արտացոլումը: Թիֆլիսի հայ գրական կյանքի աղքատացման պատճառներից մեկն էլ գրողների ու գրականագետների շարքերի նոսրանալն էր. նրանց մի մասը տարբեր ժամանակներում փոխադրվում է Երևան (Դ. Դեմիրճյան, Ա. Վշտունի, Հռ. Պողոսյան, Մ. Արագի, Վ. Ատրյան), մի մասն էլ զոհ է դառնում անհատի պաշտամունքին

(Մ. Դարբինյան, Գ. Մեսյան, Մ. Ավետիսյան, Գ. Խալաթ, Ռ. Լուսինյան, Յ. Սուրխաթյան, Արշ. Մելիքյան, Ս. Խանոյան, Ա. Խունարյան):

Գրական կյանքը շարունակվում է նաև Հայրենական պատերազմի ընթացքում, թեև գրողներից շատերը մեկնում են ռազմաճակատ: Այդ տարիներին լույս են տեսնում պատմվածքների ու բանաստեղծությունների մի քանի ժողովածուներ: Պատերազմի ավարտից հետո ճակատայինները գեղարվեստական երկերի նյութ են դարձնում Մեծ աշխարհամարտի ու վերականգնման աշխատանքները: Գ. Գրիգի, Ծ. Թորգոմյանի, Յ. Աղաբաբի ստեղծագործությունների կողքին իրենց երախայրիքներն են տպագրում Մկ. Ասլանյանը, Մ. Քարամյանը, Յովհ. Կարայանը (Կարապետյան), Ս. Մանվելյանը, Բ. Սեյրանյանը: Գրականագիտության դեկը վարում էին Լ. Մելիքսեթ-Բեկը, Յ. Ազատյանը, հետագայում՝ Արտ. Մխիթարյանը, Ա. Խառատյանը:

1941-ից մինչև 1950-ական թթ. կեսերը վիրահայ բանաստեղծները, արձակագիրները, դրամատուրգները չունեին հրատարակության օրգան (լույս են տեսել միայն «20 տարի» անթոլոգիան՝ Վրաստանում խորհրդային կարգերի հաստատման 20-ամյակի առթիվ և «30 տարի» ժողովածուն՝ Յոկտեմբերյան հեղափոխության 30-ամյակի առթիվ): Եվ ահա 1956 թվականից սկսում է լույս տեսնել մասնաճյուղի գրական-գեղարվեստական և տեսական-քննադատական «Ալմանախ» (1960-ից՝ «Կամուրջ») տարեգիրքը՝ շուրջ քսան հեղինակային մամուլ ծավալով: Նրանում տպագրվում են արձակ, չափածո, դրամատիկական երկեր, գրականագիտական, բանասիրական, հրապարակախոսական հոդվածներ, վրացի, ռուս, արխագ, աջար և քուրդ գրողներից թարգմանություններ:

Թբիլիսիի հայ գրական կյանքը փոքր-ինչ աշխուժանում է 60-ական թվականների սկզբից, երբ հայ և վրաց գրողները կազմակերպում են պատվիրակությունների փոխայցելություններ, բարեկանության երեկոներ ու ցերեկույթներ, մշակույթի և գրականության փառատոներ, տասնօրյակներ, հորեյանական հանդիսություններ, քննարկումներ:

Զգալի են մասնաճյուղի՝ հայ-վրաց, հայ-ռուս, վրաց-ռուս գրական-մշակութային կապերը հարստացնելու, հանրապետության գրական գործընթացին աջակցելու, Վրաստանի հայաբնակ վայրերում ապրող ու ստեղծագործող ուժերն ի հայտ բերելու և համախմբելու համար կատարվող աշխատանքները:

1962 թ. տեղի է ունենում հայ գրողների, մշակույթի և հասարակական գործիչների պանթեոնի վերաբացումը (Խոջիվանք), որ

Վրաստանի կառավարության որոշմամբ հայտարարվում է պետական փակ պանթեոն: Նույն տարվանից ընթացք է ստանում 1914 թ. սկիզբ առած, բայց Հայրենական պատերազմի պատճառով ընդհատված սայաթնովյան Վարդատունը, որն ամենամյա է և անց է կացվում մայիսի վերջին կիրակի:

Վրացահայ գրական կյանքի անբաժան օղակներից են՝ պոեզիայի տերյանական օրը բանաստեղծի ծննդավայր Գանձայուն (նշվում է 1967 թ. հուլիսից), «Ջիվանու օրը» Ջավախքի Կարգախ գյուղում (նշվում է յուրաքանչյուր տարվա հունիսի վերջին):

Գրական կյանքը գրեթե մարել է. չնայած շնորհալի ստեղծագործողների առկայությանը՝ մասնաճյուղը նոր անուններով չի համալրվում:

Վրաստանի գրողների միության հայկական մասնաճյուղի նախագահի պաշտոնը վարել են Կորյուն Ազրոյանը, Ռուբեն Աղաբաբյանը, Մկրտիչ Ասլանյանը, Վարդան Ատրյանը, Մարտին Ղարազյոզյանը, Աշոտ Մարգարյանը, Սոս Սիմավորյանը, Աղասի Վարդանյանը, Մարտին Քարամյանը: Կարճատև ընդմիջումներով, շուրջ 30 տարի այդ աշխատանքը ղեկավարել է անվանի արձակագիր Բենիկ Սեյրանյանը: Վրաստանի մայրաքաղաքում այժմ գործում է Վրաստանի գրողների միության հայկական մասնաճյուղը. «Վերնատուն» գրական միությունը (նախագահ՝ Գևորգ Սնիսյան), տպագրվում են հայերեն գրքեր, «Կամուրջ» և «Վերնատուն» ավանախմբերը:

Բազմադարյա հայ գրականության վտակներից մեկը՝ վիրահայ գրականությունը, թեկուզև մեծագույն ջանքեր գործադրելով, շարունակում է զոյատուել ու գործել:

1. Հայկական գրականության մասին տե՛ս Լ. ԸՎՊՐՏՎՈՍՉ, “ԽպրՎՏՎՅՏՉ Զ թՐԳՁՈՒ Զ 1837 չՏՊԳ”, “ԻՈՐ ԹՏՊՅՏՈՒ”, Չոհանրո, 1958, թՅՐ. 54-65.
2. Լեո, Երկերի ժողովածու տասը հատորով, Երևան, 1985, հ. VIII, էջ 424:
3. Թումանյանը ժամանակակիցների հուշերում, Երևան, 1969, էջ 622-623:
4. Լեո, նշվ. հատորը, էջ 428:
5. «Ուղեցույց աստղը». Վրաց մտավորականները Հովհաննես Թումանյանի մասին: Երևան, 1999, էջ 103-104:
6. Նույն տեղում, էջ 105:
7. Մարիամ Թումանյան, Իմ համառոտ կենսագրությունը և իմ հիշողությունները, Երևան, 2003, էջ 106-107:
8. Ղ. Աղայան, Իմ կյանքի գլխավոր դեպքերը, Թիֆլիս, տպարան Ս.Ղ. Ռոտինյանցի, 1893, էջ 12:

«Գարուն»

2001 թ., N 10, էջ 28-33:

ԵՐԲ ԱՆՏԵՍՎՈՒՄ Է ՀԱՎԵՐԺՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔ

*Կան թույլներ ժողովուրդների կյանքում,
երբ կարելի է հաշտվել ամեն բանի հետ,
բայց ոչ լռությամբ:*

Քրիստափոր Միքայելյան

Վրաց ընթացիկ մամուլն ընթերցելիս այն տպավորությունն ես ստանում, ասես հայ ժողովուրդը դարեր շարունակ զբաղված է եղել Վրաստանը նվաճելու, վրացիներին իրենց բնօրրանից վտարելու կամ իր մեջ ձուլելու, նրանց մշակույթն ավերելու կամ սեփականելու, այդ երկրի պատմությունը զեղծելու, այնտեղ ծնելիության ընթացքը կանգնեցնելու և հար ու նման գործերով:

Անտեսելով գիտականությունն ու էթիկայի տարրական պահանջները, կեղծն ու ցանկալին ներկայացնելով իբրև ճշմարտություն՝ վրացի գրագետները հայ-վրացական հարաբերություններում լուսավոր մի կետ, դրական որևէ իրադարձություն, ուսանելի նույնիսկ մեկ փաստ չեն ուզում գտնել: Ավելին՝ ավագ թե կրտսեր, մեկը մյուսին լրացնելով, մեկը մյուսին առաջ մղելով կամ նրանից առաջ անցնելով, ակնհայտորեն հետապնդում են վիրաբնակ հարյուրավոր հայորդիների՝ այդ երկրամասի շենացմանը մատուցած ծառայություններն ուրանալու կամ պարզապես ժխտելու միտում: Անտեսում են այն իրողությունը, որ ճակատագրի բերումով Վրաստանում հանգրվանած հայերը զբաղվել են ոչ միայն անասնապահությամբ ու երկրագործությամբ, առևտրով ու արհեստներով, այլև ներգրավվել են հասարակական-քաղաքական կյանքի մեջ, մասնակցել երկրի պաշտպանության ու անկախության համար մղված մարտերին, մեծապես նպաստել նրա տնտեսության, գիտության, արվեստի, գրականության, առհասարակ ամբողջ մշակույթի զարգացմանը: Վրաց մտավորականներից ոմանք ձգտում են իրենց ժողովրդին, հատկապես երիտասարդ սերնդին համոզել, թե իբր հայ գիտնականները շարունակում են կանխակալ հետազոտությունները վրացագիտության ոլորտում, թե Հայաստանում ոչնչացվում են վրացական հուշարձանները, թե -ի վերջավորությունն ունեցող վրաց աշ-

խարհագրական անունները հայտարարել են հայկական, հայացրել են ճարտարապետության բազում կոթողներ, «Շուշանիկի վկայաբանությունը» յուրացրել են, Վրաստանի պատմական տարածքի զգալի մասը նշել են Հայաստանի պատմական քարտեզներում, Ջավախքը հայտարարել են հայկական շրջան, Աբխազիայում կազմակերպել են վրացիների ցեղասպանություն, և այսպես շարունակ:

Ճշմարտությունն այն է, սակայն, որ կատարվել ու կատարվում է հակառակը. վրաց լեզվաբաններն են Գորիս, Բջնի, Անի տեղանուններին հավելում -ի կամ -սի ածանցներ, արհեստականորեն դարձնում Գորիսը Գորիսի, Բջնին Բջնիսի, Անին Անիսի և հայտարարում, թե դրանք վրացական տեղանուններ են: Վրացիներն են գրում, թե վաղմիջնադարյան հայկական ճարտարապետությունը վրացականի պատճենն է, իսկ վերանորոգումների ժամանակ փոփոխություններ են կատարում Վրաստանի հայկական վանքերում ու եկեղեցիներում և հայտարարում վրացական: Վրաց գրականագետները, «Շուշանիկի վկայաբանությունը» համարելով ազգային գեղարվեստական արձակի գլուխգործոց, 1978 թ. համաշխարհային մասշտաբով նշեցին այդ երկի գրության 1500-ամյակը: Վրաստանի պատմական քարտեզներում մինչև Սևանա (հաճախ՝ Վանա) լճի հյուսիսային ափերը ներկայացվում են իբրև վրացական տարածքներ...

Զբավարարվելով նման սուտուպատիր հայտարարություններով՝ նրանք հայ ժողովրդի և նրա ականավոր գործիչների վրա բարդում են այնպիսի մեղադրանքներ, որ մնում են ավիբերան, կարկամած և, ինչպես ասում են, գրիչը կանգ է առնում...

Այսպես, բանական որևէ արարածի մտքով կանցնի⁶, թե Սերգեյ Փարաջանովը, «դաստիարակվելով ոչ վրացական հողի վրա՝ «Լեզենդ Սուրամի բերդի մասին» ֆիլմը նկարահանել է, որպեսզի այլանդակի և ստորացնի վրաց հրականությունը» («Լիտերատուրուլի Սաքարթվելո», այսուհետ՝ «ԼՍ», 16 սեպտեմբերի, 1988), թե հայ պատմաբանները, «հին հայկական լեզենդները ներկայացնելով իբրև ճշմարտություն, հենվելով դրանց վրա, նշանակալից հրատարակություններում ստորացնում են Վրաստանի անցյալը» («Մնաթոբի», N 9, 1988), թե Լեոն (Առաքել Բաբախանյան) իր «Աշխատություններում անարգում է Վրաստանն ու վրաց ժողովրդին» («Մնաթոբի», N 9-10, 1991):

Վրաց մամուլի համաձայն՝ կասկածելի վարք ու բարքի տեր են կուսակցական, ազգային, արվեստի ու գրականության հայ ականավոր գործիչները. նրանցից է դժգոհում քաղաքային թերթի ոմն աշ-

խատակից և սուզ ու շիվան անում, թե *«Ախալցխայի փողոցները կրում են կասկածելի կենսագրություն ունեցող անձանց անուններ»*: Նրա թվարկած գործիչների շարքում են նաև մեր ազգային հանճարներ խաչատուր Աբովյանն ու Յովհաննես Թումանյանը (*«Ծիթելի դրոշա»*, 3 հունիսի, 1989):

Ականա մտաբերում ես Ամենայն հայոց բանաստեղծի *«Անգիտակից թշնամիներ»* հոդվածը (1913)՝ ի պաշտպանություն Սայաթ-Նովայի և դարձյալ Խ. Աբովյանի սուրբ հիշատակի: Ի՞նչ իմանար մեծն լռեցին, որ մի քանի տասնամյակ անց ինքն է վրացիներից ոմանց մաղձն ու զայրույթը շարժելու՝ իր անունով փողոց ունենալու պատճառով:

Բարձրաստիճան պետական մի պաշտոնյա, ճիշտ է, բացահայտ չի գրում Մխիթար Գոշի՝ *«կասկածելի կենսագրություն ունենալու»* մասին, բայց նրա ուսումնասիրությանը ծանոթանալուց հետո ընթերցողն ինքնըստինքյան եզրակացնում է, որ հայ օրենսգետի իրավագիտական իմացությունը կասկածի տեղիք է տալիս, որովհետև *«վրացերեն գրել-կարդալ իմանալով՝ վերցրել է վրաց աշխարհիկ օրենսգիրքը և նրա հիման վրա կազմել իր Դատաստանագիրքը»* (*«Մնաթրբի»*, N 2, 1989):

Բայց եթե օրենսգետ Գոշը, երևի թե գիտակցելով իր արարքի պատժելիության հնարավորությունը թեկուզ և XX դ. վերջում, այնուամենայնիվ *«բավարարվել է»* վրացական օրենսգրքի *«թարգմանությամբ»* ու *«տեղայնացումով»*, ապա հայ գրերի ստեղծողը, հայկական դպրոցների ու դպրության հիմնադիրը, մշակութային գործիչն ու մեծ լուսավորիչը, ուսուցչապետն ու եկեղեցու սրբերից ամենասուրբը՝ *«որպես քրիստոնեության քարոզիչ, նպատակ է ունեցել ոչնչացնել իրենից ավելի քան 700 տարի առաջ ստեղծված վրաց հեթանոսական գիրքը»* (*«Մնաթրբի»*, N 6, 1989):

Վրաց ժողովրդի դեմ «ոտնձգություններ» են կատարել նաև առանձին խավեր, դասեր ու կուսակցություններ: Օրինակ՝ *«Քվեմո Քարթլիի էթնոսը պատմական տեսանկյունից»* գրվածքում *«շողարձակում»* են այսպիսի «մարգարիտներ»: Իբրև թե *«հայ հոգևորականները, քաջալերված թուրքերի ու պարսիկների աջակցությունից և դաշնակից ունենալով հավատարիմ ռուսներին, Ծննդյան տոների նախօրեին խուրջիներով խոզի միս են բաժանել գյուղաբնակ ու քաղաքաբնակ աղքատ վրացիներին և ծխամատյաններում, փոխելով նրանց անուն-ազգանունները, դարձրել են հայ»* (*«Մնաթրբի»*, N 10, 1989):

Ուն հետազոտող «պարզել» է, որ զավթիչները ոչ միայն քաջալերել են հայերին, այլև, ավերելով Վրաստանի հարավային գավառները, վտարելով վրացիներին, նրանց շենքերում վերաբնակեցրել են ղզլբաշների, թուրքերի և ... հայերի, որպեսզի վերջիններս «դառնան տերուտնօրենը անտեր մնացած վրացիների, նրանց բերդամրոցների, վանքերի ու եկեղեցիների»: Դրանից հետո հայերն օծել են վրացական վանքերն ու եկեղեցիները (նույնիսկ Բուլնիսի սինոդը), վրացական գյուղերի անունները վերանվանել են իրենց հայրենի գյուղերի անուններով, մարդահամարի ժամանակ վրացի բնիկներին գրանցել են հայկական անուն-ազգանուններով, իսկ ովքեր հայերեն չեն իմացել, նրանց կնքել են «վրացախոս հայեր» («Մնաթրփ», N 10, 1990):

Ահա թե ում հաշվին են հայերը բազմացել Վրաստանում, ինչպես են հայացրել ու իրենց դավանանքը պարտադրել խեղճ ու կրակ վրացիներին:

Բայց նման գործողություններով չեն սպառվում հայերի հնարամտությունները. նրանք կողոպուտով ու ձեռք բերածով չեն գոհանում և դիմում են նաև այսպիսի միջոցների. «20-30-ական թվականներին գոյություն ունեցած խոզերի ֆերմաների ավերակները, որ գրեթե 40 տարի է՝ չկան, քարտեզից քարտեզ են անցկացնում, որ հետագայում ներկայացնեն իբրև XII դարի հուշարձան» («Ախալ-գազրդա կոմունիստի» («Երիտասարդ կոմունիստ»), 15 հոկտեմբերի, 1988):

Բնորոշ մի գիծ ևս. վրացի մասնագետները նախանձելի հետևողականությամբ, իրենց հուզող հարցերին անդրադառնալիս, անպայման քար են նետում հայոց՝ համապատասխան բնագավառի անդաստանը: Այսպես՝ քննության առնելով «ԼրՅՏՐՈՒ՝ ԺՐպՉվպչՏ ՎՈՐՈՒ՝ եռահատոր և «ԼրՅՏփվՈՍՏՉպՊպվՈպ ՈրՅՏՐՈՒՈՒ ԺՐպՉվպչՏ ԹՏրՅՏՍՈՒ՝ աշխատությունները՝ գրախոսը պարզապես լուտանք է թափում հեղինակների վրա, ինչ է թե նրանք ոչ միայն չեն ժխտում Մեսրոպ Մաշտոցի և Ջաղայի համագործակցությունը, այլև համարձակվում են պնդել, որ վրացական գիրն ստեղծվել է մ. թ. V դարում և ոչ թե դրանից մեկ հազարամյակ առաջ («ԼՍ», 6 մայիսի, 1988):

Այլ առիթով, մի ադրբեջանցու ինչ-որ աշխատության մասին իրենց առարկությունները չավարտած, իսկույն թիրախ են դարձնում 1979 թ. Երևանում տպագրված ուսումնական քարտեզները և ուրիշներից անաչառություն պահանջող պատմաբանները գրում են, թե Գուգարքը, Ջավախքը (նաև Արտահանը, Կղարջքը, Տայքը և այլ գա-

վառներ) Վրաստանի պատմական հողերն են, թե այդ մարզերի նախկին և ներկա բնակիչները վրացական ցեղեր են, թե հայկական տեղանուններն ու ջրանունները տեղ չպետք է ունենային այդ քարտեզներում («ԼՍ», 13 մայիսի, 1988)¹:

Իսկ մի բանաստեղծ, հալած յուզի տեղ ընդունելով հայրենակիցների այս կարգի պնդումները, իրավական դաշտ է փնտրում, որ դատ ու դատաստանի առաջ կանգնեցնի հայ և օտարազգի պատմաբաններին, խմբագիրներին ու հրատարակչություններին՝ *«վրաց ազգին վիրավորելու և նրան կողոպտելու համար»* («ԼՍ», 24 հունիսի, 1988):

«Խորհրդային Վրաստան» թերթի աշխատակցին (20 հոկտեմբերի, 1988) տված հարցազրույցում սույն բանաստեղծը, խոսելով իր մի պոեմի մասին, ասում է, թե ինչպես սիրտն ափի մեջ, այդ երկուն արտացոլել է իր խոհերը հայ ժողովրդի, նրա ոգեղեն ուժի, արարման անշիջանելի կամքի, նրա հերոսական անցյալի և հարուստ դպրության մասին: Թե ինքը բազմիցս եղել է Հայաստանում և ամեն այցելությունից հետո ավելի ու ավելի է հարստացրել իր գիտելիքները Հայաստանի պատմության, նրա ժողովրդի մեծ մշակութային մասին, և որ իրենք պարտավոր են պահել-պահպանել նախնիների սուրբ ավանդույթները: Ի լրումն իր խոսքերի՝ անթաքույց հպարտությամբ հայտարարում է, որ իր կինը միշտ կրում է Վեհափառ Վազգեն Առաջինի նվիրած ժամացույցը:

Նախնիների սուրբ ավանդույթները պահել-պահպանել քարոզող, ամեն այցելությունից հետո Հայաստանի պատմության ու մշակութային մասին իր գիտելիքները հարստացնող, հայ ժողովրդի հանդեպ ակնածանք տածող բանաստեղծը արցախյան շարժումը համարում է տարածքի պահանջ, իր խոսքով՝ տերիտորիայի պրետենզիա (հիարկե, ոչ այդ հարցազրույցում)²:

«ԼՍ» թերթի մեկ այլ համարում (18 նոյեմբերի, 1988) զետեղված են Սահմանադրության այն ենթակետերի քննարկման արդյունքները, որ վերաբերում են հանրապետությունում «ազատ տեղաշարժի իրավունքին»: Հեղինակները՝ երեք պատկառազու գործիչներ, ամենայն լրջությամբ գրում են, թե *«դա (հանրապետության բնակիչների ազատ տեղաշարժը՝ Յ.Բ.) հանրապետության տարածքում մի բնակավայրից մյուսը հյուր գնալ չի նշանակում, այլ այն, ինչը պլանաչափորեն կատարեցին հայերը, որ նախ զբաղեցրին Հայաստանին սահմանակից մեր (իմա՝ վրաց) հողերը, ապա անցան Սև ծովի ափերի ինտենսիվ գաղութացմանը»*:

Հայերի կողմից այդ երկրամասը «զաղութացվելու» և արցախյան շարժման մասին շատերն են խոսում, բայց ուզում ենք վկայել մեզնում բարեկամի համբավ վայելող մտավորականներից մեկին՝ բանաստեղծ Ջանսուղ Չարկվիանիին, որ *«արցունքով ու ճշմարտությամբ գրված» ստվարածավալ հողվածում մեր սուրբ շարժումը համարում է «ամոթալի և ոտքերը կարծ սուտ»* («ԼՍ», 25 նոյեմբերի, 1988):

Դժգոհելով աշխարհի հեղինակավոր հանրագիտարաններում ու գիտական ժողովածուներում Վրաստանն իբրև թե ոչ պատշաճ ներկայացնելու դեմ՝ վրացի վիճակագիրները իրենց երկրին վերաբերող բառահողվածների ու նյութերի ծավալները բաղդատում են հատկապես Հայաստանն արտացոլող բառահողվածների ու նյութերի հետ և զարմանում ու զայրանում, թե ինչու Հայաստանին 80 տող է հատկացվում, իսկ Վրաստանին՝ 50-60 («Ցիսկարի», N 12, 1988):

“հՏԶպՑրՍՌռ ֆվՓՈՍսՏոպՊՌփպրՍՌռ րսՏՉՈՐՖ”-ում գետեղված Բագրատունիներ և Բագրատիոններ բառահողվածներում նշված է, որ վրացի Բագրատիոնները հայ Բագրատունիների ճյուղն են: Այս բառարանի լույսընծայումից ութ տարի անց³ վրացի մի բանաստեղծ աղմուկ-աղաղակ է անում, թե դա *«պատմական շշմեցուցիչ խեղաթյուրում է, ամեն ինչի ոչնչացում, ամեն ինչի կորուստ... Ի՞նչ է մնում մեզ, ամենամեծ Վրաստանը մեզ նվիրել են Աշոտ Մեծը, Բագրատ III-ը, Դավիթ Շինարարը և Թամար թագուհին, մինչդեռ պարզվում է, որ նրանք հայ Բագրատիոնների (հեղինակի լեզուն չի զորում Բագրատունի ասել՝ Յ.Բ.) ճյուղն են եղել: Եվ սա մենք հանդուրժում ենք, հանդուրժում ենք տարիներ շարունակ: Աղմուկ չենք բարձրացնում, որպեսզի աշխարհին իմաց տանք, թե ինչպես են թալանում մեր անցյալը»⁴:*

Այսպես, պորբլեմները (եթե նման պարզունակ խնդիրը կարելի է պորբլեմ համարել) գիտականորեն քննարկելու, հիմնավորելու փոխարեն պետք է աղմուկ հանել և դրացի ժողովրդին ամբաստանել «պատմություն թալանելու մեջ»:

Ի դեպ՝ այդչափ բանիմաց, ուշիմ, «անցյալի կողոպուտները» հետ բերել ցանկացող «հայրենասերը» չգիտե՞ր, որ իր հիշատակած բառարանի առաջին (1980), երկրորդ (1982) և երրորդ (1984) հրատարակություններում նշված վրաց Բագրատիոնիների՝ հայ Բագրատունիների ճյուղ լինելու մասին բառահողվածը չորրորդ և հաջորդ բոլոր հրատարակություններից իրենց իսկ «աշխարհով մեկ աղմուկ-

աղաղակ բարձրացնելու» պատճառով հանվել է վրացու ազգային արժանապատվությունը «վիրավորող» “ՉպՑՉՖ ըՈՆԴՐՈՑՈՊՏՉ” կապակցությունը: Գիտեր անշուշտ, բայց հայրենասերի դիմակ դնելու մոլուցքն այնքան անսանձ է, որ գոնե ի միջի այլոց չի ուզում ակնարկած լինել «թալանը» վերադարձնելու մասին⁵:

Վրաց գիտական միջավայրում բազմապիսի դրսևորումներ ունեն նաև պատշաճության բարբերին անհարիր դրսևորումները: Ահա դրանցից մեկը. Անգլիայի, Գերմանիայի, Թուրքիայի, Ռուսաստանի հետ Վրաստանի դիվանագիտական կապերը լուսաբանելիս վրաց պատմաբաններն անպայման խոսում են «դաշնակցական զորքերի Վրաստան ներխուժելու և Լոռին գրավելու» վերաբերյալ:

Բայց նախ ծանոթանանք Լոռին Վրաստանին «պատկանելու» նրանց փաստարկներին: Բերում ենք բառացի. «*Հայտնի է, որ դեռևս Քրիստոսի ծննդից առաջ՝ II դարում, Հայաստանի թագավորը Քարթլիի (Իբերիայի) թագավորից զավթել է Գոգարենե (իմա՝ Գուգարք՝ Յ.Բ.) երկիրը: Այն ձեռքից ձեռք է անցել: Հայաստանի և Վրաստանի քրիստոնեացման ժամանակ՝ IV դարի կեսին, Ներքին Քարթլիի բղջիխությունը՝ նույն այդ Գոգարենեն, Հայաստանի տարածքում է եղել, թեև շատ շուտով այդ երկիրը երկար ժամանակ վերստին Վրաստանին է պատկանել*» («Մնաթրփ», N 9, 1988):

Լոռին Վրաստանի պատմական տարածք լինելու և այդ երկրին պատկանելու «հիմքն» արդեն զգված է: Այժմ այն մասին, թե մենք՝ հայերս, ինչպես ենք տեր դարձել «վրաստանապատկան» երկրամասին: «*Երևանի կառավարությունը հավաքում է իր զորքը և առանց պատերազմ հայտարարելու անցնում Վրաստանի սահմաններն ու կոտորում այնտեղ գտնվող վրացական ջոկատները: ... Վրաստանի դեմ Հայաստանը պատերազմն սկսեց Լոռու գավառի համար և յուրացրեց ոչ միայն հարավային մասը՝ Սանահինով և Հաղպատով, այլև հյուսիսային մասը՝ Ախթալայով և Ալավերդու պղնձահանքերով*»⁶ («Մնաթրփ», N 1, 1989):

Մեկ ուրիշը վրաց պետականության վերականգնմանը նվիրված հետազոտության մեջ, անդրադառնալով Լոռու խնդրին, կրկնում է հիշյալ տողերը և ապա շարունակում. «*Վրաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո ամբողջ Լոռին հանձնվեց Հայաստանին*»: Ընդ որում՝ հեղինակն ինքն է վկայում, որ Կովկասյան բյուրոյի հայ անդամները չեն մասնակցել քվեարկությանը («Մնաթրփ», N 7, 1989):

Այս հրապարակումների օրգանական շարունակությունը և

խտացված արտահայտությունը «Վրաստանի լինել-չլինելը» շարադրանքի՝ հայերին վերաբերող հատվածն է՝ բամբասանքների ու գրպարտությունների մի ավգյան ախոռ, որ հրապարակախոսության անվան տակ ներկայացվել է վրաց հանրությանը (իբրև թե արծարծվում է վրաց ժողովրդի ծնելիության պրոբլեմը):

Առարկելով վրաց մի շարք գրողների, ովքեր ազգի բազմանալուն խանգարող հանգամանքներ համարում են քաղքենիությունը, շվայտությունը, ընչաբաղցությունը, սոցիալական անբավարար պայմանները, հողվածի հեղինակը գրում է, թե ըստ իր դիտարկումների, այդ գրողները *«միտումնավոր կերպով անտեսում են պրոբլեմի հիմնական պատճառները»*: Ահա թե ինչու ինքը վճռել է նրանց և հասարակությանն առհասարակ հուշել *«որոշ ճշմարտություններ»* և վեր հանել *Վրաստանում ժողովրդագրական պատկերը փոփոխելու առավել «զայրացուցիչ պատճառները»*: Եվ թվարկում է պատճառներից մի քանիսը: Դրանք են. դեռևս Պասկևիչի ժամանակներից սկիզբ առած և այժմ էլ շարունակվող Մեսխեթ-Ջավախքը վրաց ազգաբնակչությունից դատարկելու, երկրամասը քայլ առ քայլ Հայաստանին հանձնելու, Հայաստանից առանց անցաթղթի նույն այդ երկրամաս գնալու, իսկ վրացիների ելումուտն արգելելու, հայերին Մեսխեթ-Ջավախքը յուրացնելու արտոնություն տալու, ոչ վրացի ազգաբնակչության շովինիստորեն տրամադրված մասի կողմից վրացիներին բնօրրանից ստիպողաբար հեռացնելու, վրացական դպրոցները փակելու, վրացաբնակ գյուղերի համար նախատեսված փոխադրամիջոցները ոչ վրացաբնակ գյուղերին հատկացնելու, Ախալքալաքի անասնաբուժական ինստիտուտում վրացական բաժին չլինելու, հայ մշակույթի գործիչների կողմից Ախալքալաքի և Ջավախքի հայերի մեջ զավթողամուլական զգացումներ ներարկելու, վրացիներին հալածելու, վրաց մշակույթի հուշարձաններն ավերելու և այլ վայրագություններ կատարելու քաղաքականությունն ու գործոնները... *«Հայերը փաստորեն գրավել են մեր (իմա՝ վրաց՝ Հ.Բ.) Սև ծովի ափերը, հատկապես Աբխազիան և Աջարիան, որովհետև նրանց ոչ ոք ոչ միայն չի խանգարում, այլև Ռուսաստանի կովկասյան քաղաքականությունը խրախուսում է գաղութակալական այդ գործում»*:

Քանի որ հայերը խրախուսվում են այլոց կողմից, կարողացել են Աբխազիան ու Աջարիան գրավել, բնականաբար, նրանք՝ *«այդ հայ շովինիստները, այժմ էլ ամբողջ Վրաստանի վրա են աչք դրել»*:

Բայց անհեթեթությունների շարանն այսքանով չի սպառվում:

Հայ ժողովրդի «բարեկամը» (իր խոսքերն են՝ առանց չակերտների՝ Յ.Բ.) նաև գրում է, թե Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ Վազգեն Առաջինը, քարոզները վերջացնում է «Հայեր՛, նվաճե՛ք Սև ծովի ափերը» կոչով: Ընդ որում՝ Հայոց Հայրապետը «ոչ միայն լրզունգներով է սատարում իր հայրենակիցների բազմանալուն, այլև այդ նպատակով ֆինանսավորում է Վրաստանում տնավորվող հայ գաղութաբնակներին»: Եվ, ո՞վ հրաշք, «նրան այդ գործում աջակցում են հայոց կառավարող շրջանները» («ԼՍ», 8 հունիսի 1990):

Ակնհայտ է, որ մեր ժողովրդին և մեր հոգևոր առաջնորդին վարկաբեկող այս ակնարկը ծնունդ է առել գիազվիադականության հայատյաց հնոցում: Հայության դեմ նետված տիղմ ու ցեխի նպատակն էլ պարզ է. բարձրակետին հասցնել շիկացած մթնոլորտը և վերածել էթնոբախման:

Այդուհանդերձ ուզում ես հարցնել եթե ոչ հեղինակին, եթե ոչ թերթի խմբագրին, ապա գոնե խմբագրակազմի որևէ անդամի. մի՞թե ձեզ հայտնի չէր, որ Ջավախք Հայաստանից հավքն անգամ չէր կարող թռչել անցնել առանց անցաթղթի, քանզի անցաթղթի ստուգման կետը հենց Վրաստանի սահմանագլխին է: Ե՞րբ, որտե՞ղ կամ ո՞ր հայն է որևէ վրացու հալածել այն աստիճան, որ նա հեռանար իր բնօրրանից, չէ՞ որ փաստերը հակառակն են ապացուցում: Հիշե՞մք Ախալցխայի քաղաքային իշխանությունների տմարդի վերաբերմունքը տեղի հայերի հանդեպ: Խմբագրակազմի անդամներից գոնե մեկը չգիտե՞ր, որ Ախալքալաքում երբեք անասնաբուծական-անասնաբուժական ինստիտուտ չի եղել, այլ առկայծել ու վրաց կառավարողների «բարի» կամեցողությամբ իսկույն կեթ էլ մարել է աղքատիկ մի տեխնիկում:

Ախալքալաքի բնակչության ընդամենը չորս տոկոս կազմող վրացիների համար չեղած ինստիտուտում վրացական բաժին պահանջող գործիչը ինչո՞վ է բացատրում, որ Թբիլիսիի պետական համալսարանի Ախալցխայի մասնաճյուղում անտեսված են այդ շրջանի բնակչության գրեթե կեսը կազմող հայերի շահերը:

Չավթողական ի՞նչ զգացումներ ներարկելու մասին է խոսքը, երբ տասնամյակներ շարունակ արդարացի տրտունջ ու դժգոհություն ենք լսում գրականության, արվեստի ու գիտության հայաստանյան գործիչների հասցեին, որ մոռացել են Ջավախքի իրենց հայրենակիցներին: Գուցե չեն մոռացել, բայց սահմանային գոտի մուտք գործելու անցաթղթային տաժանքը նրանց հետ է պահել հյուր գնալու ցանկությունից ու մտքից: Իսկ եթե հեղինակը նկատի

ունի Տերյանական պոեզիային կամ Ջիվանուն նվիրված ամենամյա հանդիսությունները, որոնց մասնակցում են նաև վրաց բանաստեղծներ, թարգմանիչներ, երաժշտական կոլեկտիվներ ու պաշտոնատար անձինք, ապա զավեշտական չե՞ն հնչում այն խոսքերը, թե վրացի գործիչները, «*հնարավոր է՝ վախից, Ախալքալաք չեն այցելում*»: Իսկ Ախալքիսա՞ ինչու չեն այցելում, այդ քաղաքի վրաց լուսավորյալ և քաղաքակիրթ ազգաբնակչությունն էլ հո թվային կազմով գերազանցում է «*այլևայլ վայրագություններ անող*» հայերին: Բազմաքանակ լինելով հանդերձ՝ վախենո՞ւմ են փոքրաթիվ հայերից:

Եվ, վերջապես, իրեն մտավորական համարող անձնավորությունը ինչչա՞փ պետք է կորցնի պատվի ու պատասխանատվության զգացումը, որ հարևան ու հավատակից ժողովրդի կրոնական սրբությանը՝ ծերունագարդ կաթողիկոսին, վերագրի անլուր կեղծիք՝ հիմք ունենալով իր հաճկատարներից իբրև թե լսած «ասում են»-ը⁷:

Հիշյալ բանդագուշանքը Վրաստանի գրողների միության շաբաթաթերթի տասնյակ անբարո հողվածներից թերևս ամենամբարոն էր, ուստի Վեհափառի հետ խորհրդակցելուց և իր համաձայնությունն առնելուց հետո հողվածի՝ հայ իրականությանն առնչվող հատվածը թարգմանաբար և հակիրճ խոսքով տպագրեցինք «Անդրադարձ»-ում («Ո՞րն է դիրքորոշումը», 21 հունիսի 1990)՝ նշելով, որ հայ մասնագետները և մտավորականները չեն զլանա և իրենց դիտողություններն ու դիտարկումները կանեն այդ վրդովեցուցիչ սադրանքի առթիվ: Հաջորդեց Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի նամակը՝ Համայն Վրաստանի պատրիարք կաթողիկոս, Նորին սրբություն Տ.Տ. Իլիա Բ-ին, (տպագրվեց Երևանում լույս տեսնող պաշտոնական և ոչ պաշտոնական գրեթե բոլոր օրաթերթերում ու շաբաթաթերթերում, 10 հուլիսի 1990 թ.): Եղան արձագանքներ, հրապարակվեցին նաև բազմաթիվ հողվածներ, նամակներ, հարցազրույցներ, ռեպլիկներ, մասնավորապես՝ Վ. Ղազարյան, «Բաց նամակ Վրաստանի «Վերածնունդ» միության նախագահ Ջ. Գամսախուրդիային» («Արմավիր», 3 հուլիսի 1990), Վահագն Ղավթյան, «Բաց նամակ Վրաստանի Հելսինկյան միության նախագահ Ջվիադ Գամսախուրդիային» («Գրական թերթ», 6 հուլիսի 1990), Եգոր Մովսիսյան, «Ժամանակն է ասելու» («Պիոներ կանչ», 18 հուլիսի 1990), Սպարտակ Ղարաբաղցյան, «Հարցազրույց Կարեն Սիմոնյանի հետ» («Անդրադարձ», 9 օգոստոսի 1990), Գայանե Ղալաքյան, «Հանդիպում Ջվիադ Գամսախուրդիայի հետ» («Անդրադարձ», 9 օգոստոսի

1990), Մարտին Քարամյան, «Մի քանի ընդհանուր Գանասխուրդիայի հետ» («Գրական թերթ», 10 օգոստոսի 1990), Դավիթ Յուրյան, «Գրական թերթի խմբագրությանը» (24 օգոստոսի 1990), «Ճակատագրեր, նունենկատուրային հայերը և որդիներ» («Հայք», 24 օգոստոսի 1990) և այլն: Իրեն «արդարացնող» և մեղմացուցիչ պատասխանով հանդես եկավ նաև պրո Զվիագ Գանասխուրդիան, «Եղբորդ ամեն ինչ երեսին ասա...» («Գրական թերթ», 17 օգոստոսի 1990),

Լույս են տեսնում նաև հայ ժողովրդի հանդեպ կույր ատելություն ու թշնամանք սերմանող հրապարակախոսական և գեղարվեստական երկեր: Դրանցից մեկը՝ «Այնտեղ՝ հեռավոր մոլորակի վրա կամ տասներեք նետումներ Արտեմ Գասպարովի կյանքից» վեպն է, ուր արհամարհական սատիրայի միջոցով ծանակվում են հայ կինն ու հայ տղամարդը, հայ ընտանիքը, հայ ժողովուրդը, հայկական մշակույթը, հայոց լեզուն ու հայոց երկիրը («ԽՈՑԱԲՈՑԳՐՎՈՒՄ» թրքերեն, NN 1, 2, 1986): Հեղինակը իր հայ հերոսին՝ Արտեմ Գասպարովին, տեղափոխում է հեռավոր մի մոլորակ՝ անունը՝ Անի: Անին երկու անգամ փոքր է Երկրագնդից, նրա մեկ հինգերորդը ցամաք է, մնացածը՝ ծովեր և օվկիանոսներ: Այս մոլորակի Ցեֆեոս համաստեղությունում ապրում է իննսուներեք միլիոն բնակիչ, լեզուն ժամանակակից գրական հայերենն է՝ գերծ լատինիզմից, ազդեցության ուղորտներից ու փոխառություններից: Անի մոլորակում մեկ կնոջն ընկնում է հինգ տղամարդ: Նրանք ոչնչանում են անբուժելի հիվանդությունից: Հարուցիչը հայկական է և կոչվում է «ԶԻՉ»: Իննսուներեք միլիոնից մնացել է տասը միլիոնը. շուտով նրանք էլ կվերանան, և մոլորակը կփրկվի կործանարար հայ տարրից:

Հրատարակվել է նաև հայի ու հայկականի հանդեպ մաղծով հագեցած թխվածք՝ «Սև գիրք» վերտառությամբ (1990) և վրաց ընթերցողին հրամցվել իբրև «*ազգափրկիչ ծրագիր*»:

«Սև գիրքը» դեռ գրախանութ չհասած՝ հեղինակը «ԼԱ»-ի երկու համարներում հանդես եկավ իրեն «*հեղեղած նամակների տեսությամբ*», ըստ որի՝ մոլեռանդ ընթերցողները գրում են, թե դա «*պետք է դառնա յուրաքանչյուր վրացու սեղանի գիրքը՝ որպես Աստվածաշունչ*»: Այդ գրպարտչագիրը նրանք իբրև թե «*համեմատում են Աստվածաշունչի հետ, որովհետև սև շուկայում երկուսն էլ նույն գինն ունեն*»:

Ավելի քան ութ դար վրաց ժողովրդի սեղանի գիրք Աստվածա-

շունչը եղել է Շոթա Ռուսթավելու «Ընձենավորը», իսկ ահա XX դարի վերջին առաջարկում են այն փոխարինել մի գառաճանցքով, որ արդարացիորեն զայրույթ ու վրդովմունք է հարուցում անգամ ոչ հայ ընթերցողի հոգում:

«Հաջողություններից» գլխապատույտի մեջ ընկած հեղինակը «ի լուր բարեկամների ու չարականների» հայտարարում է, թե քսան տարի իր հովանավորին է սպասում «Սև գրքի» II մասը՝ «Սևից սև գիրքը»⁸ («ԼՍ», 27 հոկտեմբերի 1990: Նույնը՝ 3 նոյեմբերի 1990): Դժվար չէ կռահել, թե իրենից ինչ է ներկայացնում այդ հատորը:

Տխուր, շատ տխուր մտորումների տեղիք են տալիս այս հրապարակումներն ու հրատարակությունները: Վրաց մամուլն ակնհայտորեն շարունակում է «բանասարկու և բուլվարային սկանդալիստներ» (Գեորգի Թունանով) *Վելիչկոյի և Թոփչիբաշևի «գործունեությունը»*, մտազար խմբագիրներ, որոնց հաջողվեց թունավորել հայերի ու վրացիների, հայերի ու կովկասյան թաթարների հարաբերությունները և առաջ բերել ազգամիջյան ընդհարումներ: Նրանց են կրկնում մերօրյա վրացի ոչ քիչ թվով թթու-հայրենասեր խմբագիրներ, հրատարակիչներ, գիտաշխատողներ, գրողներ, հրապարակախոսներ, քաղաքագետներ: Ասել է թե՛ հակահայ նյութեր տպագրելը վրաց մտավորականության զգալի մասի համար կեցության կերպ է: Այդուհանդերձ ուզում ես հավատալ, որ մամուլը և մտավորականները, դաս առնելով վրաց-օսեթական, վրաց-արբիազական, վրաց-աջարական հակամարտություններից, վերջ կտան առճակատում ու թշնամանք հրահրող հրապարակումներին, քանզի վտանգվում է հարյուրամյակների ընթացքում սրբագործված մի մեծ բարեկամություն:

1. Վրացի գիտնականները զայրանում են, երբ հայ գործընկերները երբեմն-երբեմն համարձակվում են արծագանքել իրենց անհիմն մեղադրանքներին, ափերից ելնում են, երբ Ջավախքի հանդեպ փոքր-ինչ բարյացակամ և ուշադիր լինելու հորդոր են լսում, բայց, այ, լռելյայն են ընդունում Ադրբեջանի պահանջը՝ Ներքին Բարթիլում տեղաբնակ ազերիների համար ստեղծել ինքնավար մարզ՝ Ռուսթավի կենտրոնով: Ըստ որում՝ նրանց հետ հարաբերություններում անհրաժեշտ են համարում խոսել «սոսկ այն մասին, ինչը միացնում է Վրաստանի և Ադրբեջանի ժողովուրդներին, որ պատմականորեն կապված են իրար հետ ավելի քան երկու հազար տարի» («ԻՈՐ» ԹՏՐՅՏՄՈՒ, 3 հուլիսի 1990. ընդգծ.՝ Յ.Բ.): Սա, ինչպես տեսնում ենք, վրաց «անաչառ» և «անկանխակալ» պատմագիտական մտքի՝ նախադեպը չունեցող «ճառագուններից» է անշուշտ:
2. Այդուհանդերձ, ուզում ես հավատալ, որ նա անկեղծ է Սպիտակի երկ-

րաշարժի կապակցությամբ գրած իր «Դուրուկ» ոտանավորում («ԽՈՒՑԱՐՈՑԳՐՎՈՒ ՔՐԵՃՈՒՄ», N 1, 1989), հայ և վրաց ժողովուրդների դարավոր բարեկամության մասին հարցազրույցում («Խորհրդային Հայաստան», 14 մայիսի 1989), հայ ֆուտբոլիստների՝ Թբիլիսիի դինամյականների հանդեպ ցուցաբերած անմախաղեպ բարյացակամությունն ու ասպետականությունը զնահատելիս, Վրաստանի Հայկական մշակութային բարեգործական ընկերության հիմնադրումն առթիվ արտասանած խոսքում («Խորհրդային Վրաստան», 1 օգոստոսի 1989), Վրաստանի մայրաքաղաքում ապրիլի 9-ի զոհերի հիշատակը հավերժացնող խաչքար-հուշարձանի բացման առթիվ և հայոց մեծ երկրաշարժի տարելիցի օրը ունեցած ելույթում («Խորհրդային Վրաստան», 25 մայիսի 1989, նույնը՝ 12 դեկտեմբերի 1989):

3. Ավելի ստույգ՝ տասնհինգ տարի անց, որովհետև հայ Բագրատունիների դինաստիայից վրաց Բագրատիոնների սերելու մասին բառահողմածը տպագրվել է նաև 1963 թ. հանրագիտական մեկ այլ բառարանում: Ահա այն. ըՆԶՐՈՑՈՒՊՈ (ըՆԶՐՈՑԳՎՈ) ՓՈՐՐՍՈՒՂՈՎՈՐՑՈՒՄ՝ 2 ԸՐՎԱԿՎՈՒ (9-11 ՉՉ.). ըՆԶՐՈՑՈՒՍՎՈ չՐԵՃՈՒՎՐՍՈՒԿ, ՓՈՐՐՈ ՈՋ ՊՈՎՈՐՑՈՒՂՈՐՑՈՒՄՉՈՒՄ (2 9-19 ՉՉ.). «նվՓՈՍՍՏտպՊՈՒփպրՍՈՒՌ ռՍՉՁՈՐՖ», 2 ՊՉԳՍ ՑՏՎՈՒ, Ց. Ի, ԾՏՐՍՉՈ, 1963, թՑՐ. 86.
4. Ի գիտություն վրաց բանաստեղծի՝ ասեմ՝ վաղուց ի վեր մենք՝ հայերս, հանրագիտարաններում, գիտական աշխատություններում, ակադեմիական հրատարակություններում, դպրոցական ու բուհական դասագրքերում ընդգծվել ենք Հայոց Արշակունի արքայական դինաստիայի պարթևական ծագումը, բայց ոչ հայրենասեր հայն է դա հիվանդագին ընդունում, ոչ հայրենամուլն է «աշխարհով մեկ աղմուկ-աղաղակ հանելու կոչ անում»:
5. Ահա այդ «թալանն» ամբողջությամբ. «ըՆԶՐՈՑՈՒՊՈ (ըՆԶՐՈՑԳՎՈ) ՊՐԿՉՎՍՂ՝ ՈՐՎ. ՈՐՈՒՐՑՏՍՐՈՒՑՈՒՄ. ՂՈՎՈՒՄ. ՃՈՐՐՍՈՒՂՈՎՈՐՑՈՒՄ (2 886-1045). ծՈՒՌՈ. ՈՋՉԱՐՑՎՈ: ԸՔՑՑ Ի, ԿՎՈՑ Ի, ԸՔՑՑ ԻԻ ԻպսաչվՈՅ, ԸՔՑՑ ԻԻԻ ԾՈՒՍՐՑՈՒՉՈՒՉ, թՆԶՈՍ Ի. ըՆԶՐՈՑՈՒՍՎՈ, ՓՈՐՐՍՈՒՂՈՎՈՐՑՈՒՄ՝ ՔՐԵՃՈՒՄ 2 9-19 ՉՉ. ՉԱՑՉՖ ըՆԶՐՈՑՈՒՄՉՈՒՄ. ծՈՒՌՈՍՏՏԱԿ ՈՋՉԱՐՑՎՈ: ԸՔՑՑ, ԺՈՉՈՒՊ ԻՑՐՈՑՈՑԱԿՖ, թԱՑՐՆ ԻԻԻ, ՉՈՎՈՐՈ, թԱՑՐՆ Վ, ԼՐՈՍՍՈ ԻԻ. (ԻՑՉԱՐՑՈՒՌ ՖՎՓՈՍՍՏտպՊՈՒփպրՍՈՒՌ ռՍՉՁՈՐՖ, ԾՏՐՍՉՈ, 1980, թՑՐ. 99-100)».
6. Մինչդեռ հայտնի է, որ, օգտվելով հայ ժողովրդի ծանրագույն կացությունից, վրացական զորքերը ներխուժում են Լոռի և վայրագություններ անում: Այդ է վկայում նաև Հովի. Թունամյանի նամակը. «*Լոռեցիները, վրացի զորքերի լրբությունից կատաղած, հարձակվել են նրանց վրա, և առաջ է եկել կանոնավոր պատերազմ: Վրացիք նահանջել են մինչև Բորչալու... Ձբաղված ենք էդ կռիվը վերջացնելու գործով*» («Գրական թերթ», 24 փետրվարի 1989 թ.):
7. 70-ական թթ. սկզբին ևս նման նամակներ են տարածվել վրաց ժողովրդի մեջ և այնքան թունոտ, որ ոմանք վճռել են վերացնել Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Բարեբախտաբար, ժամանակին Վեհափառին տեղեկացրել են այդ մասին: Վրաստանում նման ցասում է բռնկվել նաև այժմ: Եվ չնայած դրան՝ հայկական հուշարձանների եղեռնը այդ

երկրում կանխելու նպատակով Ամենայն Հայոց կաթողիկոսը երեք նամակ է հղել Վրաստանի պատրիարք-կաթողիկոսին՝ հայ և վրաց հեղինակավոր մասնագետների հանձնախումբ կազմավորելու հորդորով, որ պետք է քննարկեր և վճռեր Վրաստանի տարածքում հայկական պատմամշակութային հուշարձանների և որոշ վանքերի ու եկեղեցիների՝ վրացականացումից առաջ պատկանելության հարցը: Իլիա Երկրորդը, սակայն, այդպես էլ չի արձագանքել նամակներից և ոչ մեկին: Նա ոչ միայն չարձագանքեց Վեհափառի նաև այդ նամակին (29 հունիսի 1990 թ), ընդ որում՝ բաց նամակին, այլև այն չտպագրվեց վրացական մամուլում, մինչդեռ ուղարկված էր հենց ռուսերեն տարբերակը:

8. 80-ական թվականների սկզբին նշված գրքերը ձեռագիր բազմացվում և տարածվում էին վրաց հանրության, հատկապես դպրոցականների և ուսանող երիտասարդության շրջանում:

«Անդրադարձ», Երևան

21 հունիսի 1990 թ.

12 հուլիսի 1990 թ.

19 հուլիսի 1990 թ.

26 հուլիսի 1990 թ.

Նույնը առաջաբան՝

«Հայ-վրաց գրական, պատմամշակութային հարցերը վրաց մամուլում» ժողովածուում»

«Ձանգակ-97», Երևան, 2001 թ., էջ 3-16:

հանիրավի դուրս էին մնացել հայոց համալսարանի ուսումնական ծրագրերից ու գիտական ոլորտից. մայր բուհում չկար վրացագիտության ամբիոն (ցավոք, չկա և հիմա), մինչդեռ Թբիլիսիի պետական համալսարանում նրա հիմնադրման առաջին իսկ օրերից դասավանդվել են հայագիտական առարկաներ, 1922 թ. հիմնադրվել է հայագիտության ամբիոն, 1945-ին ստեղծվել է հայոց լեզվի և գրականության բաժին, պատրաստվել են տասնյակ մասնագետներ, հրատարակվել են հայ պատմիչների երկերի թարգմանություններ, հայ գրականության պատմության, գրաբարի ու ժամանակակից հայոց լեզվի դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ, քրեստոմատիաներ, բառարաններ, գիտական աշխատություններ:

Սևակի ջանքերը ի վերջո պսակվել են հաջողությամբ. 1966 թ. Երևանի պետական համալսարանում հիմնադրվել է Շոթա Ռուսթավելու անունը կրող ուսումնական կաբինետը, որի հիման վրա 1970 թ. կազմավորվել է հայ-վրացական բանասիրության հետազոտական խումբը՝ ընտրելով հետևյալ ուղղությունները՝ հայ-վրաց գրական-մշակութային առնչություններ, հայ-վրաց լեզվաբանական-բառարանագրական հարաբերություններ, հայերենից վրացերեն և վրացերենից հայերեն երկերի թարգմանությունների ուսումնասիրություն, վրաց գրականության պատմություն: Հայաստանում և Վրաստանում տարվող հայ-վրաց բանասիրության և պատմամշակութային հարաբերությունների վերաբերյալ աշխատանքները կոորդինացնելու նպատակով Գ. Սևակը ջանացել է Հայաստանում և Վրաստանում ստեղծել պորբլեմային գիտական խորհուրդ: Ցավոք, Թբիլիսիից որևէ արձագանք չի ստացվել:

Երկուստեք նման խորհուրդների ստեղծումով, համատեղ գիտաժողովներ, բանավեճեր ու փոխայցելություններ կազմակերպելով՝ հնարավորություն կստեղծվեր կասեցնել մշակույթի ոլորտի տարածայնությունները, կարելի կլիներ փոքրացնել այն ճեղքվածքը, որ կա երկու երկրների գիտնականների միջև, ճեղքվածք, որ վերածվել է անանցանելի վիհի:

Գիտամանկավարժական. գիտահետազոտական խմբի կազմավորումից հետո Գ. Սևակն ավելի բեղուն է դարձրել իր գործունեությունը վրացագիտության բնագավառում. Երևանի և Թբիլիսիի բուհերի գրականության և լեզվի ֆակուլտետներում կարդացել է զեկուցումներ ու դասախոսություններ՝ նվիրված հայոց և վրաց լեզուների համեմատական քերականությանը, պատմությանն ու գրականությանը: Այսպես՝ հիշյալ կաբինետի բացման առթիվ հրավիրված

առաջին իսկ սեսիայում զեկուցում է կարդացել «Հայ-վրացական բանասիրության խնդիրները և մեր անելիքները» թեմայով: Նույն օրը՝ երեկոյան, անվանի լեզվաբան, թբիլիսիի պետական համալսարանի և վրացական ԽՍՀ ԳԱ ակադեմիայի հիմնադիրներից մեկի՝ Ա. Շանիձեի ծննդյան 80-ամյակի առթիվ կարդացել է ևս մեկ դասախոսություն-զեկուցում: Հանդիսավոր նիստին ներկա հոբելյարին հայագիտության բնագավառում ունեցած վաստակի համար շնորհվել է Հայկ. ԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչում:

1968 թ. հոկտեմբերի 14-ին համալսարանի հանդիսասրահում տեղի է ունեցել հոբելյանական նիստ՝ նվիրված վրաց մեծ բանաստեղծ Նիկոլոզ Բարաթաշվիլու (1818-1845) ծննդյան 150-ամյակին: Հիմնական զեկուցումով՝ «Նիկոլոզ Բարաթաշվիլու կյանքը և ստեղծագործությունը», հանդես է եկել ակադ. Գ. Սևակը:

1976 թ. մայիսի 18-ին Գաբրիել Սունդուկյանի ծննդյան 150-ամյակին նվիրված հոբելյանական գիտական նստաշրջանում, որի նիստերից մեկը տեղի է ունեցել Երևանի պետական համալսարանում, Գ. Սևակը հանդես է եկել «Հայ-վրացական լեզվաըմբռնողական ընդհանրություններն ըստ «Պեպոյի» հայերեն և վրացերեն տեքստերի» զեկուցումով:

1978 թ. մայիսին Գ. Սևակի նախածեռնությամբ գրող և հասարակական-քաղաքական գործիչ Իլիա ճավճավաձեի (1837-1907) ծննդյան 140-ամյակի առթիվ նույնպես հոբելյանական հանդիսավոր նիստերից մեկը կայացել է Երևանի պետական համալսարանում: Նիստում «Իլիա ճավճավաձեի կյանքն ու ստեղծագործությունը» թեմայով զեկուցում է կարդացել ինքը՝ պրոֆեսորը:

Ակադ. Գ. Սևակը թբիլիսիի պետական համալսարանի և Վրաստանի տարբեր բուհերի գրականության և լեզվի ֆակուլտետներում բազմիցս կարդացել է զեկուցումներ ու դասախոսություններ՝ արժանանալով շնորհակալագրերի ու պատվոգրերի:

Անվանի մանկավարժը վրացագիտության իր հարուստ գիտելիքները բաշխել է հայ և վրաց ուսանողներին ու ասպիրանտներին. Երևանի պետական համալսարանում տևական ժամանակ դասավանդել է վրաց լեզու, կադրեր է պատրաստել վրացագիտության գծով, իսկ թբիլիսիի պետական համալսարանի համար աճեցրել է վրացի հայագետներ՝ միշտ և ամենուր «սերմանելով կենսունակ հունդեր...»:

Հաշվի առնելով ակադ. Գ. Սևակի վաստակը հայ-վրաց գիտաձևակութային հարաբերությունների զարգացման գործում և երկու

ժողովուրդների կապերի ամրապնդման բնագավառում՝ 1967 թ. նրան շնորհվել է Վրաստանի գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչում:

Գիտահետազոտական. Ճիշտ է՝ ակադ. Գ. Սևակը վրացագիտական որոշակի բնագավառ չի ընտրել, մենագրական ուսումնասիրություններ չի թողել, բայց լայն են եղել նրա հետաքրքրությունների շրջանակները. վրաց հին ու նոր լեզու, Վրաստանի պատմություն, վրաց մատենագրություն և հարակից գիտություններ, այս ամենին վերաբերող նյութերը սփռված են հայոց լեզվի պատմությանն ու տեսությանը նվիրված երկերում, աշխատությունների տողատակերում ու ծանոթագրություններում: Սույն աշխատանքի հիմքում ընկած են հատկապես վրաց մասնագետների՝ Հայաստանի և Վրաստանի պատմական, գրական, մշակութային կապերը լուսաբանող աշխատությունների լուսանցքներում նրա արած նշումներն ու որոշ գրառումներ:

Գիտական հանրությանը հավանաբար հայտնի է վրացական այբուբենի ծագման վերաբերյալ վրաց բանասերների կարծիքը: Նրանք հիմնականում կրկնում են XI դարի պատմիչ Լեոնտի Մրովելու «Վրքաների կյանքը» երկի այն դրույթը, համաձայն որի՝ մ.թ.ա. III դարում, երբ Փարնավազ արքան միավորել է վրացական տոհմերն ու ստեղծել ազգային միացյալ պետություն, վրացիներն արդեն իսկ ունեցել են սեփական գիր և դպրություն: Ակադ. Իվանե Ջավախիշվիլին ազգային այբուբենի ծագումը կապել է ավելի վաղ շրջանի հետ՝ VII դար մ.թ.ա., այլ հետազոտողներ գրերի ստեղծման ժամանակաշրջանը համարել են մ.թ.ա. V-IV դարերը: Ակադ. Կորնելի Կեկելիձեն, սակայն, հավաստել է, որ վրաց այբուբենը կարող էր ստեղծվել քրիստոնեությունը պետական կրոն ընդունելուց հետո միայն: Մինչդեռ V դարի հայ պատմիչների և Մաշտոցի կենսագիր Կորյունի վկայությամբ՝ վրացական գրերի հեղինակը Մեսրոպ Մաշտոցն է:

Վրացի հետազոտողները հայկական սկզբնաղբյուրների վկայությունը համարել են լեզենդ կամ հետագա միջարկություն՝ տալով հետևյալ բացատրությունը. իբրև թե, Մեսրոպ Մաշտոցը, ճիշտ է, մեկնել է Քարթլի, բայց նա, ուսումնասիրելով վրաց այբուբենը և հիմնվելով դրա վրա, ստեղծել է հայկականը:

Այս մասին ահա թե ինչ է գրում Սևակը. «*Հայոց գրերի գյուտը ... չէր կարող անարձագանք թողնվել վրաց և աղվան ժողովուրդների կողմից, քանի որ երեք ժողովուրդներն էլ միաժամանակ և միևնույն*

աղբյուրից էին հաղորդակից եղել քրիստոնեությանը, երեքն էլ հավասարապես կանգնած էին պարսկական կամ հունական բռնի ասիմիլյացիայի վտանգի հանդեպ, երեքն էլ գտնվում էին օտարագրի քարոզիչների ու քահանաների ազդեցության ոլորտում: Եվ պատահական չէ, որ նույն տարիներին ստեղծվեցին կամ նոր ձևավորում ստացան նաև աղվանից ու վրաց գրերը Մեսրոպ Մաշտոցի գործուն օգնությամբ: Վրացիներն ու աղվանները օգտվեցին Մեսրոպի՝ Ասորիքում և Բյուզանդիայում ձեռք բերած գիտելիքներից ու հայկական գրերն ստեղծելու փորձից և նրա մասնակցությամբ ձևավորեցին իրենց քրիստոնեական գիրը...»¹:

Շուրջ երկու տասնամյակ ակադ. Գ. Սևակն ահա այս հարցերով է զբաղվել և առաջադրել մեթոդաբանական նոր սկզբունքներ ու դրույթներ: Մինչ Գ. Սևակի հանդես գալը թե՛ հայ և թե՛ այլազգի (հիմնականում՝ վրացի) բանասերների ու պատմաբանների շրջանում գերիշխել է այն կարծիքը, թե Մաշտոցը հայկական գրերն ստեղծել է հունական, ասորական, նույնիսկ հին պարսկական այբուբենների հիման վրա: Նրանք փորձում էին համոզել, թե որևէ այբուբենի հորինումը հնարավոր չէ առանց այլ այբուբենների օգնությամբ դիմելու, քանզի գոյություն է ունեցել տառանմանության և հնչյունանմանության անխախտ օրենք:

Գ. Սևակը, ուսումնասիրելով հայկական, հին վրացական և աղվանական գրերը և դրանք զուգադրելով հունական, ասորական ու հին պարսկական գրերի հետ, սկզբունքորեն մերժել է տառաստեղծման ավանդական ընկալումները և բացահայտել մեսրոպյան մեթոդը, որ բոլորովին այլ է, այն է՝ ոչ թե նմանության, այլ տարբերության սկզբունքն է դրված հանճարեղ գիտնականի գործունեության հիմքում: «Մեր այբուբենը,- գրում է Սևակը,- իր ժամանակի ոչ մի այլ այբուբենի վրա ձևված չէ, թեկուզև փոփոխություններով ու լրացումներով. իր ամբողջության մեջ նա միանգամայն ինքնուրույն ստեղծագործություն է՝ Մեսրոպ Մաշտոցի համադրական մտքի ծնունդը»²:

Հարևան երեք երկրների տառատեսակները ձևով նման են, որոշ տառեր էլ գրեթե նույնը, բայց տարբեր են արտաբերմամբ: Մաշտոցը հոգացել է, որ հայոց, վրաց և աղվանից այբուբենները տարբերվեին ոչ միայն մեկը մյուսից, այլև մինչ այդ եղած կամ այդ ժամանակ գործող այբուբեններից:

Առհասարակ մաշտոցագիտության իր բոլոր հետազոտություններում գիտնականը կուռ տրամաբանությամբ վերլուծել, գնահատել և իրեն հատուկ բժախնդրությամբ ապացուցել է հայ հանճարի ծա-

ռայություններն ու մեծագործութիւնն արժեգրկողների պնդումների հիմնագուրկ լինելը:

Հայկական, հին վրացական և աղվանական գրերն ու դրանց անվանումներն ունեն ծագումնաբանական այնպիսի ընդհանրություններ, որ ցույց են տալիս նրանց ծնունդը մեկ ակունքից և անկախութիւնն ու արմատական տարբերութիւնը փյունիկյան, սեմական, հունական, դաւտիական, եթովպական և հնագույն այլ այբուբեններից:

* * *

«Շուշանիկի վկայաբանութիւնը» V դարի հայ մատենագրութեան գոհարներից է, որ պահպանվել է մաս վրացերեն գրչութեամբ, ընդ որում, ինչպես և հայերենը՝ ընդարձակ ու համառոտ տարբերակներով, և այնպես է մերվել վրաց ժողովրդի մշակույթին, որ ինքնուրույն կյանքով ապրում է մաս այդ գրականութեան ոսկեդարանում:

Հայերեն համառոտ խմբագրութիւնները հակիրճ շարադրանքներ են՝ նախատեսված նահատակութեան օրվա առթիվ եկեղեցիներում ընթերցելու համար, մինչդեռ ընդարձակը գեղարվեստական ծավալուն պատում է՝ հետաքրքիր սյուժեով, հանգույցով և հանգուցալուծումով: Վկայաբանութեան մեջ գործող անձինք հայտնի են պատմութեան մեջ: Երկի բովանդակութեան առանցքը հայրենասիրութեան և հայրենադավութեան, կյանքի ու մահվան, հոգու և մարմնի՝ միմյանց սերտորեն աղերսված խնդիրներն են՝ արտացոլված սրբախոսական երկի սկզբունքներով ու կանոններով, բայց գեղարվեստական մարմնավորումով: Վրացական ընդարձակ խմբագրութիւնը նույնպես կրում է կրոնական երկին բնորոշ շղարշ, միաժամանակ պարունակում է հետաքրքիր տեղեկութիւններ Արևելյան Վրաստանի՝ Քարթլիի քաղաքական, հոգևոր ու սոցիալական կյանքի վերաբերյալ:

Ահա այս վկայաբանութեան բնագրային իրավունքի համար վիճարկում են մի կողմից՝ հայ և եվրոպացի, մյուս կողմից՝ վրացի բանասերները: Կողմերից յուրաքանչյուրը առաջ է մղում իր տեսակետը.

- ա. Բնագիրը եղել է հայերեն, որ հիմք է ծառայել վրացերեն թարգմանութեան համար:
- բ. Բնագիրը եղել է վրացերեն, որ հիմք է ծառայել հայերեն թարգմանութեան համար:

Ակադ. Նիկողայոս Մառը 1898 թ. Աթոնի Իվերի վանքում հայտնաբերել է Հարանց վարքերի մի ժողովածու, որտեղ կան IX-X դդ.

հայերենից վրացերեն թարգմանված հայկական տոնացույցով սահմանված հայ եկեղեցու սրբերի 13 վկայաբանությունն ու վարք, դրանց թվում և խնդրո առարկա երկը: Մառը գրում է, որ «*Վկայաբանութիւն սրբոյն Ոսկեանց քահանայիցն*» կարմիր թանաքով գրված վերնագրի տակ, չնայած ինչ-որ մեկի՝ տողերը ջնջելու ջանադիր ջանքերին, մնացած տառերով առանց դժվարության կարելի է կարդալ հետևյալը. «Այս [վկայաբ]ները թարգմանված են [հայերեն]ից...»:

Այս հավաստի կռվանը, Ուխտանես եպիսկոպոսի «Պատմութիւն հայոց»-ը, «Գիրք թղթոց»-ը, «Ճառընտիրը», «Յայսմաւորքը», «Սոփերք Հայկականք»-ը, Նիկողայոս Մառի, Պաուլ Պետերսի, Ներսես Ակինյանի, Մայիս Ավդալբեկյանի աշխատությունները խոսում են տվյալ երկի հայերենից թարգմանված լինելու օգտին, մինչդեռ վրացի հետազոտողները, ինչպես նշեցինք, հակառակ կարծիքի են:

«Շուշանիկի վկայաբանությունը» վրացական և հայկական բնագրերի համեմատական ուսումնասիրությամբ, տարբերակներով, բառարանով և ցանկերով 1938 թ. լույս է ընծայել վաստակաշատ հայագետ Ի. Աբուլաձեն: Գրքի պատասխանատու խմբագիրն է վրաց հին գրականության խոշորագույն մասնագետ, պրոֆ. Կ. Կեկելիձեն:

Քանի որ վրացերեն տեքստում հիշատակարաններ չեն պահպանվել թարգմանության տեղի, ժամանակի, թարգմանողի և այլ հանգամանքների մասին, ուստի իրեն հուզող հարցի պատասխանն Ի. Աբուլաձեն փնտրել է երկի կառուցվածքի, բովանդակության և ոճի մեջ. նա բաղդատել է տարբերակները, վեր հանել հավելումներն ու կրճատումները, խաթարումներն ու աղճատումները, օտարանուտ հատվածներն ու պատմական իրադարձություններից շեղումները, բայց արել է կամածին հետևություն, այն է՝ վրաց համառոտ տարբերակը թարգմանություն է հայերենից, բայց հայերեն ընդարձակը թարգմանվել է ավելի վաղ գոյություն ունեցած վրացերեն բնագրից, որը, սակայն, չի պահպանվել:

Ակադ. Գ. Սևակը վկայաբանության սկզբնաղբյուրը որոշելու բնագրագիտական-տեքստաբանական մեթոդը լրացրել է լեզվաբանական-քերականագիտական մեթոդով և վեր հանել երկու տարբերակների տարընթերցումները, բովանդակության ու ձևի նրբերանգները, մեկ առ մեկ ցույց տվել հայերենի հետքերը վրացական տեքստում (ի դեպ՝ հայկական ընդարձակ տեքստում վրացաբանություն հիշեցնող որևէ խոսք կամ բառ չի հայտնաբերվել): Դրանք են՝ բառերի ու բառակապակցությունների փոխառություններ, հայերենին

բնորոշ բառաբարդությունների ու բառածանցների պատճենումներ, հայերեն բազմիմաստ բառերի ու նախադասությունների ոչ ճիշտ ընկալումից բխող թարգմանական անճշտություններ, աստվածաշնչյան ծագում ունեցող վկայակոչումների և ազաթանգեղոսյան ոճի գուգադրական վերլուծություններ (հայերեն տեքստը, ինչպես նկատել են Մ. Աբեղյանը և Գ. Սևակը, գրվել է Ազաթանգեղոսի երկի խորագղեցությամբ), այլ գործոններ: Ահա դրանցից մի քանիսը գիտնականի մատուցմամբ: Վերնագրել է՝ *թարգմանության ցուցիչներ*.

1. *Չայկաբանություններ.*

հայերենում	վրացերենում
ի մեջ գավթին	շորիս էգոսա
ի մեջ նոցա	շորիս մաթսա
առաջի նոցա	ծինաշե մաթսա

2. *Բառապատճենումներ*

երկիր պագաներ կրակի	թաղուանիս սցենդա ցեցխլսա
իբրև մտախաբ	վիթարցա գոնեբա-մացթուրի
ելէք ի միջոյ նոցա	գամովեդիթ շորիս մաթսա
արդարև ո՞ղջ իցե հոգւով	ճեշմարիտադ ցխտվել
	արսա սուլիթա

երկիր եպագ ատրուշանաց	թաղվանիս սցա ատրուշանթա
յայգուէ մինչև ցերեկոյ	գանթիադիթգան մծուխրամդե
սգակիցք լինէին նմա	թանամգլովարե էղվնես
առ նաւահանգիստն	նավթսադգուրիսա
Քրիստոս	քրիստեսիսա

3. *Կրկնավորներ*

մեծամեծ	դիդ դիդիթա
օր ըստ օրէ	դդիթի դդե
գույնզգույն	փերադ-փերադ
տեղ-տեղ	ադգիլ-ադգիլ
վաղվաղակի	ադրե-ադրե
ժամանակ առ ժամանակ	ժամադ ժամադդդե
ամ յամէ	ծլիթի ծլադ

4. *Բառային ընդհանրություններ*

ազնավուր	ազնաուրի
ամբոխ	ամբոխի
ախոյան	ախովանի

զատիկ
կանոն
մոգպետ
նախարար
սաստիկ
սենեկապան
սենյակ
սպայապետ
խորշակ
համբույր
քնար

զատիկի
կանոնի
մոգպետի
նախարարի
սաստիկի
սենակապանի
սենակի
սպայպետի
խորշակի
համբորի
քնարի

5. Հայերենում որոշիչ հոդ, իսկ վրացերենում՝ ցուցական դերանուններ.

զերկիրն
օտարացեալդ

քվեղանաի իգի
ուցխոյ քմնիլի եգե

6. Ցուցական դերանունների միջարկություն.

-ահա այդպես է
-ահա այսպես է

ահա էգրեա
ահա էսրեա

7. Աստվածաշնչյան ծագում ունեցող կապակցություններ

Բայց վասն աւուրն այնորիկ խոլո դղիսա միսթվիս//
շեսախեք

և էր յանապատս իղո ուղաբնոս // ուղաբնոթա

Ահա այս վերլուծությունը հնարավորություն է ընձեռում կատարելու որոշ եզրակացություններ.

ա. «Շուշանիկի վկայաբանության» վրացերեն տարբերակը թարգմանված է հայերեն նախօրինակից:

բ. Վրացերեն թարգմանությունը, պահպանելով հանդերձ բնագրի առանձնահատկությունները, տեղայնացվել է. թարգմանիչը երկը հարմարեցրել է թե՛ իր խնդիրներին ու նպատակներին և թե՛ ազգային միջավայրին ու յուրահատկություններին:

Համոզված ենք, որ եթե ակադ. Գուրգեն Սևակը ժամանակին տպագրեր իր պրոպոսիցիաների արդյունքները, մտորումներն ու խոհերը, ապա հայերեն և վրացերեն տեքստերի մոտ հրատարակու-

թյուններ ձեռնարկողները կունենային կողմնորոշիչ ուղեցույց և վիճելի շատ հարցերի հստակ պատասխաններ:

Որ ակադ. Գ. Սևակը գերազանց գիտեր վրաց հին ու նոր լեզվի նրբությունները, վկայում է «Սուլխան Սաբա Օրբելիանիի «Վրաց-հայերեն բառգրքույկի» արժեքավորման շուրջը» հոդվածի ուրվագիրը, որ, ցավոք, դարձյալ թերի է, բնականաբար և անտիպ:

Սուլխան-Սաբա Օրբելիանին (1658-1725) պետական-հասարակական ականավոր գործիչ էր, ճանապարհորդ, գրող, բանասեր գիտնական, բառարանագիր: Նրա «Բառափունջը» այժմ էլ պահպանում է իր գիտաճանաչողական և կիրառական նշանակությունը: Աշխատությանը կցված հիշատակարանում Օրբելիանին գրում է. «*Քանի որ վրաց լեզվի բառարան չկար հրապարակում, և ... քանի որ վրաց լեզուն թողնվել էր իր քնահաճույքին, ես հանեցի, ինչ որ գտա գրքերի մեջ... որպեսզի սովորեն վրաց լեզուն լրացված և ճոխացած: Ինչ գիտեի ինքս, գրեցի, իսկ ինչ դժվար բառ որ չգիտեի, խոր գրքերի մեջ որոնեցի. մի մասը օտար լեզուներով ստուգեցի... Որքան ուժ ունեի, ջանք թափեցի հելլենական, լատինական, հայկական, ռուսական և արաբական գրքերից հանելու»³:*

Սաբան, օգտվել է նաև հայոց լեզվով եղած աղբյուրներից, մասնավորապես ձեռքի տակ ունեցել է Ոսկան Երևանցու՝ 1766 թ. Ամստերդամում հրատարակած հայերեն Աստվածաշնչի հավելված բառարանը և Երեմիա Մեղրեցու Բառգիրքը հիշեցնող ինչ-որ բառարան, որի հետևողությամբ և սկսել է իր աշխատանքը: «Անդերձնամակ» («Կտակ-Մամակ») հիշատակարանում՝ կարդում ենք. «*Ես հայերեն մի համառոտ բառարան տեսա, որ նրանց լեզվով Բառգիրք է կոչվում, և ես էլ նրա նմանողությամբ ձեռնարկեցի և, որքան կարողություն ունեի, գլուխ բերեցի այս գործը*»⁴:

Բառարանի անխաթար տարբերակը լույս է տեսել 1949 թ., բայց հայոց լեզվին առնչվող մասը մինչև այժմ հետազոտողների տեսադաշտից դուրս է մնացել: Մինչդեռ դա շատ կարևոր է, որովհետև, ինչպես նշել է նաև ակադ. Գ. Սևակը, այս բառարանը մեծ արժեք է ոչ միայն հայագիտության ու վրացագիտության համար ընդհանրապես, այլև հայոց լեզվի պատմության, հայերենի պատմական հնչյունաբանության, հայ բարբառագիտության, բառային կազմի պատմության և վերջապես նաև ընդհանուր լեզվաբանության համար: Ուստի հայագետների և վրացագետների խնդիրը պետք է լինի ըստ ամենայնի ուսումնասիրել վրաց բանասիրության այս հրաշալի կոթողը:

Բառարանի կազմության մասին. Սևակը նկատում է՝ հաճախ վրացերեն անծանոթ բառի իմաստի միակ բանալին նրա հայերեն համարժեքն է և, հակառակը, մանավանդ եթե խոսքը վերաբերում է ծառերի, խոտաբույսերի և կենդանիների անուններին: Վրացերենում գործածվող մի քանի տասնյակ բառերի դիմաց Օրբելիանին գրում է. «*Հայերեն է. վրացերեն ասում են այսպես*», կամ «*Հայերեն է. վրացերենում այսինչն է*», երբեմն էլ պարզապես նշում է. «*Կարծում եմ՝ հայերեն է*»:

«Հայերեն» համարվող այդ բառերի զգալի մասը վրացերենը իրոք փոխառել է հայերենից, որոշ բառեր, ընդհակառակը, վրացերենից են անցել հայերենին, շատ բառեր էլ պարսկերենից, արաբերենից, հունարենից և այլ լեզուներից անցել են թե՛ հայերենին, թե՛ վրացերենին:

Վկայենք այդ բառացանկից մի քանի օրինակ.

Ազատ-հայերեն է, ինքն է իր գլխի տերը, առակ-հայերեն ասում են իզավի-ին, արջասպ-հայերեն է, վրացերեն ասում են միծալբի, ասպարեզ-հայերեն ստադիոնին են ասում, իսկ վրացերեն՝ մինդորի, որ է՝ մեդանի, բազին-հայերեն է, վրացերեն ասում են՝ բոմոնի, բանջար-հայերեն է, վրացերեն մխալի են ասում:

Այնուհետև գալիս են բեմ, բուրվառ, գոմեշ, գերմակ, գութան, դահեկան, դև, թավիշ, թուր, լիրբ, կարապ, կալմաս, կարկին, հազարապետ, դամծիլ, մախոխ, մուր, պահակ, տիկ, տճկոր և բազմաթիվ բառեր, որոնց մի մասը դժվար թե հայերենից անցած լինի վրացերենին, բայց ինչպես նկատել է պրոֆ. Գ. Սևակը, կան բառեր՝ թավիշ, կալմաս (կալամաս), քաղաքապետ, որ, իրոք, հայերեն կազմություն ունեն:

Օրբելիանին հաճախ միևնույն բառի մեջ իւր տառադարձում է իվ, իսկ հնչական տարբերություն ունեցող մյուս տառերը տալիս է ըստ արտասանության և ոչ թե ըստ հայերենում ընդունված գրության:

Այսպես՝ *բիվրիեդ փոխ. բիւրեդ (բյուրեդ), բանաթիվն փոխ. բնութիւն (բնություն), այտնութիւն փոխ. հայտնութիւն (հայտնություն)* և այլն:

Այս տեսակետից հետաքրքրական է, որ իւ երկտառի կամ յու երկհնչյունի տառադարձության երկու երրորդը տպված է իբրև իւ և միայն մեկ երրորդն է տրված բարբառային պարզ ձայնավորով՝ ի կամ ու, ինչպես օրինակ՝ *արին, շինութին, գիղութուն, օղորմութուն*: Համենայն դեպս բարբառային պարզ ձայնավորով տառադարձված

օրինակները վկայում են երկու տարբեր բարբառների առկայություն: Այսպես՝ մի կողմից ունենք՝ *սատանաութուն, մենծութուն, կենթանութուն, սովորութուն, գիղութուն, օղորմութուն*, մյուս կողմից՝ *արին, թանգութին, շինութին, սովորութին, ախպերութին, ամբախտութին, ջուրօրհնութին, աջողութին*: Սրանցից առաջինն է օրինաչափ թիֆլիսի հայ բարբառի համար:

Ինչ վերաբերում է իվ-ով տառադարձված բառերին, ապա դրանք գերազանցապես գրքային են, ինչպես օրինակ՝ *ներհակութիվ-ներհակություն, հարիվրապետ-հարյուրապետ, բիվրեդ-բյուրեդ, թիվր-թյուր, լռութիվ-լռություն*:

Շատ հետաքրքիր երևույթի ենք հանդիպում՝ կապված բառամիջի ե և ո տառերի տառադարձության հետ, որ գերիշխող և տիպական է Օրբելիանու բառարանում:

Ինչպես հայտնի է, ե-ն և ո-ն արևելահայ բարբառներում բառամիջում հնչում են իբրև օ և է (*չօրս, օղորմութուն, հօրթ, սէր, տէսա, մէծ/մէնծ*), իսկ թիֆլիսի հայ բարբառում՝ որպես ու և ի (*չուրս, հուրթ, ծուց, միւնծ*): Հայտնի է նաև, որ այդ նույն տառերը նույն դիրքում մեր մի շարք բարբառների ու ենթաբարբառների մեջ հնչում են ուօ և իե երկբարբառային ձևով (*չուօրս, հուօրթ, գուօրծ, միենծ, բիեր*):

Խնդրո առարկա բառարանում բառամիջի ե և ո ունեցող հայերեն բառերի ճնշող մասը ներկայացված է այսպիսի բարբառային տառադարձությամբ, թեև հնչական մման դեպքերի չենք հանդիպում ո՛չ Սայաթ-Նովայի, ո՛չ Ախվերդյանի և ո՛չ էլ Սուևդուկյանի՝ թիֆլիսի հայ բարբառով գրված երկերում:

Ուշադիր զննելու դեպքում ե-ի և ո-ի տառադարձության մեջ կտեսնենք նաև հետաքրքիր այլ երևույթների, օրինակ՝ *էրիեկ, իրիեք, շուօք, անփուօրծ, ստիեղծող* և այլն, որ սպասում են իրենց մեկնաբանողին:

Ասվածի և արձանագրվածի ուսումնասիրությունը մեծ հետաքրքրություն կարող է առաջացնել պատմական հնչյունաբանության առումով:

Բառարանում կան երկու լեզուներում գործածվող ընդհանուր հարյուրավոր բառեր, որոնց ծագումը Օրբելիանին չի նշել, ուստի հայագետ-վրացագետները պետք է պարզեն, թե դրանցից որն ինչ ստուգաբանություն կարող է ունենալ: Այդպիսի բառերից են՝ *արտավար, բրուտ, դավ, հարծ, փլատակ, փողոց* (վրացերեն՝ *փուրոցի*), *չափ* և այլն:

Օրբելիանիի բառարանում շատ բառեր տառացիորեն գրադարձված են հայերենից և չեն համապատասխանում հայոց լեզվի ո՛չ գրական, ո՛չ խոսակցական, ո՛չ էլ բարբառային արտասանական կանոններին: *Դրանցից են՝ էութիվն-էութիւն, հարիվր-հարիւր, թիվր-թիւր, իվդ-իւդ, մոլորութիվն-մոլորութիւն, կապելուո-կապելոյ (կապելու) և այլն:*

Բառարանի շատ բառեր առնված են գրավոր տեքստերից: Հայերեն տասնյակ բառեր ներկայացված են ոչ թե իրենց սկզբնական, ուղիղ ձևով, այլ տարբեր հոլովներով, խոնարհված, նույնիսկ հոգնակի թվով, մինչդեռ վրացերեն համարժեքները տրված են եզակի ուղղականի ձևով:

Օրինակներ. *բլուրք փոխ. բլուր, դասս փոխ. դաս, դստեր փոխ. դուստր, ելից փոխ. ելք, զայս փոխ. այս, զերկդրամեան փոխ. երկդրամեան, իժի փոխ. իժ, կանայս փոխ. կին, կապանոք փոխ. կապանք, պարտապանաց փոխ. պարտապանք, պարտիս փոխ. պարտք...*

Հետաքրքրական է և այն, որ բառարանում բայի բաղադրյալ ժամանակները, հարադրությունները և բառակապակցությունները ներկայացված են միացած, իբրև մեկ ամբողջական բառ. *անձրիեվելէր, ասացնիելտվի, արժանիեղեվ, զգուշացնումէր, կանչիելէր, միաբերանով, նստած է, հանաքիմանում, շտապումէր, պաչումեն, սիրումէր, օգիտուրք և այլն:*

Ակադ. Գուրգեն Սևակը՝ այս երևույթի մասին. «*Հնարավոր է, որ բայի բաղադրյալ ժամանակների միաձույլ գրությունը լինի մի կողմից՝ գրաբարի, մյուս կողմից՝ վրացերենի բայական նույն ժամանակների ընդունված գրության ազդեցության արդյունք, և կամ դեռևս քերականորեն չճանաչված աշխարհաբարի օժանդակ բայերը նույնացված լինեն գրաբարի բայական վերջավորություններին, մի բան, որ, որպես սկզբունք, կիրառվում էր հատկապես «Յուսիսափայլի» հեղինակների կողմից (գրումեն, խոսումէի...)*»:

«Բառափնջի» վրացերեն-հայերեն հավելվածում (էջ 951-1002) կան հայերենին ոչ բնորոշ բազմաթիվ բաղադրություններ, ածանցումներ և բայական ժամանակաձևեր. դրանք սխալ չեն, ոչ էլ վրիպակի արդյունք են: Պարզապես ինքնուրույն նորակազմություններ են, վրացերեն համապատասխան բառի բառացի թարգմանություններ:

Այսպես՝ հայերեն խորթ մայր բառի փոխարեն գրված է մայրափոխ, որ վրացերենի (դեդիմացվալի) բառացի պատճենն է. տիկին

րեն *գրեցի* և վրացերեն *վժերե* բառերը, որ համարժեք են բառային իմաստով, ունեն նաև եղանակի, ժամանակի, սեռի, դեմքի և թվի քերականական իմաստ, բայց վրացերենն ունի նաև այնպիսի քերականական իմաստ, որպիսին չունի հայերենը, որովհետև դա բնորոշ է հնդեվրոպական լեզվաընտանիքի որևէ անդամի: *Վժերե*-ի տարբերակիչ իմաստն է՝ ես գրեցի այսինչ բանը: Այսինքն՝ ենթակայի իմաստից և արդեն նշված քերականական կարգերից բացի, արտահայտում է նաև ուղիղ խնդրի իմաստ (եզ. թիվ, III դեմք): Եթե բավարարվենք այս մեկ օրինակով, ապա հեշտ կլինի առարկել՝ պնդելով, թե հայերեն *գրեց*-ը նույնպես իր մեջ պարունակում է ինչ-որ բան գրելու իմաստ: Այս դեպքում օգնության են գալիս վրաց լեզվի բայական համակարգի այլ ձևեր: Օրինակ՝ *մժերե* (դու գրեցիր ինձ), *զժերե* (ես գրեցի քեզ), *մժերա* (նա գրեց ինձ), *զվժերա* (նա գրեց մեզ), իսկ ահա *զժերաթ*-ը իր մեջ պարունակում է հետևյալ ձևերը՝ նա գրեց քեզ, նա գրեց ձեզ, նրանք գրեցին քեզ, նրանք գրեցին ձեզ:

Վրացերենում բայը բազմադեմ է. կարող է լինել երկդեմ, եռադեմ, հազվադեպ, բայց նաև քառադեմ. ենթակայից և ուղիղ խնդրից բացի, նա պարունակում է անուղղակի խնդրի դեմքը ևս:

Վրացերենի նրբություններին վերաբերող օրինակներ կան հիշյալ դասագրքի նաև այլ բաժիններում:

Բերված փաստերը կրկին ու կրկին վկայում են, որ հայ-վրացական բանասիրությունը դեռ շատ անելիքներ ունի երկու ժողովուրդների հարևանության, բարկանության ու սերտ կապերի հետևանքով առաջացած այն ընդհանրությունների ուսումնասիրման գծով, որ առկա են նրանց մշակույթների և լեզուների մեջ: Հենց միայն Սուլխան-Սաբա Օրբելիանիի բառարանը ցույց է տալիս, թե որքան անելիքներ ունեն հայ և վրացի լեզվաբանները:

1. Գուրգեն Սևակ, Մեսրոպ Մաշտոց. հայկական գրերի ու մատենագիտության սկզբնավորումը, Երևան, 1962, էջ 66:
2. Նույն տեղում, էջ 32:
3. sulxan-saba orbeliani, "sityvis kona", Tbilisi., 1949, էջ 10:
4. Նույն տեղը:

«Հայագիտական հանդես»
Երևան, 2007 թ., N 3 (6), էջ 87-99:

ԼՐԱԳՐԱԿԱՆ ԲԱՐՔԵՐԻՆ ԱՆՀԱՐԻՐ*

Մասնագիտության բերումով հետևում են հայ և վրաց իրականությանն առնչվող բազմաբնույթ հողվածներին, մենագրություններին, ուսումնասիրություններին, հայերենից վրացերեն և վրացերենից հայերեն կատարվող տարաբնույթ թարգմանություններին: Ծանոթանալով այդ ամենին՝ հանրաշահ՝ ուրախացնող շատ նյութերի մեջ հանդիպում են նաև այնպիսիները, որոնց մասին չի կարելի չխոսել ոչ միայն ապագայի առաջ պարտապան չմնալու, այլև հենց թեկուզ մասնագիտական արժանապատվությունից ելնելով:

Խորհրդածության տեղիք տվող իրողություններից մեկն էլ այն է, որ Վրաստանում ծնված կամ այնտեղ պարզապես մի քանի տարի ապրած մեր բանաստեղծներից ու արձակագիրներից ոմանք վրացական արձակը ռուսերեն թարգմանություններից, չափածոն տողացիներից թարգմանում են հայերեն և բնագրից իրականացրածի քողի տակ հանձնում տպագրության: Բայց... թող չդողա սիրտը գողի, որովհետև խոսքս վերաբերում է ոչ թե այդ թարգմանիչներին ու այդ կարգի թարգմանություններին (դրանց ընթացքը կասեցնել հնարավոր չէ), այլ գրական, ավելի ստույգ, լրագրական բարբերին անհարիր մի երևույթի, որ տխուր խորհրդածությունների տեղիք է տալիս...

«Գրական թերթի» (այսուհետ՝ «ԳԹ») 1981 թ. մայիսի 21-ի համարում տպագրվեց հարցազրույց Վրաստանի ԳՄ վարչության նախագահ Նոդար Դումբաձեի հետ՝ «Եղբորով ես ուժեղ» վերնագրով: Սկիզբը հուշում էր, որ հարցազրույցը կայացել է Վրաստանում խորհրդային կարգերի հաստատման և հանրապետության կոմկուսի կազմավորման 60-ամյակի առթիվ: Ահա. «Բատոնո Նոդար, ընդունեցե՞ք հայ գրողների ողջույնը Վրաստանում սովետական կարգերի հաստատման և հանրապետության կոմկուսի կազմավորման 60-ամյակի առթիվ: Կուզե՞նայինք իմանալ, թե Դուք ինչպե՞ս եք առանձնացնում և նշում այս տոնը»:

* Ծախնալու համար՝ «ԳԹ» 1981 թ. մայիսի 21-ի համարում տպագրվեց հարցազրույց Վրաստանի ԳՄ վարչության նախագահ Նոդար Դումբաձեի հետ՝ «Եղբորով ես ուժեղ» վերնագրով: Սկիզբը հուշում էր, որ հարցազրույցը կայացել է Վրաստանում խորհրդային կարգերի հաստատման և հանրապետության կոմկուսի կազմավորման 60-ամյակի առթիվ: Ահա. «Բատոնո Նոդար, ընդունեցե՞ք հայ գրողների ողջույնը Վրաստանում սովետական կարգերի հաստատման և հանրապետության կոմկուսի կազմավորման 60-ամյակի առթիվ: Կուզե՞նայինք իմանալ, թե Դուք ինչպե՞ս եք առանձնացնում և նշում այս տոնը»:

1982 թ. դեկտեմբերի 23-ին հանրապետական «Коммунист» (այսուհետ՝ «Կ») թերթում հրապարակվեց նույն հարցազրույցը նույն անձի հետ՝ նույն վերնագրով, բայց այս անգամ ԽՍՀՄ կազմավորման 60-ամյակի առթիվ: Թերթում կարդում ենք. «В эти дни, когда советский народ отмечает славное 60-летие образования СССР, тема дружбы приобретает особое значение. Об истоках нашего братства корреспондент "Коммуниста" беседует с председателем правления Союза писателей Грузии... Нодаром Думбадзе».

Անտեղյակ ընթերցողը անվերապահորեն հավատում է զրույցի իսկությանը: Բերենք միայն առաջին տողերը. «Нодар Владимирович, 60-летний юбилей становления Советской власти в Грузии вы назвали днем ее рождения и написали следующие строки: „Судьба моей республики, став моей судьбой, отразилась в моих произведениях как личный опыт гражданина и коммуниста, который разделяет с народом его радости и горести...”

«ԳԹ»-ի ամբողջ տեքստը՝ հարցերի վերադասավորումով, պատասխանների աննշան կրճատում-հավելումով մոնտաժվել է և իբրև կայացած հարցազրույց, հանձնվել թերթին, ինչպես նշվեց վերևում՝ այս անգամ էլ ՍՍՀՄ կազմավորման 60-ամյակի առթիվ: Իսկ ինչպե՞ս է վերադասավորվել. «ԳԹ»-ի առաջին երկու հարցերը՝ երկրորդի պատասխանով, միացվել է և «Կ»-ում դարձել հարց N 1, «ԳԹ»-ի երկրորդը՝ «Կ»-ում զբաղեցրել է II հորիզոնականը: Բայց այսպես շարունակվեր, աչք կժակեր, ուստի թղթակիցը խառնել է մյուսները. ութերորդը բարձրացրել III, յոթերորդը՝ V, իններորդը՝ VI հորիզոնականները: «Կ»-ի էջերում տեղ չեն գտել «ԳԹ»-ի 4-5-6-րդ հարցերը իրենց հակիրճ պատասխաններով (դրանց էլ կհանդիպենք «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթում): Այսպիսով, երկրորդ զրույցի ժամանակ կրկնվում են հին հարցերը, և ո՛չ ավելի, ո՛չ պակաս, ստացվում հին պատասխանները:

1984 թ. սեպտեմբերի 26-ին «Հայրենիքի ձայն»-ում (այսուհետ՝ «ՀԶ») հրապարակվում է թվով երրորդ հարցազրույցը նույն գրողի հետ՝ «եղբայրը եղբորով է ուժեղ» խորագրով: Թերթի հանձնարարականի վերջին տողերը վկայում են, որ հարցազրույցը (այս անգամ առիթը չի նշվում) արդեն պատրաստ էր տպագրության, երբ ստացվեց տխուր լուրը: Կայացե՞լ է հարցազրույցը. պատասխանելու համար երեք թերթերի երեք մյուսերը դնենք կողք կողքի... Ինչպես «ԳԹ»-ի ինը հարցերն ու պատասխանները «տեղավորվել» են «Կ»-ի էջերում, այնպես էլ «Կ»-ի վեց հարց-պատասխանները հանգրվան են

գտել «ՀԶ»-ի երեք հարց-պատասխաններում: Նորություն կա՞: Այո՛: «ԳԹ»-ի՝ թղթակցի III և «Կ»-ի II հարցերը աննշան վերախմբագրումով դարձել են... գրուցակցի պատասխան խոսք: Ահա, խնդրեմ: «ԳԹ»-ում. «Վրաց և հայ դասական, ժամանակակից գրական կերպարներից շատերը գրեթե հավասարապես հարազատ են մեր երկու ժողովուրդներին: Ասենք՝ «Պեպոն» Սունդուկյանը թարգմանեց վրացերեն, և Պեպոն վրացի դարձավ: Սա ևս չի՞ վկայում մեր ժողովուրդների հոգեհարազատությունը»: «ԳԹ»-ում տպագրվածի համաձայն սա հարց է՝ ուղղված Ն. Դումբաձեին: Այսպես է նաև «Կ»-ում. “Многие армянские и грузинские литературные образы, классические и современные, почти в равной мере близки нашим народам. Так, Сундукян перевел “Пепо” на грузинский язык, сделав это произведение достоянием Грузии. Образ Арсакидзе в романе “Десница мастера” (պետք է լինի՝ “ՊարվՈՓՈ ՉպսՈՍՏՃՏ ՎՈրՑպՐՈ”-Յ.Բ.) столь же близок армянам, как и грузинам... Раз-это не свидетельство духовного родства наших народов!”

Իսկ հիմա կարդանք «ՀԶ»-ը. «Վրաց և հայ դասական ու ժամանակակից գրական կերպարներից շատերը գրեթե հավասարապես հարազատ են մեր երկու ժողովուրդներին: Ասենք՝ «Պեպոն» Սունդուկյանը թարգմանեց վրացերեն, և Պեպոն մեր բեմի վրա քայլեց իբրև վրացի: Կամ Արսակիձեի կերպարը Գամսախուրդիայի «Վարպետաց վարպետի աջը» վեպից նույնքան հարազատ է հային, որքան վրացուն»:

Ի՞նչ է ստացվում: Այն, որ Լենինյան մրցանակի դափնեկիր գրողը նախկինում երկու անգամ իրեն տրված հարցերը շաղկապում է, մոռտաժ անում որպես մեկ միտք՝ «Պեպոն մեր բեմի վրա քայլեց իբրև վրացի» և, իբրև սեփական խոսք, հրամցնում հարցադրողին: «ԳԹ»-ի II և IV հարցերի պատասխանները, աննշան կրճատումներով, «ՀԶ»-ում դարձել են բոլորովին նոր հարցի պատասխան (սրանք նույնությամբ կան նաև «Կ»-ում): Նույն կերպ, «ԳԹ»-ի «Ինչպե՞ս եք գնահատում գրողի՝ ազգային սահմաններում մնալը» հարցի պատասխանը, բացառությամբ առաջին նախադասության, «ՀԶ»-ում դարձել է «Ի՞նչն էք գրականության մեջ գլխավորը համարում» հարցի պատասխան: Պատկերը կատարյալ լինելու համար բերենք ևս մեկ օրինակ. ասացի՝ «Կ»-ում «ԳԹ»-ի համեմատությամբ, նոր է IV հարցը.- “Нодар Владимирович, как писатель и депутат Верховного Совета СССР, вы большое внимание уделяете вопросам воспитания молодого поколения. Какие формы воспитания вы предпочитаете

и какие черты в человеке считаете наиболее важными!»: Ահա սրա պատասխանը նույնությամբ տեղ է գտել «ՀԶ»-ի «Դուք, իբրև գրող, իբրև մտածող, իբրև քաղաքացի, ի՞նչ կարևոր հատկանիշներ եք առանձնացնում մարդու մեջ, ինչպիսի՞ն պիտի լինի նա» հարցի տակ: Ասել է թե՛ երրորդ գրույցի ժամանակ թղթակիցը որքան էլ նորացնում է հարցերը, անվանի գրողը բառացիորեն կրկնում է տարիների առաջ տված պատասխանները: Բայց այսպես մտածել, կնշանակի վիրավորել գրողի հիշատակը:

Առաջին հարցազրույցը եռատել է նաև. համոզվելու համար բավական է աչքի անցկացնել «Սովետական Վրաստան» (այսուհետ՝ «ՍՎ») թերթի 1981 թ. մայիսի 21-ի և «Սովետական Հայաստանի» (այսուհետ՝ «ՍՀ») նույն թվականի մայիսի 22-ի համարները, որոնցում «Իմ հանրապետության ճակատագիրը իմ ճակատագիրն է» միևնույն խորագրով, որպես առանձին միավոր, տպագրված է «ԳԹ»-ի առաջին հարցի ծավալուն պատասխանը: Եթե հարցազրույցը երեք տարբեր առիթով, երեք տարվա ընթացքում տպագրել է երեք տարբեր թերթերում, ապա եռատած մասի հանդեպ համեմատաբար «համեստ» է գտնվել. ճիշտ է, դարձյալ երեք տարբեր թերթերում, բայց նույն առիթով և նույն օրերին:

Այս ամենի մասին գրելու հարկ չէր լինի, եթե նույնը չկրկնվեր նաև բոլորովին վերջերս, եթե չավելանար առավել այսպանելի մի փաստ ևս, որ ցավոք, դարձյալ առնչվում է Ն. Դումբաձեի անվանն ու հիշատակին:

Ինչպես գիտենք, Հովի. Շիրազի մահվան առթիվ «ԳԹ»-ում (17 մարտի 1984 թ.) ցավակցական բազում հեռագրերի հետ հրապարակվեց նաև Ն. Դումբաձեի սրտի խոսքը: Այդ խոսքը, բացառությամբ առաջին երեք նախադասությունների, չգիտես ինչու և ինչպես, հայտնվել է Շիրազի 70-ամյակի առթիվ Մ. Փոցխիշվիլու հետ նույն լրագրողի վարած հարցազրույցում (տե՛ս «ՍՀ», 25 դեկտեմբերի 1984, «Շրջում է աշխարհեաշխարհ»): Ո՞վ է ավելացրել և ինչո՞ւ: Հո չի կարելի ենթադրել, թե վրացի բանաստեղծը յուրացրել է հայկական թերթերում ամիսներ առաջ տպագրված իր հայրենակցի խոսքը և հրամցրել «բանից անտեղյակ» թղթակցին:

Ն. Դումբաձեի խոսքում Շիրազի և հայ ժողովրդի փոխադարձ սերն արժեքավորող այսպիսի միտք կա՝ «*Դեպի Շիրազը տանող ճանապարհը Հայաստանն է, և դեպի Հայաստան տանող ճանապարհը՝ Շիրազը*»: (Ընդօժված մասը դուրս է մնացել հավելյալի տեսադաշտից): Սա անպայման տեղ կգտնի հայ մեծ բանաստեղծի

մասին լավագույն ասույթների շարքում, քանզի խորունկ է և խորիմաստ. բայց արի ու տես, որ ըստ «ԳԹ»-ի՝ հեղինակը Նոդար Դումբաձեն է, ըստ «ՍՅ-ի՝» Մորիս Փոցխիշվիլին:

Բայց սա էլ դեռ վերջը չէ. «ՍՅ»-ում տպագրված «Շրջում է աշխարհեաշխարհ» Շիրազի մասին նյութը ընդամենը տասնօրյա ընդմիջումից հետո, նույն ստորագրությամբ հարց ու պատասխանի կերպարանք առած (չմոռանանք, որ «ՍՅ»-ում խոհեր էին «Շիրազ երևույթի, նրա պոեզիայի, քաղաքացու և հայրենասերի նրա կերպարի մասին») և «Շիրազը դարերինն է» արտահագուստով բախում է «ՍՎ» թերթի դուռը և իջևանում նրա 1985 թ. հունվարի 5-ի համարում (բարեբախտաբար, այս անգամ առանց Ն. Դումբաձեի հեռագրի տեքստի):

Հիշեցնեն, որ լրագրողը Մ. Փոցխիշվիլու հետ Հովի. Շիրազի մասին մի հարցազրույց էլ տպագրել էր «Գարուն» ամսագրի 1984 թ. N11-ում, էջ 16-20: Այսպիսով, արդյունքում վերստին ստացվում է երեք հարցազրույց, տպագրված երեք անգամ՝ նույն բովանդակությամբ: Բացառված չէ, որ այդ նյութերը ամբողջությամբ կամ մասմաս տպագրված լինեն նաև այլ թերթերում ու ամսագրերում:

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՍԱՅԱԹ - ՆՈՎԱՅԻ ՌՈՒՍԵՐԵՆ ՆՈՐ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ

«Սովետսկի պիսատել» հրատարակչության լենինգրադյան բաժանմունքը «Բանաստեղծի գրադարան» մատենաշարով լույս է ընծայել Սայաթ-Նովայի հայերեն, վրացերեն և թուրքերեն տաղերի ռուսերեն թարգմանությունների ժողովածուն: Այն բացվում է Հայկական ՍՍՀ ԳԱ թղթակից անդամ, պրոֆեսոր Վաչե Նալբադյանի «Մարդու և սիրո երգիչը» խորագիրը կրող ընդարձակ առաջաբանով, որտեղ տրված են սայաթնովագիտության սկզբնավորման ու զարգացման 130-ամյա ընթացքի հակիրճ պատմությունն ու ձեռքբերումները: Միաժամանակ շրջանառության մեջ են դրվում հանճարեղ քերթողի կյանքի վերաբերյալ վրացական աղբյուրներում եղած գրեթե բոլոր գիտական ու փաստական տվյալները:

Պրոֆ. Վ. Նալբադյանը քննում է բանաստեղծի կյանքը և նրա ստեղծագործական ուղին, սիրային, ներբողական, խրատական ու սոցիալական բնույթի խաղերը, բացահայտում է մեծ երգչի բանաստեղծական աշխարհի ներքին գեղեցկությունները: Հայերեն խաղերի գաղափարա-գեղարվեստական արժանիքները վերլուծվում են հայ միջնադարյան պոեզիայի և ժողովրդական բանահյուսության ընդհանուր համայնապատկերում: Առաջաբանի հեղինակը նշում է, որ ստեղծագործաբար յուրացնելով ու շարունակելով իր նախորդների առավել ուսանելի ձեռքբերումները, Սայաթ-Նովան բանաստեղծությունը բարձրացրեց մի նոր աստիճանի, իսկ գուսանական-աշուղական երգարվեստը զտեց օտարամուտ տարրերից և առաջ մղեց զարգացման ազգային հունով: Հետաքրքիր են նաև Սայաթ-Նովայի, այսպես կոչված, արքունական շրջանի և պալատական մթնոլորտ-միջավայրի հետ առնչվող դիտարկումները:

Անժխտելի է, որ Սայաթ-Նովայի վրացերեն խաղերը մեծ դեր կատարեցին վրաց գրականության մեջ: Սայաթ-Նովան գրեց խոսակցական լեզվով, իր երգերն ու բանաստեղծությունները, որ աչքի են ընկնում զգացմունքային հագեցածությամբ, քնարականությամբ, մտքի խորությամբ ու անբռնազբոս պատկերներով, ոչ միայն համեմեց ժողովրդական անպաճույճ բառ ու բանով, այլև այդ բանահյուսությունը հարստացրեց բազմաթիվ թևավոր խոսքերով, որ, ինչպես

հավաստված է, այսօր էլ տարածուն ունեն վրաց ժողովրդի մեջ: «*Դա հենց այն յուրահատուկ նորն է,- գրում է բանաստեղծ, ակադեմիկոս Իոսեբ Գրիշաշվիլին,- որ նա հաստատեց Անդրկովկասի ժողովուրդների գրականության մեջ՝ ընդհանրապես և վրաց գրականության մեջ՝ մասնավորապես*»:

Վ. Նալբանդյանը, Սայաթ-Նովայի պոեզիան գնահատելով որպես գրական ինտերնացիոնալիզմի օրինակ, գրում է, որ նրա եռալեզու քերթվածները ոչ միայն նպաստեցին Անդրկովկասի ժողովուրդների պոեզիայի ընդհանուր զարգացմանը, այլև բացառիկ նշանակություն ունեցան այդ ժողովուրդների գեղարվեստական մտածողությունն ընդլայնելու, մերձեցնելու և բազմակողմանի ու բազմակերպ կապեր ամրապնդելու գործում:

Ժողովածուն, որ կազմել և ծանոթագրել է գրականագետ և թարգմանիչ Պևրոզ Թաթոսյանը, ընդգրկում է բանաստեղծի գրական ժառանգության մեծագույն մասը. հայերեն խաղերից առկա են 55-ը, վրացերենից՝ 31-ը, թուրքերենից՝ դարձյալ 55-ը, 3 խաղ էլ զետեղված է հավելվածում. ընդամենը՝ 144 խաղ, որ ծավալով զգալիորեն գերազանցում է նախորդ բոլոր հրատարակությունները և լիարժեք պատկերացում տալիս Սայաթ-Նովայի ստեղծագործության մասին: Նշենք նաև, որ դրանցից 28-ը նոր թարգմանություններ են, որ տողացիներից իրականացրել են Ե. Նիկոլանսկայան, Դ. Վինոգրադովը և Ա. Շչերբակովը: Մնացածը տրված են Վ. Բոյունտովի, Ս. Շերվինսկու, Մ. Լոզինսկու, Կ. Լիպսկերովի, Ա. Տարկովսկու, Վ. Պոտապովայի, Ս. Գայսարյանի, Վ. Զվյագինցևայի և Յու. Վեսելովսկու թարգմանությամբ:

Ընդունված սկզբունքի համաձայն՝ հատորը բաժանված է երեք հիմնական բաժնի, ծանոթագրությունների և բառարանի: Գ. Թաթոսյանը նույն խաղերի մի քանի թարգմանություններից ընտրել է հաջողվածները և բաղդատել բնագրերին (վրացերենը և թուրքերենը՝ համապատասխան լեզուների մասնագետների օգնությամբ):

Իհարկե, կատարված աշխատանքը մեծ է և տարողունակ, բայց ասել, թե ամեն դժվարություն լիովին հաղթահարվել է, ճիշտ չէր լինի, որովհետև թարգմանություններում դեռևս կան անհարթություններ ու անճշտություններ, սակայն էականն այն է, որ կազմողին հաջողվել է դրանք հասցնել նվազագույնի:

Օգտվելով սայաթնովագիտության հարուստ փորձից և հատկապես Մ. Հասարթյանի վերջին՝ քննություն բռնած հրատարակությունից, Գ. Թաթոսյանը բանիմացորեն և գիտական պատշաճ մակար-

դակով կազմել է նաև ծանոթագրություններն ու բառարանը: Նա համառոտ ներածականում ծանոթացնում է հատորի կառուցվածքին, խոսում բանաստեղծությունների ռուսերեն թարգմանությունների մասին՝ Յակով Պոլունսկու շնորհակալ աշխատանքից մինչև Ս. Գայսարյանի կազմած և «Բանաստեղծի գրադարան» մատենաշարով Լենինգրադում 1961 թ. լույս ընծայած ժողովածուն, ապա մանրամասն բացատրում է խաղերում հանդիպող դժվարըմբռնելի բառերը, դարձվածքները, աշուղական երգարվեստում գործածվող բազմիմաստ արտահայտությունները:

Առաջաբանը, հարուստ ծանոթագրությունները, բառարանը, տեքստաբանական ծանուցումներն ու լրացումները ոչ միայն կօգնեն ռուս ընթերցողին Սայաթ-Նովայի ստեղծագործության ընկալման հարցում, այլև կնպաստեն դրանց նոր թարգմանությունների իրականացմանը:

«Սովետական Հայաստան»
18 դեկտեմբերի 1983 թ.

ՆՈՐԱՐԱՅՑ ՄԵԿ ՏԱՂ

Սայաթ-Նովայի համապարփակ պոեզիան իր անխամրելի կենտունակութեամբ վաղուց ի վեր դարձել է նաև վրաց ժողովրդի սեփականությունը, «քանզի նա՝ Կովկասի այդ որդին, մեկն է և իր մեջ ամփոփում է մեր ժողովուրդների մաքրամաքուր հոգին, միսն ու արյունը» (Ն. Դունբաձե), քանզի, կատարելապես տիրապետելով վրացերենին, նա «աշխատել է հոգուտ վրաց գրականության, հարստացրել վրաց պոեզիայի գանձարանը» (Շավվա Դադիանի):

Այս օրերին Հայաստանում և Վրաստանում նշվում է սիրո երգչի ծննդյան 275-ամյակը: Հատկապես վրաց իրականության մեջ լույս են տեսել բազմաթիվ նյութեր, որոնցից հետաքրքիր է «Ցիսկարի» («Արշալույս») երիտասարդական ամսագրի 1987 թ. 9-րդ համարում տպագրված՝ Ա. Փոցխիշվիլու «Սայաթ-Նովա՝ սիրահար թե սիրո երգիչ» բանավիճային հոդվածը, որտեղ հրապարակված է նորահայտ վրացերեն մեկ խաղ. այն հայտնաբերվել է Անդրեյ Շեգրենի արխիվում: Նշելով, որ բանաստեղծությունն արտագրված է 1811 թ., հրապարակողը, ցավոք, այլ մանրամասներ չի հաղորդում:

Ա. Շեգրենը (1794-1855) ազգությամբ շվեդ է, եղել է բանասեր, ազգագրագետ: Երիտասարդական տարիներին տեղափոխվել է Պետերբուրգ և մինչև կյանքի վերջը ապրել ու աշխատել է գիտակրթական այդ խոշորագույն կենտրոնում: 1844 թ. ընտրվել է ռուսաստանյան ակադեմիայի անդամ, 1845-ին՝ Պետերբուրգի ազգագրության թանգարանի տնօրեն: 1835-1837 թթ. շրջագայել է Կովկասում, ուսումնասիրել Կովկասի ժողովուրդների ազգագրությունը: Հավանաբար շրջագայության ժամանակ էլ հայնաբերել է հիշյալ խաղը: Ենթադրվում է, որ այն պատկանում է Սայաթ-Նովայի գրչին, ուստի սիրով ներկայացնում ենք մեր ընթերցողին՝ սայաթնովագետ Հենրիկ Բախչինյանի թարգմանությամբ.

*Սիրուն իս դուն, անընման իս, բարձ էրեսիտ խալն է սագում,
Գըլուխըտ չարդաթով ծածկած՝ էրգեն ծամ-դալալն է սագում,
Էտ քու մարմնին, զար-զարբաբին սիրուն թիրման-շալն է սագում,
Գո՛ւզե սպանիս, գո՛ւզե թողնիս, ուժն է Ռոստոմ-Չալի սագում:*

Գիշեր-ցերեկ պըտուտ էկա քու դըռանը թաքուն դաստով,
Մե գամ տեսա քու պատկիրքըն, չըկշտացա սիրուտ մաստով,
Կու փըռիմ զար փիանդազըն սուսանբարի-ռեհնի դաստով՝
Վուր միր բաղչեն հյուր գաս միզի, մուրվաթով ու բարի սրտով.
Խենյվընուըն աճած, ծաղկած անուշահոտ գուլն է սագոււմ,
Գո՛ւզե սպանիս, գո՛ւզե թողնիս, ուժն է Ռոստոմ-Չալի սագոււմ:

Ամառնիրըն դուրեկան ին անուշ հովն ու քամին կալի,
Ջարթարվում իս, վընաս չըտաս էտ քու քընքուշ մահջամալին,
Բըլբուլն է երգում վարթին, աղաչելով ձեն է տալի.
Թաքավուր իս, մե դո՛ւրս արի, արթարութիւնն է քի սագոււմ,
Գո՛ւզե սպանիս, գո՛ւզե թողնիս, ուժն է Ռոստոմ-Չալի սագոււմ:

Յիսի միր բաղչեն հյուր գաս միզի, հրաման տուր՝ դուռըն բանամ,
Յիս գըլուկսըս խոնարեցի՝ հենց տեսա դեմքըտ անընման,
Ինչի՞ ինձնից ձեռ քաշեցիր, ա՛սա, սիրելիս, իմանամ.
Էտ քու մարմնին, զար-զարբաբին սիրուն թիրման-շալն է սագոււմ,
Գո՛ւզե սպանիս, գո՛ւզե թողնիս, ուժն է Ռոստոմ-Չալի սագոււմ:

Բըլբուլն է իջել սարեմեն, մեկ էլ տեսար՝ թողեց, գընաց,
Գիշեր-ցերեկ ներսն ին ըլում, կոսին՝ աշուն է ամպամած.
Սայաթ-Նովեն ասում է, թե լիզու ունիս շաքարով թաց,
Դուն հիքիմ իս, լավ կիմանաս, թե ճակատիս ի՞նչ է գըրած,
Էտ քու մարմնին, զար-զարբաբին սիրուն թիրման-շալն է սագոււմ,
Գո՛ւզե սպանիս, գո՛ւզե թողնիս, ուժն է Ռոստոմ-Չալի սագոււմ:

«Գրական թերթ»
20 նոյեմբերի 1987 թ.

ՀԱՅ ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅԱՆ ԽՃԱՆԿԱՐ

Թբիլիսիի «Սախե(լ)երի» («Դեմքեր, Անուններ») հրատարակչությունը Հայաստանի գրողների միության կազմավորման 70-ամյակի առթիվ լույս է ընծայել ժամանակակից հայ պոեզիայի մի գողտրիկ ընտրանի: Հաճելի է փաստել, որ երկարատև դադարից հետո վրաց իրականության մեջ հետաքրքրության ալիք է բարձրանում արդի հայ գրականության նկատմամբ: Ու թեև այս փոքրածավալ ժողովածուն առաջինն է վերջին 20-25 տարում, նշանակությունը բացառիկ է, քանզի հիանալի առիթ և հնարավորություն է վրացալեզու ընթերցողի համար՝ ծանոթանալու մերօրյա հայ քնարերգուներից մի քանիսին:

Ժողովածուն բացվում է ՀԳՄ նախագահի հակիրճ ներածականով:

Տասնմեկ բանաստեղծներ ներկայացված են լուսանկարով և համառոտ կենսագրականով, որ, ինչ խոսք, ավելի շահեկան է դարձնում գիրքը:

Այդ դժվար և պատասխանատու գործը նախածեռնել և իրականացրել է թբիլիսահայ բանաստեղծ, թարգմանիչ Անահիտ Բոստանջյանը: Դա նրա ներուժի նորովի դրսևորման առաջին փորձն է, շնորհակալ աշխատանք, որով շարունակում է երախտավոր նախորդների՝ Հավիաննես, Արտաշես և Արչիլ Դավթյանների, Իվանե Բեզլարովի, Սուրեն Ավչյանի, Սահակ Մանվելյանի, Հովհաննես Կարայանի, գրչի տաղանդավոր և համեստագույն մշակներից մեկի՝ Մամիկոն Թագվորյանի գործունեությունը, երախտավորներ, որ, հավասարապես ստեղծագործելով հայերեն ու վրացերեն, հարստացրել են երկու ժողովուրդների թարգմանական գրականությունների գանձարանները:

Անահիտ Բոստանջյանը վերջաբանում գրում է ժողովածուն հղանալու, լույս աշխարհ բերելու և այն ապրումների ու մտավախության մասին, որ ունեցել է հայերենից վրացերեն թարգմանելիս: Չնայած «համեստ փորձին» ու «հանդգնությանը», խոչընդոտները հաղթահարված են. եթե փոխադարձ թարգմանության համար իբրև հիմնական նախապայման պահանջվում է տվյալ լեզուներով ստեղ-

ժազորժելու ունակություն կամ էլ, առնվազն, այդ լեզուների նրբին առանձնահատկությունների գերազանց իմացություն ու տարիների փորձառություն, ապա դրանցով օժտված, հագեցած ու հարուստ է թարգմանչուհին: Ժողովածուի քննական վերլուծությունը թողնելով ավելի գիտակ անձանց՝ ասենք միայն, որ հաջողության գրավականներից մեկն էլ այն է, որ նա նախընտրել է հիմնականում իր սերնդի այն հեղինակներին, որոնց աշխարհընկալմանը քաջածանոթ է, նրանց նման ինքն էլ ապրում, ստեղծագործում է աշխարհաքաղաքական ու սոցիալ-տնտեսական նույն պայմաններում, բարոյահոգեբանական գրեթե նույն մթնոլորտում, ականատեսն է պատմական նույնակերպ տեղատվությունների ու մակընթացությունների: Ահա թե ինչու, բնագրային բառ ու բանի հետ նրան գրեթե հաջողվել է պահպանել նաև հեղինակների ոճական հնարքներն ու հուզաշխարհի ելևէջները:

Ա. Բոստանջյանը ծանուցում է, որ մոտ ապագայում վրաց ընթերցողի սեղանին կդրվի հայ պոեզիայի շատ ավելի ընդգրկուն հատոր, ուր նախատեսվում է ներառել նաև սփյուռքահայ բանաստեղծների: Կարծում ենք՝ այնքան է հասունացել ու կոփվել թարգմանական արվեստի բովում, որ կիրականացնի նաև իր այս մտահղացումը: Այդուհանդերձ՝ խորհուրդ կտայինք գործին մասնակից դարձնել նաև վրաց բանաստեղծների ու թարգմանիչների. եթե անհատականություն ունեցող մի քանի հեղինակի թարգմանում է նույն անձը, որքան էլ փորձառու և պատրաստված, անխուսափելի են կորուստներն ու «համահարթեցումը», գրքայնությունն ու բառացիությունը:

Գրքի տպագրության հովանավորներն են վրաց բանաստեղծուհի Նանա Ակոբիձեն և կրկին ու դարձյալ ինքը՝ Ա. Բոստանջյանը, խմբագիր՝ Գիա Չաղունելի:

Այս գրասեր ու անդադրում կնոջ հետևողական ջանքերի շնորհիվ տևական ընդհատումից հետո վերջապես վերածնվեց նաև Վրաստանի գրողների համազգային միության հայկական մասնաճյուղի գրական-գեղարվեստական և տեսական-քննադատական «Կամուրջ» պարբերականը:

«Կամուրջ»-ի հրատարակության առթիվ ջերմորեն ողջունել, շնորհավորական խոսք են ասել և շարունակական երկարամյա ճանապարհ մաղթել վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը, Վրաստանի գրողների համազգային միության նախկին նախագահ Թ. Ծիվծիվաձեն, Հայաստանի գրողների միության նախագահ Լ. Անանյանը, Երևանի «Անահիտ» հրատարակչու-

թյան տնօրեն, բանաստեղծ Ա. Ոսկանյանը, հալեպահայ գրող, հրապարակախոս Թ. Թորանյանը, Վրաստանի խորհրդարանի պատգամավոր, «Վրաստան» շաբաթաթերթի խմբագիր Վ. Բայբուրթյանը, «Կամուրջ» հանդեսի գլխավոր խմբագիր Ա. Բոստանջյանը:

Պարբերականը լույս է ընծայել Թբիլիսիի «Մերանի» հրատարակչությունը՝ հովանավորությամբ Օքրո Օքրոյանի անվան «Աստված սեր է» գրական հիմնադրամի:

«Ասպնջակ»

1-15 հոկտեմբերի 2004 թ.

ԵՎԱ ՄԵԿ ԽՃԱՆԿԱՐ

Տարեսկզբին Թբիլիսիում վրացերեն թարգմանությամբ լույս տեսավ ժամանակակից հայ բանաստեղծների քերթվածքների հատընտիր («Գրական թերթը» անդրադարձել է, ըստ պատշաճի գնահատել է այդ ժողովածուն): Եվ ահա, ընդամենը մի քանի ամիս անց, հաջորդեց հայ արձակի ընտրանին, որ տպագրել է Թբիլիսիի «Կովկասյան տուն» հրատարակչությունը՝ գերմանացի բարերար պարոն Յորգ Յենլեի աջակցությամբ:

Հաճելի է արձանագրել, որ տարիներ շարունակ հասարակական-քաղաքական հանգամանքների բերումով նահանջ ապրող և գրեթե ընդհատված մշակութային գործընթացը կյանքի է կոչվում:

Թարգմանիչը՝ Գիվի Լուարսաբիշվիլին, հետևողականորեն զբաղվում է արևելահայ և սփյուռքահայ հատվածների դասական ու ժամանակակից գրողների լավագույն երկերը վրաց ընթերցողներին ներկայացնելու գործով: Նա նպատակադրվել է հայրենակիցներին ավելի մոտիկից ու ավելի լավ ճանաչել տալ դարավոր դրկցի ցավն ու կենսակերպն արտացոլող գրականությունը, նպատակ, որ արժանի է և՛ գովասանքի, և՛ խրախուսանքի: Ինչպես ինքն է գրում ժողովածուի կարճառոտ ներածականում, Կովկասի մյուս ժողովուրդները, այո՛, մոտ ու հարազատ են վրացիներին, բայց «ամենամոտր կամ առաջիններից մեկը հայերն են, քանզի շատ բան ունենք ընդհանուր, այնքան շատ, որ զարմանք է պատճառում»:

Ինչպես հայ ժողովուրդը, այնպես էլ հայ գրողներն սփռված են աշխարհով մեկ: Նրանք նույնպես ջանում են հավատարիմ մնալ ազգային ավանդույթներին, իրենց ինքնությանն ու սեփական արմատներին, խուսափել օտարումից ու ուժացումից: Դրանով հանդերձ՝ *«զարմում են համամշակութային (թարգմանչի խոսքն է՝ Յ.Բ.) արժեքներ՝ ներշնչված ու ներծծված խոր հայկականությամբ»:*

Բանիմաց խոսք է. տարածությամբ, ժամանակով, կենսակերպով ու իրավակարգերով իրարից հեռու՝ մեր ստեղծագործողների կտավներում, բնական է, որ հայրենիքն է, նրա անցյալը, ներկան, միևնույն ժամանակ այն մթնոլորտ-միջավայրը՝ լեզվամշակութային թե սոցիալական, որտեղ վիճակված է ապրել:

Գ. Լուարսաբիշվիլին զուգահեռ է անցկացնում հայաստանյան և սփյուռքահայ արվեստագետների ու գրողների միջև: Նրա հայեցո-

ղությամբ՝ հայ հեղինակների թե՛ գեղանկարչության և թե՛ գեղարվեստական գրականության մեջ աչքի են զարնում միավորողն ու ընդհանուրը, զատողն ու առանձնահատուկը և՛ իրարից, և՛ տեղացի ստեղծագործողներից:

«Հայ գրողները նման են մեկմեկու, նման են և այն երկրների գրողներին, որտեղ բնակվում են ու արարում», լինեն Ֆրանսիայում, թե Վրաստանում, Թուրքիայում, թե Պարսկաստանում... Գրքում գետեղված երկերը հեղինակը համարում է իր մտքի վկայություն:

Հատկանշական է, որ Գ. Լուսրսաբիշվիլին շնորհակալություն է հայտնում նրանց, ովքեր իրենց ձեռքն են վերցնելու այդ գիրքը: Հետևելով մեր մտահոգ բարեկամին՝ մենք ևս խորհուրդ ենք տալիս մեր ընթերցողներին հաճախակի բացել մերձավոր հարևանի պատմության, արվեստի ու գրականության անդաստանի դռները, որովհետև «դրանով նախ ինքներդ ձեզ եք հարստացնում», և ապա գուցե թե այդպես հնարավոր է հանգել անհատների ու հանրության փոխըմբռնման, քանզի չիմացությամբ ու անտեղյակությամբ շատ ու շատ թյուրիմացությունների տեղիք ենք տալիս:

Գրքում ընդգրկված են Հայաստանի և Սփյուռքի տասներեք հայ գրողների, մասնավորապես՝ Ջորայր Խալափյանի («Նրանք», «Ծովինարը»), Յովհաննես Ղուկասյանի («Եվ անմման էր...»), Արա Կյուլերի («Բաբելոնեն վերջ պիտի ապրինք»), Ռուբեր Հատտեճյանի («Մարդոց մեծության և խեղճության մասին», «Բախտի մեքենա մը»), Ռուբեն Յովսեփյանի («Ճայերը»), Բենիկ Սեյրանյանի («Կարոտ»), Վանո Սիրադեղյանի («Գառ-ախպերիկը»), Շահան Շահնուրի («Պճեղ մը անուշ սիրտ»), Մկրտիչ Արմենի («Հին տարվա գիշերը»), Վարդգես Պետրոսյանի («Ինչու են շուտ մեռնում ծաղիկները»), Վահե Պողոսյանի («Տղամարդը և կինը»), Վահան Թոթովենցի («Բաց կապույտ ծաղիկներ») և Վարդան Կոմիկյանի («Գերեզմանը») պատմվածքները:

Ցավոք, սրբագրական անփութության հետևանքով հայերեն և վրացերեն տառադարձված անուն-ազգանուններում սարդել են վրիպակներ, այսպես՝ հանդիպում ենք գրության Գուլեր և Գուլեուր, Ռոբերտ (նաև՝ Ռոբեր) Հատոեջյան, Սարատեղյան, մի այլ տեղ՝ Իարադեղյան, Կոմեկեյան, ապա և Կոմիկեյան ձևերի:

Այսուհանդերձ՝ «Բանաստեղծական խճանկար» և «Հայկական պատմվածքներ» ընտրանիները լավ նվեր են ընթերցողին, ավելին՝ դրանք նոր կշիռ ու արժեք են, նախադրյալներ՝ հայ-վրաց գրական-մշակութային կապերը նորագույն պայմաններում նորովի շարունակելու ճանապարհին:

«Գրական թերթ»
1 հոկտեմբերի 2004 թ.

ՄՆԱՅՈՒՆ ԱՐԺԵՔ

(նորը՝ հայ-վրաց գիտամշակութային կապերի
պատմության մեջ)

Հայ և վրաց բառարանագրության պատմությունը հարուստ է եվրոպական ու ասիական տասնյակ լեզուներին առնչվող բազմաթիվ ու բազմաբնույթ մեծ ու փոքր թարգմանական բառարաններով՝ լինեն ընդհանուր բնույթի, ճյուղային, երկլեզվյա թե բազմալեզվյա: Սակայն, որքան էլ տարօրինակ է, դրկից ու հինավուրց ժողովուրդները չեն կարող հպարտանալ երկուստեք բառարանների, դասագրքերի և ինքնուսույցների հարստությամբ, ավելին՝ այդ բնագավառները մինչև վերջերս ամենաանմխիթար վիճակում էին: Փորձեր եղել են անշուշտ, բայց դրանք մնացել են կամ անավարտ, կամ անտիպ: Միայն Վրաստանի հայկական դպրոցների և բուհերի հայկական բաժինների դասագրքերում ու քրեստոմատիաներում կարելի է տեսնել վրացերեն-հայերեն համառոտ բառացանկեր, որ, ինչ խոսք, չեն կարող բավարարել անգամ նվազագույն պահանջները: Այժմ մասնակիորեն լուծված կարելի է համարել ինքնուսույցների հրատարակության խնդիրը. 1989 թ. Թբիլիսիում (կազմողներ՝ Ռ. Գորգաձե, Վլ. Պողոսյան), 2004 թ. Երևանում (Ռ. Գորգաձե), 2005 և 2009 թթ. դարձյալ Երևանում (Հր. Բայրամյան) լույս են տեսել վրացերեն-հայերեն և հայերեն-վրացերեն զրուցագիրք-զրուցարաններ: Տեղաշարժ է նկատվում նաև բառարանագրության բնագավառում. 1996 թ. Թբիլիսիում լույս տեսավ պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկի «Հայերեն-վրացերեն բառարանը», որ նա կազմել է 1930-ական թթ., և պարունակում է 20-22 հազ. բառ (տպագրության պատրաստողները այն վերամշակել են, լրացրել):

Եվ ահա բոլորովին վերջերս Երևանի պետական համալսարանի հրատարակչությունը լույս ընծայեց հայազետ Ռամազ Գորգաձեի «Վրացերեն-հայերեն բառարանը», որ հեղինակն ստեղծել է ավելի քան 30 տարվա անխոնջ աշխատանքի արդյունքում: Այդ ամբողջ ընթացքում բառարանագիրը հավաքել, խմբավորել և համակարգել է փաստական չափազանց հարուստ նյութ, որոնել ու արձանագրել հազարավոր բառերի իմաստային տարբերակներ ու նրբերանգներ:

Սա երկլեզվյան թարգմանական (գուգադրական) ընդհանուր բառարան է՝ գրված բառարանագրության և բառարանագիտության տեսական ու գործնական հիմունքներով, այն է՝ տրված են հնչյունաբանական, ուղղագրական, ուղղախոսական, բառակազմական, բառապաշարային, նաև ոճական յուրահատկությունները, երբեմն էլ, անհրաժեշտաբար, այն բառերի բացատրությունը կամ նկարագրությունը, որոնց իմաստային համագորները չկան հայերենում:

Բառարանը, պատմական առումով առաջինը և միակը լինելով, նաև ամենածավալունն է, քանզի ամփոփում է վրաց հոգևոր ու նյութական մշակույթի, գիտատեխնիկական, քաղաքական, տնտեսական, առհասարակ հասարակական կյանքի բոլոր ոլորտներն ընդգրկող բառեր: Այն չի հավակնում լիակատար լինելու, բայց բառաքանակի (բառահոդվածի) առումով բավական ընդարձակ է. նշվածից բացի, առկա են հարյուրավոր դարձվածքային միավորներ, ասույթներ, առածներ, թևավոր խոսքեր, կայուն բառակապակցություններ, աստվածաշնչյան պատվիրաններ ու կաղապարներ, բարբառային, կենցաղային, ժողովրդախոսակցական, ժարգոնային, հնացած բառեր, նաև վերջին երկու տասնամյակի ընթացքում գիտության ու տեխնիկայի տարբեր ճյուղերի վերաբերող փոխառություններ, նորաբանություններ, մասնագիտական առանձին տերմիններ և այլն, բոլորը կամ գրեթե բոլորը՝ քերականական որոշ նշումներով, խոսքիմասային պատկանելությամբ, սեռական հոլովածևով, գործածության ոլորտներով, իմաստային նրբերանգներով ու կիրառական հատկանիշներով: Ավելի քան 700 մեծադիր էջից բաղկացած այդ բառարանը, ուր զետեղված է շուրջ 40 հազ. բառահոդված՝ համապատասխան բառակապակցություններով (նրանում ամփոփված են նաև անձնանունների ու տեղանունների ցանկեր՝ վրացերեն և հայերեն տառադարձությամբ), աչքի է ընկնում գիտականությամբ, բացատրությունների ճշգրտությամբ, հակիրճ է ու մատչելի, ունի տեսական ու գործնական նպատակ և ուղղված է թարգմանիչներին, վրացերենը և հայերենը ուսումնասիրողներին, այդ լեզուներով հետաքրքրվող անձանց, հայագետ-վրացագետներին ու վրացագետ-հայագետներին, և նրանց, ովքեր ցանկություն ունեն հաղորդակցվելու վրաց լեզվի հարստությանն ու ճկունությանը, դրանց հայերեն համարժեքներին:

Այս կոթողային աշխատանքի հրատարակությունն էլ, իրոք, որ փառահեղ է, ինչի համար շնորհակալական ամենաջերմ խոսքերը պետք է հղել Գալուստ Գյուլբենկյան հիմնարկության հայկական բա-

Ժաննունքի տնօրեն, դոկտոր Ջավեն Եկավյանին, Երևանի պետական համալսարանի հրատարակչության տնօրեն Պերճ Ստեփանյանին և իրենց գործի այն վարպետներին, ովքեր նպաստել են բառարանի տպագրությանը (ի դեպ սա Գյուլբենկյան հիմնարկության հովանավորությամբ համալսարանի հրատարակչության լույս ընծայած 43-րդ գիրքն է):

Ո. Գորգաձեի «Յայերեն-վրացերեն բառարանը» (խմբագիր՝ Յր. Բայրամյան) հայ-վրաց գիտամշակութային կապերի պատմության ամենավառ էջերից է, բացառիկ ու մնայուն արժեք, որ անպայման իր նպաստը կունենա նույն այդ կապերի զարգացման, հարստացման ու ամրապնդման գործում:

«Գրական թերթ»
2 հունիսի 2006 թ.

ԽՈՍՔ՝ ՌԵՎԱԶ ՄԻՇՎԵԼԱԶԵԻ ԳՐՔԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԻՆ

Ուսագ Միշվելաձեն ժամանակակից վրաց գեղարվեստական արձակի տաղանդավոր և ամենաբեղուն վարպետներից է: Չնայած համեստ պահվածքին՝ թե ինքը գրում է սուկ իր ժողովրդի հոգսերի ու խոհերի մասին, բայց այդքանով էլ ընդհանուր, համազգային են նրա արժարժած խնդիրները, ընդ որում՝ գեղարվեստական կատարյալ վարպետությամբ:

Այդ վարպետության արդյունքն է, որ նրա արձակը վաղուց ի վեր դուրս է եկել Վրաստանի սահմաններից, թարգմանվել աշխարհի տասնյակ լեզուներով, արժանացել շատ ու շատ երկրների ընթերցասեր հասարակայնության ուշադրությանը:

Միշվելաձեի նովելները գրված են այդ տեսակի ամենաարդիական ոճով, ունեն կոմպոզիցիոն անթերի կառույց, հագեցած են դրամատիզմով, առածգական են ու տարողունակ, հակիրճ և ռացիոնալ: Այնպես որ, նրա նովելները հավասարի իրավունքով կարող են կանգնել Մերիմեի ու Մոպասանի, Չեխովի ու Ջոիրապի, Մորավիայի ու Ցվայգի նովելների շարքում, իսկ ինքը՝ հեղինակը, ազգային իրականության մեջ արժանիորեն կարող է կենդանի դասականի ծիրանի կրել...

Թարգմանության ամբողջ ընթացքում, աչքի առաջ ունենալով այս իրողությունը, հնարավորինս ջանացել են չխաթարել հեղինակի լեզուն ու ոճը, որ հայերենը եթե ոչ համահունչ, ապա զոնե հուշի բնագրի ինչպիսին լինելը: Թե որքանով է դա ինձ հաջողվել, կասեն անաչառ ու խստադատ ընթերցողները և, իհարկե, ժամանակը:

Բարեկամներ, անվանի գրողը նույնքան անվանի ազգային-հասարակական և գրական-մշակութային գործիչ է: Ծավալած գործունեությամբ ու մասշտաբներով նա, առանց վերապահումի, կարող է համեմատվել XIX դարի երկրորդ կեսի վրաց խոշորագույն գործիչների հետ: Ժամանակին նրա անունն անպայման կհնչի այդ մեծերի անունների շարքում: Միշվելաձեն ամենաարագը և ամենաառաջինն է արձագանքում հասարակական կյանքի ցավոտ երևույթներին, քանզի, զարգացումները որքան էլ վտանգավոր լինեն իր համար, այդպիսին էր խորհրդային տարիներին, այդպիսին է և հիմա, նա իր

երկրի ինքնության պաշտպանն է, ազատ ու անկախ Վրաստանի համար համարձակորեն պայքարի ելած մարտիկ: Այսօր էլ, վեց ու կես տասնամյակի բեռը ուսերին, նա առաջին գծում է (ի դեպ՝ այդ պայքարի առաջին գծում էր նաև նրա մինուճար որդին, որ իր քսանամյա կյանքը դրեց հայրենիքի գոհասեղանին: Տե՛ս «Գյուղի Մաղոննան» նովելների ժողովածուն, էջ 238, «Երագ»):

Նա Վրաստանի գրողների միության առաջին քարտուղարն է, Թբիլիսիի պետական համալսարանի վրաց բանասիրության ֆակուլտետի ժամանակակից վրաց գրականության պատմության ամբիոնի վարիչը, բանասիրական գիտությունների դոկտոր, ընդ որում՝ դոկտոր դարձել է 33 տարեկանում, պրոֆեսոր՝ 36-ում, Վրաստանի պետական և միջազգային գրական բազմաթիվ մրցանակների դափնեկիր, միջազգային գրական մի շարք միավորումների անդամ:

Նովելների առաջին ժողովածուն լույս է ընծայել, երբ ընդամենը 24 տարեկան էր: Այժմ արդեն նրա գրական հունձքը 70 գիրք է (տարբեր լեզուներով). դրանք ավելի քան 400 նովելի, տասնյակ պատմվածքների, պիեսների, հրապարակախոսական ելույթների ժողովածուներ են, տեսական-քննադատական երկեր, բուհական դասագրքեր: Նա նաև վերլուծական բացառիկ ձիրքի տեր գրականագետ է ու գրականության տեսաբան, հիմնադիր-խմբագիրն է «Մծերլիս գագեթի» («Գրողի թերթ») շաբաթաթերթի և «Նուգեշի» («Սփոփանք») ամսագրի, հիմնադիր գեղարվեստական ղեկավարն է նաև Վրաց նովելի թատրոնի: Ցանկանանք նրան քաջառողջություն, ստեղծագործական հաջողություններ ի փառս վրաց ժողովրդի ու վրաց մշակույթի:

6 հունիսի 2006 թ.

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ

ԿԱՐԳ ՈՒ ԿԱՆՈՆ՝ ԵՐԿՐԻ ՆԵՐՍՈՒՄ

ՀԱՐՑ 1. Մարդը դուրս է գալիս փողոց: Այն լիքն է անակնկալներով, որոնք արտահայտում են մեր ժամանակի անհանգստությունը: Գրեթե ամեն քայլափոխի հանդիպում ենք անօրինականության: Մեր օրերում ի՞նչն է ձեզ առավել շատ անհանգստացնում: Ի՞նչ սխալ եք տեսնում, որը, ձեր կարծիքով, տազմապալի է վաղվա համար: Ի՞նչ է անարխիան, մենք մեր շուրջը տեսնո՞ւմ ենք այն:

- Եթե անարխիան անիշխանությունն չթարգմանվեր, ապա կարելի էր ասել, որ մեզանում օրեցօր մոլեգնող անարխիան հետևանք է անիշխանության, հասարակական և անձնական գույքի հափշտակում, ավարառություն, սպանություն, կողոպուտ, առևանգում, կաշառակերություն, հովանավորչություն, քաոս, սոցիալական անարդարություն, անպատժելիություն և... պետական ու գործադիր իշխանությունների՝ զարմանք հարուցող անտարբերություն: Ի լուր աշխարհի տարփողում ենք, թե՛ եկեք, հա՛, տեսեք, որ մենք իրավական պետություն ենք ստեղծում, մենք ժողովրդավարության ենք հասել, մեզանում շուկայական տնտեսությունն է գործում և այլն, մինչդեռ անիրավությունը, հակաժողովրդական ու հակապետական բարքերն են անարգել թևածում հանրապետությունով մեկ՝ ավելի ընդլայնելով մասշտաբները և բազում նորանոր սողանքքեր, էլ չեն ասում վաղուց անվանարկված բնագավառների (առևտուր, արդարադատություն, ավտոտեսչություն, առողջապահություն, բուհական համակարգ) մասին, որոնցում տեղի ունեցող անարդարությունների շուրջ առասպելներ են պտտվում:

Ես անարխիա եմ համարում մաև այսքան կուսակցությունների առկայությունը. նույնիսկ դժվարանում ես կուսակցություն համարել, քանզի դրանք, ավելի շուտ, իրար նկատմամբ թույնով ու մաղծով լցված, բուլվարային բանբասանքների գերի, իրար մեջ թշնամի որոնող մեկը մյուսին ոչնչացնելու պատրաստ խմբավորումներ են: Եթե նրանց ծրագիրը նույնն է, նույնն են նպատակները, եթե նրանց մտահոգությունը հայ ժողովուրդն է, ապա ինչն է խանգարում վեր կանգնել անձնական ու կուսակցական շահերից, համախմբվել, խելք խելքի տալ և մտածել նախ՝ Արցախը փրկելու (բոլորն էլ Ար-

ցախի համար ինչ-որ բան անում են, բայց՝ տարերայնորեն) և ապա՝ հայրենիքի քայքայված տնտեսությունը ճգնաժամից դուրս բերելու մասին:

Ջուր ենք ծեծում՝ արարելու փոխարեն, ավերում ենք՝ կառուցելու փոխարեն, թափառում ենք՝ սովորելու փոխարեն, պառակտվում ենք՝ միաբանվելու փոխարեն և դիմում ենք աշխարհի պետություններին, թե՛ ճանաչեք մեր անկախությունը. մոռանալով, որ եթե կազմակերպենք մեր պաշտպանությունն ու անվտանգությունը, եթե ժողովրդին ձերբազատենք ստրուկի հոգեբանությունից, եթե ստեղծենք տնտեսական հզոր լծակներ ու հոգևոր արժեքներ, եթե հեղինակույթով դիվանագիտությունը փոխարինենք ճկուն քաղաքականությամբ, այդ ժամանակ էլ առանց ավելորդ ճիգ ու ջանքի, կդառնանք միջազգային իրավունքի սուբյեկտ, ձեռք կբերենք քաղաքական, իրավական և իրական անկախություն:

Վրդովեցուցիչ է փոքր ու մեծ պաշտոնյաների, խորհրդարանական պատգամավոր կոչվածներից շատերի խոսքի ու գործի աղաղակող հակասությունը: Թվում է, թե ազատ, ինքնիշխան պետություն ասածը նրանք ստեղծում են նույն այդ պաշտոնյաների, հենց իրենց՝ պատգամավորական որոշ խմբերի, չարչիների, «եվրոպական առևտրի հայկական տարբերակը ներկայացնող» վաշխառուների, հանրապետությունում արտադրվող, ինչպես նաև ներմուծվող ապրանքը հափշտակող և մասնավոր գներով վերավաճառող ձեռներեց կոոպերատորների համար:

Իբրև կրթության բնագավառի աշխատող՝ անդրադառնամ մի էական խնդրի ևս, որ բովանդակում է նաև 6-րդ հարցի պատասխանը:

Մեր բուհերում, իհարկե, կան գիտուն, նվիրյալ, առողջ հոգով ու առողջ մարմնով հայրենասեր հարյուրավոր ուսանողներ, բայց իմ խոսքը այդ ընտրյալների մասին չէ, թեև նրանց սոցիալական ապահովվածությունը չի երաշխավորված, այլապես նույնիսկ գիտնականի անուրանալի շնորհքով օժտված շատ շրջանավարտներ չէին խուսափի այնքա՛ն բաղձալի ասպիրանտուրայից: Խոսքս երիտասարդ սերնդի այն ներկայացուցիչների մասին է, ովքեր խտոր ճանապարհներով մտել են բուհ և ուսանողի անվան տակ օրեր են մթնեցնում: Սրանց բանակը զգալիորեն ստվարացավ հատկապես վերջին 1-2 տարվա ընթացքում՝ կոոպերատիվ համալսարանների, ինստիտուտների, քոլեջների ցանցի անհարկի ընդլայնման շնորհիվ: Գաղտնիք չէ, որ դրանցում էլ հավաքագրված են ոչ քիչ թվով

հագիվ տառաճանաչ, թերուս տղաներ և աղջիկներ: Կասկածելի է նաև ուսուցման արդյունավետությունը:

Հետաքրքիր է, թե բարձրագույն կրթության գործը տնօրինող այրերը ի՞նչ չափանիշներով են առաջնորդվում, երբ արտոնագիր են տալիս դեռևս քննություն չբռնած, ոչ մի մասնագետ չպատրաստած, նոր-նոր առաջին քայլերն անող այդ հաստատություններին: Գուցե, այնուամենայնիվ, պե՞տք է ստուգել դասախոսական կազմի մասնագիտական պատրաստվածությունն ու սովորողների գիտելիքները և հետո միայն գործունեության իրավունք վերապահել: Հիշյալ ուլորտում իշխող խառնաշփոթը հետևանք է նաև կրթության մասին այսօրվա պահանջներին համապատասխան հատուկ օրենքի բացակայության. այստեղից էլ՝ վայրիվերո որոշումներ, ընդունելության քննակարգի հաճախակի փոփոխություններ, որ տեղիք են տալիս բողոքների ու արդարացի դժգոհության:

Առավել տագնապալի է բազագխանի աշակերտ դարձած այն դեռահասների ապագան, ովքեր թալանջիության ու կեղծիքի դասեր են առնում ժամանակակից գիմզիմովներից ու փարսիղներից. մայթերի վրա, ճանապարհներին շարված սեղանիկների մոտ պարզապես իրենց հոգին են խեղում հազարավոր երեխաներ, իսկ քանի՞քանիսն են պարապ-սարապ թրև գալիս նրանց շուրջը: Լիքը գրպանով, կուշտ որկորով, մտասևեռ՝ ցոփ ու շվայտ կյանքի, նրանք երբևէ կլծվե՞ն հանրօգուտ աշխատանքի: Ի՞նչ են մտածում նրանց ծնողները, չէ՞ որ գիքորների մարմնակործան ճակատագրերից պակաս ողբերգական չէ իրենց գավակների հոգեկործան ճակատագիրը:

ՀԱՐՑ 2. Արցախի հարցում մեր կարծիքները միանշանակ են՝ հայոց այդ հնամյա լեռնաշխարհը պետք է ազատագրվի ադրբեջանական զերիշխանությունից: Բայց ինչպե՞ս: Դուք ունե՞ք Ձեր կարծիքը կամ առաջարկությունը, որը բարձր ամբիոններից արտահայտելու հնար չունեք:

- Ներկա պայմաններում հանրահավաքներով, գործադուլներով, նստացույցերով, հացադուլներով (ինչ մակարդակի էլ լինի), հզոր թե գերիզոր տերություններին ահազանգելով ու աղերսագրեր հղելով ոչ մի արդյունքի չենք հասնի: Բարոյական աջակցությամբ երբևէ ո՛չ կորցրած տարածքն է հետ բերվել, ո՛չ էլ տեղահանություն կամ ցեղասպանություն է կանխվել: Անձամբ ես առանձնակի հույսեր չեն կապում նաև դիվանագիտության և բանակցությունների միջոցով

հիմնահարցը վճռելու հետ: Արցախը, անշուշտ, կհասնի իր նպատակին, եթե նրա երկնականաբարուն շողա թուր Կեօակին, եթե նրա լեռներուն ու հովիտներուն լսվի Քուռկիկ Ձալալիի ահարկու վրիճը: Ամեն դեպքուն՝ եթե հակառակորդը տեղի տա, ուժի առաջ է տեղի տալու: Աստված մի արասցե, եթե մենք տեղի տանք, դարձյալ ուժի առաջ ենք տեղի տալու...

ՀԱՐՑ 3. Հայ-ադրբեջանական կոնֆլիկտը շարունակվում է, սահմանամերձ տարածքներուն այն ուղեկցվում է արյունալի, ողբերգական նորանոր փաստերով: Ուզենք թե չուզենք, թշնամանքն առկա է դարձել նաև արցախյան խնդրից դուրս: Մահաթմա Գանդին չէր հավատում ժողովուրդների հավիտենական թշնամությանը: Իսկ Դո՞ւք: Ներկա իրավիճակին հարկավո՞ր է, արդյոք, սպիտակ դրոշով մի նոր թունանյան: Կամ եթե լինի, կարո՞ղ է դեր ունենալ:

- Ժողովուրդներին չչփոթենք պետությունների և նրանց ռազմա-մոլ ղեկավարների հետ. սրանք են թշնամություն սերմանում, բարեկամություն հաստատում: Ընդհանրապես՝ չկա և չի եղել՝ ո՛չ ժողովուրդների հավիտենական բարեկամություն, ոչ էլ հավիտենական թշնամություն: Մահաթմա Գանդին՝ մեծ մարդասերն ու փիլիսոփան, երազում էր «հաշտ ու խաղաղ մարդկություն», բայց նույն միտքը կպնդե՞ր, եթե ականատես լիներ այն գիշատչային խրախճանքներին, որ իրենց էգերի ու լամուկների ներկայությամբ կազմակերպում էին ադրբեջանցի բորենիները: Հավանաբար, կասեր այն, ինչ ասել է մեր հանճարը՝ Բերանն արնոտ մարդակերը էն անբան...

Այն փաստը, որ Հովհ. Թունանյանը մեն-մենակ կարողացել է երկու կողմերի՝ իրար դեմ ներկացրած սրերը պատյան դնել տալ, խոսում է նրա հեղինակության ու իմաստնության մասին, բայց քիչ հավանական է՝ թեկուզև որևէ մեծ անհատականություն արդյունքի հասնի հիմա. իրադրությունը նման է թեև, բայց այլ են հարաբերություններն ու ժամանակները:

ՀԱՐՑ 4. Ձեր աշխատանքային բնագավառում ի՞նչ փոփոխություններ են կատարվել վերջին տարիներին: Ի՞նչն է, որ խանգարում է Ձեր աշխատանքին, հնարավորություն չի տալիս լիարժեք դրսևորելու Ձեր ունակություններն ու հնարավորությունները:

- Աշխատանքիս մեջ փոփոխություններ չկան. 1975-ից անդա-

մագրված են Երևանի պետական համալսարանի հայագիտական կենտրոնին, միաժամանակ դասավանդում են բանասիրական ֆակուլտետում: Գիտական կարողությունները արդյունավետ դրսևորելուն խանգարում է վերջին տարիներին հանրապետությունում ստեղծված նյարդային ծանր կացությունը: Ծննդավայրս թուրքի երախում է՝ անզեն և գրեթե անօգնական, եթե ավելացնենք նաև առօրյա կենցաղային հոգսերը, ապա պարզ կլինի, որ նման պայմաններում դժվար է անդորր գտնել և աշխատել: Այդուհանդերձ անցյալ տարի թարգմանական երկու գիրք են հրատարակել, ևս երկուսը՝ պատրաստ տպագրության, փոշոտվում են տպարաններում: 1988-ից հետևում են վրաց մամուլին. թարգմանել են հայ-վրացական պատմամշակութային վիճահարույց հարցերին առնչվող բազմաթիվ հոդվածներ և դրանց հիման վրա կազմել ու հրատարակության պատրաստել գիտաինֆորմացիոն բյուլետեն. չեն համարձակվում հրատարակել. վնասը շատ է, օգուտը՝ քիչ...

ՀԱՐՑ 5. Հայրենասիրություն բառը չափազանց շատ է շահարկվել, բայց չի դադարել իմաստ ու գոյություն ունենալուց: Ամեն ժամանակում նա ունեցել է իր դրսևորման ձևն ու բովանդակությունը: Ի՞նչ եք մտածում այսօրվա հայրենասիրության, նրա դրսևորումների մասին:

- Այո՛, տարբեր են հայրենասիրության դրսևորման ձևերն ու բովանդակությունը: Ես հայրենասեր եմ համարում նրանց, ովքեր գործի են դրել գութանը, բահը, հատիչը, մուրճը, դագճահը, գրիչը, դիրիժորական փայտիկը, ովքեր լռելյայն լծվել և ապագա պետության հիմքն են դնում:

Հայրենասիրության հակադիր եզրը դավաճանությունն է. այս ծանրագույն և պատասխանատու ժամանակաշրջանում դավաճանի խարան պիտի կրեն և խստագույնս պատժվեն այն անհատներն ու խմբավորումները, որոնք անձնական կամ կուսակցական շահերը վեր կդասեն ազգային շահերից և կփորձեն տարբեր բանակների բաժանել ու պառակտել մեր ուժերը:

Մենք ծայրահեղական ենք և՛ լավ, և՛ վատ գործերում, բայց մեր ժողովուրդն է ասել, լավի հազարը քիչ է, վատի մեկը՝ շատ: Այս մեկ շատից կխուսափենք՝ երկրի ներսում կարգ ու կանոն հաստատելով:

«Ձայն օրինաց»

25 դեկտեմբերի 1991 թ.

ԴԺՎԱՐ Է ՆՐԱՆՑ ՀԱՎԱՏԱԼ

«ԾԻԱԾԱՆԸ» մայիսի 23-ի համարում **«ՀԱՅՐԵՆԱԿԱՆԶ»** խորագրի ներքո ընթերցողներին ներկայացրեց մեր հայրենակից, երիտասարդ գիտնական **ՀՐԱԶՅԱ ՍՄԲՍԻ ԲԱՅՐԱՍՅԱՆԻՆ**:

Ինչպես և սպասվում էր՝ այն ջերմորեն ընդունվեց շատերի կողմից, ովքեր, հեռախոսազանգերով կամ այցելելով խմբագրություն, նոր մանրամասներ էին ուզում իմանալ մեր բազմաշնորհ հայրենակցի մասին:

«Ծիածանի» արտահաստիքային թղթակից Թաթուլ Հակոբյանը այցելեց Երևանի պետական համալսարան և հանդիպեց Հրաչիկ Բայրամյանին:

ՀԱՐՑ.՝ Պարոն Բայրամյան, որպես վրացագետ ի՞նչ կասեք վերջին տարիներին հայ-վրացական հարաբերությունների մասին:

ՊԱՏԱՍԽԱՆ.՝ Այդ հարցին անդրադարձել են մամուլում: 1988 թվականից Վրաստանում տպագրվում են բազմաթիվ հոդվածներ, հետազոտություններ, հրապարակախոսական ելույթներ, որոնք վերաբերում են հայ-վրաց պատմանշակութային կապերին, երբեմն էլ՝ Արցախյան շարժմանը: Վրաց գիտնականներն ու գրողները անաչառ չեն պատմական փաստերը մեկնաբանելու հարցում, առատորեն ջուր են լցնում ադրբեջանցի պատմաբանների ջրաղացին: Մի կողմից նրանք թմբկահարում են հայ-վրաց ժողովուրդների դարավոր բարեկամությունը, մյուս կողմից՝ պղտորում համերկրացիների հոգին: Անտեսվում է այն իրողությունը, որ Վրաստանում հանգրվանած հայերն զբաղվել են ոչ միայն արհեստներով ու առևտրով, այլև ներգրավվել են հասարակական-քաղաքական կյանքի մեջ, մասնակցել նրա պաշտպանության ու անկախության համար մղված մարտերին, նպաստել տնտեսության, գիտության, արվեստի ու գրականության, առհասարակ ամբողջ մշակույթի զարգացմանը: Տուրք տալով ազգային սնապարծությանը՝ վրացի հեղինակները կեղծն ու ցանկալին ներկայացնում են իբրև ճշմարտություն:

Գրում են, թե Ջավախքը, Գուգարքը, Լոռին և այլ գավառներ Վրաստանի պատմական հողերն են: Լոռվա գավառը համարում են

իրենց տարածք, իբր այն Հայաստանին է հանձնվել Վրաստանի խորհրդայնացումից հետո: Մեկ ուրիշը գրում է. «Հայաստանը ոչ միայն յուրացրեց Սանահինն ու Հաղպատը, այլև՝ Ախթալան ու Ալավերդին»:

ՀԱՐՑ.- Ձեր կարծիքով ի՞նչն է դրդում վրաց մտավորականներին ու քաղաքական գործիչներին տպագրելու հակահայկական հոդվածներ:

ՊԱՏԱՍԽԱՆ.- Վրաստանում կա Աբխազիայի և Հարավային Օսիայի պրոբլեմը: Քաղաքական քարտեզի փոփոխությունը ձեռնուտու չէ Վրաստանին: Այս է հիմնական պատճառը:

ՀԱՐՑ.- Վերջին ամիսների ընթացքում Վրաստանում կատարվեցին մի շարք քաղաքական իրադարձություններ: Քաղաքացիական պատերազմից հետո նախագահ Գամսախուրդիան փախավ, եկավ Հայաստան: Ձեր կարծիքով ճի՞շտ էր նման ընդունումը:

ՊԱՏԱՍԽԱՆ.- Քաղաքական տեսակետից չեմ ցանկանում որևէ գնահատական տալ: Սա զուտ մարդասիրական քայլ էր: Ես Գամսախուրդիային երբեք չեմ համակրել, չեմ հավատացել նրա անկեղծությանը: Կարծում եմ՝ Շևարճնաձեն որոշ քայլեր կձեռնարկի հայվրացական խաթարված կապերը վերականգնելու համար:

ՀԱՐՑ.- Ժողովուրդների բարեկամության պահպանման և ամրապնդման հուսալի միջոց է մշակույթը, արվեստը, գրականությունը: Ի՞նչ կասեք այդ մասին:

ՊԱՏԱՍԽԱՆ.- Ժողովուրդներին մերձեցնելու հուսալի, լավագույն միջոցներից մեկն էլ, անշուշտ, գեղարվեստական գրականության թարգմանությունն է: Առանձին գրքերով լույս եմ ընծայել վրաց դասական և ժամանակակից գրողների շուրջ 15 գրքեր, իսկ գրական հանդեսներում և մամուլում՝ ավելի քան 100 պատմվածք ու նովել. ջանում եմ գոնե մեկ քար ավելացնել այն կառույցին, որը կոչվում է հայ և վրաց ժողովուրդների բարեկամություն:

ՀԱՐՑ.- Ինչպե՞ս ընդունեցիք Արցախյան շարժումը:

ՊԱՏԱՍԽԱՆ.- Հույսով, հավատով: Ես համակրում էի «Պարաբաղ» կոմիտեին: Կալանքից ազատվելուց հետո նրանք շրջվեցին 180 աստիճանով: Հիմա դժվար է հավատալ նրանց: Շուրջբոլորը անիշխանություն է՝ գողություն, կողոպուտ, քառս, անպատժելիություն, անտարբերություն: Մինչդեռ երկրի ներսում անհրաժեշտ է կարգուկանոն հաստատել, ինչու չէ՝ նաև պատժամիջոցներ կիրառել: Միայն այդ ճանապարհով կարող ենք դուրս գալ այս վիճակից:

ՀԱՐՑ.- Քաղաքական իրադարձությունները, սոցիալական պայմանները, Արցախի պատերազմը ինչպե՞ս են անդրադառնում Ձեր գործունեությանը:

ՊԱՏԱՍԽԱՆ.- Հանրապետությունում ստեղծված նյարդային (ոչ միայն) ծանր կացությունը խանգարում է գիտական կարողությունների արդյունավետ դրսևորմանը: Ստավորականի նյութական վիճակին դուրք էլ լավ ծանոթ եք...

ՀԱՐՑ.- Ինչո՞ւ եք միայն վրացերենից թարգմանում:

ՊԱՏԱՍԽԱՆ.- Ուսանողական և ասպիրանտական տարիներին թարգմանում էի նաև պարսկերենից ու գերմաներենից. տպագրվում էի հիմնականում «Գարուն», «Հայաստանի աշխատավորուհի», «Սովետական գրականություն» ամսագրերում: Կարծես վատ չէր ստացվում: Հետո սկսեցի ավելի շատ զբաղվել վրաց լեզվով ու գրականությամբ: Երևի վրացերենն է «մեղավոր», դարերի խորքից եկող մեր դրացի լինելը. հետո վրացերեն այսպիսի ասացվածք կա՝ իմացիր մի բանից ամեն ինչ, քան թե ամեն ինչից քիչ-միջ: Վճռեցի մեկն իմանալ և լավ իմանալ:

ՀԱՐՑ.- Ինչպե՞ս եք անցկացնում Ձեր ազատ ժամանակը:

ՊԱՏԱՍԽԱՆ.- Ազատ ժամանակ չի լինում: Միայն հիվանդ ժամանակ եմ ազատ օրեր ունենում: Նույնիսկ ուրախանում եմ, որ հնարավորություն կա գեղարվեստական գրականություն կարդալու և դասական երաժշտություն ունկնդրելու՝ թեկուզ ատամներդ սեղմած:

ՀԱՐՑ.- Ո՞վ է Ձեր սիրած գրողը:

ՊԱՏԱՍԽԱՆ.- Համաշխարհային գրականությունից՝ Շեքսպիր և Մարկես: Հայ գրականության մեջ իմ ամենասիրելի գրողը Հրանտ Մաթևոսյանն է: Մեր դասական մեծերից՝ Հովհաննես Թումանյանը: Իմ մեջ նաև Նոդար Դունբաձեն է ապրում:

ՀԱՐՑ.- Ի՞նչ կցանկանայիք «Ծիածանին»:

ՊԱՏԱՍԽԱՆ.- «Ծիածանին» մաղթում եմ խաղաղություն և հոգեկան անդորր: Ցավոք, հնարավորություն չունեն պարբերաբար «Ծիածան» կարդալու: Գիտեմ, որ թերթի վիճակը ծանր է, բաժանորդների թիվը գնալով նվազում է: Պետք է բաժանորդագրվել, սատար կանգնել, հետո միայն սպասել լավ նյութերի: Առանց բաժանորդի թերթը չի կարող գոյատևել:

«Ծիածան»
5 սեպտեմբերի 1992 թ.

ՎԱՐԵՎՈՐԸ ՏՈԿԱԼՆ Է

Գրողների համահայկական երկրորդ համաժողովին և ՀԳՄ 70-ամյակին նվիրված հորեյանական հանդիսություններին մասնակցելու համար հրավիրված էր վրաց նշանավոր գրող, ՎԳՄ առաջին քարտուղար, Վրաստանի պետական, Շոթա Ռուսթավելու անվան և միջազգային գրական բազմաթիվ մրցանակների դափնեկիր, միջազգային գրական մի շարք միավորումների անդամ, Թբիլիսիի պետական համալսարանի վրաց բանասիրության ֆակուլտետի ժամանակակից վրաց գրականության պատմության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր ՌեՎԱԶ ՄԻՇՎԵԼԱԶԵՆ: Ձեզ ենք ներկայացնում Ռևազ Միշվելաձեի և նրա նովելների թարգմանիչ Հրաչիկ Բայրամյանի գրույցի համառոտ գրառումը:

- Պարոն Միշվելաձե, Դուք միակ ոչ հայ գրողն եք, որ մասնակցում է Գրողների համահայկական երկրորդ համաժողովի աշխատանքներին, ինչո՞վ եք բացատրում այս հանգամանքը:

- Հիշեցնեմ՝ Հայոսն ու Քարթլոսը եղբայրներ էին, մենք ունենք ընդհանուր ճակատագիր, մեզ միավորում է պատմական ընդհանուր ցավը, բնականաբար երախտագիտության խոր զգացումով ընդունեցի հրավերը, ի վերջո, իբրև Վրաստանի գրողների միության ղեկավարներից մեկը, եկա՝ Ձեր փորձառությունից մի բան սովորելու, գուցե թե Ձեր օրինակով նման մի համաժողով էլ մենք անցկացնենք:

- Եվ ինչպիսի՞ն է մեր այդ «փորձառությունը»:

- Խոստովանեմ՝ չափազանց տպավորիչ: Նախևառաջ գրողն է իր ժողովրդի իղձերն արտահայտողը: Աչքերս ուղղակի արցունքակալեցին ուրախությունից, երբ տեսա աշխարհի տարբեր ծագերից ժամանած հայերի՝ պատրաստակամ՝ փրկելու իրենց ժողովրդի ազգային գիտակցությունը, և մեկ գաղափարի շուրջ մեկ բռունցք կազմած դարձյալ հողազնդի տարբեր անկյուններից եկած տասնյակ

անչափ հետաքրքիր հայ գրողների: Սա փառահեղ մտածված միջոցառում է, որ անցկացվում է երկրորդ անգամ, և չպետք է ընդհատվի: Ազգի համախմբման համար սա մեծ նշանակություն ունի, թեև վստահ չեմ, թե մենք կկարողանանք նման միջոցառում կազմակերպել, մանավանդ, որ սփյուռք չունենք, առավել ևս՝ արտերկրում ապրող վրացի գրող: Եվ ոչ միայն դա. մինչև իսկ Վրաստանի տարածքում, բացի, իհարկե, Թբիլիսիից, հատուկենտ վրացի գրողի հազիվ թե հանդիպես (սա՝ կեսկատակ):

- 39U 70-ամյակին նվիրված հանդիսավոր նիստի երեկոյին Դուք սրտառու խոսք ասացիք. պարզվում է, որ վրացի գրողներից Դուք առաջինն եք, որ վերջին մեկուկես տասնամյակի ընթացքում պաշտոնապես հյուրընկալվում է Հայաստանի գրողների միությունում: Ա՞յս հանգամանքն ինչով եք բացատրում:

- Գիտե՞ք՝ ծանրագույն տարիներ անցկացրինք և՛ մենք, և՛ դուք. այսպես թե այնպես գլուխներս ազատեցինք կոմունիստական կայսրությունից, թեկուզև ոչ քիչ գոհերի գնով ձեռք բերեցինք անկախություն: Ազատության էյֆորիայով պայմանավորված կրքերը դեռ չեն հանդարտվել: Պատմության կառքի անիվների դիսկոնկոցները, մեզ, որ զբաղված էինք մեր օրախնդիր գործերով, գրեթե մոռանալ տվեցին մեր ժողովուրդներին մերձեցնող մշակութային կապերը, կապեր, որ մեր գրականության մեծերը վառ պահեցին մինչև իսկ 20-րդ դարում: Հիմա կամաց-կամաց ուշքի ենք գալիս: Դուք լավ գիտեք՝ Լևոն Ամանյանի նախագահ ընտրվելուց հետո ինչպե՞ս վերակենդանացավ Հայաստանի գրողների միության գործունեությունը՝ թե՛ կազմակերպչական և թե՛ ստեղծագործական առումով: Նման շարժումներ նկատվում են նաև մեզանում: Գզրոցներից հանում ենք հայ-վրաց թարգմանական երկերի ձեռագրերը և արդեն սկսել ենք այն գրքերի հրատարակությունը, որ պետք է հրատարակվեին դեռևս 1990-ականների սկզբներին: Ինձ ասացին, որ այդպես է նաև Ձեզ մոտ:

Ես հպարտ եմ, որ դեպքերի բերումով Թբիլիսիին երևանին միացնող նոր ճանապարհով առաջիններից մեկը՝ իբրև վրաց մշակույթի դեսպան, ես անցա: Ծիշտոն ասած՝ վախենում էի, շունչս կտրվում էր Պուշկինյան լեռնանցքով անցնելիս, քանզի համընթաց կամ հակընթաց ոչ մի մեքենա չէր հանդիպում:

- Ինչպե՞ս եք նայում ստեղծագործական միությունների գոյությանը. անհրաժե՞շտ են արդյոք:

- Ինչ խոսք, ստեղծագործական և ոչ մի միություն գրողին գրել չի սովորեցնում, բայց իր աստվածային առաքելությունն իրականացնելիս աջակից կլինի, իսկ դա քիչ չէ: Պատկերացրե՛ք, եթե չլիներ Հայաստանի գրողների միությունը և նրա հմուտ ղեկավարը, կկայանա՞ր համաշխարհային այս ֆորումը: Հիշեցնեմ՝ գրողական աշխատանքը բացառապես անհատի մենաշնորհն է (արարման պահը նկատի ունեմ), բայց հենց որ հեռանում է գրասեղանից, գրողը միանգամայն բնական ցանկություն է ունենում հանդիպել գործընկերոջ և, մինչ տքնանքի տպագրվելը, ժամոթացնել իր երկերին, զրուցել ստեղծագործական պլանների մասին: Դրանից բացի, ստեղծագործական կյանքն անհնար է պատկերացնել առանց բանավեճերի, երկխոսությունների, ստեղծագործական երեկոների ու հոբելյանների: Այս ամենի մասին հոգ է տանում ստեղծագործական միությունը: Հավելեմ՝ մենք իբրև նույն գործի լծակիցներ, նույն համքարության անդամներ, միասին պիտի լինենք: Մեր նպատակն էլ հո նույնն է՝ մարդկանց հոգու ազնվացումը:

Ստեղծագործողի համար ոչ էլ այս 21-րդ դարը նպաստավոր եղավ: Ի՞նչ անարդարություն է, որ հասարակությունն այլևս ոնց որ թե բարձր ոգեղենության չի ձգտում, և մենք էլ հանկարծակի վերածվեցինք հնամոդա արհեստավորների. բավական ժամանակ է՝ աղջիկները, ծաղկեփնջերը ձեռքներին այլևս չեն վազում պոետների հետևից: Որպեսզի գրողը պահպանի իր գոյությունը, գրչից բացի, ուրիշ գործ էլ պիտի ձեռնարկի: Այդպես են ի հայտ գալիս գրող մեներներ, գրող մեներջներ, գրող մեներջներ, գրող բանկիրներ, գրող հյուրանոցատերեր... Մինչև ե՞րբ պիտի շարունակվի այս վիճակը: Գրողի աստվածատուր կոչումն ու ամենավսեմ մասնագիտությունն ունեցողին մի՞թե լրացուցիչ մասնագիտություն է անհրաժեշտ:

- Իսկ ի՞նչ է պետք անել, որ ստեղծագործական միությունները վերակենդանանան, և մշակութային փոխհարաբերությունները կրկին վերածնվեն:

- Ճիշտ այն, ի՞նչ ուղի որ Դուք եք ընտրել. ազգը՝ ահել ու ջահել, աշխարհական ու հոգևորական, պետք է իմանա, որ գրողի, արվեստագետի ներդրումն անչափելի է: Ապագայի համար անգնահատելի է թեկուզև միջակ բանաստեղծի հայրենասիրական միջակ ոտանավորը:

Գրողներն անմիջականորեն նյութական բարիք չեն ստեղծում (ասենք՝ կահույք կամ կոշկեղեն չեն արտադրում), պետությունն էլ

տեղից վեր կացավ ու ստեղծագործական միություններին զրկեց ֆինանսական օգնությունից: Սա մեծ անարդարություն է: Հոգևոր դաստիարակության համար և պետության մեջ հավասարակշռությունը պահպանելու համար եթե համարժեք վճարեն, այս աշխարհում ամենահարուստն անշուշտ գրողը կլինի: Բայց, ցավոք, այդպես չէ, և այսօր, մենք, ձեռքներս պարզած, գնում ենք սպոնսորների հետևից, որ քաղցից չմեռնենք: Ինչպես երևում է, մի քիչ էլ այն բանի համար պիտի խարջենք, որ պետությանը հասկացնենք՝ ինչ ուժ է գրողը, և ինչ կարող է նա առհասարակ: Սոսկ հատուկենտ անհատներ կարողացան ցրտի, խավարի ու կիսաքաղց պայմաններում հավատարիմ մնալ իրենց կոչմանն ու ծառայել իրենց ներշնչանքին: Կարևորը հիմա տոկալն է. վաղն ամեն ինչ լավ կլինի:

- Բատոնո Ռևագ, գրքի ու գրականության, հեղինակ և ընթերցող հարաբերության, «ոգու սովի» ու կենսական իրողությունների, հայվրաց գրական-մշակութային կապերի չափազանց անփառունակ վիճակի, Ձեր ծովածավալ նովելների, պատմվածքների, դրամատիկական երկերի ու տեսական - քննադատական աշխատությունների, Ձեր խմբագրությամբ լույս տեսնող «Մծերլիս գազեթի»-ի («Գրողի թերթ») ու «Նուգեշի» («Սփոփանք») ամսագրի, Ձեր իսկ հիմնադրած «Վրաց նովելի թատրոնի» մասին չհասցրինք հանգամանալից խոսել, մինչդեռ սպառնեցինք ժամանակի ու թերթի տարածության մեզ հատկացված փայտաբաժինը:

- Նախ համոզված եմ, որ թե՛ հայ և թե՛ վրաց իրականության մեջ դրանք ռեալություն են՝ հար ու նման իրար, երկրորդ՝ այդ ամենի մասին կզրուցենք, երբ կընդունեք հրավերս և գոնե մի տասը օրով կլինեք իմ հյուրը Թբիլիսիում: Վերջում, բա՛տոնո Հրաչյա, ուզում եմ օգտվել պահից և շնորհակալություն հայտնել Ձեզ՝ վրաց գրողների երկերի վրա լուսացրած գիշերների համար:

- Շնորհակալություն և՛ զրույցի, և՛ հրավերի համար: Ձեզ բարի ճանապարհ և ստեղծագործական նորանոր հաղթանակներ՝ հուրախություն Ձեր տաղանդի բազմաազգար երկրպագուների և ի փառաշայրենյաց գրականության:

«Գրական թերթ»

23 հուլիսի 2004 թ. (N 24)

«ՄԻՏՔ» ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻՆ

Վերջին շրջանում Սամցխե-Ջավախք-Ծալկա տարածաշրջանի վերաբերյալ արված հայտարարությունները, հայտնված կարծիքներն ու մտքերը, հասարակական տարբեր շրջանակներում տրված մեկնաբանությունները գնալով շատանում են: Այդուհանդերձ՝ վերջիններիս մեջ եզակի են այն հրապարակումները, որոնք իրապես արտահայտում են տարածաշրջանի շահերը: Շատ հրապարակումներ արվում են այս կամ այն քաղաքական շրջանակներում առավել «հայտնի» դառնալու կամ ավելի հայրենասեր երևալու համար: Այդպիսի շրջանակների՝ նման հարցադրումներով հանդես գալը, որոնք ընդհանրապես հեռու են կանգնած Սամցխե-Ջավախք-Ծալկայի խնդիրներից, չունեն տարրական գիտելիքներ ու պատկերացումներ տարածաշրջանի մասին և միայն պարզապես լսել են տարածաշրջանի մասին, մեծ վնաս է բերում վերջինիս և ներկա դրությամբ, և ապագային: Իսկ շատ գիտնականներ կամ այլ շրջանակներ, այս հիմքի վրա դարձյալ հայտվել են յուրահատուկ շփոթումների մեջ ու Սամցխե-Ջավախք-Ծալկայի մասով շարունակում են կրկնել նույն վախվորած արտահայտությունները, ինչը արվել է տարիներ շարունակ: Խնդրով մտահոգ շրջանակների մեջ եզակի են մարդիկ, կազմակերպությունները, որոնք քաջ գիտակցում են խնդրի կարևորությունը և չեն վարանում խոսելու ճշմարտության մասին:

Ստորև ներկայացնում ենք Երևանի պետական համալսարանի նորաստեղծ վրացագիտության հայկական կենտրոնի տնօրեն Զրաչիկ Բայրամյանի՝ «Միտք» վերլուծական կենտրոնին տված հարցազրույցը: Խոնարհվելով գիտնական-բանասերի գիտական մեծ վաստակի առջև, կարևորելով նրա անփոխարինելի ներդրումը վրացական հասարակական շրջանակներում տեղ գտած հրապարակումների՝ հայկական շրջանակներում լուսաբանման, ինչպես նաև՝ հայկական շրջանակների համար այդքան կարևոր վրացագիտության զարգացման ասպարեզում, այնուամենայնիվ, հարկ ենք համարում նշելու, որ պրն Բայրամյանը ևս կողմնակից է Սամցխե-Ջավախք-Ծալկայի ինտեգրմանը Վրաստանին, այլ ոչ թե ինքնակազմակերպվելուն ու մեկ ամբողջական բունցք դառնալուն:

Վահե Սարգսյան, «Միտք» վերլուծական կենտրոն:

- Ե՞րբ է ստեղծվել Ձեր կողմից ղեկավարվող կենտրոնը և ի՞նչ նպատակ է այն հետապնդում: Ի՞նչ հեռանկարներ կան ՀՀ-ում վրացագիտության զարգացման համար:

Երևանի պետական համալսարանում վրացագիտության կենտրոնի ստեղծումը (փետրվար, 2007) քաղաքական խոշոր նշանակություն ունի և հնարավորություն է ընձեռում վերսկսել ու կյանքի կոչել հայագիտության համար չափազանց կարևոր մի բնագավառ, որ վաղուց մոռացության է տրվել: Խոսքը վերաբերում է հայ-վրաց գրական, պատմամշակութային կապերին, որ սկիզբ են առել երկու ժողովուրդների գրերի ու դպրության ծննդյան օրվանից և դարից դար փոխանցվել ուսանելի ավանդներով, ապահովել բարեկամության ու համագործակցության շարունակական ընթացք: Այդ կապերը նոր բովանդակություն ստացան, երբ Վրաստանն ու Հայաստանը ունեցան իրենց սեփական համալսարանները:

Թբիլիսիի համալսարանը հիմնադրվել է 1918 թ. հունվարի 26-ին և առաջին իսկ օրից նրա ուսումնական ծրագրերում ներառվել են հայագիտական առարկաներ՝ գրաբար, ժամանակակից հայոց լեզու և հայ հին պատմական գրականություն: 1922 թվականից հիշյալ համալսարանում գործում է հայագիտության ամբիոնը, 1945-ից՝ հայոց լեզվի և գրականության բաժինը:

1966 թ. Երևանի և Թբիլիսիի պետական համալսարանների միջև կնքվեց փոխադարձ համագործակցության պայմանագիր, որի հիման վրա և ի նշանավորումն վրաց մեծ բանաստեղծ Շոթա Ռուսթավելու ծննդյան 800-ամյակի, հայ բանասիրության ֆակուլտետում հիմնադրվեց նրա անունը կրող գիտաուսումնական կաբինետ: Այս կաբինետի հիման վրա 1970 թ. ստեղծվեց հայ-վրացական բանասիրության հետազոտական խումբ և մտավ հայագիտական կենտրոնի համակարգ: Աշխատանքները հիմնականում նվիրված էին վրաց գրականության պատմության, հայ-վրաց գրական-մշակութային կապերի, հայ-վրաց լեզվական և բառարանագրական առնչություններին:

ԽՍՀՄ փլուզումից հետո գրեթե խզված էին ոչ միայն Հայաստանի և Վրաստանի քաղաքական, տնտեսական և մշակութային կապերը, այլև երկու մայր բուհերի գիտագործնական և ուսումնական առնչությունները: Չկային փոխայցելություններ, համագործակցություն, չէին կազմակերպվում միջոցառումներ: Սառույցը շարժվեց 2006 թ. մայիսից, երբ ԵՊՀ-ի բարձրագույն օղակներում տեղի ունե-

ցան փոփոխություններ: Կենտրոնի նպատակն է ուսումնասիրել Վրաստանի պատմությունը, վրաց գրականությունը, լեզուն ու մշակույթը. պայմաններ ստեղծել վիճահարույց որոշ հարցեր համատեղ ուժերով լուսաբանելու համար, ինչն էլ կնպաստի Հայաստանի և Վրաստանի միջև բարիդրացիական հարաբերությունների ու մշակութային, քաղաքական կապերի բարելավմանը: Կենտրոնը նպատակ ունի ստեղծել անհրաժեշտ դասագրքեր և օժանդակ ձեռնարկներ վրացագետների սեփական կադրեր պատրաստելու համար, որոնց կարիքը ևա շատ է զգացվում: Սա է օրինաչափն ու ուսանելին, թե չէ օտարվում էին դարավոր ավանդույթներ ունեցող երկու բարեկամ ժողովուրդներ, երկու բարեկամ համալսարաններ, երկու փոխներթափանցված մշակույթներ, նույնիսկ բարեկամ մարդիկ:

- Ինչպե՞ս կզնահատեիք ներկա հայ-վրացական հարաբերությունների վիճակը: Երկու երկրների համար այն բավարար է արդյոք առևտրատնտեսական, գիտամշակութային և այլ տիպի կապերի խորացման և զարգացման համար:

- 1980-ական թթ. կեսերից վրացի մասնագետները, փորձելով վերագնահատել ազգային արժեքները, իրենց հրապարակումներում առաջադրում են կամայական լուծումներ: Ավագ թե կրտսեր, մեկը մյուսին լրացնելով, պարզապես ժխտում են այդ երկրի շենացմանը մատուցած հարյուրավոր հայորդիների ծառայությունները: Անտեսվում է այն իրողությունը, որ Վրաստանում հանգրվանած հայերը, արհեստներով ու առևտրով զբաղվելուց բացի, ներգրավվել են նաև հասարակական-քաղաքական կյանքի մեջ, մասնակցել նրա պաշտպանության ու անկախության համար մղված մարտերին, նպաստել տնտեսության, գիտության, արվեստի ու գրականության, առհասարակ հոգևոր ու նյութական ամբողջ մշակույթի զարգացմանը:

Իմ խորին համոզմամբ՝ թե՛ Վրաստանում և թե՛ Հայաստանում պետականորեն պետք է արգելել որոշ կուսակցությունների ու նրանց օրգանների այն հրապարակումները, որոնցում իբրև թե լուսաբանվում են հայ-վրացական պատմամշակութային և հոգևոր-եկեղեցական առնչությունները, քանզի դրանք ավելի շուտ կանխակալ կարծիքներ են, անհանդուրժողականություն սերմանող տրամադրություններ, որ ակնհայտ են հատկապես վրացական հրատարակություններում. այդ տրամադրություններն արդեն իսկ մուտք են

գործել դպրոցական ու բուհական դասագրքեր և, բնականաբար, զգալի ազդեցություն են թողնում սերունդների գիտական ու քաղաքական մտքի ձևավորման վրա: Տխուր մտորումների տեղիք են տալիս այդ հրապարակումներն ու հրատարակությունները: Վրաց մամուլը շարունակում է 20-րդ դարասկզբի «բանասարկու և բուլվարային սկանդալիստներ» Վելիչկոյի և Թոփչիբաշևի «գործունեությունը», մտազարխմբագիրներ, որոնց հաջողվեց հայերի ու վրացիների, հայերի ու կովկասյան թաթարների միջև առաջ բերել ազգամիջյան ընդհարումներ: Այդուհանդերձ՝ ուզում ես հավատալ, որ և՛ մամուլը, և՛ մտավորականները, դաս առնելով արցախա-ադրբեջանական, վրաց-օսեթական, վրաց-աբխազական հակամարտություններից, վերջ կտան առճակատում ու թշնամանք հրահրող հրապարակումներին:

Ցավալի է, որ մեզանում հիմնավոր կրթությամբ մասնագետներ չունենալու պատճառով չենք կարողանում դիմակայել հայոց նյութական ու հոգևոր արժեքների՝ օտարների հավակնություններին ու ասպատակություններին:

- Որպես վրացագետ և մտավորական՝ ինչպե՞ս կորակեիք հայ-վրացական եկեղեցական պատերազմական ներկա իրավիճակը՝ նկատի ունենալով հայկական պատմամշակութային կոթողների և հայկական մշակութային ժառանգություն հանդիսացող այլ արժեքների նկատմամբ անցյալում և այժմ կրկնվող դեպքերը:

- Հայոց և վրաց եկեղեցիների առճակատումն սկսվել է 7-րդ դարի սկզբից և շարունակվում է նաև մեր օրերում: Այդ առճակատումն ավելի սուր բնույթ է կրում ԽՍՀՄ փլուզումից ի վեր: Եվ եթե եկեղեցաքանդությունը խորհրդային տարիներին համատարած բնույթ էր կրում, հասկանալի էր, միանգամայն անհասկանալի ու անհանդուրժելի է վերջին քառորդ դարի ընթացքում վրացիների վերաբերմունքը: Դժվարանում եմ ասել՝ ով է սրություն հաղորդում, պետությո՞ւնը, հանրությո՞ւնը, թե՞ հանրությունը՝ պետության հովանու ներքո, բայց որ հայոց եկեղեցին վատ պաշտպանվողի դերում է, կասկած չի հարուցում: 1970-ական թթ. վերջերին ակադ. Գուրգեն Սևակը ջանաց Հայաստանում և Վրաստանում տարվող հայ-վրաց պատմամշակութային առնչությունների վերաբերյալ աշխատանքները կոորդինացնող պրոբլեմային գիտական խորհուրդ ստեղծել: Երկուստեք նման խորհուրդների ստեղծումով, համատեղ գիտաժողովներ, բա-

նավեճեր ու փոխայցելություններ կազմակերպելով հնարավոր կլինեն կասեցնել մշակույթի ոլորտի տարածայնությունները, կարելի կլինեն վերացնել այն ճեղքվածքը, որ գոյություն ունի երկու երկրների գիտնականների միջև, ճեղքվածք, որ վերածվում է անանցանելի վիհի: Ցավոք, Թբիլիսիից արձագանք չեղավ:

Եվս մեկ փաստ. Ամենայն հայոց երջանկահիշատակ կաթողիկոս Վազգեն Առաջինը երեք անգամ (առաջին նամակի գրության ժամանակը չեմ հիշում, երկրորդը՝ 1990 թվականի ապրիլի 29-ին, իսկ երրորդը՝ նույն թվականի հունիսի 29-ին) նամակ հղեց Համայն Վրաստանի հոգևոր պետ, նորին սրբություն Իլիա Բ կաթողիկոս-պատրիարքին՝ հայ և վրաց հեղինակավոր մասնագետների հանձնախումբ կազմավորելու հորդորով, որը պետք է քննարկեր և վճռեր Վրաստանի տարածքում հայկական որոշ վանքերի ու եկեղեցիների՝ վրացականացումից առաջ պատկանելության հարցը, բայց այս անգամ էլ Իլիա երկրորդը չարձագանքեց: Գարեգին Ա-ը ընտրվելուց մի քանի ամիս անց այցի գնաց վրաց հովվապետին, և որքան ինձ հայտնի է, նման հարցեր չեն արժարծվել հանդիպումների ժամանակ, ամեն դեպքում հաշվետու զեկուցումներում այդ մասին խոսք չկա: Առհասարակ պախարակելու չափ կրավորական են մեր հոգևոր առաջնորդներն ու բարձրագույն պաշտոնատար այրերը ազգայինը պաշտպանելու, ազգայինին տեր կանգնելու գործում:

- Ի՞նչ է Ձեզ համար Սամցխե-Ջավախք-Ծալկա տարածաշրջանը: Հայտնի է, որ 1980-ականների Ադրբեջանի հակահայ քաղաքականությունը հանգեցրեց ԼՂՀ-ի ստեղծմանը: Ձեր կարծիքով՝ արդյոք Վրաստանի որդեգրած հակահայ քաղաքականությունը չի՞ հանգեցնելու Սամցխե-Ջավախք-Ծալկա տարածաշրջանի հայության ազգային ինքնության բարձրացմանը, ինչը եղավ Արցախում:

- Արցախյան օրինակը միշտ էլ ուսանելի է, մերոնց ազգային ինքնություն-ինքնագիտակցությունը շատ ավելի բարձր է, քան կարելի է կարծել, բայց բացել ևս մեկ ճակատ, նշանակում է հայ ժողովրդին, հայոց երկիրը վերջնականապես մեկուսացնել աշխարհից և մոտեցնել կործանման եզրին: Ջավախքի հայաթափության մեջ վրա՞ց իշխանավորներ են մեղավոր, թե՞ հայ ազգաբնակչությունը, ծնելիությունը պակասելու և ծննդավայրից հեռանալու մեղքը վրա՞ցի՞ իշխանավորին է:

Ջավախքահայ երիտասարդը Հայաստանի կամ այլ երկրների

բուհերում ուսանելուց հետո վերադառնում է ծննդավայր, իր լուսնան ներդնում է երկրամասի կրթության ու տնտեսության բարելավման գործում: Հայաստանում նույն վիճակը չէ՞, նույն հայաթափությունը ավելի լայն մասշտաբներով այստեղ չի՞ կատարվում: Ինչ է՝ շիրակցին, լոռեցին, գանգեգուրցին ազգային ինքնություն չունե՞ն, որ լքում են իրենց բնօրրանները: Արցախում ով է հայաթափում՝ թո՛ւրքը, վրացի՞ն, թե՞ հենց արցախցի երևանյան պաշտոնյան, որ տասնյակ ու հարյուրավոր գործիչների երևանում պաշտոններ է տալիս. չի՞ մտածում, որ այդ կերպ պարզապես գլխատում է հազարավոր զոհերի գնով ազատագրված երկրամասը: Տոկալ է պետք: Միշտ չէ, որ պատճառները պիտի փնտրել միայն տեղական իշխանավորների վերաբերմունքի կամ սոցիալ-տնտեսական կացության մեջ: Մեր լավագույն բարեկամը մենք պիտի լինենք, մինչդեռ մենք մեր ոխերին թշնամին ենք:

Պիտի հասկանանք, որ օտար երկրում մեր ինքնության ամենամեծ ուժը մեր լեզուն է, բայց պակաս գործոն չէ նաև տվյալ երկրի լեզվի իմացությունը: Եկեք կրթություն ստանալու հետ նաև վրաց լեզուն սովորենք, ինչպես հարկն է, տեսնենք՝ դրանից հետո վրաստանի կառավարող շրջանները ուրիշ ինչ պատճառ են բերելու: Հիշենք և հիշեցնենք, որ ոչ վաղ անցյալում մեր հայրապետները նույն տաճարում աղոթք են մատուցել երկու լեզվով ու երկու ժողովրդի հոգևոր երգերով՝ «որպես խորհրդանիշ և վկայություն ի Քրիստոս մի լինելու եղբայրության ճշմարտության»: Երբ նույն տաճարում ենք կամ նույն սեղանի շուրջը, եղբայր ենք, հենց որ տաճարից դուրս ենք գալիս կամ հեռանում ենք ճոխ սեղանից, անհաշտ հակառակորդներ ենք, նույնիսկ ուխտյալ թշնամիներ: Մենք պիտի հասկանանք և հասկացնենք, որ ատելությանը, թշնամություն սերմանելով ոչ մեկս հեռուն չենք գնա, քանզի, «սերն է ստեղծարար, ատելությունն է քանդարար»:

«Միտք» վերլուծական կենտրոն
29 հուլիսի 2008 թ.

ԱՅՍՏԵՂ ՁԳՏՈՒՄ ԵՆ ԱՄՐԱՊՆԴԵԼ ՀԱՅ - ՎՐԱՑԱԿԱՆ ՀՈԳԵՎՈՐ ԿԱՊԵՐԸ

Մեր հյուրն է գրականագետ, թարգմանիչ, ԵՊՀ վրացագիտության հայկական կենտրոնի տնօրեն, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Հրաչյա Բայրամյանը

Հարց 1. Պարոն Բայրամյան, վրացագիտությունն ինչպե՞ս դարձավ Ձեր նախասիրությունների առանցքը:

- Խորհրդային Միության համալսարանների միջև ուսանողներ փոխանակելու պրակտիկա գոյություն ուներ: Երևանի պետական համալսարանի ղեկավարությունը ինձ՝ բանասիրական ֆակուլտետի արևելյան (պարսից լեզու և գրականություն) բաժնի 4-րդ կուրսի ուսանողիս, գործուղեց Թբիլիսիի պետական համալսարան՝ վրացերեն սովորելու և ապագայում վրացագետ դառնալու ակնկալիքով: Համալսարանների համապատասխան դասընթացներն ավարտելուց հետո կրկին գործուղվեցի, այս անգամ՝ նպատակային ասպիրանտուրա: Յուրացրածս լեզվով տեղում պաշտպանեցի ատենախոսություն, «մկրտվեցի» վրացագետ և վերադարձա մայր բուհ:

Հարց 2. Որքանո՞վ է այսօրվա Հայաստանում պահանջված վրաց գրականությունը, և որքանո՞վ է մեր հասարակությունը ծանոթ:

- Անցյալ դարի 90-ական թթ. իրավակարգի փոփոխության հետ փոխվեցին նաև հարևան երկրների հարաբերությունները, ընդ որում՝ «էս սարն իմն է, էս ծառն իմն է» նշանաբանով: Հետխորհրդային շրջանում Հայաստանի և Վրաստանի միջև գրական-մշակութային կապերը գրեթե խզվեցին, ուստի 1990-ականներից հետո գրական ասպարեզ մտած գրողներին չէինք ճանաչում, իհարկե, ոչ էլ նրանք՝ մերոնց, թեև հատուկեմտ պատմվածքներ, նովելներ ու բանաստեղծություններ տպագրվում էին մեզանում: Կարելի է վկայել, որ այժմ կամաց-կամաց վերականգնվում են և՛ ավանդները, և՛ հոգևոր-մշակութային ու գիտակրթական կամուրջները, կյանքի են կոչվում այլ

բնագավառներ ևս՝ թատրոն, երաժշտություն...

Դրա համար արժանին պետք է հատուցել գրողների միության նախագահներին, որ կարողացան մեղմացնել, ավելին՝ փոքր-ինչ ջերմացնել մթնոլորտը, և, չնայած աշխարհաքաղաքական անցանկալի իրողություններին, վերջին 3 տարում անցկացվեցին պոեզիայի երկուական փառատոն, հրատարակվեցին անթուղգիաներ, եղան գրքերի շնորհանդեսներ: Այդ ամենին հավուր պատշաճի անդրադարձան ռադիոն ու հեռուստատեսությունը: Մի խոսքով՝ սառույցը շարժվում է. սկիզբ է դրվում գրական, մշակութային նոր ու նորովի ավանդույթի, ինչը ամենամյա դառնալու միտում ունի:

Ի տարբերություն ներկա ժամանակների, ոչ վաղ անցյալում ուշադրություն էր դարձվում այլ հանրապետությունների մշակութային կյանքին. արվեստի և գրականության տասնօրյակներ, հեղինակային երեկոներ ու փառատոններ, գրողների փոխայցելություններ ու հոբելյանական հանդիսավոր նիստեր: Իսկ հեռուստատեսությունը ուներ գիտահանրամատչելի և ուսումնական հաղորդաշար, որ հաճախ նվիրվում էր նաև հայ և վրաց ժողովուրդների համագործակցությանը, վրաց գրողների կյանքին ու գործունեությանը, հայ և վրաց գրողների անձնական և ստեղծագործական առնչություններին:

Ֆարց 3. Ձեր գրական նախասիրությունների մեջ վրացի և հայ ո՞ր մեկական հեղինակներին կառանձնացնեիք:

- Ժամանակակից հայ գրողներից իմ պաշտամունքը Յրանտ Մաթևոսյանն է, իսկ վրաց գրողներից՝ Նոդար Դումբաձեն:

Ե՛վ Մաթևոսյանը, և՛ Դումբաձեն մեծատաղանդ գրողներ էին, որ գեղեցիկն էին արարում, վեհ զգացմունքներ ու նույնքան վեհ գաղափարներ հուշում ու սերմանում. լավատեսության ու բարության մարմնացում էին նրանք, լավատեսության ու բարության սերմնացաններ:

Նոդար Դումբաձեն, օտարների մեջ երբեմնի իմ հանդիպած մարդկային ամենագեղեցիկ հատկանիշներով օժտված գրողն էր, նաև ամենահայասերը:

Ֆարց 4. ԵՊԴ-ում վրաց գրականության նկատմամբ կա՞ հետաքրքրություն:

- Վրաց ժողովրդի պատմության, արվեստի ու գրականության նկատմամբ մեր ուսանողության մեջ հետաքրքրություն միշտ եղել է:

Դրա ակնառու վկայությունն այն է, որ ԵՊՀ պատմության և հայ բանասիրության ֆակուլտետներում վաղուց ի վեր գործում են վրաց լեզվի և գրականության կամընտրական դասընթացներ, երեք տարի է՝ հայ բանասիրության ֆակուլտետում ունենք նաև վրացագիտության թեքունով խմբեր՝ յուրաքանչյուրում՝ 14-15 ուսանող: Շատ շատերն են անդամագրվում, ուստի երբեմն հարկ է լինում, լեզվի յուրացման դժվարությունները պատրվակելով, կրճատել ցանկացողների թիվը:

Վրաց գրականությունը՝ թե՛ դասական, թե՛ ժամանակակից, համաշխարհային գրականության անքակտելի մասն է, վրաց ժողովրդի նվաճումը, ուստի մենք որոշ գիտելիքներ պիտի ունենանք հարևան ժողովրդի հոգևոր արժեքների մասին: Շոթա Ռուսթավելուն պետք է իմանանք այնչափ ու այնպես, ինչչափ ու ինչպես գիտենք Ֆիրդուսուն ու Նիզամուն, Դանտեին ու Սերվանտեսին, միջնադարի գրական մյուս մեծություններին:

Հարց 5. ԵՊՀ վրացագիտության կենտրոնը գործունեություն ծավալելու ի՞նչ ներուժ ունի:

- Ներկա պահին շատ համեստ է այդ ներուժը, թեև համալսարանի ղեկավարության և մեր կենտրոնի նպատակն է մոտ ապագայում ընդլայնել գիտահետազոտական աշխատանքների ոլորտները, զարգացնել մեզանում գրեթե մոռացության տրված հայ-վրաց գրական-պատմամշակութային կապերը: Անվիճելի է, չէ՞, որ ժողովուրդների փոխադարձ իմացությունը մեծապես նպաստում է պատմության, մշակույթի, գրականության ու արվեստի, գիտության, առհասարակ հոգևոր կյանքի հարստացմանը:

Կենտրոնի գոյությունը ոչ միայն միջբուհական, այլև միջպետական իրադարձություն է:

Երևանի և Թբիլիսիի պետական համալսարանների միջև կնքվել է համաձայնագիր, ըստ որի՝ մեր լավագույն ուսանողները մագիստրական կրթությունը կստանան այնտեղ՝ վրաց լեզվի իմացությունը խորացնելու և գործնականում կիրառելու նպատակով, քանզի մեր ուսանողները տեսական գիտելիքներ ստանում են, բայց միջավայր չլինելու պատճառով դժվարանում են հաղորդակցվել. լեզուն պետք է սովորել այնտեղ, որտեղ այդ լեզվով խոսում են:

Կենտրոնը հույժ կարևոր է համարում կադրեր պատրաստելու, համապատասխան ծրագրեր, դասագրքեր, բառարաններ ստեղծելու խնդիրը: Արդեն իսկ հրատարակել ենք վրաց գրականության պատմության բուհական դասագիրք, քրեստոմատիաներ, հայերեն-վրացերեն, ռուսերեն-վրացերեն զրուցարաններ, վրացերեն-հայերեն մեծածավալ բառարան, պատրաստում ենք վրաց լեզվի քերականության դասագիրք:

Նախատեսում ենք գիտական սեմինարներ ու համաժողովներ անցկացնել: Ասեն, որ ստեղծումից ամիսներ անց, կազմակերպեցինք մեկ այդպիսի գիտաժողով, որին հայ վրացագետներից և մեր ֆակուլտետի դասախոսներից բացի, մասնակցեցին և զեկուցումներով հանդես եկան նաև Թբիլիսիի պետական համալսարանի հայագիտության ամբիոնի չորս դասախոսներ (այդ համալսարանը հիմնադրման առաջին իսկ օրից՝ 1918 թ. հունվարի 26-ից, ուսումնական ծրագրերում ապահովել է հայագիտական առարկաներ, բուհում 1922-ից գործում է նույնանուն ամբիոնը, 1945-ից՝ հայոց լեզվի և գրականության բաժինը):

Չարդ 6. Որպես ստեղծագործողի՝ Չայաստանի գրական միջավայրը Ձեզ վրա դրական կամ բացասական ազդեցություն ունենո՞ւմ է:

- Ձեր նշած գրական միջավայրի մասին ես ավելի շատ լսում եմ հեռուստատեսության, ռադիոէթերից, կարդում եմ լրագրերում, որոնց, անկեղծ ասած, հավատ չեմ ընծայում այն պարզ պատճառով, որ թունոտ են, իսկական «յոթովիներան»: Գրողների միությունում լինում եմ հիմնականում ինձ հետաքրքրող միջոցառումների ժամանակ, կամ էլ երբ դրանք առնչվում են վրաց գրականությանը: Չեմ հարում որևէ թևի կամ, որ ավելի ճիշտ կլինի ասել, որևէ խմբակցության, դրանք գրական կյանքից ու գրականության հոգսերից շատ ու շատ հեռու են, վեճեր՝ անպտուղ, անհեթեթ: Բայց միության կազմում հո կա՞ն բարեկիրթ, շնորհաշատ, գրական կյանքով մտահոգ, իրենց կոչումին հավատարիմ, իրենց կոչման բարձրության վրա գտնվող ստեղծագործողներ. միայն նրանք կարող են դրական լիցք ներարկել:

Չարդ 7. Ըստ Ձեզ՝ այսօրվա հայ իրականության մեջ գրականությունն ի գորո՞ւ է հասարակական կարևոր խնդիրների լուծման բանալի դառնալ:

- Տասնյակ դարերի ընթացքում համաշխարհային դասական գրականությունը չնպաստեց մարդուն էությանբ բարի և գեղեցիկ դարձնելուն. նրա հոգում մարդասիրության, բարու և գեղեցիկի զգացմունքներ ու սկզբունքներ սերմանելու համար Յոնեթոսի, Նարեկացու, Ռուսթավելու, Դանտեի, Շեքսպիրի և մյուս հանճարների ու հսկաների ստեղծագործությունները ցանկալի արդյունք չտվեցին: Ավելի քան երկու հազարամյակ մարդ անհատին ուղեկցում են կրոնն ու արվեստը, մի՛ գողացիր, մի՛ սպանիր, մի՛ շնացիր, սիրիր մերձավորիդ և բազում խելամիտ, ուսանելի պատվիրաններ, բայց, պարզվում է, որ XX, նույնիսկ XXI դարի մարդն իր էությամբ շատ էլ չի տարբերվում քարեդարյան իր գազանաբարո նախնուց (կարծում եմ՝ օրինակների կարիք չկա): Առավել ևս՝ հայ գրականության ընդգրկումներն այսօր այնքան խոր ու մասշտաբային չեն, որ հասարակական կարևոր խնդիրների լուծման բանալի դառնան: Դրան հասնելու համար ժամանակակից հայ գրողը խորամուխ պիտի լինի «հոգու դիալեկտիկայի» մեջ, որ իրականության արմատական պրոբլեմների լուծման համար սոցիալ-բարոյական և հոգեբանական-փիլիսոփայական միջոցներ առաջադրի, հերոսների անհատական դրաման ստանա համապետական, համազգային ու համահասարակական նշանակություն:

Տաղանդավոր գրողը կարող է ազդել անհատի գիտակցության վրա: Բայց հասարակությամբ... Անկեղծ ասած՝ կասկածում եմ. պարզապես մենք գերազնահատում ենք գեղարվեստական գրականության հնարավորությունները: Իսկ գուցե Ֆրանց Կաֆկա՞ն է ճիշտ, թե աշխարհի գոյությունը հնարավոր է միայն գրականությամբ:

Հարց 8. Ի՞նչ ազդեցություն կարող է ունենալ տեխնիկական հեղափոխություն ասվածի այս աննախադեպ թափը գրականության, արվեստի զարգացման ընթացքի վրա:

- XX դարը, որ պարադոքսների, հեղափոխությունների, համաշխարհային, հայրենական ու քաղաքացիական պատերազմների, հարևան երկրների ու ազգամիջյան զինված ընդհարումների, աշխարհի վերաբաժանման ու արժեքների վերազնահատման, գիտության ու տեխնիկայի հեղափոխության (սայլից ու կառքից մինչև ինքնաթիռ ու արբանյակ, քարայրից մինչև երկնաքեր, բաբանից մինչև ատոմա - ջրածնային սարսափ, տիեզերքի նվաճում, մարդու

օրգանների փոխապատվաստում) դար էր, անցավ պատմության գիրկը: Քաղաքակիրթ համարվող ազգերը՝ ամերիկացիները, անգլիացիները, գերմանացիները, ճապոնացիները, ռուսները տիեզերքի գլխին ինչ փորձանք ասես բերեցին, մասսայական ոչնչացման ինչպիսի միջոցներ ասես, որ չստեղծեցին: Դարեր շարունակ անխախտ ճշմարտություն թվացող բարոյահոգեբանական որոշ գործոններ այլ տեսանկյունից ներկայացան: Այս ամենը «շնորհիվ» գիտատեխնիկական հեղափոխության: Եվ ի՞նչ. նայենք մեղալի մյուս երեսը. վերածննդի հանճարները կարող էին պատկերացնել, որ երբևէ աշխարհն այլ կերպ կընկալի սեր կոչվող սրբազան զգացմունքը: Համաշխարհային դասական գրականությունը ի սկզբանե մեկ սեր է երգել (մոնոսեր), բայց XX դարն իր էկզիստենցիալիզմով, նեոռեալիզմով, սուբյեկտիվ իդեալիզմով, ուրբանիզմով, տոտալիտար պատմական կատակլիզմներով ու բազում այլ -իզմերով մարդուն միասերապաշտությունից հասցրեց միասեռապաշտության և, ո՛վ գարմանք, դրա գովքը գրականության ու արվեստի մեջ, դրա «իրավունքների» կանոնակարգումը ՄԱԿ-ի մասշտաբներով, և երկրների պարտադրված, ես կասեի՝ կույր հնազանդությունը այդ որոշումներին: Սրանք և՛ հակամետ են, և՛ հակոտնյա, ուրեմն՝ ազդեցությունն էլ փոխադարձ կարող է լինել:

«Երևան 7 օր»

6-9 փետրվարի 2009 թ.

ՈՒՍԱՆԵԼԻ ԴԱՍԵՐ

Հայաստանը և Վրաստանը քաղաքակրթության հնագույն բնօրրաններից են՝ հոգևոր ու նյութական մշակույթի ինքնատիպ հուշարձաններով, և անուրանալի է նրանց դերն ու նշանակությունը հատկապես Մերձավոր և Միջին Արևելքի պատմության մեջ: Երկու հինավուրց ժողովուրդները իրենց արշալույսից ի վեր առնչվել են միմյանց հետ, ունեցել են ռազմական, քաղաքական, առևտրատնտեսական, կրոնական, պատմական, գրական, մշակութային հաստատուն կապեր: Վրաստանում վաղուց անտի եղել է հայ համայնք: Բայց ինչպես նշում է պատմաբան Արշակ Ալպոյաճյանը (1879-1962), այնտեղ հայերն ապրել են երկրի տերերի պես, բայց ոչ երբեք իբրև նվաստ գաղթականի:

Դարեր շարունակ բնակվելով Վրաստանում՝ հայ բնակչության զգալի մասը, առօրյայում գործածել է վրացերենը: Յուրացնելով վրաց լեզուն, ապա և դառնալով վրացախոս ու վրացադավան, նրանք բնականաբար ներգրավվել են այդ երկրի հոգևոր ու նյութական կյանքի ոլորտ և զգալի ավանդ ներդրել գրականության և արվեստի, գիտության, առևտրի, տնտեսության, քաղաքական և պետական կյանքի մեջ, ակտիվորեն մասնակցել ռազմական գործողություններին ու պաշտպանունակության հզորացմանը, կառուցել բազմաթիվ բնակավայրեր, եկեղեցիներ, վանքեր, զբաղվել գրչությամբ, մանրանկարչությամբ, ոսկերչությամբ, առևտրով ու արհեստներով, գյուղատնտեսությամբ ու անասնապահությամբ:

Հատկանշական է, որ եղել են արքայական դինաստիաներ, որոնց ներկայացուցիչները թագավորել են թե՛ Հայաստանում և թե՛ Վրաստանում, ունեցել ենք զորահրամանատարներ, որ, հայկական և վրացական միացյալ ուժերը համախմբած, մարտնչել են ընդհանուր թշնամու՝ հռոմեական լեգեոնների, պարթևների, խորեզմցիների, Սասանյան Պարսկաստանի, թաթար-մոնղոլական հորդաների, օսմանյան հրոսակների դեմ: Նրանք միասին են եղել մինչև իսկ իբրև օտար երկրների տիրակալներ:

Գերմանացի պատմաբան, բանասեր, հայագետ Հայրիխ Գելցերը (1847-1906) Բյուզանդիայի պատմության 867-1025 թվականնե-

րը, իր բնորոշումով՝ արևելահռոմեական իշխանապետության բարձրագույն շրջան, համարել է հայկական հարստության (դինաստիայի) ժամանակահատված: Ավելի քան մեկուկես հարյուրամյակ «Հայերը, և միանգամայն երկրորդական դերում վրացիները», եղել են համաշխարհային պատմական իրադրության տերերը: Չզոր կայսրության թե՛ քաղաքական և թե՛ բարձրագույն հրամանատարական կոհորտայում կարևորագույն պաշտոններն զբաղեցրել են այդ ժողովուրդների քաջ ու խելամիտ զավակները և «վարել են ամենաարժանավոր եղանակով»¹: Չազարամյակների հարևաններ՝ ո՛չ վրացիները, ո՛չ էլ հայերը երբեք չեն միացել մեկի կամ մյուսի վրա արշավող որևէ թշնամու: Ավելին՝ ո՛չ Հայաստանի, ո՛չ էլ Վրաստանի տիրակալների կողմից հարձակվելու, մեկը մյուսի ժողովրդին հարկատու դարձնելու փորձեր գրեթե չեն եղել: Երբ հայոց Արտաշես արքան վրաց Քարծամ թագավորի դեմ կռիվ է մղել, ապա ոչ թե երկիրը գրավելու նպատակով, այլ ցանկացել է Հայաստանի հյուսիսային սահմաններում նրա իսկ բարձրացրած ապստամբությունը ճնշել և գերությունից ազատել իր որդուն՝ Ջարեհին:

Մ.թ. I դարի 30-40-ական թթ., երբ Հայաստանը փոքր-ինչ թուլացել էր, նրան միավորելու համար պայքար են մղել այդ ժամանակ իրենց հզորությունը դեռևս պահպանած պետություններից Բյուզանդիան և Պարսկաստանը: Առաջինի դրդումով՝ նաև Քարթլին (Արևելյան Վրաստան): Ի վերջո հռոմեացիների օգնությամբ փոխսփփոխ և կարճատև ընդմիջումներով 35-37 և 47-51 թթ. Հայաստանում թագավորել է վրաց Փարսման I-ի եղբայր Միհրդատը, 51-54-ին՝ նույն Փարսմանի որդին՝ Յոզաբամիզը: Վերջինիս դեմ ապստամբել են հայ նախարարները և պարտադրել հեռանալ երկրից:

Քարթլիում քրիստոնեությունը պետական կրոն ընդունելուց հետո (դա տեղի է ունեցել Միրիան թագավորի օրոք՝ 337 թ.) ճակատագիրն ավելի է մերձեցրել հայերին ու վրացիներին. վրաց եկեղեցին սերտորեն կապվել է նույնադավան հայոց եկեղեցու հետ, վրացի եպիսկոպոսապետերը ընդհուպ մինչև VI դարի վերջը ձեռնարկել են հայոց կաթողիկոսների կողմից, իսկ եկեղեցական հարցեր քննարկելու և վճիռներ կայացնելու համար մասնակցել են հայոց կողմից հրավիրված ժողովներին, ավելին՝ քանի որ նույնն էին ծիսակարգերը, հայ և վրացի ուխտավորները այցելել են մեկմեկու վանքեր, եկեղեցիներ ու սրբավայրեր: Քաղաքական դաշնակցությունն ամրապնդվել է քույր եկեղեցիների հավատով, սրբագործվել հանուն կրոնի գաղափարախոսության նահատակված Գայանեի,

Հռիփսիմեի, Նունեի (վրաց` Նինո) և հատկապես Շուշանիկ թագուհու (հայ իրականության և մատենագրության պատմության մեջ` Շուշանիկ Վարդենի)` հայ և վրաց եկեղեցիների կողմից ընդունված այս սուրբ նահատակների անուններով²:

V դարի վերջերին, ավելի ստույգ 482 թվականին, երբ պարսից Պերոզ արքան պարտություն կրեց հոներից, Վախթանգ Գորգասալը ապստամբության դրոշ պարզեց` աջակից ունենալով հայերին` Վահան Մամիկոնյանի և Սահակ Բագրատունու գլխավորությամբ: Սկզբուն հաջողությունը եղել է միացյալ ուժերի կողմը, քանի որ կամսարականները կարողացել են մխրճվել պարսկական զորքերի կենտրոն և հակառակորդին հետ մղել Կուր գետի մյուս ափը, սակայն ճակատամարտի վճռական պահին վրաց և հայ նախարարներից մի քանիսն անցել են թշնամու կողմը և պատճառ դարձել դաշնակիցների պարտության: Այդ ճակատամարտում` ճարմանայնի դաշտում, զոհվել են Վասակ Մամիկոնյանը (Վահան Մամիկոնյանի եղբայրը), հայոց մարզպան Սահակ Բագրատունին և տասնյակ մարտիկներ³:

VII դարի 80-ական թվականներին վրաց Ներսեհ իշխանը կռվել է Հայաստան ներխուժած արաբների դեմ: Իսկ արաբական աղբյուրների հաղորդմամբ` 853 թ. խալիֆի զորքերի դեմ Տփղիսի պաշտպանության համար մղվող մարտերին մասնակցել են նաև բազմաթիվ հայորդիներ:

VIII դարի վարքագիր Իօանե Սաբանիսձեն հաղորդում է Արևելյան Վրաստանի տիրակալ Ներսեսի մասին: Նույն ժամանակաշրջանում Վրաստանի արքաներից մեկն էլ եղել է Աշոտ Մեծը, իսկ X դարում` Սմբատը:

Լեոնտի Սրովելու (XII դար) ժամանակագրության հանածայն` Քարթլիի (Արևելյան Վրաստան) 18-րդ թագավորը եղել է հայազգի Համազասպը:

Վրաց Գիորգի I-ի (1014-1027) և Բագրատ IV-ի (1027-1072) բանակներում այդ երկրի ազատագրական կռիվներին մասնակցել են հայկական զորագնդեր: Վերջինս, ի դեպ, զգալի թվով հայ արիեստավորների ու առևտրականների վերաբնակեցրել է Վրաստանի քաղաքներում ու ավաններում, հատկապես Տփղիսում և Գորիում:

Երբ Դավիթ IV Շինարարը (1089-1125) երկրի միավորման համար պայքարում էր մահմեդականների դեմ, նրա բանակում մարտնչում էին մեծաքանակ հայկական զորամիավորումներ: Ինչպես իր նախորդը, Դավիթը նույնպես վարել է հայամետ քաղաքականու-

թյուն, թեև սա նույնպես կազմակերպել է հայերի զանգվածային շարժ փրաստանի կենտրոնական շրջաններ, հատկապես արքունապատական քաղաքներ, ավաններ ու կալվածքներ:

Դավիթ Շինարարի նախն Մատթեոս Ուռհայեցին գրում է. «...Այս Դավիթը սուրբ և առաքինի մարդ էր, զարդարված ամենայն աստվածաբանությամբ. նա եղավ հայոց ազգին ընդունող և սիրող: Սրա մոտ հավաքվեցին հայոց զորքերի մնացորդները: Վրաց աշխարհում Դավիթը հայերի համար քաղաք շինեց և կառուցեց եկեղեցիներ ու բազմաթիվ վանքեր. քաղաքն էլ կոչեց Գորի, և հայոց ամբողջ ազգը մեծ ուրախության ու ցնծության մեջ էր»⁴:

1123 թ. Անիի ավազանին մայրաքաղաքն ազատագրելու խնդրանքով դիմում է Դավիթ Շինարարին: Նա 60 հազարանոց զորքով պաշարում է Բագրատունիների ոստանը և ապստամբած հայ բնակչության ու հայկական զորախմբերի աջակցությամբ ջախջախելով էմիրի կայազորին՝ ազատագրում է քաղաքը: Մեծ զորապետը հաթանակից հետո մոտենում է Կատրանիդե թագուհու դամբարանին, խոնարհվում և բարձրաձայնում. «Ուրախ լեր, թագուհի՛, քո տաճարն ու քաղաքը ազատագրված են անհավատներից»:

Դրանից հետո Անիի Մայր տաճարը, որ թշնամին դարձրել էր մզկիթ, վերանորոգել է տալիս, օծում ու հանձնում իսկական տիրոջը՝ հայ հոգևորականությանը⁵:

Եվս մեկ օրինակ. 1208 թ. Արդաբիլի տիրակալը սուրբ Զատիկի նախօրեին անակնկալ հարձակվում է Անիի վրա, սրի քաշում 12 հազ. հայերի և աճապարում մեծաքանակ ավարով ու գերիներով: Շատ չանցած՝ Թամար թագուհու համաձայնությամբ հայ-վրացական միացյալ ուժերը Իվանե և Զաքարե Երկայնաբազուկ զորապետերի հրամանատարությամբ մուսուլմանական նովրուզ-ամանորի լուսաբացին գրոհով վերցնում են Արդաբիլը, սրի քաշում 12 հազ. «ընտրյալների», չհաշված «հասարակ» մարդկանց (պատմիչների որակումներն են՝ Յ.Բ.), գերեվարում սուլթանի կանանց ու որդիներին և վերադառնում: «Անցան այն նույն ճանապարհը, - գրում է պատմիչը, - և այդպես հաղթանակած եկան Անի՝ մեծապես մխիթարված»⁶:

XII դարի վերջին և XIII դարի սկզբին, օգտվելով թուրք-սելջուկյան տերության մասնատումից, հայ և վրաց ժողովուրդները համատեղ պայքար ծավալեցին, որի արդյունքում Յուսիսային Չայաստանը մտավ իր հզորության գագաթնակետին հասած վրացական պետության կազմի մեջ: Ազատագրված շրջաններում Զաքարյան Եր-

կայնաբազուկ տոհմի առանձին ճյուղեր (Ձաքարե ամիրսպասալար, Իվանե Աթաբեկ, Վահրամյաններ՝ Վահրամ Գագեցի, Թնոգվեցիներ) սկզբնավորեցին իրենց փոքր ու մեծ տիրույթները՝ բղեշխությունները՝ վարչատնտեսական ու ռազմաքաղաքական կենտրոններով, որ կոչված էին վերահսկելու և պաշտպանելու Վրաստանի հարավային և հարավարևելյան սահմանները թշնամիների ոտնձգություններից: Սա հենց այն ցանկալի իրողությունն էր, երբ վրաց Բագրատունիների ազգային շահերը գրեթե ամբողջապես համապատասխանում էին ծանր կացության մեջ հայտնված հայ ժողովրդի այդ հատվածի ձգտումներին: Պատմական այդ խոշոր իրադարձությունը զգալի դեր խաղաց հայոց երկրի տնտեսական, սոցիալական, մշակութային, գիտական, գրական և իրավաքաղաքական կյանքի զարգացման գործում:

XIV դարի վրաց Անանուն պատմիչի վկայությամբ՝ XIII դարի 60-ական թթ. Վրաստանի պետական գործերը վարել է հայազգի մեծատուն Շադինը, իսկ Թիֆլիսի ամիրայի պաշտոնը սերնդեսերունդ եղել է Արծրունիների իշխանական տոհմի իրավասությունը:

Քարթլի (Արևելյան Վրաստան) տիրակալներից Սիմեոնը (1558-1600), որ 42 տարի մարտնչել է երկիրը թուրք-պարսկական լծից ազատագրելու համար, Իսպանիայի թագավոր Ֆիլիպ II-ին հղած նամակը գրել է հայերեն և հունարեն. տեքստը պահպանվում է Իսպանիայի Սիմանական քաղաքի արխիվում:

XVII դարասկզբի վրաց աղբյուրները⁷ գրում են մի հայ քահանայի հնարամտության մասին. իր ծխին այցի գնացող հոգևորականը նկատում է, որ թշնամական մի խոշոր զորամաս հասել է Դոնս ավան, ճամբար խփել և նախապատրաստվում է ներխուժել Գորի: Նա իսկույն հետ է դառնում և Կուր գետի վրա կառուցված կամրջի տախտակներն ու գերանները նետում վարար գետը... Շատ չանցած՝ թշնամին, հասնելով ավերված կամրջին, ընկրկում է և հրաժարվում քաղաքի վրա հարձակվելու վճռից: Ահա այդպես վրացական այդ գեղեցիկ ոստանը հայ քահանան փրկում է վայրագ թաթարների ասպատակումից ու կրակի ճարակից, իսկ ժողովրդին՝ կողոպուտից ու գերեվարումից:

Հատկանշական է, որ հայ ազգային-ազատագրական շարժման գաղափարախոս և առաջամարտիկ Հակոբ Ջուղայեցին հայոց պետականությունը վերականգնելու նպատակով մեկնում է Քարթլի տիրակալ Գիորգի XI-ի (1678-1688) մոտ և արքայի, վրաց պատրիարքի ու Գանձասարի հայոց կաթողիկոսի հետ միասին մշակում

հայերի և վրացիների պայքարը համատեղելու և կայուն հիմքերի վրա դնելու ծրագիր:

Նման նպատակ էր հետամտում նաև Գանձասարի կաթողիկոս Եսայի Յասան Ջալալյանը: Նա 1722 թ. բանակցություններ է վարում Վախթանգ VI-ի հետ. ստեղծվում է հայ-վրացական ռազմական դաշինք: Նույն թվականի սեպտեմբերին հայկական և վրացական զինյալ ուժերը կաթողիկոսի և վրաց արքայի գլխավորությամբ համախմբվում են Գանձակի մոտ՝ դիմավորելու Պետրոս I-ին և ռուսական զորքին, որպեսզի միացյալ ուժերով երկու քրիստոնյա երկրներն ազատագրեին պարսկական բռնապետությունից: Սակայն ձախողվում են և այդ ծրագրերը, քանզի Պետրոս Մեծը, ընդհատելով արշավանքը, վերադառնում է Պետերբուրգ:

Հայ ազգային-ազատագրական պայքարի առաջամարտիկը բարձր է գնահատել վրաց գործչին՝ բնութագրելով նրան որպես «Այր բարեսէր, երկիւղած յԱստուծոյ և քրիստոնէատէր և անյիշաչար»: Կաթողիկոսի վկայությամբ վրաց արքան «Բնական սէր ունէր ընդ ազգիս Հայոց և ոչ այնքան հաւատայր ազգին իւրոյ վրաց»⁸:

1723-1724 թթ. թիֆլիսաբնակ Ղուզանյանների տոհմի նախածեռնությամբ ու միջոցներով և վրաց Վախթանգ VI-ի աջակցությամբ ձևավորվում է հայ-վրացական միացյալ էսկադրոնը, որ առանձին զորամիավորման կարգավիճակով մտնում է ռուսական բանակի կազմի մեջ և ակտիվ դեր խաղում ռազմական մի շարք գործողությունների ժամանակ:

1751 թ. վրաց գորագնդերը Հերակլ II-ի հրամանատարությամբ ռազմերթ են կազմակերպում դեպի Հայաստան՝ Ազատ խանի հարձակումից երևանը պաշտպանելու համար⁹:

Նույն ժամանակաշրջանում հայ ազատագրական շարժման մեկ այլ անվանի ներկայացուցիչ, Եվրոպայում բարձրագույն ռազմական կրթություն ստացած և Յոթնամյա պատերազմին մասնակցած Հովսեփ Էմինը (1726-1809) քաղաքական հատուկ ծրագրով մեկնում է Ռուսաստան, այնտեղից էլ Քարթլի (Արևելյան Վրաստան)՝ նպատակ ունենալով հայ-վրացական համատեղ ուժերով կազմակերպել ապաստամբություն, թոթափել թուրք-պարսկական լուծը և ստեղծել Հայ-վրացական դաշնային պետություն: Նա հատուկ ջոկատ է ստեղծում և մի շարք նշանակալից մարտեր մղում Քարթլին հաճախակի ասպատակող լեռնականների դեմ:

Վրաց գուսաններն ու բանաստեղծները բազում երգեր են ձոնել 1795 թ. սեպտեմբերին Կրծանիսի ճակատամարտում զոհված Տիգ-

րան Ասլանյանին: Պարթևահասակ, քաջարի հայորդին, իր համքարների գլուխ անցած, դրոշը ձեռքին՝ առաջինն է օգնության հասել Յերակլ II-ին, երբ վերջինս կենաց և մահու մարտ էր մղում Աղա-Մահմադ խանի դեմ:

Այդ նշանավոր ճակատամարտին մասնակցել են նաև հայազգի փորձառու այլ զինվորականներ:

Կրծանիսի ճակատամարտում կրած պարտության, հայ և վրաց նահատակների, վրաց ժողովրդի ու Յերակլ արքայի տառապալից ապրումների մասին է մեր մեծ լուսավորչի՝ Խաչատուր Աբովյանի «Վերջին հրաժարական քաջազոր արքային Յերակլի» հոգեբանական հրաշալի ասքը:

1827 թ. հոկտեմբերի մեկին՝ Երևանի բերդի գրավման ժամանակ, հայ և ռուս զինվորների ու աշխարհագորայինների հետ ուս ուսի մարտնչում էր նաև վրացական այրուծին գեներալ Ռ. Բագրատիոնիի՝ Բորոդինոյի հերոս Պյոտր Բագրատիոնիի եղբոր հրամանատարությամբ:

* * *

Դաշտային ծաղիկների մասին ժողովուրդները հորինել են բազում և բազմաբովանդակ լեգենդներ, հեքիաթներ, զրույցներ: Հայտնի է հայ իրականության մեջ կակաչ ծաղկի աշխարհ գալու մեկնությունը (տե՛ս Հովհաննես Շիրազի «Սիամանթո և Խջեգարե» պոեմի վերջերգը), իսկ ահա թե նույն ծաղկի մասին ի՛նչ է պատմում վրացական թախծալուր մի լեգենդ. գարնանը արտերն ու հովիտները, դաշտերն ու սարալանջերը պճնվում են նրբագեղ կակաչներով: Դրանցից ամեն մեկը բուսնում է կյանքը հայրենիքին նվիրած վրաց մարտիկի արյան կաթիլներից, բայց նույն ցողունի վրա հաճախ բացվում են զույգ կակաչներ: Լեգենդն ավետում է, որ դրանք էլ ընդհանուր թշնամու դեմ համատեղ պայքարում նահատակված հայ և վրաց ռազմիկների՝ իրար խառնված արյան կաթիլներն են...¹⁰:

Ճակատամարտերում զոհված հայ և վրաց քաջորդիները հողից հառնում են կակաչ դարձած...:

Գեղեցիկ այս պատումը մեր ժողովուրդների ռազմական դաշնակցության ոլորտից է:

* * *

Գրեթե բոլոր դարերում հայազգի շատ գործիչներ վրաց արքունիքում վարել են բարձր պաշտոններ, դրանցից են Երկայնաբազուկները (Մխարգրծելի), Բեիությանները (Բեբութաշվիլի), Թու-

մանյանները (Թունանիշվիլի), Ղայթնազյանները (Ղայթնազաշվիլի) և ուրիշներ:

Վաղ միջնադարից սկսած միշտ հայերի տեղաշարժ է եղել դեպի Վրաստան, իսկ XVIII դարի սկզբից դա կրել է գրեթե զանգվածային բնույթ. առավել մեծ գաղթ տեղի է ունեցել XIX դարի 20-30-ական թթ.՝ ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմներից հետո և հատկապես 1895-1920 թթ.՝ հայերի զանգվածային կոտորածների և Մեծ եղեռնի տարիներին:

Թվային առումով հայերը հաճախ մեծամասնություն են կազմել Վրաստանի մի շարք քաղաքներում ու մարզերում, առավելապես մայրաքաղաքում, որտեղ և նրանց ներկայացուցիչները բազմիցս ընտրվել են քաղաքագլուխներ (Ի. Իզմիրյան, Ս. Խատիսյան, Ս. Տեր-Գիրկուրով, Յովի. Շադինով, Թ. Փրիդոնով, Ջ. Գուլասպով, Ի. Միրիմանով, Ս. Սարաջով, Վ. Արշակունի, Ե. Արծրունի, Գ. Շերմազանյան, Ջ. Սարաջև, Դ. Թունանով, Պ. Իզմայիլով, Գ. Եվանգուլով, ավելի քան քսանհինգ անձ, վերջինը եղել է Ալ. Խատիսյանը):

Մեր ժողովրդի համար վճռորոշ պահերին Թիֆլիսում են ստեղծվել կամավորական ջոկատներ, գումարտակներ, զնդեր, որոնք ռուսական բանակի կազմում մասնակցել են Պարսկաստանի և Թուրքիայի դեմ պատերազմներին:

Այնտեղ է սկզբնավորվել ու զարգացում ապրել նաև հայ կրթական-լուսավորական և հասարակական-քաղաքական կյանքը, քանզի հենց այնտեղ են հիմնադրվել բազմաթիվ տպարաններ, թերթեր, ամսագրեր, կրթական օջախներ, կուսակցություններ, հասարակական-բարեգործական միություններ, խնամատար մարմիններ, խմբակցություններ, մասնավորապես՝ 1823 թ. հիմնադրվել է հայկ. առաջին տպարանը, 1824-ին՝ Ներսիսյան դպրոցը, 1846-ին՝ «Կովկաս» թերթը, 1858-ին՝ հայկական դրամատիկ թատերախումբը, 1868-ին՝ Սարիամյան օրիորդաց դպրոցը, 1869-ին՝ Գայանյան օրիորդաց դպրոցը, 1877-ին՝ Յովնանյան դպրոցը, Կովկասի հայոց բարեգործական ընկերությունը (1881), Յայուհյաց բարեգործական ընկերությունը (1882), Թիֆլիսի արտիստական ընկերությունը (1888), Յայ հեղափոխական դաշնակցություն կուսակցությունը (1890), Յայ բանվոր հեղափոխականների ընկերակցությունը (1892), Յայոց դրամատիկական ընկերությունը (1901), Յայ սոցիալ-դեմոկրատների միությունը (1902), Արևելյան երաժշտական ընկերությունը (1907), Երաժշտական լիգան (1908), Թիֆլիսի կամանց բարձրագույն դասընթացները (1909), Յայ գրողների կովկասյան

Իսկ երբ հարևան հանրապետության ավագակախմբերը 1989 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին փակեցին Հայաստանի երկաթուղային ու ավտոմոբիլային ճանապարհները և նույնը պահանջեցին վրացիներից, նրանք ոչ միայն չանսացին ելուզակների հորդորներին, այլև կրկնակի ավելացնելով տեղական երկաթուղու բեռնատարողությունը՝ ապահովեցին փրկության ուղին, որ մեր ժողովուրդը խորանտորեն կոչեց «Կենաց ճանապարհ»:

Վրաստանի մայրաքաղաքում այժմ գործում են Պետրոս Ադամյանի անվան հայկական պետական դրամատիկական թատրոնը, Վրաստանի գրողների միության հայկական մասնաճյուղը, «Վերնատուն» գրական խմբակը, Վրաստանի հայերի միությունը, Վրաստանի հայ երիտասարդների միությունը, Թբիլիսիի հայերի միության համադասիչ կենտրոնը, «Սայաթ-Նովա» մշակութային ընկերությունը. կան հայկական դպրոցներ, ռադիոհաղորդում, Հայ առաքելական եկեղեցիներ:

Թբիլիսիում են տպագրվում «Վերնատուն» և «Կամուրջ» այնպես խմբակները, «Վրաստան» հանրապետական շաբաթաթերթը, գիտական և գեղարվեստական գրքեր: Հայագետներ և հայոց լեզվի ու գրականության մասնագետներ են պատրաստում Թբիլիսիի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի հայագիտության ամբիոնը, որ գործում է 1922 թվականից (այժմ՝ հայագիտական ուղղություն) նույն բուհի հայկական բաժանմունքը (հիմնադրվել է 1945 թ.), Սուլխան-Սաբա Օրբելիանու անվան պետական մանկավարժական համալսարանի հայոց լեզվի և գրականության բաժինը (1939), ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի հայկական բաժանմունքը և այլն:

* * *

Հայաստանի և Վրաստանի հարաբերությունների մեջ բազում լուսավոր էջեր են կապված V դարի հետ: Հայկական և վրացական գրերի ստեղծումից հետո սկիզբ են առնում գրական-մշակութային առնչությունները: Կրոնական, գիտական և ուսումնական աշխատություններ գրելու գործում վրաց մասնագետներին մեծ օգնություն են ցույց տալիս հայ և վրաստանաբնակ հայագրի շատ ու շատ գործիչներ՝ աշխարհիկ թե հոգևոր: Հաճախ էլ անձամբ են բեղմնավոր գործունեություն ծավալում նշված բնագավառներում: Հայ հոգևոր

Պ»áñ-Ç ²ÉÇÈ³ÝÙ³ÝÇ ¹»é³Ç ¹áðeiñÁ` Á³Ù³ñÁ (Á³ÙñÇÍá): Ûñ³ ³Ý³Ù³ ÷áÕáó ç Íááí»É
À³ÇÉÇèÇáðÕ:

կյանքի խոշորագույն ներկայացուցիչները միջնադարի գիտամշակութային բազում կենտրոններում (Տայք-Կղարջք, Պղնձահանք, Հաղպատ-Սանահին, Գորի, Տփղիս և այլն) համագործակցում էին, հանդես գալիս միասին ու միաբան: Այդ համագործակցությունը հավաստված է մեր երախտավորների բազմաթիվ ձեռագիր մատյաններին կցված հիշատակարաններում: Վրաց շատ քերականներ, իմաստասերներ, իրավագետներ, բառարանագիրներ հայ մասնագետների հետ համատեղ աշխատանքների մասին երախտիքի խոսքեր են թողել իրենց աշխատությունների ներածական-առաջաբաններում (Վախտանգ VI, Սուլխան-Սաբա Օրբելիանի, Անտոն կաթողիկոս և շատ ուրիշներ):

Ակադ. Ն. Մառը հայտնաբերեց «Շուշանիկի վկայաբանության» այն տարբերակը, որ X դարում հայերենից թարգմանվել է վրացերեն: Նույնքան հետաքրքիր է Պ. Դիադիսի «Աստվածաբանության նախահիմքերը» երկի վրացերեն թարգմանության պատմությունը, որ իրականացրել և մեկնաբանություններով հագեցրել է վրաց նշանավոր իմաստասեր Իոանն Պետրիծին հունարենից: XIII դարի կեսերին այդ գրական հուշարձանը, վրաց փիլիսոփայի մեկնություններով հանդերձ, թարգմանվում է հայերեն և լրացվում հայ գիտնական Սիմեոնի մեկնաբանություններով: Այս ամբողջական աշխատությունը, իր հերթին, հինգ դար անց վերստին թարգմանվում է վրացերենի: Նման փաստերը վկայում են, թե հայ և վրաց գործիչները որքան բարձր են գնահատել հարևանների հոգևոր հարստությունը:

Հայագետ պրոֆ. Ի. Աբուլաձեն «Վրաց-հայկական գրական կապերը IX-X դարերում» աշխատության մեջ նշում է, որ նշված ժամանակաշրջանում հայերենից վրացերեն է թարգմանվել ավելի քան տասը տարաբնույթ երկ, վրացերենից հայերեն՝ մեկը: Նա նաև հավաստում է, որ միջնադարում ուսումնական հաստատությունների տնօրենները անհրաժեշտ դասագրքերի մի մասը հայերենից էին ընդօրինակում կամ էլ ստեղծում էին հայկական նմուշների հիման վրա¹¹:

Հայ և վրաց ժողովուրդների բարեկամական կապերի մասին հետաքրքիր փաստ է արձանագրված մեր ազգային դյուցազներգության՝ Գարեգին Սրվանձոյանի գրառած պատումներից «Դավիթ և Խանդութ» հատվածում. քավոր Գորգիզը, որ վրաց ժողովրդի լավագույն հատկանիշներն է ներկայացնում ասքում, տեսնելով թշնամիների նյութած դավը Դավթի դեմ, բացականչում է.

**-Սանհեր Դավիթ, սանհեր Դավիթ,
ճանճ գլխուդ վերվով կանցնի,
գլուխ թռու:**

Մեկ այլ պատումում այս միջադեպը ներկայացված է հետևյալ կերպ. հակառակորդ փահլևանները դավադրություն են կազմակերպում Դավթի դեմ և կերուխումի ժամանակ երբ փորձում են իրականացնել իրենց մտադրությունը, քավոր Գորգիզն իսկույն նախազգուշացնում է.

**- Սանհեր Դավիթ, հողի վնաստուն է,
Վրաստուն չէ:**

Այսպես. վնաս բերողների, դավաճանների տունը հայր հակադրել է վրաստուն-վրաց տուն-Վրաստան աշխարհին, որ տարագիր հայերի համար եղել է հայրենի օջախի նման հարազատ...

Դրկից ժողովուրդների արյունակցական ծագման մասին խորիմաստ ասք է գրառված վրաց պատմագրության հուշարձաններից «Քարթլիս ցխովրեբա» երկում (XII դ.): Գրքի հեղինակը՝ Լեոնտի Մրովելին, շարադրանքն սկսում է հետևյալ խոսքերով. «Նախապես հիշատակենք այսպես, քանզի հայոց և վրաց և կովկասոց հայրը մեկն էր՝ Թարգամոս անվամբ: Նրա որդիներից ութ մարդ հայտնի դարձան որպես հզոր ու անվանի հսկաներ: Առաջինը կոչվում էր Չայոս, երկրորդը՝ Քարթլոս, երրորդը՝ Բարդոս, չորրորդը՝ Մովական, հինգերորդը՝ Լեկան, վեցերորդը՝ Չերոս, յոթերորդը՝ Կավկաս, ութերորդը՝ Էգրոս: Այս ութ եղբայրները հսկաներ էին, սակայն Չայոսը ամենքից առավել հսկա էր, քանզի նրա նմանը երբեք չի եղել ոչ Ջրհեղեղից առաջ, ոչ էլ հետո՝ մարմնով, ուժով ու քաջությամբ: Բայց Արարադի և Մասիսի երկիրն այլևս չէր կարողանում տեղավորել նրանց, ուստի Թարգամոսը բաժանեց իր երկիրը և տոհմը այս ութ հսկաների միջև. երկրի լավագույն կեսը տվեց Չայոսին, իսկ այս յոթին տվեց իրենց բաժինը ըստ նրանց արժանիքների... Եվ այս յոթ հսկաների կառավարիչն ու տերը Չայոսն էր: Եվ այս բոլորը հպատակ էին Չայոսին»¹²:

Ականավոր գրող Կոնստանտինե Գամսախուրդիան դա համարում է ոչ թե երևակայությամբ ստեղծված լեգենդ, այլ իրականություն՝ հաստատված և ապացուցված դարերի կողմից: Ակադ. Կորնելի Կեկելիձեն առասպելի սկզբնաղբյուր է համարում մ.թ. III դ. պատմիչ Իպոլիտ Չոռնայեցու ժամանակագրությունը և հավելում. «Չայերի և վրացիների եղբայրության գաղափարը առաջադիմական գաղափար է, այն մեր ժողովուրդների հետագա պատմության ընթաց-

քում խաղացել է վերին աստիճանի ազնիվ դեր»։ Մեկ այլ գիտնական՝ Ալ. Խախանովը, հանգել է այսպիսի եզրակացության. «Վրացիների և հայերի եղբայրության ու բարեկամության մասին խոսող վիպական պատումները հիմնված են որոշակի փաստերի վրա»¹³։ Ակադ. Ն. Մառը գրում է. «Համձինս հայերի և վրացիների, մենք տեսնում ենք հետնորդների երկու եղբայրական ազգերի, որոնք հետո բաժանվեցին այլևայլ ազգագրական, լեզվաբանական և մասամբ՝ մշակութային ու քաղաքական ներգործությունների պատճառով»։

Բարին, գեղեցիկն ու ուսանելին իրենց արտացոլումն են գտել հայ և վրաց ժողովուրդների ասքերում, զրույցներում, լեզենդներում, ինչպես նաև բարեկամությունը բարձր գնահատող գրողների արձակ թե չափածո երկերում։

1. Տե՞ս Հ. Գելցեր, «Համառօտութիւն բիւզանդական կայսրերի պատմութեան», Վաղարշապատ, 1901, էջ 215։
2. Ունենալով քաղաքական ակնկալիքներ՝ VII դարի սկզբին վրաց եկեղեցին՝ Կյուրոն կաթողիկոսի գլխավորությամբ, և իշխանները այլևս անդարձ ընդունում են Քաղկեդոնի ժողովի (8 հոկտեմբերի, 451 թ.) վարդապետությունը և ոչ միայն բաժանվում են հայ եկեղեցուց, այլև դառնում են նրա անհաշտ թշնամին։ Վրացիներն սկսում են հալածել հայերին, ավերում են հայկական եկեղեցիները, բանտարկում նրա սպասավորներին։ Հայոց կաթողիկոս Աբրահամ Ա Աղբաթանեցու (607-615) հորդորներն ու ջանքերը՝ վրացիներին ու վրաց եկեղեցին գերծ պահելու քաղկեդոնական ազդեցությունից, չխաթարելու հայոց և վրաց եկեղեցիների միաբանությունը, զուր են անցնում, ուստի 608 թ. Դվինում զումարում է եկեղեցական ժողով և մի շրջաբերականով վրաց եկեղեցին կտրում հայ եկեղեցու հաղորդակցությունից. արդյունքում՝ 608 թ. վրաց եկեղեցին մեկընդմիշտ միանում է բյուզանդական եկեղեցուն։ Թշնամանքն ավելի է սաստկանում XII-XIII դարերում, երբ Վրաստանը՝ իբրև Արևելքի հզոր պետություններից մեկը, իր տիրապետության տակ է առնում նաև Արևելյան Հայաստանի զգալի մասը։ Հայ հատվածին հալածանքներից գերծ պահելու նպատակով վրաց արքունիքի հայազգի ամիրսպասալար Ջաքարե Երկայնաբազուկը ցանկանում է հայ եկեղեցու որոշ ծիսակատարություններ ու տոներ հարմարեցնել վրաց եկեղեցու համանման միջոցառումներին։ Չնայած կաթողիկոսի համաձայնությանը՝ հայկական եկեղեցիներում նշանավոր տոները կատարել վրաց եկեղեցու հետ միասին, այդուհանդերձ, Հյուսիսային Հայաստանի հոգևոր գործիչները՝ հանձինս Գրիգոր Տուտեորդու, Մխիթար Գոշի, Վանական Վարդապետի (Հովհաննես Տավուշեցի) և ուրիշների, չեն ընդունում այդ փոփոխությունները (տես Աբրահամ Չամիչյան, Հայոց եկեղեցու պատմություն, Երևան, 1992, էջ 96-98)։
3. Վրաստանի պատմության վերջին տարիների դասագրքերում և V դարի այդ ժամանակահատվածն արտացոլող աշխատություններում նշվում է, թե, իբր, հայ նախարարները տեղեկացնում են պարսից բանակի

- իրամանատարությանը, թե ճակատամարտի ժամանակ կլքեն իրենց դիրքերը և կնիանան պարսիկներին: Եվ, իբր, հաջորդ օրը, երբ ապստամբները հարձակվում են հակառակորդի վրա և նույնիսկ հասնում զգալի առավելության, հայերը լքում են մարտադաշտը՝ դյուրացնելով թշնամու հաղթանակը: Տե՛ս «Վրաստանի պատմություն», VII դասարանի դասագիրք, հայկական դպրոցների համար, Թբիլիսի, «Ինտելեկտի» հրատ., 1997, էջ 109 (հայերեն):
4. Մատթեոս Ուռհայեցի, «Ժամանակագրութիւն», Վաղարշապատ, 1898, էջ 356:
 5. Չնայած հայոց և վրաց դավանաբանական տարբերությանն ու հակամարտությանը՝ Դավիթ Շինարարը խնամակալն է եղել նաև Հաղպատի ու Սանահինի վանքահամալիրի, ջանացել է հաշտեցնել հայ և վրաց եկեղեցական գործիչներին:
 6. Լ. Մելիքսեթ-Բեկ, «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», Գիրք Գ., Երևան, 1955, էջ 128:
 7. Նույնը, էջ 144:
 8. Մեջբերումը՝ Դ. Բախչինյան, «XVII-XVIII դարերի հայ գրականությունը» գրքից, Երևան, 1999, էջ 283:
 9. Վրաց արքան Երևանյան արշավանքներից մեկի ժամանակ զորքը Երևանի բերդից ոչ հեռու՝ Ձանգվի (Հրազդան) աջ ափից է առաջնորդել պարսիկների դեմ ճակատամարտի, և բարձունքը հետագայում կոչվել է նրա անունով՝ Հերակլյան բլուրներ: Տե՛ս նաև Թ. Խ. Հակոբյան, Երևանի պատմությունը (1801-1879 թթ.), Երևան, 1959, էջ 237 և 317:
 10. «Խորհրդային Վրաստան», 14 մարտի 1989:
 11. Տես Բանբեր Մատենադարանի, 1956 թ. N 3, էջ 10:
 12. Լեոնտի Մրովելի, Քարթլիս ցխովրեբա, Թբիլիսի, 1955, էջ 4 (վրաց.):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայ գրողները վրաց գրական մտքի գնահատմամբ.....	3
Աայաթ-Նովա	5
Գաբրիել Սունդուկյան.....	16
Վրաց գրողները հայ գրական մտքի գնահատմամբ	23
Շոթա Ռուսթավելի	25
Իլիա ճավճավաձե.....	31
Վաժա Փշավելա	40
Հոգևոր միասնություն	49
Գաբրիել Սունդուկյան և Ակակի Ծերեթելի	51
Նյութեր «Թումանյանական հերագիտարանի» համար.....	60
Հովհաննես Թումանյանը և Գրիգոլ Ռոբաքիձեն	68
Հովհաննես Թումանյան և Տիցիան Տաբիձե	77
Գրական կորիֆեյների բարեկամությունը մշակույթների մերձեցման կարևորագույն գրավական	83
Դիմանկարային ուրվագծեր.....	95
Ջանսուղ Չարկվիանի.....	97
Սոս Սիմավորյան	100
Բենիկ Սեյրանյան	104
Գիվի Շահնազար	108
Գուրամ Փանջիկիձե	116
Նոդար Դումբաձե.....	119

Չողվածներ	135
Հայագիտությունը Թբիլիսիի պետական համալսարանում.....	137
Արևելահայ հոգևոր կյանքի կենտրոնը	145
Երբ անտեսվում է հավերժության օրենքը	161
Ակադ. Գուրզեն Սևակի վրացագիտական գործունեությունը	175
Լրագրական բարքերին անհարիր.....	190
Գրախոսություններ	195
Սայաթ-Նովայի ռուսերեն նոր ժողովածուն.....	197
Նորահայտ մեկ տաղ.....	200
Հայ քնարերգության խճանկար.....	202
Եվս մեկ խճանկար.....	205
Մնայուն արժեք.....	207
Խոսք՝ Ռևազ Միշվելաձեի գրքի շնորհանդեսին.....	210
Հարցազրույցներ	213
Կարգ ու կանոն՝ երկրի ներսում	215
Դժվար է նրանց հավատալ	220
Կարևորը տոկալն է	224
«Միտք» վերլուծական կենտրոնին	228
Այստեղ ձգտում են ամրապնդել հայ-վրացական հոգևոր կապերը	234
Հավելված	240
Ուսանելի դասեր.....	240

ՀՐԱԶԻԿ ՍՄԲԱՏԻ ԲԱՅՐԱՄՅԱՆ

ГРАЧИК СМБАТИ БАЙРАМЯН

Էջեր հայ - վրացական
գրական կապերի պատմությունից

*Из истории армяно - грузинских
литературных связей*

Կազմի ձևավորումը՝
Տեխնիկական խմբագիր՝
Սրբագրիչ՝
Համակարգչային շարվածքը՝
Համակարգչային ձևավորումը՝

Կոնստանտին Հ. Ավագյանի
Վարդիթեր Զ. Բոլոյան
Ելենա Հ. Բայրամյան
հեղինակի
Աննա Խ. Աղուզումցյանի

Ստորագրված է տպագրության՝ 18.10.2010 թ.:

Թուղթ՝ օֆսեթ: Տպագրություն՝ օֆսեթ: Չափսը՝ 60x84 1/16:

Հրատ. 14.5 մամուլ, տպագր. 16.0 մամուլ + 4 էջ ներդիր = պայմ. 14.9 մամուլի:
Պատվեր՝ 80: Տպաքանակ՝ 200

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1

ԵՊՀ տպագրատուն, Երևան, Արվյան 52